2. «Mardu iravunqneri ev himnarar azatut'yunneri pashtpanut'yan masin» Evropakan konvencia (04.11.1950) [European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms (04.11.1950)]
3. «O'perativ hetaxuzakan gorc'uneut'yan masin» ՀՀ օրենք (AJ,22.10.2007,ՀՕ'-223-N) [The Law of the Republic of Armenia "On Operational Investigative activities" (NA, 22.10.2007, ZR-223-N)]
4. Bikovn y'nddem R'usastani MIED voroshum, gangat 4378/02 [The ECHR decision in the case of Bykov v. Russia, complaint 4378/02]
5. Klassn y'nddem Germaniayi MIED voroshum, gangat 5029/71 [The ECHR decision in the case of Class v. Germany, complaint 5029/71]
6. ՀՀ Սահմանադրություն (06.12.2015թ.) [The Constitution of the Republic of Armenia (06.12.2015)]
7. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (30.06.2021, zr-306-n) [The Criminal Procedure Code of the Republic of Armenia 30.06.2021, ZR-306-N)]
8. ՀՀ Սահմանադրական դատարան SDO-1526 voroshum (28.04.2020) [The decision of the RA Constitutional Court SDO-1526 (04/28/2020)]
9. ՀՀ Սահմանադրական դատարան SDO-926 voroshum (23.11.2010) [Decision of the RA Constitutional Court SDO-926 (11/23/2010)]
10. ՀՀ վճռաբեկ դատարան EKD/0189/01/17 voroshum (15.06.2018թ.) [Decision EKD/0189/01/17of the RA Court of Cassation (June 15, 2018).

SOME PROBLEMS OF UNDERSTANDING AND INTERPRETING THE NORMS GOVERNING OPERATIONAL INVESTIGATIVE ACTIVITIES

MILENA HAYRAPETYAN

*Anti-Corruption Court of Appeal of the Republic of Armenia, Judge's assistant;
Yerevan State university, Faculty of law,
Chair of Criminal Procedure and Criminalistics, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the given article is to contribute to the formation of a unified practice in relation to certain issues raised in the article.

Problems such as filing a request for operational investigative activities only on the basis of operational data, destruction of data obtained as a result of operational investigative activities were analyzed.

The issue of the subject appropriate for submitting a petition for the implementation of operational investigative activities was also discussed.

The research was conducted using methods of synthesis, induction, deduction, as well as formal logical, comparative legal methods.

In the article we stated that the submission of a petition only on the basis of operational data, is unacceptable, but we should also take into account the lack of tools at this stage: regarding the problem of the subject submitting the petition, we found that the head of the regional Department of the National Security Council of the Republic of Armenia can also make a corresponding petition.

Regarding the destruction of data obtained as a result of operational investigative activities, we found that an addition needs to be made to the law "On Confiscation of Property of Illegal Origin".

We also touched upon the emerging problem related to the methods of conducting operational "investigative measures" appearance.

Keywords: *operational investigative activity, proper subject, operational data, external surveillance, illegal, certificate, protocol.*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПОНИМАНИЯ И ИНТЕРПРЕТАЦИИ НОРМ, РЕГУЛИРУЮЩИХ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНУЮ ДЕЯТЕЛЬНОСТЬ

МИЛЕНА АЙРАПЕТЯН

*помощник судьи апелляционного антикоррупционного суда Республики Армения,
аспирант кафедры уголовного судопроизводства и криминалистики
юридического факультета Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель представленного исследования – способствовать формированию единой практики в отношении определенных вопросов, поднятых в статье.

Были проанализированы такие проблемы, как подача ходатайства об оперативно-розыскной деятельности только на основе оперативных данных, уничтожение данных, полученных в результате оперативно-розыскной деятельности.

Также был рассмотрен вопрос о надлежащем субъекте для представления ходатайства об осуществлении оперативно-розыскной деятельности.

Исследование проводилось с использованием методов синтеза, индукции, дедукции, формально-логических, сравнительно-правовых методов.

Касаясь представления ходатайства только на основе оперативных данных, мы констатировали, что указанное неприемлемо, однако следует также учитывать нехватку инструментария на данном этапе: касаясь проблемы субъекта, подающего ходатайство, мы выяснили, что начальник областного управления СНБ РА также может выступить с соответствующим ходатайством.

В отношении уничтожения данных, полученных в результате оперативно-розыскной деятельности, мы пришли к выводу о том, что в закон «О конфискации имущества незаконного происхождения» необходимо внести дополнения.

Мы также затронули проблему, связанную с внешним наблюдением как одним из методов проведения оперативно-розыскных мероприятий.

Ключевые слова: *оперативно-розыскная деятельность, надлежащий субъект, оперативные данные, внешнее наблюдение, незаконный, справка, протокол.*

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

ՀՏԴ 342

DOI: 10.52063/25792652-2024.3.22-21

ՀԵՐԲԵՐՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
herbert.harutyunyan@ysu.am
ORCID: 0000-0003-4878-1080

Հոդվածի նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները սահմանադրական բարեփոխումների համատեքստում: Պատմական ու համեմատադրական վերլուծությամբ ներկայացվում է ՏԻՄ-երի սահմանադրական ինստիտուտի էվոլյուցիան Հայաստանի Հանրապետությունում, ուսումնասիրվում են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն ու դրանց իրականացման կառուցակարգերը՝ ըստ 1995 թ. ընդունված Սահմանադրության, ապա 2005 և 2015 թթ. սահմանադրական փոփոխությունների:

Ուսումնասիրման առարկա են նաև ՀՀ և այլ պետությունների ՏԻՄ-երի պոզիտիվ ու նեգատիվ սահմանադրական պատասխանատվության խնդիրները: Տեղական ինքնակառավարման՝ անցած ավելի քան 30 տարիների փորձը թույլ է տալիս եզրահանգել այն, որ համակարգն անցել է ինստիտուցիոնալ զարգացման փուլ, որն արտահայտված է տեղական ինքնակառավարման ոլորտի փոխհարաբերությունները կարգավորող մի շարք միջազգային պարտավորությունների, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունմամբ: Այդ ժամանակահատվածում մշակվեցին և ներդրվեցին տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մեխանիզմները, իրականացվեցին նրանց կարողությունների ամրապնդմանն ուղղված միջոցառումներ, լրամշակվեց օրենսդրությունը, խորացվեց ապակենտրոնացման գործընթացը: Սակայն տեղական ինքնակառավարման համակարգում դեռևս առկա են մի շարք լուրջ խնդիրներ ու բացթողումներ, որոնք անհրաժեշտ է լուծել համակարգի կայուն զարգացումն ապահովելու համար: Աշխատանքում կիրառվել են դիալեկտիկական, համակարգային, վերլուծական, սինթեզի, ձևական-իրավական և վիճակագրական մեթոդները:

Եզրակացությունն այն է, որ ներկայումս ՀՀ համայնքներում տեղական ինքնակառավարման ցածր արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Առաջին հերթին, կարծում ենք, համայնքներում, անհատական և կոլեկտիվ շրջանակներում իրավագիտակցության բարձրացմանն ուղղված գործընթացներ պետք է իրականացվեն:

* Հոդվածը ներկայացվել է 29.07.2024թ., գրախոսվել՝ 30.09.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

Հիմնաբառեր՝ տեղական ինքնակառավարման համակարգ, համայնքային կառավարում, ավագանու անդամ, կառավարման ապակենտրոնացում, համայնքի ղեկավար, տարածքային կառավարում, վարչատարածքային բարեփոխումներ, համայնքի բնակչության ժողովրդաիշխանություն:

Ներածություն

Տեղական ինքնակառավարման ոլորտի հասարակական հարաբերությունները, հատկապես՝ ժողովրդաիշխանության անմիջական և ներկայացուցչական ձևերի իրականացման գործընթացում, կարգավորվում են ոչ միայն իրավունքի նորմերով, այլ նաև սոցիալական այլ նորմերով (բարոյական, սովորության և այլն): Տեղական ինքնակառավարման համակարգում պատասխանատվությունը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ իրավաբանական պատասխանատվություն, քաղաքական պատասխանատվություն, որը ներառում է հասարակական և բարոյական պատասխանատվություն:

Հիմնական հետազոտություն

Տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանի Հանրապետությունում, կազմավորվելով 1996 թվականին, դեռևս կայացման և ամրապնդման ժամանակաշրջան է ապրում: Փորձ է արվում մշակելու մեխանիզմներ և ուղիներ՝ ՏԻՄ-երի հաշվետվողականությունը բարելավելու, նրանց կողմից կատարվող աշխատանքներն առավել արդյունավետ, որակյալ և թափանցիկ դարձնելու, ինչպես նաև համայնքային կառավարմանը բնակչության ակտիվ մասնակցությունը խրախուսելու նպատակով: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումից հետո (1995 թվականի հուլիսի 5) Հայաստանի հանրային կառավարման համակարգում պետական կառավարմանը զուգահեռ ստեղծվեց տեղական ինքնակառավարման համակարգը (ՀՀ 1995 թ. Սահմանադրությունը): Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման իրականացումը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, որի 9-րդ գլխի 179-190 հոդվածներն ուղղակիորեն սահմանում են տեղական ինքնակառավարման հարցերը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» ընդունված 2002 թ. մայիսի 7-ին), որը հիմնվում է Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիայի վրա (Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիան՝ ընդունված 15.10.1985 թ. Ստրասբուրգ), այլ օրենքներով և իրավական ակտերով: ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի անցած ուղին ու միջազգային փորձն ապացուցել են, որ թափանցիկ գործող ՏԻՄ-երի գործունե համակարգն է ի վիճակի հասնելու համայնքներում տեղական ինքնակառավարման արդյունավետ կազմակերպման գերնպատակին: Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավումը միտված է պետության բոլոր մակարդակներում արդյունավետ կառավարման ներուժը զարգացնելուն: 1995 թ. համաժողովրդական հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ ամրագրվեց տեղական ինքնակառավարումը՝ որպես իշխանության առանձին օղակի: Նույն տարում ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով Հայաստանում կազմավորվեցին 10 մարզեր (տարածքային կառավարմամբ՝ որպես պետական կառավարման բաղկացուցիչ մասի) և 926 համայնքներ (տեղական ինքնակառավարումով), որոնցից 48-ը քաղաքային էին, 12-ը՝ Երևանի թաղային, իսկ 866-ը՝ գյուղական: Մայրաքաղաք Երևանը ստացավ մարզի կարգավիճակ: 1996 թ. ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ առաջին օրենքը, իսկ 2002 թ.՝ ՀՀ երկրորդ օրենքը: 1996 թ. կայացած ՀՀ տեղական

ընտրությունների արդյունքում 926 համայնքներում ձևավորվեցին ՏԻՄ-եր՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար:

2005 թ. բարեփոխված ՀՀ Սահմանադրությամբ մայրաքաղաք Երևանը ստացավ համայնքի կարգավիճակ: 2008 թ. ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա և 2009 թ. կայացած Երևանի ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում Երևանում ձևավորվեցին ՏԻՄ-եր՝ ավագանի և քաղաքապետ:

Տեղական ինքնակառավարման սկզբունքներից են՝ համայնքի անդամների առջև ՏԻՄ-երի հաշվետու լինելը, ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը, տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը: Արդի պայմաններում ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականությունը, հրապարակայնությունը և թափանցիկությունն առավել արդյունավետ, գործուն և հարմարավետ կարող է ապահովվել՝ համացանցի գրագետ կիրառմամբ և համացանցային պաշտոնական կայքերի միջոցով համապատասխան տեղեկատվությունը ժամանակին քաղաքացիներին հասանելի դարձնելով: Սակայն ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երը պարտավորված չեն համացանցային պաշտոնական կայքեր ունենալ (բացառությամբ Երևանի) և դրանք պատշաճ վիճակում պահել: Հետևաբար, չկան նաև դրանց բովանդակության, գործառնական հնարավորությունների նկատմամբ ձևավորված և հաստատված պահանջներ: Ընդհանրապես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում չկա որևէ դրույթ կամ նորմ, որը ենթադրում կամ պարտադրում է ՏԻՄ-երի գործունեության տեղեկատվայնացման որևէ գործընթաց, Էլեկտրոնային եղանակով տվյալների տրամադրում, համացանցի կիրառում, տեղեկատվության հրապարակում պաշտոնական համացանցային կայքերում և այլն՝ բացառությամբ միայն մեկ դրվագի՝ «Հնարավորության դեպքում այդ տեղեկությունը (ավագանու հերթական նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ և օրակարգի նախագիծը - հեղ.) լրացուցիչ կերպով կարող է տարածվել զանգվածային լրատվության միջոցներով և ինտերնետային ցանցի միջոցով»: Ավելին՝ նույնիսկ «Տեղեկատվության ազատության մասին» («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, 23 սեպտեմբեր, 2003) ՀՀ օրենքը չի պարունակում դրույթներ՝ քաղաքացիներին պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին (տեղեկատվություն տրամադրողներին) Էլեկտրոնային եղանակով դիմելու հնարավորության ապահովման, տեղեկությունների տրամադրման, համացանցային պաշտոնական կայքերի պարտադիր առկայության, դրանց Էջերում համապատասխան տեղեկատվության հասանելիության վերաբերյալ՝ բացառությամբ միայն մեկ դրվագի՝ «Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի համացանցային Էջի առկայության դեպքում՝ նաև դրանով»: Այլ երկրների օրենսդրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք նախատեսում են համացանցային պաշտոնական կայքերի պարտադիր առկայությունը թե՛ պետական կառավարման մարմինների համար և թե՛ ՏԻՄ-երի համար: Այսպես՝ օրինակ, Ռուսաստանի Դաշնության № 8-Փ3 դաշնային օրենքը «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովման մասին» (Федеральный закон «Об обеспечении доступа к информации о деятельности государственных органов и органов местного самоуправления» от 09.02.2009 N 8-ФЗ) պարտադրում է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ունենալ պաշտոնական համացանցային կայքեր, ինչպես նաև սահմանում է այդ կայքերի բովանդակության և գործառնական հնարավորությունների նկատմամբ հիմնական պահանջները:

Հանրապետությունում տեղական ինքնակառավարման զարգացման ուղղությամբ հիմնավոր քաղաքականության մշակման ու իրականացման համար

անհրաժեշտ է շարունակել համակարգված ու հետևողական ուսումնասիրությունները: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ մեկ կենտրոնից իրականացվող կառավարման դեպքում տարածքային զարգացման գործում հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունավետության: Այդ առումով կարևորվում է կենտրոնացված կառավարման ապակենտրոնացումը, որը հանգեցնում է տեղական ինքնակառավարման խստիտուտի կայացման համապատասխան սկզբունքների ձևավորմանը և ընդհանուր կառավարման համակարգում դրանց արմատավորմանը: Լինելով կառավարման յուրահատուկ ձև՝ տեղական ինքնակառավարման հիմքերը սկսել են ձևավորվել դեռևս վաղ միջնադարում: Այդ ուղղությամբ Եվրոպայում իրականացված բարեփոխումների շնորհիվ այն դարձավ ընդհանուր կառավարման կարևորագույն բաղկացուցիչը, ինչը մեծապես նպաստեց կառավարման արդյունավետության բարձրացմանը: Տեղական ինքնակառավարման համակարգը առաջընթաց գրանցեց, երբ Ֆրանսիայում սահմանադրությամբ ամրագրվեցին համայնքի կարգավիճակը և դրա հիմնական լիազորությունները:

Այսօր հարց է առաջանում ինչքանով է տեղական ինքնակառավարումը պետական կառավարման մաս կազմում, և որքանով է դրա ինքնուրույնությունը: Վերլուծությունները ցույց են տալիս, որ տեղական ինքնակառավարումը, որպես տեղական նշանակության խնդիրները լուծելու կարող համակարգ, աստիճանաբար հարթում է իր ճանապարհը: Բայց այդ, համակարգի և նրա կարողությունների նկատմամբ դեռևս առկա է նկատելի անվստահություն: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ մի կողմից օրենսդրորեն լիարժեք չէ տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության չափումը, որի արդյունավետ իրականացումը երաշխավորված կլինի տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական, տնտեսական, աշխատանքային և այլ ռեսուրսներով: Մյուս կողմից՝ մշակված չեն այն մեխանիզմները, որոնք կապահովեն հանրային ծառայությունների արդյունավետ մատուցումը համայնքի բնակչությանը:

Տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց պոզիտիվ պատասխանատվությունն իրականացվում է դրանց որոշումները կամ գործողությունները (անգործությունը) ճշգրտելու եղանակով՝ դրանք դատական կարգով կասեցնելու կամ անօրինական ճանաչելու և վերացնելու միջոցով (օրինակ՝ մարզպետը կամ համայնքի ավագանին կարող է դատական կարգով վիճարկել համայնքի ղեկավարի որոշումների օրինականությունը), իսկ վերադասական-ենթակայական հարաբերությունների շրջանակում՝ նաև ոչ նպատակահարմար ճանաչելու եղանակով (օրինակ՝ համայնքի ղեկավարն իր որոշմամբ կարող է կասեցնել կամ վերացնել իր աշխատակազմի քարտուղարի, համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների որոշումները թե՛ օրինականության և թե՛ նպատակահարմարության հիմքով):

Տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում հետևյալ սուբյեկտների՝ հանրային իշխանության կրողի՝ համայնքի բնակչության, տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ ավագանու, պետության, ինչպես նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձանց առջև:

Պատասխանատվությունը բնակչության առջև: ՏԻՄ մարմինները պատասխանատվություն են կրում համայնքի բնակչության առջև: ՀՀ Սահմանադրությամբ և գործող օրենսդրությամբ չեն նախատեսվում մի շարք երկրներում հաջողությամբ կիրառվող հետկանչման և ավագանու արձակման ինստիտուտները: Բացառություն են Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մարմինները:

Պատասխանատվության այս տեսակը հանրային-իրավական պատասխանատվության եղանակ է, որը համադրում է ինչպես քաղաքական, այնպես էլ իրավաբանական պատասխանատվության տարրեր: Համայնքի բնակչությունը

գործող օրենսդրության շրջանակում տեղական ինքնակառավարման մարմիններին կարող է քաղաքական պատասխանատվության ենթարկել միայն հաջորդ ընտրություններում վստահության քվեներ չտրամադրելու եղանակով, բայց հասկանալի պատճառներով «պատասխանատվության» այս տեսակը անարդյունավետ է, քանի որ կարող է կիրառվել միայն տեղական ինքնակառավարման մարմնի լիազորությունների ավարտից հետո:

Պատասխանատվությունը պետության առջև: Պետության առջև տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության ձև կարող է համարվել համայնքի ղեկավարի պաշտոնանկությունը: Համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերը և կարգը սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

Եզրահանգումներ

ՀՀ Սահմանադրությունը, ինքնակառավարումն ամրագրելով որպես սահմանադրական կարգի տարրերից մեկը, երաշխավորում է տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպական առանձնացումը հասարակության ու պետության կառավարման համակարգում: Տեղական ինքնակառավարման մարմիններն ընդգրկված չեն պետական իշխանության մարմիններում, հետևաբար, ի տարբերություն տարածքային կառավարման մարմինների՝ դրանք չեն կարող դիտվել պետական կառավարման համակարգի կառուցվածքային ստորաբաժանումներ: Այդ պատճառով պետական մարմիններն արդեն հանդես չեն գալիս որպես վերադաս ատյան, որը լիովին ղեկավարում էր իշխանության տեղական մարմինների գործունեությունը, լսում հաշվետվությունները և օժտված էր այդ մարմինների որոշումները վերացնելու իրավունքով:

Ճանաչելով և երաշխավորելով տեղական ինքնակառավարումը՝ ՀՀ Սահմանադրությունը հաստատում է, որ տեղական ինքնակառավարումն իր լիազորությունների սահմաններում ինքնուրույն է: Այսպիսով՝ տեղական ինքնակառավարման ամրագրումը ենթադրում է տեղական նշանակության հարցերի հատուկ ոլորտի առանձնացում, որի շրջանակում տեղական ինքնակառավարման մարմինները գործում են ինքնուրույն և պատասխանատու են առաջին հերթին համայնքի բնակչության առջև: Բայց և այնպես պետք է նշել նաև, որ ՀՀ Սահմանադրությունը չի տալիս տեղական ինքնակառավարման տնօրինման հարցերի սպառիչ թվարկումը: Հիմնվելով Սահմանադրության դրույթների վրա՝ ՀՀ համապատասխան օրենքները սահմանում են տեղական ինքնակառավարման գործունեության ոլորտը, ինչպես նաև սահմանազատում տեղական ինքնակառավարման ու պետական իշխանության մարմինների լիազորությունները: Լիազորությունների ապակենտրոնացման գործընթացի կազմակերպումը իրականացվում է տեղական ինքնակառավարման բնագավառի պետական լիազոր մարմնի, համապատասխան հանրապետական գործադիր մարմինների, տարածքային կառավարման մարմինների, համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության լայն շրջանակների ներդաշնակ և առողջ համագործակցության լույսի ներքո՝ ամրապնդելով յուրաքանչյուր ապակենտրոնացվող լիազորության մասով կառուցողական և հիմնավորված երկխոսություն, բացառելով նեղ գերատեսչական կամ պաշտոնական շահերի սպասարկման կամ սուբյեկտիվ գործոնների դրսևորումները:

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի դրույթներն այն մասին, որ ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին, այսինքն՝ իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է, իսկ տեղական ինքնակառավարումը ժողովրդավարության իրականացման ինքնուրույն ձև է, նշանակում է, որ նախ՝ գերիշխող է ժողովուրդը, այլ ոչ թե իշխանության ինստիտուտները, այդ թվում՝ նաև ՏԻՄ-երը, որոնք օժտված են սոսկ

համայնքի բնակչության կողմից իրենց փոխանցված լիազորություններով, երկրորդ՝ ՏԻՄ-երի լիազորություններն ածանցյալ են պետության կողմից ճանաչվող և երաշխավորվող տեղական ինքնակառավարման լիազորություններից, երրորդ՝ ՏԻՄ-երից և ոչ մեկը չի կարող լինել բնակչության ընդհանուր կամքի արտահայտիչը, միայն բոլորը միասին և հավասար չափով (Տեղական ինքնակառավարման հիմունքներ 2002):

Հայաստանում, տեղական ինքնակառավարման համակարգի կայացումից ի վեր, հիմնախնդիրներից մեկը քաղաքացիների մասնակցության ապահովումն է պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը, ինչը հնարավորություն է տալիս ստեղծելու փոխվստահության մթնոլորտ, կիսել որոշումների պատասխանատվությունը, ապահովել քաղաքացիների տեղեկատվությունը և այլն:

ՏԻՄ-երի զարգացման առանցքային հիմնախնդիրներից է վարչատարածքային կառուցվածքի մասնատվածության բարձր աստիճանը: Հետևաբար, Սահմանադրության շատ հոդվածներ մնում են զուտ թղթի վրա: ՀՀ կառավարությունը 2008 թ. դեկտեմբերին հավանություն տվեց միջհամայնքային միավորումների ձևավորման և համայնքների խոշորացման հայեցակարգային մոտեցումներին: Դրանցով լուրջ փոփոխություններ են նախատեսվում մարզերում գտնվող համայնքների տեղական ինքնակառավարման համակարգում (Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ 2011): Նկատի ունենալով վարչատարածքային բարեփոխումների իրականացման ողջ բարդությունը, դրա բազմագործոնայնությունն ու հնարավոր հետևանքները՝ որևէ դեպքում որոշումների ընդունման շտապողականությունը չի կարող արդարացվել և կարող է հանգեցնել ինչպես այս հիմնավոր գաղափարի խեղաթյուրման, այնպես էլ լրացուցիչ դժվարություններ և բարդություններ առաջացնել տեղական ինքնակառավարման համակարգում: Ուստի անհրաժեշտ է այս բարեփոխումներն իրականացնել փուլային տարբերակով՝ որպես առաջին փուլի թիրախ ընտրելով այդ նպատակի համար իր պարամետրերով:

Փաստ է, որ ՀՀ-ում ավագանիների ինստիտուտը դեռ կայացած չէ: Անգամ փոքր համայնքներում առկա են բարդություններ, որոնք առնչվում են ավագանու գործունեությանը: Ուստի այստեղ կա մտավախություն, որ բնակչին հուզող հարցերը և խնդիրները կմասն անպատասխան ու չլուծված: Հետևաբար, սահմանադրական բարեփոխումների, քաղաքական-տնտեսական անկայունության, օրըստօրե խորացող դեմոգրաֆիական ճգնաժամի, ներհասարակական-քաղաքական տարակարծությունների պայմաններում հայեցակարգի արդյունավետ գործադրումը կարող է բախվել մի շարք խոչընդոտների՝ նվազեցնելով վերջինիս արդյունավետությունը: Սրան հավելենք, որ պետական և հանրային կառավարման պրակտիկան փաստում է, որ քաղաքական- տնտեսական ճգնաժամի պայմաններում իրականացվող վարչաքաղաքական բարեփոխումները կարճաժամկետ հատվածում կապահովեն որոշակի դրական միտումներ, սակայն առանց կառավարման համակարգում օրենսդրաիրավական դաշտի բարեփոխումների, քաղաքական-տնտեսական անկայունության հաղթահարման, ենթակառուցվածքների բարեփոխման՝ երկարաժամկետ հատվածում չենք կարող արձանագրել լուրջ տեղաշարժեր: Եվ թեև ՀՀ Սահմանադրությունը թույլ է տալիս իրականացնել համայնքների խոշորացում՝ առանց տեղի բնակչության համաձայնության, սրանից էլ բխում է, որ պարտադիր վարչական բարեփոխումների կիրառումը հանգեցնում է համայնքների բնակիչների մեկուսացմանն ու օտարվածությանը տեղական ինքնակառավարման համակարգից:

ՀՀ տեղական ինքնակառավարման օրենսդրական դաշտի ուսումնասիրության արդյունքում կարելի է ասել, որ տեղական ինքնակառավարման գործընթացը կարգավորող իրավական հիմքերը բավարար պայմաններ են ստեղծում ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի արմատավորման և զարգացման

համար: Ժողովրդավարության կայացման պահանջներով պայմանավորված՝ անհրաժեշտ է իրավական ոլորտներում հետագա բարեփոխումներ իրականացնել, մասնավորապես՝ համայնքի բնակչության ժողովրդափշխանության վերաբերյալ մի շարք իրավունքների իրացման համար օրենսդրորեն բավարար մեխանիզմներ սահմանել, որոնք կբարձացնեն ՏԻՄ-երի գործունեության արդյունավետությունը և ավելի կխորացնեն ժողովրդավարությունը ՀՀ-ում:

Բարեփոխումների վերջնարդյունքում ակնկալվում են հետևյալ արդյունքները.

- 1) տեղական ինքնակառավարման մարմինների ներուժի և կարողությունների զգալի ավելացում
- 2) համայնքի և դրա տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող հանրային բնույթի ծառայությունների շրջանակի էական ավելացում.
- 3) հանրային բնույթի ծառայությունների հասանելիության և մատչելիության բարձրացում
- 4) վարչատարածքային բարեփոխումների արդյունավետության բարձրացում.
- 5) համաչափ վարչական և ֆինանսական ապակենտրոնացման իրականացում՝ համայնքների ֆինանսական նոր կարողությունների ձևավորում և արդյունքահեն իրավասությունների շրջանակի մեծացում
- 6) համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման արդյունավետության բարձրացում
- 7) տեղական ինքնակառավարման մարմինների բավարար նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
- 8) պետության և համայնքների բնակչության լիարժեք վստահության ձևավորում՝ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ.
- 9) տեղական ինքնակառավարման համակարգի հետագա կայուն զարգացման ամուր հիմքերի ստեղծում
- 10) միջհամայնքային համագործակցության ինստիտուտի կիրարկման ապահովում և այլն:

Բայց արդյոք մենք կարո՞ղ ենք խոսել ՀՀ-ում քաղաքացիական հասարակության ձևավորման լուրջ նախադրյալների մասին, քանի որ արձանագրված դրական միտումներին զուգահեռ հայ հասարակության մեջ հիմնականում տեսանելի է նաև իրավագիտակցության ցածր մակարդակ, և, ինչն ամենավտանգավորն է, ընդգծված իրավական նիհիլիզմ¹: Օրենքի համընդհանուր անտեսումը իրավագիտակցության ծայրահեղ ցածր մակարդակի և համարժեք իրավական մշակույթի բացակայության հետևանքն է: Համայնքներում անհատական և կոլեկտիվ իրավագիտակցության բարձրացման արդյունքում միայն կարող ենք արձանագրել Սահմանադրության գործառնությունների կյանքի կոչվելու մասին:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եվրոպայի խորհուրդ. «Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիա». Ստրասբուրգ, 15.10.1985 թ.:
2. ՀՀ Ազգային ժողով. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին». 2002 թ.:

¹ Իրավական կամ իրավաբանական նիհիլիզմ՝ Օրենքի՝ որպես սոցիալական արժեք ներկայացնող երևույթի նկատմամբ ժխտողական վերաբերմունք, դրսևորվում է օրենքները դիտավորյալ խախտելու, իրավակարգն անտեսելու և ընդհանրապես օրենքի անհրաժեշտությունը կասկածի տակ դնելու միջոցներով. առկա է երկու հիմնական տարատեսակ՝ ակտիվ և պասիվ. պասիվ ձևը դրսևորվում է օրենքի հանդեպ անտարբերությամբ, իսկ ակտիվ ձևը՝ օրենքը խախտելու ակտիվ գործողություններով:

3. ՀՀ Ազգային ժողով. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք. ընդունվել է 07.10.1995 թ. Ն-062:
4. ՀՀ Կառավարություն. *Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ*. 2011 թ.
5. Տեղական ինքնակառավարման հիմունքներ. նոր զարգացումներ Է. Հ. Օրդյան ընդհ. խմբ. Եր., Պետ. ծառ., 2002
6. Барабашев, Георгий Васильевич. Местное самоуправление. М., изд. МГУ, 1996.
7. Бондарь, Николай Семёнович. *Муниципальное право*, М., 2002.
8. Василенко, Ирина Алексеевна. Административно-государственное управление в странах Запада. М., 2000.
9. Евдокимов, Вячеслав Борисович и Старцев, Ярослав Юрьевич. *Местное управление в зарубежных странах: правовые аспекты*. М., Спарк, 2001.
10. Федеральный закон «Об обеспечении доступа к информации о деятельности государственных органов и органов местного самоуправления» от 09.02.2009 N 8-ФЗ.
11. Шугрина, Екатерина Сергеевна. Муниципальное право. М., 2005.

WORKS CITED

1. Barabashev, Georgi, Vasilevich, Mestnoe samoupravlenie, M. IZD:, MGU, 1996 [Local Government]. (In Russian).
2. Bondar, Nikolai, Semenovich, Municipalnoe pravo M. 2002. [Municipal Law]. (In Russian)
3. Evdokimov, Vyacheslav, Borisovich, Starcev, Yaroslav, Yurevich, Mestnoe upravlenie v zarubejnih stranax: Pravovie aspekti, M., Spark 2001. [Local Management in Foreign Countries. Legal Aspects]. (In Russian)
4. Federalnih zakon «Ob obespechenii dostupa k informacii o deyatelnosti gosudarstvennix organov i organov mestnogo samoupravleniya» [On Ensuring Access to Information on the Activities of State Bodies and Local Self-Government Bodies] ot 09.02.2009 N 8-F3. (In Russian)
5. «Hayastani Hanrapetutyan varchataracqayin bajanman masin» HH orenq, @ndunvel e 07.10.1995. N-062: [On the Administrative Territorial Division of the Republic of Armenia]. (In Armenian)
6. Hamaynqneri xoshoracman ev mijhamajnqayin miavorumneri dzevavorman hayecakarg. [Concept of Community Enlargement and Formation of Inter-community associations]. (In Armenian)
7. HH orenq «Teghakan inqnakaravarman masin». [RA Law "On Local Self-Government"]. (In Armenian)
8. Shugrina, Ekaterina, Sergeevna. Municipalnoe pravo, M. 2005. [Municipal law]. (In Russian)
9. «Teghakan inqnakaravarman masin Evropakan xartia» Strasburg, 15.10.1985. [European Charter on Local Self-Government]. (In Armenian)
10. Teghakan inqnakar'avarman himunqner. nor zargacoumner [Fundamentals of Local Self-government. New Developments] E'. H. O'rdyan y'ndh. xmb. Er., Pet. c'ar', 2002 (In Armenian)
11. Vasilenko, Irina, Alekseevna Administrativno- gosudarstvennoe upravlenie v stranax zapada. M. 2000. [Administrative and Public Administration in Western Countries]. (In Russian)

BASIC ISSUES OF CONSTITUTIONAL RESPONSIBILITY OF LOCAL SELF-GOVERNMENT BODIES IN THE REPUBLIC OF ARMENIA

HERBERT HARUTYUNYAN

*Yerevan State University,
Faculty of law, Chair of Constitutional Law,
Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to present the powers of the local self-governing bodies of the Republic of Armenia and the issues of constitutional responsibility in the context of constitutional amendments.

Historical and comparative legal analysis presents the evolution of the constitutional institution of local governments in the Republic of Armenia, examines the powers of local self-government and their implementation structures according to the Constitution adopted in 1995, then the constitutional amendments of 2005 and 2015. The subject of study is also the problems of positive and negative constitutional responsibility of local governments of RA and other states. The experience of more than 30 years of local self-government allows us to come to the conclusion that the system has passed the stage of institutional development, which is expressed by the adoption of a number of international obligations, laws and by-laws regulating the relations of the local self-government sector. During that period, the mechanisms of local self-government bodies were developed and implemented, measures aimed at strengthening their capacities were implemented, legislation was amended, and the process of decentralization was deepened. However, there are still a number of serious problems and gaps in the local self-government system that need to be solved to ensure the sustainable development of the system.

The conclusion is that currently the low efficiency of local self-government in RA communities is mainly caused by a number of circumstances. First of all, we believe that processes aimed at raising legal awareness in individual and collective frameworks should be implemented in communities.

Keywords: *local government system, community management, City Council Member, decentralization of management, community leader, territorial administration, administrative territorial reforms, community population democracy.*

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ КОНСТИТУЦИОННОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ГЕРБЕРТ АРУТЮНЯН

*соискатель кафедры конституционного права
юридического факультета
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи - представить полномочия органов местного самоуправления Республики Армения и вопросы конституционной ответственности в контексте конституционных изменений.

Историко-сравнительно-правовой анализ представляет эволюцию конституционного института местного самоуправления в Республике Армения, рассматривает полномочия местного самоуправления и структуры их реализации согласно Конституции, принятой в 1995 году, а затем – конституционным изменениям 2005 и 2015 годов. Предметом исследования также являются проблемы позитивной и негативной конституционной ответственности органов местного самоуправления РА и других государств. Опыт более чем 30-летнего местного самоуправления позволяет прийти к выводу о том, что система прошла этап институционального развития, что выражается в принятии ряда международных обязательств, законов и подзаконных актов, регулирующих отношения сектора местного самоуправления. За этот период были разработаны и внедрены механизмы органов местного самоуправления, реализованы меры, направленные на укрепление их потенциала, внесены изменения в законодательство, углублен процесс децентрализации. Однако в системе местного самоуправления все еще существует ряд серьезных проблем и пробелов, которые необходимо решить для обеспечения устойчивого развития системы.

Сделан вывод о том, что в настоящее время низкая эффективность местного самоуправления в общинах РА обусловлена, главным образом, рядом обстоятельств. Прежде всего, мы считаем, что процессы, направленные на повышение правовой осведомленности на индивидуальном и коллективном уровне, должны осуществляться в общинах.

Ключевые слова: *система местного самоуправления, управление сообществом, член городского совета, децентрализация управления, лидер сообщества, территориальное управление, административно-территориальные реформы, демократия населения общины.*

**ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՅԱՆԳԻ ՂԱԶԱՆ ԳԱՎԱՌԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԸ 19-ՐԴ ՂԱՐԻ ՎԵՐՋԻՆ***

ՀՏԴ 914, 314.1

DOI: 10.52063/25792652-2024.3.22-31

ԱՐԱ ԱԶԱՏՅԱՆ

ԵԴՅ Իջևանի մասնաճյուղի հոլմանիտար գիտությունների ֆակուլտետի
հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու,
ք. Իջևան, Հայաստանի Հանրապետություն
ara.azatyan1991@gmail.com
ORCID: 0009-0001-8143-012X

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈԴՈՍՅԱՆ

ԵԴՅ Իջևանի մասնաճյուղի հոլմանիտար գիտությունների ֆակուլտետի
հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս,
ք. Իջևան, Հայաստանի Հանրապետություն
vladimir.pogosyan@ysu.am
ORCID: 0009-0001-9581-6453

Սույն հոդվածի նպատակն է համապարփակ ուսումնասիրության
ենթարկել Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի ժողովրդագրական
պատկերը 19-րդ դարի վերջին քառորդին: Հայտնի է, որ ժողովրդագրությունը
հայոց պատմության ուսումնասիրության տեսանկյունից ունի ոչ միայն գիտա-
ճանաչողական, այլև քաղաքական նշանակություն: Անշուշտ, ազգային-
քաղաքական խնդիրների նկատմամբ հատուկ վերաբերմունքի աճով է
պայմանավորված այն հանգամանքը, որ 19-րդ դարի երկրորդ կեսի
ժողովրդագրության հարցերը միշտ էլ եղել են ուսումնասիրողների
ուշադրության կենտրոնում:

Հետազոտության առարկան է Ելիզավետպոլի նահանգի Ղազախի
գավառի ժողովրդագրական պատկերը: Հետազոտության խնդիրներն են՝
ուսումնասիրել Ելիզավետպոլի նահանգի կազմավորման գործընթացը և
բնակչության էթնիկական կազմը, ներկայացնել Ելիզավետպոլի նահանգի և
Ղազախի գավառի բնակչությունն ըստ 1873, 1886 և 1897 թվականների
ընտանեկան ցուցակների և մարդահամարի տվյալների, ներկայացնել
Ղազախի գավառի հիմնական բնակչության (հայեր, մուսուլմաններ)
տարիքային կազմը, բացահայտել կրթական մակարդակը, դավանական
պատկերը:

Հետազոտությունն իրականացվել է մարդահամարների տվյալների,
վիճակագրական աղբյուրների և մասնագիտական գրականության

* Հոդվածը ներկայացվել է 16.08.2024թ., գրախոսվել՝ 29.08.2024թ., տպագրության
ընդունվել՝ 31.10.2024թ.:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՄԱՆ ՎՐԱ: ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼ ԵՆՔ ՎԵՐԴՈՒԾՈՒԹՅԱՆ, ԱԿԱՏՄԱՏԻԱՄԵՏԱՏՈՒԿԱՆ և ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ ԹԵՄԱՆ՝ ԽԱՆԳԵԼ ԵՆՔ ԱՅՆ ԵԳՐԱԿԱԳՈՒԹՅԱՆ, ՈՐ չՆԱՅԱԾ ՆԱԽԱՆԳԻ ԲԱԶՄԱԳԳ ԵՐԵՂՈՒՆ՝ ԱՅՆՈՒՄՆԱՅԻՆԻՎ, ԵԼԻԳԱՎԵՏԱԿՈՒ ՆԱԽԱՆԳՈՒՄ ԱԱՐՈՂ ԻՄԱՆԱԿԱՆ ԲՆԱԿԻՅՆԵՐՆ ԷԻՆ ԽԱՅԵՐՆ ՈՒ ՄՈՒՍՈՒՄՆԱՆԵՐԸ: ՄԱՐԴԱԽԱՄԱՐԻ ՍՎՅԱՆԵՐԻԿ ԿԱՐԳ Է ԴԱՌՆՈՒՄ, ՈՐ ԽԱՅԵՐԸ ԻՄԱՆԱԿԱՆՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԳԱԾ ԷԻՆ ԵԼԻԳԱՎԵՏԱԿՈՒ ՆԱԽԱՆԳԻ ՇՈՒՂԻ, ՉԱՆԳԵԳՈՐ և ՂԱԳԱԽ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ: ՄԱՐԴԱԽԱՄԱՐԻ ՍՎՅԱՆԵՐԸ ԽՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՍՎՅԱՆ ԵԳՐԱԿԱԳՆԵԼՈՒ ՆԱՆ ԱՅՆ, ՈՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱԳՄՈՒՄ ԳՈՆՎՈՂ ԱՐԼԵՂԱՆ ՉԱՅԱՍՏԱՆԻ ԱԳԳԱԲՆԱԿՆՈՒԹՅԱՆ ԽԱՄԱՐ ՍՈՒՂԾՎԵԼ ԷՐ ԽԱՄԵՏԱՏԱՐԱՐ ԱՎԵԼԻ ԱՆՎՈՒՄՆԱԳ ՈՒ ԿԱՅՈՒՆ ԻՐԱՎԻԾԱԿ, ՈՐՆ ԷԼ ԻՐ ԽԵՐԹԻՆ ԱԳԳԱԲՆԱԿՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԱԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԱՐԳԱԳՄԱՆ ԽԱՄԱՐ ՆԱԿԱՍՏԱՎՈՐ ԱԳՂԱԿ ԴԱՐԾԱՎ: ՑԱՆԿԱԿԻ ԿԻՆԵՐ ԽԱՄԵՏԱՏԵԼ ԵԼԻԳԱՎԵՏԱԿՈՒ ՂԱԳԱԽԻ ԳԱՎԱՌԻ ԽԱՅ ԲՆԱԿՆՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ և ԱԾԻ ՄԻՍՈՒՄՆԵՐԸ ՊԱՐՏԿԱԽԱՅԱՍՏԱՆԻ և ՌՈՒՍԱԿԱՆ ՍԻՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՉՐՋԱՆՈՒՄ, ՍԱԿԱՅՆ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԿՈՎ ՎԱՐՋԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐԱԿՈՒՄՆԵՐԸ, ՆՈՐ ՆԱԽԱՆԳՆԵՐԻ և ՍՈՒՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽԱՄԱԿԱՐԳԻ ԶԼԱՎՈՐՈՒՄ՝ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԿԱԳՄՈՎ ԽԱՄԵՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱԳՆԵԼ ԾՁԳՐԻՍ Է:

ՉԻՄԱՔԱՌԵՐ՝ ԵԼԻԳԱՎԵՏԱԿՈՒ ՆԱԽԱՆԳ, ՂԱԳԱԽԻ ԳԱՎԱՌ, ՄԱՐԴԱԽԱՄԱՐԻ ՍՎՅԱՆԵՐ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱԿՆՈՒԹՅՈՒՆ, ԽԱՅԵՐ, ՄՈՒՍՈՒՄՆԱՆԵՐ, ԱՐԱԿԱՆ, ԻԳԱԿԱՆ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի կեսերից արևելահայության կյանքում նկատվեց որոշակի աշխուժացում, ինչը պայմանավորված էր Արևելյան Չայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու հանգամանքով: Բանն այն էր, որ Պարսկաստանի տիրապետության տակ խայերը զրկված էին ոչ միայն կյանքական ապահովությունից, այլև կյանքի տարրական պայմաններից: Ուստի՝ Ռուսաստանին միանալուց հետո արևելահայության կյանքի տարբեր բնագավառներում նկատվեց զգալի առաջընթաց:

19-րդ դարում Անդրկովկասը մի քանի անգամ ենթարկվում է վարչական փոփոխությունների, որոնց հիմքում տարածաշրջանի ազգային ու ազգագրական տարանջատման սկզբունքը չէր: Խնդիրն այն էր, որ ցարական իշխանությունը, վարչատարածքային միավորները կազմավորելիս առաջնորդվում էր գաղութատիրական այն սկզբունքով, որով կհեշտանար դրանց կառավարումը: Բնական է, որ այս դեպքում պետք է անտեսվեին տվյալ երկրամասում ապրող ժողովուրդների ազգային առանձնահատկություններն ու իրավունքները, այդ թվում նաև պատմական հայրենիքի «գաղափար» ու «տարածք» հասկացությունները (Չայոց պատմություն 389): Ուստի՝ նման պայմաններում ցարական կառավարությունն իր խամար նպատակով տարբերակով Անդրկովկասը բաժանեց հինգ նահանգների: Ամեն մի նահանգ իր ԽԵՐԹԻՆ բաժանվում էր գավառների: Գավառների սահմանադատման հիմքում դրված էր այն սկզբունքը, որ դրանցից ոչ մեկն իր տարածքով չպետք է գերազանցեր 6500 քառ. վերստը, իսկ բնակչությունը 10 հազար տնտեսությունը կամ 80 հազար մարդը (Չայ ժողովրդի պատմություն 15): Վարչատարածքային այս բաժանման արդյունքում Արևելյան Չայաստանի տարածքի մեծ մասը մտավ Երևանի, իսկ մնացած հատվածները՝ Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների մեջ:

Ելիզավետպոլի նահանգի կազմավորումը և ծողովրդագրական պատկերը 19-րդ դարի վերջին

19-րդ դարի 80-90-ական թթ. Արևելյան Հայաստանը շարունակում էր գոյատևել վարչաքաղաքական այն բաժանմամբ, որը հաստատվել էր դեռևս 1867 թ., երբ Անդրկովկասը բաժանվել էր հինգ նահանգների:

Անդրկովկասյան տարածաշրջանում հայության առաջին մեծաքանակ հատվածը բնակվում էր Երևանի, իսկ երկրորդը՝ Ելիզավետպոլի նահանգում: Ալեքսանդր II ցարի՝ 1867 թ. դեկտեմբերի 9-ի՝ «Կովկասյան և Այսրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխման մասին» հրամանագրով Անդրկովկասի վարչական քարտեզը հերթական անգամ վերափոխվեց, կատարվեց վարչական նոր բաժանում, որի համաձայն՝ ձևավորվեցին Զուբայիսի, Թիֆլիսի, Բաքվի, Երևանի և Ելիզավետպոլի նահանգները (Առաքելյան 10; Հովհաննիսյան 198): Ելիզավետպոլի նահանգի մեջ մտնում էին Բաքվի նահանգի Նուխիի և Շուշիի, Թիֆլիսի նահանգի Ելիզավետպոլի և Երևանի նահանգի Օրդուբադի գավառների մի մասը: Փաստորեն Ելիզավետպոլի նահանգը կազմավորվում է Թիֆլիսի, Բաքվի և Երևանի նահանգների տարածքների հաշվին: Նահանգը բաղկացած էր ութ գավառից՝ Ելիզավետպոլի, Արեշի, Նուխիի, Ղազախի, Ջևանշիրի, Ջեբրայիլի, Չանգեզուրի և Շուշիի (Первая всеобщая перепись населения российской империи 1897 III): Այսպիսով՝ վարչատարածքային այս բաժանման հետևանքով ստեղծվեց Ելիզավետպոլի նահանգը (1868 թ. փետրվարի 19-ին) (Списки населенных мест Российской империи II):

Ելիզավետպոլի նահանգը եղել է Անդրկովկասի ամենաընդարձակ ու նշանավոր երկրամասերից մեկը, որը զբաղեցնում էր 38.782,5 քառ. վերստ¹ (մղոն) մակերես (Первая всеобщая перепись населения российской империи 1897 III):

1873 թ. Ելիզավետպոլի նահանգի բնակչությունը կազմում էր 587450 մարդ, 1886 թ.՝ 728251 մարդ (Елизаветпольская губерния I), իսկ արդեն 1897 թ. հունվարի 28-ի համառոտական առաջին մարդահամարի տվյալներով՝ 878415 մարդ (Первая всеобщая перепись населения российской империи 1897 III): Այս տվյալներից պարզ է դառնում, որ 19-րդ դ. գրեթե ողջ ընթացքում նահանգի բնակչությունն աճման միտում է ցուցաբերել: Այդ բնակչությունը, ըստ գավառների, տեղաբաշխված էր Աղյուսակ 1-ում ներկայացված կերպ:

Այս տվյալներից պարզ երևում է, որ ամենաշատ բնակչություն ունեցող գավառներն են եղել Ելիզավետպոլը, Շուշին, Չանգեզուրը, Նուխին և Ղազախը: Ամենաքիչ բնակչություն ունեցող գավառը Ջեբրայիլն էր: Ինչ վերաբերում է բնակչության խտությանը, ապա պիտի նշել, որ ամենախիտ բնակեցվածը Նուխիի գավառն էր (36,02%), իսկ ամենանոսրը՝ Ջևանշիրը (15,09%), որը կարելի է բացատրել նրանով, որ հիշյալ գավառների ֆիզիկաշխարհագրական պայմանները տարբերվում էին միմյանցից (Первая всеобщая перепись населения российской империи 1897 IV): Ելիզավետպոլի նահանգում բնակչությունը հավասարաչափ չէր տեղաբաշխված քաղաքային և գյուղական բնակավայրերում: Նահանգի քաղաքային բնակչության ընդհանուր թիվը 10,16% էր, իսկ գյուղականը՝ 89,84%, որը պայմանավորված էր Ռուսական կայսրության ուրբանիզացման ցածր մակարդակով: Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչության 18,38%-ը (53732 մարդ) ապահովված էր ինքնուրույն զբաղմունքով (մենատնտեսությամբ), որից 44013-ը՝ գավառներում (215166 ընտանիքի անդամներով), 9719-ը՝ քաղաքներում (23290 ընտանիքի անդամներով) (Ասոյան 244): Հարկ է նաև նշել, որ նահանգի բնակչությունը հիմնականում զբաղվում էր այգեգործությամբ ու բանջարաբուծությամբ:

¹ Վարչամիավորների տարածքները տրված են Ռուսական կայսրությունում ընդունված քառակուսի վերստերով (1 քառ. վերստը հավասար է 1,138 քառ. կմ):

Մարդահամարի տվյալներից պարզվում է նաև, որ Ելիզավետպոլի նահանգի թե՛ քաղաքային և թե՛ գյուղական բնակչության սեռային բաշխվածության առումով գերակշռում էր արական սեռը (Первая всеобщая перепись населения российской империи 1897 IV):

Աղյուսակ 1

Բնակչության բաշխվածությունը Ելիզավետպոլի նահանգում ըստ գավառների (Елизаветпольская губерния I, Первая всеобщая перепись населения российской империи 1897 III)

N	Գավառ	Բնակչություն		
		1873	1886	1897
1.	Ելիզավետպոլ	100.050	122.888	162.778
2.	Արեշ	37.657	51.845	67.277
3.	Ջեբրայիլ	41.032	46.402	66.360
4.	Ջեվանշիր	48.233	54.950	72.719
5.	Չանգեզուր	87.948	123.997	137.871
6.	Ղազախ	74.852	84.888	112.074
7.	Նուխի	94.375	117.013	120.555
8.	Շուշի	103.303	126.268	138.771
	Ընդամենը	587.450	728.251	878.415

1897 թ. մարդահամարի տվյալներով՝ Ելիզավետպոլի նահանգի բնակչության կազմը ըստ մայրենի լեզվի ներկայացված էր հետևյալ կերպ՝ թաթարներ՝ 60,80%, հայեր՝ 33,26%, լեզգիներ՝ 2,57%, ռուսներ (վելիկոռուս, մալոռուս, բելոռուս)՝ 2,04%, գերմանացիներ՝ 0,36% , քրդեր՝ 0,35%, թաթեր՝ 0,20%, վրացիներ՝ 0,14%, լեհեր՝ 0,07%, հույներ՝ 0,06%, հրեաներ՝ 0,02% (Первая всеобщая перепись населения российской империи 1897 VII): Հարկ է նշել, որ 1897 թ. մարդահամարը Ռուսական կայսրության բնակչության առաջին և միակ ընդհանուր մարդահամարն է, որը, ըստ հետազոտողների, 19-րդ դարի վերջի Ռուսաստանի բնակչության թվի և կազմի վերաբերյալ հավաստի տվյալների միակ աղբյուրն է: Այն գիտականորեն կազմակերպվել և իրականացվել է միաժամանակ ողջ պետության տարածքում՝ մեկ միասնական ծրագրով և հրահանգներով:

Վերոնշյալ տվյալներից պարզ է դառնում, որ նահանգում համեմատաբար մեծաթիվ էին աղբյուրանական թաթարները, որոնք Անդրկովկաս էին ներթափանցել ուշ միջնադարից սկսած: Փաստորեն Բաքվի նահանգից հետո հաջորդ նահանգը Ելիզավետպոլն էր, որտեղ մուսուլմանները կազմում էին մեծամասնություն: Եթե 1886 թ. տվյալներով նրանց թիվը կազմում էր 448663 մարդ, ապա, ըստ Բ. Իշխանյանի ուսումնասիրության, 1897 թ. տվյալներով նրանց թիվը հասնում էր 552822-ի (23 %, այսինքն՝ տարեկան գրանցվել է միջինում 2% աճ) (Իշխանյան 79): Ստացվում է, որ 11

տարվա ընթացքում սրանց թիվը աճել էր 104639-ով: Անշուշտ, թաթարների թվի աճի այս տեսակերը հետևանք էր ոչ միայն բնական աճի, այլև ներգաղթի: Բանն այն էր, որ 19-րդ դարի 80-ականներից սկսած՝ միայն Պարսկաստանի տարածքից Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներ եկածների թիվը տարեկան կազմում էր 30-35 հազար մարդ (Հովհաննիսյան 68): Ցավոք, մարդահամարի տվյալներով ադրբեջանական թաթարների մեջ են հաշվվել նաև թրքախոս հայերը: Այսպես, օրինակ՝ Նուխի գավառի մոտ 7 հազար թրքախոս հայեր 1897 թ. մարդահամարի տվյալներով տեղ են գտել մուսուլմանների շարքում, մինչդեռ, ըստ Բ. Իշխանյանի հաշվարկների, Նուխիի գավառի հայերի թիվը ոչ թե 18899 էր, այլ պետք է լիներ 25367 (Իշխանյան 114):

Այսպիսով՝ 1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ հայ բնակչության թիվը Ելիզավետպոլի նահանգում 292.188 էր, ի տարբերություն 1886 թ. տվյալների, որի արդյունքում այն հասնում էր 258.324: Անշուշտ, սա պետք է դիտարկել ծնելիության մակարդակի բարձրացման և ներգաղթի հետևանք: Ըստ գավառների՝ հայ և մուսուլման ազգաբնակչությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ.

Աղյուսակ 2

Հայ և մուսուլման բնակչության բաշխումը Ելիզավետպոլի նահանգում (Первая всеобщая перепись населения российской империи 1897 3, Իշխանյան 114)

Գավառներ	1886 թ.		1897 թ.	
	Հայեր	Մուսուլման	հայեր	Մուսուլման
Ելիզավետպոլ	35717	79783	43.040	104487
Արեշ	12278	39546	13.822	53290
Ջեբրայիլ	11669	32214	15.746	49599
Ջևանշիր	16073	38881	19.551	52853
Չանգեզուր	57425	65820	63.622	73047
Ղազախ	33118	49952	43.555	64325
Նուխի	18963	89580	18.899	92220
Շուշի	73081	52887	73953	63001
Ընդամենը	258324	448663	292188	552822

Հարկ է նշել, որ ներկայացված այս տվյալները վերաբերում են նահանգի առկա բնակչությանը: Ի դեպ, վերոնշյալ տվյալներից պարզ է դառնում, որ մուսուլմանների մեծամասնությունը կենտրոնացած էր Ելիզավետպոլի, ապա՝ Նուխիի ու Չանգեզուրի գավառներում, իսկ հայերը հակառակը՝ կենտրոնացած էին Շուշիի, Չանգեզուրի և Ղազախի գավառներում:

Ղազախի գավառի բնակչությունն ըստ 1897 թ. մարդահամարի

Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառը կազմված էր Զարվանսարայի (Իջևան), Բարանայի (Նոյեմբերյան), Կրասնոսելսկի (Ճամբարակ), Շամշադինի,

Ղազախի և Թուրքի շրջաններից: Ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների Ղազախի գավառի տարածքը կազմում էր 6427 քառ. կմ կամ 6024 կմ վերստ(Первая всеобщая перепись населения российской империи 1897 1):

Ղազախի գավառն ազգագրական առումով կազմված էր երկու մասերից: Հայկական հատվածը գավառի մեծ մասն էր և հիմնականում ընդգրկում էր ներկայիս Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի գրեթե ողջ տարածքը, որը 2587 քառ. կմ է: Հայկական հատվածի մեջ էին մտնում նաև Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի Աղստև գետի Գետիկ վտակի հովտում ընկած հյուսիսային բնակավայրերը՝ այդ թվում նաև Արծվաշենն իր շրջակայքով (Խաչատրյան, Սուքիասյան, Բադալյան 15):

Ղազախի գավառի հիմնական բնակիչներն ի սկզբանե եղել են հայերն ու մուսուլմանները: Այսպես, 19-րդ դարի 70-ական թթ. Ղազախի գավառի բնակչության էթնիկական կազմը հետևյալն էր՝ հայեր՝ 24%, մահմեդականներ՝ 72%, ռուսներ՝ 4% (Սարգսյան 40):

1873 թ. տվյալների համաձայն՝ Ղազախի գավառն ուներ 9933 ծուխ՝ 74852 մարդ բնակչությամբ, իսկ ահա 1886 թ. ընտանեկան ցուցակների համաձայն՝ գավառն ուներ 52 գյուղական հասարակություն, 128 գյուղ, 11524 ծուխ, 84888 մարդ բնակչությամբ (Елизаветпольская губерния I-IV), որից 48751 արական, իսկ 36137 իգական սեռի ներկայացուցիչներ էին (Елизаветпольская губерния 16-17): Ստացվում է, որ 13 տարվա ընթացքում բնակչությունը գրանցել է 13,4% աճ: Հայերն ապրում էին Աչասուի, Բարանայի, Դիլիջանի, Բաշքենդի, Ղալաչայի, Քարվանսարայի, Ղարադաշի, Ղըրըքենդի, Ղոշդոթանի, Ղուլալի, Կուլպի, Թաթուլքենդի, Թաուզդալայի, Ուզունթալայի և Խաշթառակի գյուղական համայնքներում (Елизаветпольская губерния 144-152): Ընդհանուր առմամբ, Ղազախի գավառում ապրում էր 1 լեռ, 2 գերմանացի, 7 հրեա, 16 վրացի, 160 ուղի, 1324 թաթ, 1687 ռուս, 33118 հայ, 48573 ադրբեջանական թաթար (Елизаветпольская губерния 152-153):

Աղյուսակ 3

Բնակչության բաշխումը Ելիզավետպոլի նահանգում ըստ 1886 թ. ընտանեկան ցուցակների (Елизаветпольская губерния)

N	Գավառներ	Ծխերի քանակը	Բնակչությունը		
			Արրական	Իգական	Ընդամենը
1	Ելիզավետպոլ	16458	57132	45462	102594
2	Արեշ	9619	28240	23605	51845
3	Ջեբրայիլ	8663	26361	20041	46402
4	Ջևանշիր	9664	31834	23116	54950
5	Չանգեզուր	19477	68560	55437	123997
6	Ղազախ	11524	48751	36137	84888
7	Նուխի	16368	50317	40802	91119
8	Շուշի	16936	57038	42424	99462

Ահա այս տվյալներից երևում է, որ 13 տարում Ղազախի գավառի բնակչությունը կտրուկ աճման միտում է ցուցաբերել, ինչը եղավ շարունակական, քանզի 1897 թ. տվյալներով Ղազախի գավառի բնակչությունը հասնում էր 112074 հոգու, որից 63370 արական, իսկ 48704 իգական սեռի ներկայացուցիչներ էին (Первая всеобщая перепись населения российской империи 1897 1): Գավառի բնակչությունը բազմազգ էր, որի մեծամասնությունը կազմում էին հայերն ու ադրբեջանական թաթարները:

Աղյուսակ 4

Ղազախի գավառի բնակչության կազմն ըստ 1897 թ. մարդահամարի կյուրերի (Первая всеобщая перепись населения российской империи 1897 3)

Ազգություն	Թվաքանակ
Ադրբեջանական թաթարներ	64101
Հայեր	43555
Ռուսներ	3444
Քրդեր	137
Գերմանացիներ	43
Այլազգիներ	794
Ընդամենը	112074

Գաղտնիք չէ, որ մարդահամարը մարդկային և տնտեսական ռեսուրսների հաշվառման առաջին և ամենաճշգրիտ մեթոդն է: Ուստի՝ 1897 թ. մարդահամարի կյուրերն ամբողջական տվյալներ են պարունակում նաև բնակչության տարիքային խմբերի մասին:

Աղյուսակ 5

Ղազախի գավառի բնակչության տարիքային կազմն ըստ 1897 թ. մարդահամարի կյուրերի (Первая всеобщая перепись населения российской империи 1897 6-7):

Տարիք	Արական	Իգական	Ընդամենը
Մինչև 1 տարեկան	1208	949	2157
1-9	18870	14981	33851
10-19	12698	8076	20774
20-29	11160	8985	20145

30-39	8115	6614	14729
40-49	5341	3898	9239
50-59	3135	2335	5470
60-69	1718	1591	3309
70-79	692	750	1442
80-89	289	367	656
90-99	87	92	179
100-109	19	24	43
110 և ավելի	-	1	1
Անհայտ տարիք	38	41	79
Ընդամենը	63370	48704	112074

Մարդահամարի տվյալներից ամբողջական պատկերացում ենք կազմում նաև բնակչության ամուսնական կարգավիճակի մասին: Այսպես, Ղազախի գավառի բնակչության չամուսնացած կամ միայնակ կարգավիճակ ունեին 38626 արական և 20949 իգական սեռի ներկայացուցիչներ, ամուսնացած էր 23775 տղամարդ և 23111 կին, այրիացած էր 851 տղամարդ և 4523 կին, բաժանված էր 40 տղամարդ և 28 կին, իսկ չճշտված ամուսնական կարգավիճակ ուներ 78 արական և 93 իգական սեռի ներկայացուցիչ (Первая всеобщая перепись населения российской империи 1897 23):

Մարդահամարը մանրամասն տվյալներ է ընդգրկում նաև գավառի ազգաբնակչության կրթական մակարդակի և գրագիտության մասին: Անշուշտ, գրագիտության մակարդակը գավառում բավական ցածր էր: Ազնվական ընտանիքների ներկայացուցիչներից գրագետ էր 437 հոգի, որից 330 արական և 107 իգական սեռի ներկայացուցիչ, անգրագետ էր 1347 արական և 1401 իգական սեռի ներկայացուցիչ: Ինչ վերաբերում է գյուղական կարգավիճակ ունեցող անձանց, ապա պիտի նշել, որ նրանց մեջ դարձյալ մեծամասնությունն անգրագետ էր՝ 56524 արական և 45703 իգական սեռի ներկայացուցիչ, իսկ գրագետ էր ընդամենը 2811 հոգի, որից 2544 արական և 267 իգական սեռի ներկայացուցիչ: Ի դեպ, հոգևորական աստիճան ունեցող անձանց մեծ մասը դարձյալ անգրագետ էր (արական՝ 102, իգական՝ 132), գրագետ էր ընդամենը 89 հոգի, որից 80-ը արական սեռի ներկայացուցիչ, իսկ 9-ը՝ իգական (Первая всеобщая перепись населения российской империи 1897 46-48):

Մարդահամարի տվյալները ցույց են տալիս նաև դավանանքի հստակ պատկերը: Ընդհանուր առմամբ Ղազախի գավառից հայ առաքելական եկեղեցու հետևորդ էր 23147 արական և 19605 իգական սեռի ներկայացուցիչ, ուղղափառ էր 922 արական և 422 իգական սեռի ներկայացուցիչ, մահմեդական էր 36566 արական և 27149 իգական սեռի ներկայացուցիչ և այլն (Первая всеобщая перепись населения российской империи 1897 74-75):

Այսպիսով՝ մարդահամարը բավականաչափ տեղեկություններ է պարունակում բնակչության տեղաբաշխման, թվաքանակի, գրագիտության աստիճանի ու

դավանաբանական պատկերի մասին: Ղազարի գավառի հայ ազգաբնակչության բաշխվածության ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ հայաբնակ գավառամասերում հայ բնակչությունը աճի նմանօրինակ շարժընթացը պայմանավորված էր գյուղական բնակավայրերում այլեթնիկ խմբերի բացակայությամբ, որի դրական կողմը հատկապես նկատելի դարձավ հայթաթարական ընդհարումների ժամանակ, երբ Ղազարի գավառի հայաբնակ գյուղերի բնակչությունը կարողացավ ոչ միայն կանխարգելել հայկական գյուղերի նկատմամբ հարձակումները, այլև իրականացնել պատժիչ գործողություններ:

Եզրակացություն

Ամփոփելով սույն հետազոտության արդյունքները՝ հանգում ենք այն եզրակացության, որ 19-րդ դարի վերջին հայերը Ելիզավետպոլի նահանգի բնակչության մեջ թվաքանակով բազմամարդ երկրորդ էթնիկ խումբն էին: Հայ բնակչության հիմնական հատվածը կենտրոնացած էր Շուշիում, Չանգեզուրում և Ղազարում: 19-րդ դարի վերջին հայ բնակչության թվի շարժընթացը և զգալի աճը պայմանավորված էր Ռուսական կայսրությունում հայ բնակչության համար ստեղծված համեմատաբար բարենպաստ կենսապայմաններով և սոցիալ-տնտեսական դրությամբ: Այսպես, եթե 1886 թ. հայ բնակչության թիվը 258324 էր, ապա 1897 թ. տվյալներով այն կազմում էր 292188, ստացվում է, որ հայ ազգաբնակչությունը 11 տարվա ընթացքում ավելացել էր 33864-ով: Անշուշտ, սա պետք է համարել և՛ բնական և՛ մեխանիկական աճի հետևանք:

1886 և 1897 թթ. մարդահամարների նյութերում Ելիզավետպոլի նահանգի այլ գավառների հետ միաժամանակ ներկայացված էր նաև Ղազարի գավառը: Սույն մարդահամարների նյութերը հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու գավառի ժողովրդագրական պատկերի, բնակչության տարիքային կազմի և շարժընթացի մասին: Այս տեսանկյունից 1897 թ. մարդահամարի նյութերն աղբյուրագիտական նշանակություն ունեն Ղազարի գավառի ազգաբնակչության էթնիկական կազմի շարժընթացի, տարիքային կազմի մասին և որոշակիացնում են հետագա ժողովրդագրական շարժընթացների հնարավոր միտումները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան, Գոհար. *Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը XIX դարում*. Երևան, 2003:
2. Ասոյան, Լիլիթ. «Ելիզավետպոլի նահանգի բնակչությունը XIX դարի վերջին (ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների)», *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2008, N 1, էջ 241-246:
3. Իշխանյան, Բախշի. *Վիճակագրական ուսումնասիրություններ Անդրկովկասյան ժողովուրդների*. մաս 1, Բաքու, 1919:
4. Խաչատրյան, Կարեն, Սուքիասյան, Համո, Բադալյան, Գեղամ. *Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին*. Երևան, 2015:
5. *Հայ ժողովրդի պատմություն*. ԳԱ հրատ., հ. 6, Երևան, 1981:
6. *Հայոց պատմություն*. հ. III, գիրք առաջին, ԳԱԱ ՊԻ, Երևան, 2010:
7. Հովհաննիսյան, Գայանե. «Ելիզավետպոլի նահանգի հայ բնակչության ժողովրդագրական պատկերն Առաջին աշխարհամարտի նախաշեմին». *Լրաբեր Հասարակական Գիտությունների*, 2018, N 3, էջ 106-115:
8. Հովհաննիսյան, Լեռնիկ. «Արցախի բնակչությունն ըստ 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալների». *Հայագիտական հանդես*, հոդվածների ժողովածու, 2010, N 1, էջ 60-63:

9. Սարգսյան, Համլետ. *Ղազախի գավառի բնակչությունը 19-րդ դարում*. Հանրապետական գիտական նստաշրջան, նվիրված 1982-1983թթ. ազգագրական և բնափոխության դաշտայի հետազոտությունների հանրագումարին, զեկուցումների թեզիսներ, Երևան, 1984:

10. Елизаветпольская губерния. *Свод статистических данных, извлеченных из посемейных списков населения Кавказа*. Издание Кавказского статистического комитета, Тифлис, 1888.

11. Обзор Елизаветпольской губернии за 1908 г., Елисаветполь. Типография Ахмеда Гаджи-Гасанова, 1908.

12. Первая всеобщая перепись населения Российской империи 1897. Елизаветпольская губерния, кн. 63 СПб, издание центрального статистического комитета министерства внутренних делъ. подъ редакцию Н. А. Тройницкаго, 1904.

13. «Списки населенных мест Российской империи». По Кавказскому краю, LXV. Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1859 по 1864 год. Издан Кавказским статистическим комитетом при главном управлении наместника Кавказского. Сост. главным ред. комитета Н. Зейдлицем, Тифлис, 1870.

WORKS CITED

1. Arakelyan, Gohar, Gandzak-Yelizavetpoli bnakchutyuny XIX darum [The Population of Gandzak-Elizavetpol in the 19th century, Yerevan] Erevan, 2003. (in Armenian)

2. Asoyan, Lilit, Yelizavetpoli nahangi bnakchutyuny XIX d. verjin, (yst 1897 t. mardahamari tvyalneri) Lraber hasarakakan gitutyunneri, N 1, 2008, ej 241-246. [The Population of Elizavetpol Province at the End of the 19th century (according to the 1897 census), Journal of Social Sciences, 2008, N 1, p. 241-246.], (in Armenian)

3. Ishkhanyan, Bakhshi, Vichakagrakan usumnasirutyunner Andrkovkasyan zhoghovurdneri, mas 1, [Statistical Studies of Transcaucasian Peoples, Baku], Baku, 1919. (in Armenian)

4. Khachatryan, Karen, Sukiasyan, Hamo, Badalyan, Gegham, Khorhrdayin Hayastani yev LGHIM-i taratskayin korustnery 1920-1930-akan tvakannerin [Territorial Losses of Soviet Armenia and Nagorno-Karabakh in the 1920s-1930s., Yerevan], Erevan, 2015. (in Armenian)

5. Hay zhoghovrdi patmutyun, GA hrat., h. 6, [History of the Armenian people. GA ed., volume 6, Yerevan], Erevan, 1981. (in Armenian)

6. Hayots patmutyun, h. III, girk arajin, GAA PI, [Armenian History. volume III, book one, NAS PI, Yerevan], Erevan, 2010. (in Armenian)

7. Hovhannisyan, Gayane, Yelizavetpoli nahangi hay bnakch'ut'yan zhoghovrdagrakan patkern Arrajin ashkharhamarti nakhashemin, Lraber Hasarakakan Gitut'yunneri, 2018, N 3, 106-115 ejer ["Demographic Picture of the Armenian Population of Elizavetpol Province on the Eve of the First World War". Journal of Social Sciences, 2018, N 3, p. 106-115]. (in Armenian)

8. Hovhannisyan, Lernik, Arcakhi bnakchutyuny yst 1897 t. hamarusastanyan arajin mardahamari tvyalneri, Hayagitakan handes, hodvacneri joxovacu, 2010, N 1, 60-63 ejer, ["The Population of Artsakh According to 1897 data of the first all-Russian census". Journal of Armenian Studies, collection of articles, 2010, N 1, p. 60-63]. (in Armenian)

9. Sargsyan, Hamlet, Ghazakhi gavarri bnakchutyuny 19-rd darum, Hanrapetakan gitakan nstashrjan, nvirvats 1982-1983 tt. azgagrakan yev banahyusakan dashtayin hetazotutyunneri hanragumarin. Zekutsumneri tezisner [The Population of Kazakh

province in the 19th century. Republican Scientific Session, dedicated to the Summit of Studies in the Ethnographic and Folklore Field of 1982-1983, abstracts of reports, Yerevan], Erevan, 1984. (in Armenian)

10. Elisavetpol'skaja gubernija. Svod statisticheskikh dannyh izvlechennyh iz posemejnyh spiskov naselenija Kavkaza, izdanie Kavkazskogo statisticheskogo komiteta, [Elisavetpol Province. Collection of Statistical Data Extracted from Family Lists of the Population of the Caucasus. Publication of the Caucasian Statistical Committee, Tiflis], Tiflis, 1888. (in Russian)

11. Obzor Elisavetpol'skoj gubernii za 1908 g., Elisavetpol. Tipografija Ahmeda Gadzhi-Gasanova, [Review of the Elisavetpol Province for 1908, Elisavetpol. Printing house of Akhmed Gadzhi-Gasanov] 1908. (in Russian)

12. Pervaja vseobshhaja perepis' naselenija rossijskoj imperii 1897. Elizavetpolskaja gubernija, kn. 63 SPB, izdanie central'nago statisticheskago komiteta ministerstva vnutrennih del. pod redakcieju N. A. Trojnickago [The First General Census of the Population of the Russian Empire 1897. Elizavetpol province, book 63 SPB, publication of the central statistical committee of the Ministry of Internal Affairs. edited by N. A. Troinitsky], 1904. (in Russian)

13. Spiski naselennyh mest Rossijskoj imperii. Po Kavkazskomu kraju, LXV. Bakinskaja gubernija. Spisok naselennyh mest po svedenijam 1859 po 1864 god. Izdan Kavkazskim statisticheskim komitetom pri glavnom upravlenii namestnika Kavkazskogo. Sost. glavnym red. komiteta N. Zejdlicem ["Lists of Populated Areas of the Russian Empire". For the Caucasus Region, LXV. Baku Province. List of Populated Areas According to Information from 1859 to 1864. Published by the Caucasus Statistical Committee under the Main Administration of the Viceroy of the Caucasus. Comp. by the Editor-in-Chief of the Committee N. Zeidlits, Tiflis], Tiflis, 1870. (in Russian)

DEMOGRAPHIC PICTURE OF THE POPULATION OF THE GHAZAKH DISTRICT OF ELIZAVETPOL PROVINCE AT THE END OF THE 19TH CENTURY

ARA AZATYAN

*Ijevan Branch of Yerevan State University,
Department of Armenian History and Social Science, Faculty of Humanities,
Ph.D in History, Associate Professor,
Ijevan, the Republic of Armenia*

VLADIMIR POGHOSYAN

*Ijevan Branch of Yerevan State University,
Faculty of Humanities, Chair of Armenian History and Social Studies, Lecturer,
Ijevan, the Republic of Armenia*

The purpose of this article was to present the demographic picture of Elisavetpol province and Ghazakh district at the end of the 19th century. It is known that demography has not only scientific-cognitive, but also political significance from the point of view of the study of Armenian history. Undoubtedly, the fact that demographic issues of the second half of the 19th century have always been in the center of researchers' attention is due to the growth of a special attitude towards national-political issues.

The subject of the study is the demographic picture of the Ghazakh district of Elisavetpol Province. Research objectives: to study the process of formation of

Elizavetpol province and ethnic composition of the population, to present the population of Elizavetpol province and Kazakh uyezd according to family lists and census data for 1873, 1886 and 1897, to present the age composition of the main population (Armenians, Muslims) of Kazakh Uyezd, to identify the level of education, confessional picture.

The research was conducted on the basis of census data, statistical sources and professional literature review.

In the course of the study, analytical, historical-comparative and descriptive methods were used.

Studying the topic, we came to the conclusion that despite the state's multi-ethnicity, Armenians and Muslims were the main residents living in Elizavetpol province. It is clear from the census data that Armenians were mainly concentrated in Shushi, Zangezur and Ghazakh districts of Elizavetpol province. The census data also allow us to conclude that a relatively safer and more stable situation was created for the population of Eastern Armenia, which is part of Russia, which in turn was a favorable stimulus for the life activity and development of the population.

It would be desirable to compare the size of the Armenian population and growth trends of the Ghazakh district of Elizavetpol province during Persian Armenia and Russian rule, but given the administrative and territorial transformations, the formation of new provinces and the system of local self-government, in fact, the comparison with the provincial composition is inaccurate.

Keywords: *Elizavetpol province, Ghazakh district, census data, demography, population, Armenians, Muslims, male, female.*

ДЕМОГРАФИЧЕСКАЯ КАРТИНА НАСЕЛЕНИЯ КАЗАХСКОЙ ПРОВИНЦИИ ЕЛИЗАВЕТПОЛЬСКОЙ ГУБЕРНИИ В КОНЦЕ XIX ВЕКА

ԱՐԱ ԱԶԱԿՅԱՆ

*доцент кафедры истории Армении и обществознания
факультета гуманитарных наук Иджеванского филиала
Ереванского государственного университета,
кандидат исторических наук,
г. Иджеван, Республика Армения*

ВЛАДИМИР ПОГОСЯН

*преподаватель кафедры истории Армении и обществознания
факультета гуманитарных наук Иджеванского филиала
Ереванского государственного университета,
г. Иджеван, Республика Армения*

Цель данной статьи – представить демографическую картину Елизаветпольской губернии, в частности, Казахского уезда, в конце XIX века. Известно, что демография имеет не только научно-познавательное, но и политическое значение с точки зрения изучения истории Армении. Тот факт, что демографические проблемы второй половины XIX века всегда находились в центре внимания исследователей, обусловлен ростом особого отношения к национально-политическим вопросам.

Область исследования — Елизаветпольское губерния, основанная в 1868 году, и входящий в ее состав Казахский уезд. Задачи исследования – изучить процесс формирования и этнический состав Елизаветпольской губернии,

представить численность населения Елизаветпольской губернии и Казахского уезда по данным 1873, 1886 и 1897 годов и показать ее динамику, поскольку численность населения губернии показало растущую тенденцию на протяжении почти всего XIX века, представить основные возрастные группы населения Казахского уезда (армяне, мусульмане), составить ясную картину о семейном положении населения, уровне образования, грамотности и религии.

Исследование проводилось на основе данных переписи населения, статистических источников и обзора профессиональной литературы. В ходе исследования мы использовали аналитические, историко-сравнительные и описательные методы.

Изучая тему, мы пришли к выводу о том, что, несмотря на многонациональный состав губернии, ее основными жителями были армяне и мусульмане. Из данных переписи населения видно, что армяне в основном были сконцентрированы в Шушинском, Зангезурском и Казахском уездах Елизаветпольской губернии. Данные переписи также позволяют сделать вывод о том, что для населения Восточной Армении, входящей в состав России, создалась относительно более безопасная и стабильная ситуация, что в свою очередь, послужило благоприятным импульсом для жизнедеятельности и развития населения.

Ключевые слова: *Елизаветпольская губерния, Казахский уезд, данные переписи населения, демография, население, армяне, мусульмане, мужчины, женщины.*

ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ (1939-1956 ԹԹ.) *

ՀՏԴ 930

DOI: 10.52063/25792652-2024.3.22-44

ՄԵՐԻ ՆԱԶԱՐՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
ագրոքիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի
հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

meri.nadzharyan@mail.ru

ORCID: 0009-0004-8517-7215

ՀՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
ագրոքիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի
հասարակական գիտությունների ամբիոնի ասիստենտ,
պատմական գիտությունների թեկնածու,

ք. Արտաշատ, Հայաստանի Հանրապետություն

hranush.sahakyan@mail.ru

ORCID: 0009-0003-3799-3042

Հոդվածի նպատակն է կոնկրետ փաստական նյութերի հիման վրա լուսաբանել 1914 թ. հունիսի 16-ին Բեռլինում հիմնադրված Գերմանա-հայկական ընկերության (այսուհետև՝ ԳՀԸ, գերմ.՝ Deutsch-Armenische Gesellschaft, DAG) ծավալած հայանպաստ գործունեությունը երկրորդ աշխարհամարտի ժամանակաշրջանում: Մասնավորապես՝ անդրադարձ է կատարվում ընկերության հայափրկիչ աշխատանքներին, ներկայացվում են Գերմանիայում հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորման և հայ-գերմանական մշակութային կապերի սերտացման ուղղությամբ նրա ձեռնարկած քայլերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսօր աշխարհում ընթացող բազմաթիվ գործընթացներ որոշակի աղետներ ունեն մեր ուսումնասիրության առարկա դարձած հիմնահարցի հետ, այդ առումով հասկանալի է դառնում խնդրի լուսաբանման կարևորությունը հայկական քաղաքական և պատմական մտքի տեսակետից:

Առաջադրված նպատակին հասնելու համար թեմայի հետազոտման ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ հիմնական խնդիրները՝ կոնկրետ փաստական նյութի հիման վրա քննական վերլուծության ենթարկել երկրորդ աշխարհամարտի տարիներին կազմակերպության իրականացրած աշխատանքները, ի ցույց հանել դրանց հիմնական արդյունքները, պարզաբանել դրա լուծարման պատճառը: Թեպետ թեմային այս կամ այն չափով առնչվող առանձին հիմնահարցեր պատշաճ մակարդակով ուսումնասիրված են, այնուամենայնիվ, մեր ուսումնասիրության առարկա

* Հոդվածը ներկայացվել է 01.09.2024թ., գրախոսվել՝ 01.10.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

դարձած հիմնահարցը նշված ժամանակագրական սահմաններում նախկինում ամբողջական, համակարգված ուսումնասիրության չի ենթարկվել: Քննությունը կատարվել է մեծ մասամբ պատմագիտության մեջ դեռևս շրջանառության մեջ չդրված արժեքավոր գերմանական սկզբնաղբյուրների լայն հենքի վրա:

Ուսումնասիրությունն իրականացվել է տարաբնույթ սկզբնաղբյուրների և թեմային վերաբերվող գրականության համեմատական ու քննական վերլուծության մեթոդաբանությամբ, պատմականկարագրողական մեթոդի և պատմականության սկզբունքի կիրառմամբ:

Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ պատերազմի տարիներին ԳՅԸ-ն, չէղվելով իր գաղափարական ելակետերից, շարունակել է հայանպաստ գործունեությունը և հայ-գերմանական մշակութային կապերի խթանումը: Սրան զուգահեռ պետք է արձանագրել, որ ընկերությունը 1944 թվականին կասեցրել է իր գործունեությունը, իսկ 1956 թվականին հեռացվել է Բեռլինի միությունների ցանկից:

Հիմնաբառեր` Գերմանա-հայկական ընկերություն, պատերազմ, դր. Պաուլ Ռոհրբախ, պրոֆ. Արտաշես Աբեղյան, մշակույթ, հայ-գերմանական կապեր, լուծարում:

Ներածություն

Երկրորդ աշխարհամարտի նախօրյակին ԳՅԸ-ն հսկայածավալ աշխատանք է իրականացրել արտերկրում հայերի հալածանքների կանխարգելման և նրանց ազգային ինքնության պահպանման համար: Ի մասնավորի նշենք, որ ֆաշիստական երկրներում` Գերմանիայում, 1938 թ. նրան միացված Ավստրիայում, ինչպես նաև Իտալիայում, հայերը, որոնք թուրքական քարոզչության ուժով դասվել էին ոչ արիական ժողովուրդների շարքում և ազգակից էին համարվում հրեաների հետ, փրկվում են նրանց ճակատագրին արժանանալու վտանգից ընկերության և այլ գաղափարակից կազմակերպությունների` իշխանությունների հետ վարած բանակցությունների ու նրանց ծավալած գրապայքարի շնորհիվ, որի ընթացքում փաստելով հայ ժողովրդի` արիական ռասային պատկանելությունը` զուգահեռաբար ներկայացվում էին գաղթաշխարհի հայերի հետ մշակութային սերտ համագործակցություն հաստատելու անհրաժեշտությունը պարզաբանող տեսակետներ, որոնք էլ նպաստում են հայերի հանդեպ հիշյալ պետությունների իշխանությունների տրամադրությունների փոփոխման և նրանց արիացնել ժողովուրդների անվանացանկում ընդգրկելու համար:

Երկրորդ աշխարհամարտը սկսվելուց հետո վերստին մահաբեր ամպեր են կուտակվում հայ ժողովրդի գլխավերևում: Գերմանիայի իշխանությունները հետապնդում են սկսում թշնամի պետությունների տարածքից տեղափոխված հայերի նկատմամբ: Բացի այդ` թուրքական քարոզչամեքենան գերմանական զանգվածային լրատվամիջոցներում վերստին շրջանառության մեջ է դնում հայերի և հրեաների ռասայական նույնականության անհիմն տեսակետը. քարոզ, որի ազդեցությամբ Գերմանիայում և նրա կողմից ռազմակալված երկրներում բնակվող հայերը կարող էին դառնալ նոր հնարավոր արհավիրքի` ցեղասպանության զոհեր:

Համանման պայմաններում, շարունակելով իր հայանպաստ առաքելությունը, ԳՅԸ-ն իր կապերն ու հնարավորություններն ի սպաս է դնում վտանգված հայությանը օգնելու ու փրկելու գործին: Չուզահեռաբար կազմակերպությունը, ի դեմս իր հայ անդամների, աշխատանքներ է ծավալվում հայ և գերմանացի ժողովուրդների մշակութային կապերի զարգացումը խթանելու ուղղությամբ:

Սույն հոդվածով կփորձենք լուսաբանել Երկրորդ աշխարհամարտի տարիներին ԳՂԸ-ի ծավալած գործունեությունը՝ անդրադառնալով նաև նրա լուծարման հիմնական շարժառիթներին:

Գերմանա-հայկական ընկերության՝ վտանգված հայերի փրկությանն ուղղված աշխատանքները պատերազմի ժամանակաշրջանում

1914 թ. Բեռլինում հիմնադրված ԳՂԸ-ն Երկրորդ աշխարհամարտի տարիներին մեծ ջանքեր է գործադրել Գերմանիայում և նրա ռազմակալած երկրներում օրհասական վիճակում գտնվող հայերի դրության բարելավման, ինչպես նաև հայ-գերմանական գիտամշակութային կապերի զարգացումն ու խորացումը խթանելու համար:

Գերմանիայում բնակվող այն հայերը, որոնք տեղափոխվել էին թշնամի պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և նրանց կողմից վերահսկվող երկրների, օրինակ՝ Եգիպտոսի կամ Լիբանանի տարածքից, պատերազմի բռնկումից հետո իշխանությունների կողմից, դիտվելով որպես անգլիացի կամ ֆրանսիացի, ենթարկվում էին հետապնդումների (Schäfer (109) 21): Բացի այդ՝ գերմանական զանգվածային լրատվական միջոցներում իր ավանդական սև գործն էր կատարում թուրքական հակահայկական քարոզչությունը: Հայերի արիական ծագումը վերստին (ինչպես դեռևս 1930-ական թթ. առաջին կեսին՝ Ազգայնական-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցության հաղթանակից և Գերմանիայում Ադոլֆ Հիտլերի (1933-1945 թթ.) կողմից իշխանության գրավումից հետո) կասկածի տակ էր դրվել (Հայկականութիին-արիականութիին 13):

Այդ վտանգաշատ իրավիճակում, բնականաբար, ԳՂԸ-ի խնդիրը պետք է դառնար նման ըմբռնումների դեմ պայքարի ծավալումը, որին կազմակերպությունը լծվում է իր ամբողջ եռանդով: Արդյունավետ բանակցություններ վարելով Գերմանիայի ԱԳՆ-ի հետ՝ դրա նախագահ դր. Պաուլ Ռոիրբախը (Հայկականութիին-արիականութիին 128)¹ կարողանում է թշնամի պետությունների կամ նրանց կողմից վերահսկվող երկրների տարածքից Գերմանիա տեղափոխված հայերի վիճակը բավականաչափ թեթևացնել. կառավարությունը հիմնականում փոխում է իր բացասական դիրքորոշումը նրանց նկատմամբ: Այս կապակցությամբ ԳՂԸ-ի քարտուղար Ռիխարդ Շեֆերը 1939 թ. գրում էր հետևյալը. «Որոշ գործեր դեռ ընթացքի մեջ են» (Schäfer (109) 21):

Այստեղ կարող է հարց առաջանալ, թե բովանդակային առումով ի՞նչ բանակցություններ է վարել ԳՂԸ-ի նախագահը կառավարության ներկայացուցիչների հետ: Կարելի է, անշուշտ, կռահումներ անել, բայց քանի որ չունենք անհրաժեշտ փաստեր հարցի առնչությամբ, կիսուսափենք դրանից:

Ինչ վերաբերում է գերմանական զանգվածային լրատվության միջոցներում թուրքերի կողմից հայ ժողովրդի մասին շրջանառության մեջ դրված կեղծիքներին, ապա դրանց հերքման և Գերմանիայի թե՛ հասարակական, թե՛ պաշտոնական շրջաններում հայանապաստ կարծիք և վերաբերմունք ձևավորելու նպատակով ԳՂԸ-ն

¹ Պ. Ռոիրբախը ծնվել է 1869 թ. հունիսի 29-ին Իրգենում (Էկուրլանդ): 1887-1898 թթ. ուսանել է պատմություն և աշխարհագրություն Դորպատի (այժմ՝ Տարտու) համալսարանում, այնուհետև ուսումը շարունակել է աստվածաբանության բնագավառում և, 1888 թ. Ստրասբուրգում հանձնելով ավարտական քննությունը, ստացել է աստվածաբանի ակադեմիական կոչում: 1888 թ. դարձել է Ավետարանական-սոցիալական հանձնաժողովի գլխավոր քարտուղարը: 1891 թ. ստանձնել է նաև «Die Zeit» («Ժամանակ») քաղաքական շաբաթաթերթի գլխավոր խմբագրի պարտականությունները և նույն տարում Բեռլինում պաշտպանելով իր դոկտորական ատենախոսությունը՝ ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան:

ձեռնամուկ է լինում իր պաշտոնական օրգանի՝ 1937 թ. ի վեր հրատարակվող «Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin» (այսուհետև՝ MDAG, հայ.՝ «Գերմանա-հայկական ընկերության տեղեկաթերթ») վեցամյա պարբերականի (խմբագիրներ՝ դր. Պ. Ռոհրբախ և պրոֆ. Արտաշես Աբեղյան) լայն ծավալով հրատարակմանը: Այսուհետև այն լույս էր ընծայվում երկամյա պարբերականությամբ և անվճար առաքվում էր ընկերության անդամներին (Der Vorstand der Deutsch-Armenischen Gesellschaft i. A. Dr. Paul Rohrbach. Vorsitzender. Kurze Berichte. Aus der Deutsch-Armenischen Gesellschaft (127) 15): Հավելենք, որ 1943 թ. փոքրիկ փոփոխություն է կատարվում դրա վերնագրում: Դեկտեմբերից պարբերականը (թիվ 15-16) հրապարակվում էր «Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin» (այսուհետև՝ «Armenien», հայ.՝ «Հայաստան: Գերմանա-հայկական ընկերության տեղեկաթերթ») խորագրի ներքո (Kurze Berichte. „Armenien“, Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft, «Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin» 215 (23)):

Պարբերականի էջերում գետեղված հոդվածները, որոնց ծավալը տատանվում էր առավելագույնը 4-5 էջի սահմաններում, հիմնականում վերաբերում էին Հայաստանի աշխարհագրությանը, տնտեսությանը, ժողովրդագրական կազմին, հայոց պատմությանը, հայ եկեղեցուն ու հայկական մշակույթին, գերմանա-հայկական հարաբերություններին: Անտեսված չէր հայերի արիական պատկանելության հարցը: Անդրադարձներ կային նաև ժամանակի քաղաքական իրադարձություններին: Նման հրապարակումները, սակայն, հազվադեպ էին, ինչը պայմանավորված էր պատերազմական իրադրության պայմաններում գործող արգելքներով և սահմանափակումներով (Schäfer 20 (108)):

Այսուհանդերձ, 1942 թ. ամռանը, երբ Գերմանիան, նպատակ ունենալով տիրանալ Կովկասի նավթային հարստություններին, անցնում է հարձակման, պարբերականն իր էջերում սկսում է հաճախակի ներկայացնել քաղաքական թեման շոշափող հոդվածներ: Օրինակ՝ «Կովկաս» (Rohrbach, Kaukasien 1(169)-3(171)) վերնագրով հոդվածում, որը պատկանում էր դր. Պ. Ռոհրբախի գրչին, բոլշևիզմը համարվում էր «մահացու հարկադրանք» (Rohrbach, Kaukasien 2 (170)) և նշվում էր, որ «ամբողջ Կովկասը կթևակոխի ազատության ժամանակաշրջան, եթե թոթափի խորհրդային լուծը» (Rohrbach, Kaukasien 3 (171)):

Նույն հեղինակի գրչին պատկանող մեկ ուրիշ հոդվածում «Արևելքը անկայունության մեջ» (Rohrbach, Der Orient in Bewegung 129(1) - 4(132)), պատմական ընդարձակ ակնարկից հետո, որը լուսաբանում էր վաղ միջնադարից ի վեր Արևելքում տեղի ունեցած բոլոր կարևորագույն աշխարհաքաղաքական իրադարձությունները, անդրադարձ էր կատարվում Օսմանյան կայսրությունում հայերի ողբերգական ճակատագրին, ներկայացվում էին վիճակագրական տեղեկություններ խորհրդային Հայաստանում և նրա սահմաններից անդին՝ խորհրդային մյուս հանրապետություններում, եվրոպական երկրներում և Ամերիկայում սփռված հայերի թվաքանակի վերաբերյալ, հիշեցվում էր Անտանտի կողմից Թուրքիայի արևելյան սահմանագծին մոտ «Հայկական ազգային օջախ» ստեղծելու վերաբերյալ հայերին տրված խոստման և հետո այդ խոստումը չպահելու մասին: Հոդվածագիրը հենց սրանով էր պայմանավորում այն հանգամանքը, որ «ընթացիկ պատերազմում աշխարհասփյուռ հայության համակրանքը Գերմանիայի կողմն էր»: Այդ առիթով նա նշում էր, որ հայերն իրենց դասում էին արիական ժողովուրդների շարքում, և «մի օր՝ Գերմանիայի և Իտալիայի ազդեցությամբ միջազգային դրության մեծ վերափոխությունից հետո, նրանք կարող էին դառնալ արժեքավոր միջնորդ տնտեսական բազմակողմ հարաբերությունների կառուցման գործում» (Rohrbach, Der Orient in Bewegung 129(1)-4(132)): Հետևաբար, ըստ դր. Ռոհրբախի, անհրաժեշտ էր ուշադրություն դարձնել հայերին և բարեկամական կապեր պահպանել նրանց հետ: Այդ առումով նա բերում էր Իտալիայի օրինակը՝

վկայակոչելով 1939 թ. դեկտեմբերի 17-ին Եթովպիայի մայրաքաղաք Ադիս Աբեբայի հայկական համալսելի ավելի քան 1500 ներկայացուցիչների առջև ֆաշիստական մամուլի և քարոզչության դաշնային տեսուչի ելույթը, որն ավարտվել էր «հայ բարեկամներին» ուղղված՝ Ֆաշիստական Իտալիայի հետ մշակութային համագործակցության կոչով (Rohrbach, Der Orient in Bewegung 129(1)-4(132)):

Գերմանիայում հետզհետե ծավալվող հակահայ շարժումը կասեցնելու նպատակով ԳՀԸ-ն վճռում է նաև վերահրատարակել իր՝ 1934 թ. տպագրված «Armeniertum-Ariertum» (Armeniertum-Ariertum) («Հայկականություն-արիականություն») ժողովածուն (քանի որ հիշյալ հրատարակության ամբողջ տպաքանակը վաճառվել էր): Այդ առաջադրանքի իրագործմանը լծվում է պրոֆ. Ա. Աբեդյանը՝ դր. Պ. Ռոհրբախի աջակցությամբ 1942 թ. այն հասցնելով իր նպատակին: Ժողովածուն լույս է տեսնում Շտուտգարտում: Այն ամփոփում էր նախորդ հրատարակության՝ հայերի արիական պատկանելությունը փաստող 10 հոդվածները՝ հեղինակված պրոֆ. Հանս Հայնրիխ Շայդերի, Յոհաննես ֆոն Լերսի, պրոֆ. Ա. Աբեդյանի, Կարլ Ռոթի, Գերհարդ Զինզելի, քահանա Էվալդ Շթրիբի, պրոֆ. Յոզեֆ Ստրիգովսկու, Սաքսոնիայի դուքս պրոֆ. ֆոն Մաքսի, Ռ. Շեֆերի և դր. Պ. Ռոհրբախի կողմից (Աբեդյան 154), և 3 նոր հոդված՝ հեղինակված պրոֆ. Նիկողայոս Ադունցի, դր. Էմիլ Ֆոռերի և դր. Գյունթեր Ռայխենբրունի կողմից (Բախչինյան 68; «Armeniertum-Ariertum» 21 (189)):

ԳՀԸ-ի քարոզչական պայքարը նույնպես հասնում է իր ցանկալի նպատակին. թուրքերի զառանցանքները հաղթահարվում են, և կառավարությունը վերահաստատում է հայերի արիական ժողովուրդ լինելու իրողությունը, ինչի շնորհիվ Գերմանիայում և նրա կողմից ռազմակալված տարածքներում բնակվող շուրջ 500.000 հայեր փրկվում են նոր հնարավոր ցեղասպանությունից: Հատկանշական է, որ դեպքերի ժամանակակիցներից մեկը՝ Մանասե Սևակը, գրել է հետևյալը. «Հոս հարցնել հարկաւոր է, թե ի՞նչ պիտի ըլլար այս կես միլիոն հայերուն ճակատագիրը, եթէ նախախնամական դեր մը կատարած չլլար պրոֆ. Աբեդյան, տոքթ. Ռորպախի հետ խեղդելով այդ հակահայ և թրքական ոխերիմ շարժումը իր օրրանին մէջ» (Սեւակ 1; «Armeniertum-Ariertum» und die Zeitschrift «Armenia» in italienischer Sprache 12 (60)-13 (61); Kurze Berichte. Die Armenier in Italien 21 (189); Rohrbach, Armenien und die Armenier 5 (197); Schäfer (109) 21)¹:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակաշրջանում վերոնշյալ երկու անհատականությունները՝ դր. Պ. Ռոհրբախն ու պրոֆ. Ա. Աբեդյանը, մեծ ներդրում են ունենում նաև հայանպաստ մի շարք ուրիշ աշխատանքներում: Մասնավորապես՝ սերտ կապի մեջ լինելով Բեռլինում գտնվող Գարեգին Նժդեհի (Գարեգին Տեր-Հարությունյան) (Հայրունի 136)², Դրոյի (Դրաստամատ Կանայան) և ուրիշ ականավոր հայերի հետ՝ նրանք ջանում էին իրենց հնարավորությունների սահմաններում սատար

¹ Դեռևս 1939 թ. հոգնում լույս էր ընծայվել «Հայկականություն-արիականություն» ժողովածուի իտալերեն թարգմանությունը՝ իտալացի հրապարակախոս Կառլո Բարդուցիի հեղինակած առաջաբանով («Armeni Ariani», Roma, Edition «HIM», 1939): Դրա ներգործությամբ Իտալիայում բնակվող հայերը պաշտոնապես ընդգրկվել էին արիական ժողովուրդների ցուցակում՝ ապահովագրվելով ոչնչացումից: Սրան հաջորդել էր Իտալիայի քաղաքացիություն չունեցող հայերի նկատմամբ խտրականության վերացումը: Այդ մասին է վկայում 1940 թ. հոկտեմբերի 14-ին Իտալիայի ֆինանսների նախարարի կողմից դր. Պ. Ռոհրբախին ուղարկված հաղորդագրությունը, որտեղ նշվում է, որ «Իտալիայում, նրա գաղութներում և կայսրության այլ տարածքներում բնակվող բոլոր այն հայերը, որոնք չունեն Իտալիայի քաղաքացիություն, չեն համարվում թշնամի օտարերկրացի և, հետևաբար, որևէ սահմանափակման ենթակա չեն»:

² Դր. Պ. Ռոհրբախի հետ սերտ կապի մասին վկայել է Գ. Նժդեհը 1944 թ. նոյեմբերի 4-ի հարցաքննության ժամանակ: «1942 և 1943 թվականներին, - նշել է նա, - ես բազմիցս հանդիպումներ եմ ունեցել գերմանացի նշանավոր գեոպոլիտիկ Պ. Ռոհրբախի հետ, որը ԳՀԸ-ի նախագահն էր»:

լինել հայ ռազմագերիներին և պաշտպանել հայ ժողովրդի ազգային շահերը (Հայրապետյան 129-132; Մեյեր և Բերքյան 133-199)¹:

Հայ-գերմանական մշակութային կապերի զարգացմանն ուղղված աշխատանքները

Արդեն նշվեց, որ պատերազմի ժամանակաշրջանում ԳՅԸ-ն զգալի աշխատանք է կատարել նաև հայ-գերմանական մշակութային կապերի զարգացումը խթանելու ուղղությամբ:

Մանրամասնելով նշենք, որ դեռևս 1930-ական թթ. Բեռլինում հիմնադրել էր «Հայ երիտասարդների միություն»-ը, որի ղեկավար կազմը բաղկացած էր հիմնականում ուսանողներից: 1938 թ. մայիսին այն վերակազմավորվեց «Հայ ուսանողների միության»: Ըստ MDAG-ի՝ վերջինս նոր կազմակերպություն չէր, այլ իրավահաջորդն ու շարունակողն էր 1860 թ. Լայպցիգի համալսարանի հայ ուսանողների հիմնադրած «Հայ ակադեմիական միության», որը արգասաբեր աշխատանք էր իրականացնում հայ-գերմանական մշակութային կապերի ոլորտում (Der Armenische Studentenbund in Berlin 125 (13)): Բեռլինի «Հայ ուսանողների միության» առաջին նախագահը ԳՅԸ-ի վարչության անդամ Շավարշ Հարությունյանն էր: 1940 թ. հունիսի 4-ին կայացած ընդհանուր ժողովում միության նոր նախագահ ընտրվեց ընկերության վարչության մեկ ուրիշ անդամ՝ ինժեներ Արա Մալայանը, իսկ քարտուղար՝ ապագա ինժեներ Կարեն Հայրանյանը: Ժողովում ընդգծվեց նոր նախագահի խնդիրը, այն է՝ աջակցել գերմանական բուհերում սովորող հայ և գերմանացի ուսանողների անձնական կապերի զարգացմանն ու արդյունավետ աշխատանքի միջոցով ապահովել համագործակցությունը միության և գերմանական ուսանողական կազմակերպության միջև (Der Armenische Studentenbund in Berlin 125 (13)-(14) 126):

Նշենք, որ հայ ուսանողներից բացի՝ Գերմանիայում զգալի քանակ ունեին նաև հայ ակադեմիականները: Նրանց ևս աջակցելու և հայ-գերմանական գիտամշակութային կապերը խորացնելու նկատմամբ առկա բուն հետաքրքրությունը հանգեցրեց նրան, որ Բեռլինի «Հայ ուսանողների միությունը» 1940 թ. սեպտեմբերի 19-ի Ընդհանուր ժողովում ենթարկվեց վերաձևման: Այն վերանվանվեց «Հայ ակադեմիական միություն 1860»: Հաստատվեց միության՝ 15 կետից բաղկացած կանոնադրությունը (Von der Vorstand des Armenisch-Akademischen Vereins, Der Armenisch-Akademische Verein 1860 in Berlin, 8 (136)-9 (137)): Ժողովը նաև

¹ 1942 թ. դեկտեմբերի 15-ին Բեռլինում հիմնվում է Հայ ազգային խորհուրդ՝ պրոֆ. Ա. Աբեղյանի նախագահությամբ: Խորհրդի աշխատանքներին մասնակիցում էին Դրոն, Գ. Նժդեհը, Աբրահամ Գյուլխանդանյանը (փոխնախագահ) և ուրիշներ: Խորհրդի առաջնահերթ նպատակը հայ ռազմագերիներին և հայոց ազգային շահերը պաշտպանելն էր: Հայ ազգային խորհուրդը մի քանի ամիս անց դառնում է Հայ ազգային կոմիտե, իսկ 1943 թ. գերմանական կառավարությունն ազգային կոմիտեները վերածում է ազգային կառավարությունների՝ այն նպատակով, որ Խորհրդային միության պարտության պարագայում այդ կառավարությունները կազմ ու պատրաստ մեկնեին իրենց երկրները և իրականացնեին իրենց գործառնությունները: Ա. Աբեղյանն ընտրվում է վարարանդի կառավարության նախագահ:

Ռազմագերիների հարցը լուծվում է նրանով, որ գերմանացիները կազմում են Հայկական լեգեոն, որը պետք է պատերազմում մարտնչեր նացիստների կողմից, իսկ հաղթանակից հետո դառնար սեփական երկրի ապագա բանակի հիմքը: Ավելի լավ բան հայ գերիների համար չէր կարող լինել: Ընդգրկվելով հայկական լեգեոնի շարքերում՝ նրանք փրկվում են ցեղասպանվելու վտանգից: Բացի այդ՝ անվտանգության երաշխիքներ են ստեղծվում Հայաստանի համար. եթե գերմանացիների հաղթանակի դեպքում թուրքերը ներխուժեին Հայաստան, որին կանկած չկա, որ նրանք պատրաստվում էին ձեռնամուխ լինել, ապա հայկական լեգեոնի խնդիրը պետք է լիներ իր հայրենիքի պաշտպանությունը:

ձևավորեց վարչության նոր կազմ: Վերընտրվեցին կամ ընտրվեցին՝ որպես միության նախագահ Ա. Մալայանը, քարտուղար՝ Շ. Հարությունյանը, գանձապահ՝ Կ. Հայրանյանը, պատվավոր նախագահ՝ պրոֆ. Ա. Աբեղյանը: Միությունը որոշեց դառնալ գերմանական գիտական կազմակերպություններից մեկի՝ «Humboldt-Klub» («Հումբոլդտ ակումբ») կորպորատիվ անդամ գերմանացի ակադեմիականների հետ սերտ համագործակցություն ապահովելու համար: Ընդհանուր ժողովում նաև քննարկումներ ծավալվեցին հայկական մշակույթի պրոպագանդան և այդ նպատակով ֆոնդի ստեղծման շուրջ:

Բեռլինի Հայ ակադեմիական միությունը շուտով մեծ աջակցություն ստացավ ԳՀԸ-ից: Վերջինիս վարչության անդամ Արամ Տեր-Մինասյանն այդ միության՝ հայկական մշակույթի պրոպագանդան նպատակով ստեղծված ֆոնդին նվիրաբերեց 100 ռայխսմարկ: Ընկերության քարտուղար Ռ. Շեֆերն ուղարկեց հայկական մշակութային արժեքների վերաբերյալ նյութեր, իսկ պրոֆ. Ա. Աբեղյանը, Ա. Մալայանը և Շ. Հարությունյանը՝ հայաստանյան թեմայով մեծ քանակությամբ գրականություն (Von der Vorstand des Armenisch-Akademischen Vereins, Der Armenisch-Akademische Verein 1860 in Berlin 8 (136)-10 (138)):

Կարճ ժամանակամիջոցում Բեռլինի Հայ ակադեմիական միությանը հաջողվեց կապեր հաստատել գերմանացի բազմաթիվ ականավոր գիտնականների, ինչպես նաև գերմանական գիտական հաստատությունների, այդ թվում՝ «Humboldt-Klub»-ի հետ: 1940 թ. նոյեմբերի 7-ին նշված ակումբում կազմակերպվեց հայկական երեկո, որի ընթացքում ընթերցված դասախոսությունները վերաբերում էին բացառապես հայկական մշակույթին և հայ-գերմանական մշակութային փոխառնչություններին (Bericht des Armenisch-Akademischen Vereins 1860 e. V. für die Geschäftszeit vom September 1940 bis Juni 1941 23 (191) - 24 (192)): Նմանատիպ միջոցառումները շարունակվեցին նաև հետագայում:

Բեռլինի Հայ ակադեմիական միության գործունեության անքակտելի մասն էր արտասահմանից Գերմանիա նոր տեղափոխված հայ ուսանողներին աջակցելը: Այն ոչ միայն համախմբում էր նրանց, այլև խթանում նրանց և գերմանացի ուսանողների անձնական կապերի զարգացումը, նրանց և գերմանաբնակ հայերի շփումները: Այդ կարևոր գործառնություններից զատ՝ այն նաև հայ ուսանողներին օգնում էր սովորել գերմաներեն, կատարելագործել գիտելիքներն այդ լեզվից, գտնել աշխատանք և այլն (Bericht des Armenisch-Akademischen Vereins 1860 e. V. für die Geschäftszeit vom September 1940 bis Juni 1941 24 (192)): «Հայ հասարակությունը մեծ հետաքրքրություն ունի ուսանողների հանդեպ, - գրում էր միության նախագահ Ա. Մալայանը 1943 թ.: - Այդ երիտասարդները կոչված են կապելու Արևմուտքի հոգևոր հայացքները հայության այն հետաքրքրություններին, որոնք շահեկան են մայր երկրի համար: Գաղութի և ուսանողության միջև կապը պետք է անաղարտ պահել՝ ուժացման վտանգից խուսափելու համար» (Malayan 18 (210)):

Այսպիսով՝ պատերազմի տարիներին Բեռլինի Հայ ակադեմիական միությունն իր ներդրումն էր բերում հայանպաստ աշխատանքներում՝ գերմանական հասարակությանը ծանոթացնելով հայ ժողովրդի հոգևոր կյանքի նվաճումներին, աջակցելով երկու ժողովուրդների գիտամշակութային փոխառնչությունների ընդլայնմանը:

Ընկերության լուծարումը

Ինչ վերաբերում է ԳՀԸ-ին, ապա այն իր հայանվեր առաքելությունն անխոնջ շարունակեց պատերազմի գրեթե ամբողջ տևողության ընթացքում՝ չնայած հետզհետե տկարացող ուժերով: 1940 թ. ապրիլի 9-ին Մայնի Ֆրանկֆուրտում վախճանվեց նրա համահիմնադիր և հայ ժողովրդի երկարամյա բարեկամ դր. Մարտին Ռադեն: MDAG-ի՝ նույն տարվա մայիսի համարում (թիվ 7-8) տպագրված

մահախոսականում (Stier, Rade 18 (106)- (107) 19) ԳՅԸ-ի փոխնախագահ Է. Շթիրը (Meißner, Rades 374) ¹ դր. Ռադեին անվանում էր «Գերմանիայի Ավետարանական եկեղեցու ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկը և դեռ ավելին» (Meißner, Rades 18 (106)), ապա շարունակելով՝ նրան տալիս էր հետևյալ բնութագիրը. «Հաստատուն բնավորություն, որը միշտ, անկախ իշխող հոսանքից, համարձակորեն պաշտպանում էր այն, ինչն ինքը համարում էր իրավացի՝ ի սեր ճշմարտության և արդարության, ուներ բարի հայացք և մեղմ բնավորություն, որոնք նրան հնարավորություն էին տալիս համաձայնության գալ նաև հակառակորդի հետ և հաշտության ձեռք մեկնել նրան» (Meißner, Rades 18 (106)):

Լշենք, որ 1938 թ. դեկտեմբերի 3-ի ընտրությունից հետո մինչև 1940 թ. ԳՅԸ-ի վարչության կազմն անփոփոխ էր՝ դր. Պ. Ռոհրբախ (նախագահ), քահանա Է. Շթիր (փոխնախագահ), պրոֆ. Ա. Աբեդյան (փոխնախագահ), Դետլոֆ Ֆոգտ (գանձապահ), Ռ. Շեֆեր (գերմանացի քարտուղար), Պետրոս Ֆրունջյան (հայ քարտուղար), Արիս Չալթյան, Դավիթ Դավիթխանյան, դր. Գ. Տեր-Հարությունյան, պրոֆ. Յ. Յ. Շայդեր, քահանա Գ. Զինգե, Ալիսե Լեփսիուս, Գերտրուդ Յեթցել, դր. Յաննես Իփիլքյան, դր. Ս. Տեր-Օհանեսյան, ինժեներներ Ա. Մալայան ու Ա. Տեր-Մինասյան, Շ. Հարությունյան և Ա. Վամպուշ (վերատեսուչներ) (Der Vorstand der Deutsch-Armenischen Gesellschaft 24 (112)): 1940 թ. սեպտեմբերի 30-ի Ընդհանուր ժողովում այն համալրվեց 4 նոր անդամներով՝ դր. Վիկտոր Դոմկե, դր. Գ. Ռայխենբրոն, իրավաբան և նոտար Յ. Ֆրոնիխ, Գերհարդ Շնայդեր (Aus der Deutsch-Armenischen Gesellschaft 143 (15)): Ընկերության վարչության կազմի մասին վերջին անգամ տեղեկություն ենք ստանում 1944 թ. աղբյուրից: Այդ թվականին այն ներկայանում էր հետևյալ կազմով՝ դր. Պ. Ռոհրբախ (նախագահ), քահանա Է. Շթիր (փոխնախագահ), պրոֆ. Ա. Աբեդյան (փոխնախագահ), Դետլոֆ Ֆոգտ (գանձապահ), Ռ. Շեֆեր, դր. Գ. Ռայխենբրոն, իրավաբան և նոտար Յ. Ֆրոնիխ, Գ. Շնայդեր (գերմանացի քարտուղար), Պ. Ֆրունջյան (հայ քարտուղար), Ա. Չալթյան, Դ. Դավիթխանյան, դր. Գ. Տեր-Հարությունյան, պրոֆ. Յ. Յ. Շայդեր, պրոֆ. Վ. Զլասեն, քահանա Գ. Զինգե, Վ. Դոմկե, Ա. Լեփսիուս, Գ. Յեթցել, դր. Յ. Իփիլքյան, դր. Ս. Տեր-Օհանեսյան, ինժեներներ Ա. Մալայան և Ա. Տեր-Մինասյան, Շ. Հարությունյան, Ա. Վամպուշ (Das Titelblatt der Zeitschrift der Deutsch-Armenischen Gesellschaft "Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft"):

Լշենք, որ ԳՅԸ-ն գոյատևում էր անդամավճարներից գոյացող եկամուտների հաշվին: Երկրորդ աշխարհամարտի բռնկումից հետո խզվել էր ընկերության կապը Բեռլինից դուրս գտնվող իր անդամների հետ (Schäfer 23 (87)), ինչը, բնականաբար, սոցիալական լուրջ խնդիրներ էր ստեղծելու նրա համար: Ըստ երևույթին, դա էր պատճառը, որ 1944 թ. ԳՅԸ-ն դադարեցնում է իր "Armenien" պարբերականի հրատարակումը, որի վերջին համարը լույս է տեսնում սեպտեմբերին (թիվ 17-18): Բովանդակելով բացառապես գրական բնույթի նյութեր՝ այն եզրափակվում էր ընթացիկ բնույթի մի հրապարակումով՝ «Վիգեն Շանթ՝ երիտասարդ լրագրող և Արևելյան Նախարարության (Ռայխի Նախարարությունը գրավյալ արևելյան տարածքների համար-Յ. Ս.) Կովկասյան բաժնի աշխատակից: Ծնվել է 1906 թ. Շվեյցարիայում և զոհվել Բեռլինի վրա օդային հարձակումներից մեկի ժամանակ (1944 թ. մարտ)» (Schanth):

Պարբերականը ԳՅԸ-ի երեսնամյա հայանվեր առաքելության վերջին հավաստագիրն էր:

Նույն թվականին ընկերությունը կասեցնում է նաև իր գործունեությունը, իսկ 1956 թ. հուլիսի 20-ին դր. Պ. Ռոհրբախի մահից հետո՝ նոյեմբերի 30-ին, հեռացվում է Բեռլինի միությունների ցանկից (Röseler 93-94)՝ անդամներ չունենալու պատճառով:

¹ Է. Շթիրը վախճանվեց 1946 թ. հունիսի 9-ին Դասաուում, որտեղ և հուղարկավորվեց հունիսի 14-ին:

Այդ մասին է վկայում 1956 թ. նոյեմբերի 30-ի N 104-րդ թերթիկը (Mouradian 8), որտեղ որպես նրա լուծարման պատճառ նշվում է, որ «վարչությունը փաստացի գոյություն չունի», այնուհետև ավելացվում է, որ ԳՀԸ-ն նորից գոյություն կունենա, եթե ունենա առնվազն 7 անդամ (Mouradian 8): Հատկանշական պետք է համարել այն հանգամանքը, որ 1960-ական թթ. Գերմանիայում հայերի թվաքանակի աճը դարձավ կազմակերպության վերաբացման հիմնական նախադրյալներից մեկը:

Եզրակացություն

Այսպիսով՝ ամփոփելով ուսումնասիրությունը՝ կարող ենք փաստել, որ Երկրորդ աշխարհամարտի ժամանակաշրջանում հայ ժողովրդին պատուհասած դժվարին մարտահրավերների և սպառնալիքների պայմաններում ԳՀԸ-ն շարունակում էր իր ավանդական հայանվեր առաքելությունը՝ մի կողմից իր ներդրումը բերելով Գերմանիայի հասարակության մեջ և նրա ղեկավար շրջաններում հայանպաստ կարծիքի և տրամադրությունների ձևավորման, մյուս կողմից՝ հայ-գերմանական գիտամշակութային կապերի սերտացումը խթանելու ուղղությամբ իրականացվող աշխատանքներում: Այնուամենայնիվ, Երկրորդ աշխարհամարտն ուժգին հարված է հասցնում ընկերությանը՝ խորտակելով հայ-գերմանական բարեկամության այդ կամուրջը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղեան, Արտաշես. *Հայրենիքի և արիականության հարցը, Armeniertum-Ariertum: Հրատարակության Գերմանիայում և Հայ ընկերության, Բեռլին-Պոտսդամ, 1934 թ., «Հայրենիք» ամսագիր, № 8, Պոսթըն, 1934, էջ 154-156:*
2. Բախչիյան, Յենրիկ. *Արտաշես Աբեղեանի կյանքի ժամանակը. «Գարուն», թիվ 7, Երևան, 1995, էջ 67-69:*
3. «Հայկականության և արիականության հարցը գերմաներենից՝ Տոնյան Ա., Երևան, 2001, 152 էջ:
4. Հայրապետյան, Հարություն. *Արտաշես Աբեղեան. մեծ բանասերն ու հասարակական գործիչը. «Հայագիտության հարցեր», № 3, Երևան, 2016, էջ 117-134:*
5. Հայրունի, Աշոտ. *Պառլո Ռոհրբախը և Հայաստանը. «ՎԷՄ», թիվ 4, Երևան, 2011, էջ 125-139:*
6. Մեյեր Էմիլ, Բերքյան Արա. *Հռենոսի և Արաքսի միջև: 900 տարվա գերմանահայկական հարաբերություններ. թարգմ.՝ Լ. Բերքյան-Աբրահամյան, Ե., «Տիգրան Մեծ», 2016, 267 էջ:*
7. Մեյեր, Կարեն Մանասե. *Փրոֆ. Արտաշես Աբեղեանի պայքարը նացիստների հակահայ քաղաքականության դեմ և այդ պայքարի ճակատագրական հետեւանքները. «Հայրենիք» օրաթերթ, № 13, 116, յունիս 10, Պոսթըն 1955, էջ 1:*
8. "Armeniertum-Ariertum". von der Deutsch-Armenischen Gesellschaft Berlin unter Mitwirkung von H. H. Schaefer u. a., Potsdam, 1934, 52 S.
9. "Armeniertum-Ariertum" und die Zeitschrift "Armenia" in italienischer Sprache. MDAG, Berlin, № 4, April 1939, S. 12 (60)-13 (61).
10. "Aus der Deutsch-Armenischen Gesellschaft". MDAG, Berlin, № 10, Dezember 1940, S. 143 (15).
11. "Bericht des Armenisch-Akademischen Vereins 1860 e. V. für die Geschäftszeit vom September 1940 bis Juni 1941". MDAG, Berlin, № 13-14, Oktober, 1942, S. 23 (191)-24 (192).
12. "Das Titelblatt der Zeitschrift der Deutsch-Armenischen Gesellschaft "Armenien". Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft vom September 1944, № 17-18.

13. "Der Armenische Studentenbund in Berlin", *MDAG*, Berlin, № 9, Oktober 1940, S. 125 (13) - 14 (126).
14. "Der Vorstand der Deutsch-Armenischen Gesellschaft i. A. Dr. Paul Rohrbach. Vorsitzender. Kurze Berichte. Aus der Deutsch-Armenischen Gesellschaft". *MDAG*, Berlin, № 9, Oktober 1940, S. (127) 15.
15. "Der Vorstand der Deutsch-Armenischen Gesellschaft". *MDAG*, Berlin, № 7-8, Mai 1940, S. 24 (112).
16. "Kurze Berichte. "Armeniertum-Ariertum"". *MDAG*, № 13-14, Oktober 1942, S. 21 (189).
17. "Kurze Berichte. „Armenien“, Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft". *Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V.*, Berlin, № 15-16, Dezember 1943, S. 215 (23) – 24 (216).
18. "Kurze Berichte. Die Armenier in Italien". *MDAG*, Berlin, № 13-14, Oktober 1942, S. 21 (189).
19. Malayan, Ara. *Der armenische Studententum in Deutschland*. *MDAG*, Berlin, № 15-16, Dezember 1943, S. 16 (208) - 18 (210).
20. Meißner Axel. *Martin Rades "Christliche Welt" und Armenien. Bausteine für eine internationale Ethik des Protestantismus*. Band 22, Berlin, 2010, S. 548 S.
21. Mouradian, Alfred. *Chronik der Deutsch-Armenischen Gesellschaft in Berlin*. "Armenisch-Deutsche Korrespondenz", November 1974, № 7, Mainz-Heidelberg, November 1974, S. 6-8.
22. Rohrbach, Paul. *Armenien und die Armenier*. *MDAG*, Berlin, № 15-16, Dezember 1943, S. 1 (193) - 5 (197).
23. Rohrbach, Paul. "Der Orient in Bewegung". *MDAG*, Berlin, № 10, Dezember 1940, S. 129 (1) – 4 (132).
24. Rohrbach, Paul. "Kaukasien". *MDAG*, Berlin, № 13-14, Oktober 1942, S. 1 (169) - 3 (171).
25. Röseler Peter Frank. *Die Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft, 75 Jahre Deutsch-Armenische Gesellschaft*. Festschrift, hg. von der Deutsch-Armenischen Gesellschaft, Mainz, 1989, S. 77-99.
26. Schäfer, Richard. "Aus der Deutsch-Armenischen Gesellschaft". "*Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin*", Berlin, № 7-8, Mai 1940, S. (109) 21.
27. Schäfer, Richard. "Aus der Deutsch-Armenischen Gesellschaft". *MDAG*, Berlin, № 5-6, Dezember 1939, S. 23 (87) - 24 (88).
28. Schanth, Wigen. *Kurze Berichte Armenien*. *MDAG*, № 17-18, September 1944, unpaginiert.
29. Stier, Ewald. Martin Rade. *MDAG*, Berlin, № 7-8, Mai 1940, S. 18 (106) – (107) 19.
30. "Von der Vorstand des Armenisch-Akademischen Vereins. Der Armenisch-Akademische Verein 1860 in Berlin". *MDAG*, Berlin, № 10, Dezember 1940, S. 8 (136) - 10 (138).

WORKS CITED

1. Abegean, Artashes. *Hayutiin-ariakanutiin, Armeniertun-Ariertum: Hratarakutiwn German ew Hay ynkerutean*, Berlin-Potsdam, 1934 t., «Hayrenik» amsagir, № 8, Postyn, 1934. [Armeniertun-Ariertun. Publication of the German and Armenian Society, Berlin-Potsdam 1934, "Hayrenik" daily, No. 8, Postn] 1934. (In Armenian).
2. Baxčinyan, Henrik. *Artashes Abegyanı kyankı zamanaky*, «Garun», tiv 7, Erewan, 1995. [Artashes Abeghyan's life time. "Spring", No. 7, Yerevan] 1995. (In Armennian).

3. «*Haykakanutiin-arianatiin*», germanerenic targmanec` Tonoyan A., Erevan, 2001. [*"Haykakanutiin Ariyakanutiin"* translated from German by A. Tonoyan, Yervan] 2001. (In Armenian).
4. Hayrapetyan, Harutyun. *Artashes Abegyan. mec banasern u hasarakakan gorcitys*, «Hayagitutyan harcer», № 3, Erevan, 2016. [Artashes Abeghyan. The Great Philologist and Public Figure. "Issues of Armenian Studies", No. 3, Yerevan] 2016. (In Armenian).
5. Hayruni, Ashot. *Paul Rohrbachy ev Hayastany*, «VEM», tiv 4, Erevan, 2011. [Paul Rohrbach and Armenia. "VEM", No. 4, Yerevan] 2011. (In Armenian).
6. Meyer Enno, ev Berkryan Ara, *Hrenosi ev Araksi mijev: 900 tarva germana-haykakan haraberutyunner*, targm. L. Berkryan-Abrahamyan, Erevan, «Tigran Mec», 2016. [Between the Rhine and the Araxes. 900 years of German-Armenian relations, translated by L. Berkryan- Abrahamyan, E., "Tigran the Great"] 2016. (In Armenian).
7. Sewak, Karen. *Prof. Artashes Abegeani paykary nacistneri hakahay kağakakanutean dem ew ayd paykari tsakatagrakan hetewanknery*, «Hayrenik» oratert, № 13, 116, yunis 10, Postyn, 1955. [Prof. Artashes Abeghian's Struggle against the Nazis' Anti-Armenian Policy and the Fatal Consequences of that Struggle, "Hayrenik" daily, No. 13, 116, June 10, Postn] 1955. (In Armenian).

ACTIVITIES OF THE GERMAN-ARMENIAN SOCIETY DURING WORLD WAR II AND ITS DISSOLUTION (1939-1956)

MERI NAJARYAN

*National Agrarian University of Armenia,
Faculty of Agribusiness and Economics,
Head of the Department of Social Sciences,
Ph.D. in History, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

HRANUSH SAHAKYAN

*National Agrarian University of Armenia,
Faculty of Agribusiness and Economics,
Chair of Social Sciences,
Ph.D. in History, Assistant,
Artashat, the Republic of Armenia*

The purpose of the article is to highlight the pro-Armenian activities of the German-Armenian Society (hereinafter referred to as GAS, German: Deutsch-Armenische Gesellschaft, DAG) during the Second World War, based on specific factual materials. In particular, reference was made to the company's Armenian rescue activities, the steps taken by it in the direction of forming a pro-Armenian public opinion in Germany and strengthening Armenian-German cultural ties are presented. Considering that many ongoing global processes today have certain appeals with the issue that has become the subject of our study, the importance of highlighting this issue from the perspective of Armenian political and historical thought becomes clear.

To achieve the stated objective, during the research of the topic, the following primary tasks were set: to critically analyze the activities carried out by the organization during the Second World War on the basis of specific factual materials, to showcase their main results, and to clarify the reason for its dissolution. Although individual issues related to the topic to one degree or another have been studied at a proper level, it is nevertheless notable that the issue that has become the subject of our study has not

previously undergone a complete and systematic examination within these chronological boundaries. The investigation has been largely based on wide range of valuable German sources that have not yet been circulated in historiography.

The study was conducted using a methodology of comparative and critical analysis of diverse primary sources and literature related to the topic, applying historical descriptive method and the principle of historicity.

The main conclusion made within the framework of the research is that during the war years, GAS, without deviating from its ideological foundations, continued its pro-Armenian activities and the promotion of Armenian-German cultural ties. Along with this, it should be noted that under war conditions, having no contact with its members outside of Berlin and being unable to recruit members, the company suspended its activities in 1944 and was removed from the list of Berlin associations in 1956.

Keywords: *German-Armenian Society, war, Dr. Paul Rohrbach, Prof. Artashes Abeghyan, culture, Armenian-German relations, dissolution.*

ДЕЯТЕЛЬНОСТЬ НЕМЕЦКО-АРМЯНСКОГО ОБЩЕСТВА ВО ВРЕМЯ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ И ЕГО РОСПУСК (1939-1956 ГГ.)

МЕРИ НАДЖАРЯН

*заведующая кафедрой общественных наук
факультета агробизнеса и экономики
Национального аграрного университета Армении,
кандидат исторических наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

ГРАНУШ СААКЯН

*ассистент кафедры общественных наук
факультета агробизнеса и экономики
Национального аграрного университета Армении,
кандидат исторических наук,
г. Арташат, Республика Армения*

Цель статьи - на основе конкретных фактических материалов представить проармянскую деятельность Немецко-армянского общества во время Второй мировой войны. В частности, обращается внимание на работу общества по спасению армян, а также представлены шаги, предпринятые им для формирования проармянского общественного мнения в Германии и укрепления армяно-немецких культурных связей. Учитывая факт, что многие процессы, происходящие сегодня в мире, имеют определенные точки соприкосновения с темой, ставшей предметом нашего исследования, в этом контексте становится понятной важность освещения проблемы с точки зрения армянской политической и исторической мысли.

Для достижения заявленной цели при рассмотрении вопроса мы ставим перед собой следующие основные задачи: на конкретном фактическом материале проанализировать деятельность организации в годы Второй мировой войны, показать ее основные результаты, а также выяснить причину ее роспуска. Хотя отдельные вопросы, относящиеся к теме, ранее были рассмотрены в той или иной степени и на должном уровне, вопрос, ставший предметом нашего исследования, не подвергся полному, систематическому изучению в установленных

хронологических рамках. Исследование проводилось на основе большого количества значимых немецких источников, вводимых в научный оборот впервые.

Исследование проведено с использованием методологии сравнительного и исследовательского анализа разных первоисточников и тематической литературы с использованием метода исторического описания и принципа историчности.

Главный вывод исследования заключается в том, что Немецко-армянское общество продолжало свою проармянскую деятельность и продвижение армяно-германских культурных связей во время войны, не отклоняясь при этом от своего идеологического начала. В то же время следует отметить, что общество, не имевшее во время войны контактов со своими членами за пределами Берлина и не способное привлечь новых членов, прекратило свою деятельность в 1944 году, а в 1956 году было исключено из списка Берлинских союзов.

Ключевые слова: *Немецко-армянское общество, война, доктор Пауль Рорбах, профессор Арташес Абебян, культура, армяно-немецкое отношения, ликвидация.*

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ
ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԹԱՀԱՐՄԱՆ ՃԱՆԱԴԱՐՀԻՆ***

ՀՏԴ 004

DOI: 10.52063/25792652-2024.3.22-57

ՎԱՅԵ ՉԱՐԳԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերություններ ֆակուլտետի
միջազգային հարաբերությունների ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
vahe.zargaryan@gmail.com
ORCID: 0009-0002-7518-6295

Եվրամիությունը, խոշոր ու ազդեցիկ կառույց լինելուց զատ նաև մեկ միասնական, ընդհանուր ինտեգրացիոն տանիք է տարբեր մշակույթների ու էթնիկ խմբերի համար: Ու այս տարբերությունն է հաճախ, որ ընկած է Միության ներսում տարբեր էթնոքաղաքական հակամարտությունների հիմքում: Այս հակամարտությունները պատմական անցյալից մինչև մեր օրեր փոխանցված լարվածության, տնտեսական անհավասարության և քաղաքական դժգոհությունների արդյունք են և զգալի ազդեցություն ունեն քաղաքական կայունության, սոցիալական համախմբվածության, ինչպես նաև տնտեսական զարգացման վրա:

Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրելով եվրոպական գործիքակազմը՝ բացահայտել, թե ինչպես են եվրոպական պետություններն ու միջազգային կազմակերպությունները օգտագործում առկա մեխանիզմները՝ կանխելու կամ մեղմելու էթնոքաղաքական լարվածությունները, խթանելու խաղաղությանը և կայունությանը: Այս հարցը հատկապես կարևոր է այժմյան աշխարհում, երբ գլոբալացումն ու միգրացիոն գործընթացները նոր մարտահրավերներ են առաջացնում հասարակությունների կայունության և համերաշխության համար:

Նպատակն իրականացնելու համար խնդիր է դրվել ուսումնասիրության ենթարկել ԵՄ-ում էթնոքաղաքական լարվածության առաջացման հիմնական գործոնները, ներառյալ պատմական, տնտեսական, քաղաքական և սոցիալական ազդեցությունները:

Հոդվածի մեթոդաբանական մոտեցումը հիմնված է վերլուծական, համեմատական, գործնական դեպքերի ուսումնասիրության, պատմական և փաստաթղթային վերլուծության մեթոդների համակցման վրա:

* Հոդվածը ներկայացվել է 04.07.2024թ., գրախոսվել՝ 31.07.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

Հիմնավորվել է, որ Էթնոքաղաքական լարվածությունը հաճախ պայմանավորված է տնտեսական անհավասարությամբ, պատմական վեճերով, ազգային ինքնության խնդիրներով և միգրացիոն գործընթացներով, որոնց կառավարման համար անհրաժեշտ է բազմակողմ և համապարփակ մոտեցում:

Եզրակացությունն այն է, որ Էթնոքաղաքական լարվածության արդյունավետ կառավարումը ԵՄ-ում պահանջում է միասնական քաղաքականություն, որը կհիմնվի Էթնիկ բազմազանության և մշակութային ինտեգրացիայի վրա՝ ընդգրկելով իշխանության բաժանման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ, ինչպես նաև արտաքին գործոնների ազդեցության մեղմացման նպատակով գլոբալ և տարածաշրջանային համագործակցության ուժեղացումը:

Հիմնաբառեր՝ Էթնոքաղաքական կոնֆլիկտներ, Եվրամիություն, ԵՄ, Եվրոպա, միջմշակութային կապեր, ֆեդերալիզմ, մշակութային երկխոսություն:

Ներածություն

Հոդվածում առաջադրված խնդրի գիտական և գործնական կարևորությունը կապված է Էթնոքաղաքական լարվածությունների հաղթահարման անհրաժեշտության հետ, որը կարևոր դեր է խաղում տարածաշրջանային և միջազգային կայունության ապահովման գործում: ԵՄ-ի և Եվրոպական երկրների բազմամշակութային հասարակություններում Էթնոքաղաքական խնդիրները հաճախ դառնում են լուրջ մարտահրավերներ, որոնք կարող են հանգեցնել սոցիալական, քաղաքական և տնտեսական անկայունության: Այս խնդրի լուծման գործիքակազմի ուսումնասիրությունը կարող է նպաստել ոչ միայն գիտական համայնքին, այլև քաղաքական գործիչներին և դիվանագետներին՝ ավելի արդյունավետ լուծումներ մշակելու հարցում:

Վերլուծության հիմնական նպատակը եվրոպական գործիքակազմի արդյունավետության գնահատումն է՝ Էթնոքաղաքական լարվածությունների հաղթահարման գործում: Հոդվածում հետազոտական խնդիրներ-հարցադրումները ներառում են հետևյալը.

- Ի՞նչն է եվրոպական գործիքակազմի հիմքը Էթնոքաղաքական լարվածությունների հաղթահարման համար:
- Որո՞նք են առավել արդյունավետ մեխանիզմները, որ կիրառվել են Եվրոպայում նման լարվածությունները մեղմելու նպատակով:
- Ինչպիսի՞ փորձ ունեն ԵՄ տարբեր երկրները
- Կա՞ն արդյոք բացթողումներ կամ բարելավման կարիք ունեցող տարրեր գործող մեխանիզմներում:

Վերլուծվում են այն մեթոդները, որոնք ներառում են վերլուծական, համեմատական, գործնական դեպքերի ուսումնասիրություն, պատմական և փաստաթղթային վերլուծություն: Կիրառվող գիտական մոտեցումները (հայեցակարգերը) ներառում են անվտանգության միջավայրի ուսումնասիրություններ, միջմշակութային հաղորդակցություն, սոցիալական կառուցվածքների տեսություն և դիվանագիտական մեխանիզմների վերլուծություն: Այս մեթոդների և հայեցակարգերի համակցված կիրառումը թույլ կտա հասնել ամբողջական և գիտական հիմնավորված արդյունքների, որոնք կարող են օգտակար լինել ինչպես գիտական, այնպես էլ գործնական կիրառման համար:

Գործոններ, որոնք կարող են հանգեցնել Էթնոքաղաքական լարվածության

Էթնոքաղաքական լարվածությունների խորն արմատները մշտապես սնուցվում են պատմական և քաղաքական տարբեր գործոններով: Այստեղ նշանավորվում է պատմության կենդանի դերը որպես սոցիալական թատերաբեմ և ձևավորող դերակատար, որը հսկայական ազդեցություն ունի էթնիկական ինքնությունների կայացման վրա: Ուսումնասիրելով անցյալի իրադարձությունների և ընթացիկ մարտահրավերների փոխազդեցությունը կարելի է տեսնել, թե ինչպես են ազգային ինքնության գիտակցումը, տարածքային վեճերը, պատմական տարաբնույթ գործոնները, ժամանակակից մարտահրավերները, ինչպիսիք են օրինակ գլոբալիզացիան և միգրացիան, նպաստում էթնոքաղաքական լարվածությունների մեծացմանը և նոր մարտահրավերներ ստեղծում այս կամ այն տարածաշրջանում՝ դառնալով փխրուն կայունությանը սպառնացող լրջագույն գործոն:

Ազգային ինքնության գիտակցումը հաճախ Էթնոքաղաքական կոնֆլիկտների առաջացման հիմնական գործոններից մեկն է: Տարբեր էթնիկ խմբեր կարող են ունենալ մրցակցային կամ հակասական պատկերացումներ այն մասին, թե ինչ է նշանակում պատկանել կոնկրետ ազգին: Այսպիսի իրավիճակներն առավել բարդ են դառնում, երբ խմբերի միջև զարգանում է այն մտայնությունը, որ մյուսի կողմից վտանգվում են իրենց էթնիկականության պահպանման կարևորագույն տարրերը՝ լեզուն և կրոնը (Hiero & Gallego 2018):

Այս գործոնն իր ուրույն ազդեցություններ է ունեցել այնպիսի հակամարտությունների առաջացման ու զարգացման գործում, ինչպիսին է օրինակ *կատալոնական հարցը Իսպանիայում*: Շատ կատալոնացիներ երկար ժամանակ ձգտել են ավելի մեծ ինքնավարություն և նույնիսկ անկախություն ստանալ Իսպանիայից՝ պնդելով, որ իրենք առանձին ազգ են՝ իրենց սեփական լեզվով, մշակույթով և պատմությամբ (Katalonien und die Unabhängigkeit): Այնուամենայնիվ, իսպանական կառավարությունը չի պատրաստվում տրամադրել Կատալոնիային ավելի մեծ ինքնավարություն, վախճնալով, որ դա կարող է խրախուսել այլ շրջաններին ձգտել անկախության: Վերջին տարիներին լարվածությունը սրվել է որոշ կատալոնացիներ աջակցում են անկախության հանրաքվեի անցկացմանը, մինչդեռ Իսպանիայի կառավարությունը քայլեր է ձեռնարկում այդպիսի ջանքերը խափանելու համար (MARTÍ 2023)

Բոսնիա և Հերցեգովինա. Երկիր Բալկաններում՝ Էթնիկ և կրոնական խմբերի բարդ խառնուրդով: Երկիրն ունի մուսուլմանական մեծամասնությամբ, ինչպես նաև ուղղափառ քրիստոնյա և կաթոլիկ զգալի բնակչություն (Bosnien-Herzegowina): 1990-ականներին երկիրը բզկտվեց դաժան պատերազմով, որն իրար դեմ հանեց երեք հիմնական էթնիկ խմբերին:¹ Ազգային ինքնության մրցակցությունը և տարբեր խմբերի կողմից իրենց ինքնության պաշտպանման ձգտումը առաջացրին խորացող լարվածություն, որը վերածվեց լայնամասշտաբ պատերազմի, բաշխման և զանգվածային բռնությունների, ներառյալ էթնիկական գտումները, որոնք ծանր ազդեցություն ունեցան տարածաշրջանի բնակչության վրա (Dobbins, J., Miller, L. E.,

¹ **Բոսնիացիներ.** հիմնականում իսլամադավան են: Կազմում են Բոսնիա և Հերցեգովինայի բնակչության զգալի մասը:

Սերբեր. պատկանում են Սերբական ուղղափառ եկեղեցուն: Նրանք հիմնականում ներկայացված են Սերպսկայի Հանրապետության շրջաններում և Սարաևոյի որոշ շրջաններում:

Խորվաթներ. պատկանում են Հռոմի կաթոլիկ եկեղեցուն: Դրանք հիմնականում տեղակայված են այնպիսի տարածքներում, ինչպիսիք են Հերցեգովինան և կենտրոնական Բոսնիայի որոշ հատվածներ:

Pezard, S., Chivvis, C. S., Taylor, J. E., Crane, K., Trenkov-Wermuth, C., & Mengistu, T. 2013):

Էթնոքաղաքական հակամարտություններին հանգեցնող հաջորդ գործոնը **տարածքային վեճերն են** (MOORE 2016): Տարածքային վեճերը նաև Էթնոքաղաքական լարվածության աղբյուր են հանդիսացել ԵՄ-ում, քանի որ տարբեր խմբեր կարող են հակասական պահանջներ ունենալ որոշակի տարածքի կամ տարածաշրջանի նկատմամբ: Կատալոնյան, իր բարդ և երկար տարիների պատմությամբ տեղավորվում է Էթնոքաղաքական այս հատույթի մեջ ևս:

Կիպրոս, որը բաժանված է Կիպրոսի հույների հեղաշրջումից և Թուրքիայի ներխուժումից հետո՝ 1974 թվականին (Der Zypernkonflikt): Կիպրոսի հիմնախնդիրը ծագել է Էթնոքաղաքական և տարածքային վեճերի համադրության արդյունքում: Կիպրոսում երկու հիմնական Էթնիկ խումբ կա՝ հույներ և թուրքեր, որոնք ունեն տարբեր մշակութային, կրոնական և ազգային ինքնություններ: 1960 թվականին Կիպրոսն անկախացավ Մեծ Բրիտանիայից, սակայն Էթնիկ խումբերի միջև լարվածությունն արագորեն սրվեց: Հունական և թուրքական համայնքները պահանջում էին տարբեր քաղաքական կարգավորումներ. հույները ձգտում էին միանալ Հունաստանին (Էնոսիս), իսկ թուրքերը նախընտրում էին կղզու բաժանում կամ առնվազն ինքնավարություն (Ker-Lindsay 2015):

Կոսովո. Կոսովոյի հիմնախնդիրը սերտորեն կապված է Էթնոքաղաքական և տարածքային վեճերի հետ: Կոսովոն պատմականորեն եղել է Սերբիայի մաս, սակայն դրա բնակչության մեծամասնությունը կազմում են Էթնիկ ալբանացիները, որոնք ունեն տարբեր լեզու, մշակույթ և կրոն՝ իսլամ, համեմատած սերբերի հետ, որոնք հիմնականում ուղղափառ քրիստոնյաներ են: 2008 թվականին Կոսովոն միակողմանի հռչակեց իր անկախությունը Սերբիայից, սակայն Սերբիան և մի շարք այլ երկրներ, այդ թվում Ռուսաստանը, չեն ճանաչում Կոսովոյի անկախությունը: Տարածքային վեճը և Էթնոքաղաքական լարվածությունը դեռևս մնում են տարածաշրջանի անկայունության պատճառներից, քանի որ սերբական փոքրամասնությունը Կոսովոյում շարունակում է ապրել որպես Էթնիկ փոքրամասնություն, իսկ միջազգային հանրության մի մասն էլ տարակարծիք է Կոսովոյի կարգավիճակի վերաբերյալ (Bebler 2015):

Պատմական գործոնները կենտրոնական դեր են խաղում Էթնոքաղաքական լարվածության առաջացման և սրման գործում: Մասնավորապես.

1. Պատմական հակամարտություններ և տրավմա. Անցյալի հակամարտությունները, հատկապես բռնության և ճնշումների հետ կապված, կարող են երկարատև սպիներ թողնել Էթնիկ խմբի հավաքական հիշողության մեջ: Անհաշտելի իրադարձությունները կարող են տևական ազդեցություն ունենալ տարբեր խմբերի միջև վստահության վրա և հանգեցնել շարունակական լարվածության:

2. Սահմաններ և տարածքային փոփոխություններ. սահմանների սահմանման և տարածքային փոփոխությունների վերաբերյալ պատմական որոշումները կարող են առանձնացնել Էթնիկ խմբերին կամ կենտրոնացնել դրանք որոշակի տարածքներում: Սա կարող է հանգեցնել լարվածության, հատկապես, եթե այդ որոշումներն ընկալվում են որպես անարդար կամ անհավասար:

3. Պատմական խտրականություն և անարդարություններ. Եթե որոշակի Էթնիկ խմբեր նախկինում սիստեմատիկորեն ենթարկվել են խտրականության կամ անբարյացկամ վերաբերմունքի, այդ անարդարությունները կարող են շարունակել անվստահություն և լարվածություն առաջացնել:

4. Ինքնության ձևավորում. Պատմական իրադարձությունները նշանակալի ազդեցություն ունեն հավաքական ինքնության ձևավորման վրա: Պատմական որոշակի իրադարձությունների ներկայացման ձևը կարող է ձևավորել Էթնիկ խմբի

ինքնապատկերը և հանգեցնել բացառիկության կամ զոհի զգացումի, որն իր հերթին կարող է լարվածություն առաջացնել այլ խմբերի հետ:

5. Պատմական կրոնական հակամարտություններ. Պատմական կրոնական հակամարտությունները կարող են էական դեր խաղալ, հատկապես այն շրջաններում, որտեղ կրոնական տարբերությունները սահմանվում են էթնիկական գծերով: Անցյալում կրոնական հակամարտությունները կարող են մեծ ազդեցություն ունենալ էթնիկ խմբերի հարաբերությունների վրա և հանգեցնել լարվածության:

Անցյալի իրադարձությունները, ինչպիսիք են գաղութացումը, հարկադիր միգրացիան և պատերազմները, կարող են խոր ազդեցություն թողնել տարբեր էթնիկ խմբերի հավաքական հիշողության և ինքնության վրա, ինչը շարունակում է ձևավորել նրանց հարաբերությունները ներկայումս: Օրինակ, Երկրորդ համաշխարհային պատերազմի և Հոլոքոստի ժառանգությունը դեռևս ազդում է Եվրոպայի տարբեր էթնիկ խմբերի միջև հարաբերությունների վրա: Գերմանիայի և Լեհաստանի հարաբերությունները, դարավոր հակամարտությունների և հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Նացիստական Գերմանիայի կողմից Լեհաստանի ներխուժման և հետագայում միլիոնավոր էթնիկ գերմանացիների Լեհաստանից բռնի վտարման արդյունքում, մինչ օրս կրում են այդ իրադարձությունների խոր վերքերը: Նմանատիպ բարդ պատմություն ունեն Սերբիան և Բոսնիա և Հերցեգովինան, որտեղ 1990-ականների Նախկին Չարավալվիայի պատերազմները մասամբ բորբոքվեցին սերբերի և բոսնիացիների միջև երկար տարիներ կուտակված դժգոհությունների պատճառով, որոնք ի հայտ եկան, մասնավորապես, Սրբերենիցայում տեղի ունեցած կոտորածների հետևանքով: Հունգարիայի և Ռումինիայի միջև լարվածությունն էլ տևական է՝ կապված փոքրամասնությունների իրավունքների և տարածքային վեճերի շուրջ ծագած հակամարտությունների հետ, որոնք սկսվեցին Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով, երբ Հունգարիան կորցրեց իր տարածքի մեծ մասը, և հետագայում ավելի սրվեցին կոմունիստական շրջանում, երբ Ռումինիան վարում էր կոշտ քաղաքականություն հունգարական փոքրամասնության նկատմամբ:

Այս պատմական և քաղաքական գործոնների ըմբռնումը չափազանց կարևոր է ԵՄ-ում էթնոքաղաքական լարվածության արմատները հասկանալու և հակամարտությունների կարգավորման և սոցիալական համախմբվածության արդյունավետ ռազմավարությունների մշակման համար:

ԵՄ-ում էթնոքաղաքական հակամարտությունների դիմամիկայի ձևավորման գործում, բացի ներքին գործոններից, դեր են խաղում նաև արտաքին գործոնները: **Գլոբալիզացիան**, որը նպաստում է երկրների միջև տնտեսական, մշակութային և սոցիալական փոխանակումների ընդլայնմանը, էական ազդեցություն է ունեցել նաև ԵՄ-ում էթնոքաղաքական հակամարտությունների դիմամիկայի վրա: Ահա մի քանի օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է գլոբալիզացիան ձևավորել այս հակամարտությունները Եվրամիության շրջանակներում:

Բրիտանիայի դուրս գալը Եվրամիությունից (Բրեքսիտը) միանշանակ ազդեց ունեցավ Շոտլանդիայի անկախության ձգտումների վրա: Շոտլանդիան 2016 թվականի Բրեքսիտի հանրաքվեում մեծամասնությամբ քվեարկեց ԵՄ-ում մնալու օգտին, ինչը հակասության մեջ մտավ Միացյալ Թագավորության այլ մասերի ընտրության հետ: Գլոբալիզացիան այստեղ հանդես է գալիս որպես մի գործոն, որը ձևավորել է Շոտլանդիայի ազգային ինքնության և տնտեսական շահերի նոր ընկալումը՝ ԵՄ-ի հետ սերտ կապերի միջոցով: Բրեքսիտը խթանեց Շոտլանդիայում անկախության երկրորդ հանրաքվեի կոչերը, քանի որ շատ շոտլանդացիներ ցանկանում են վերամիավորվել ԵՄ-ի հետ (Tannam 2016):

Եստոնիան, Լատվիան և Լիտվան, Բալթյան երկրները, իրենց անկախությունը վերականգնելուց հետո, հայտնվեցին գլոբալիզացիայի ազդեցության տակ, որը

Նպաստեց իրենց ինտեգրմանը ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին: Սակայն, գլոբալիզացիան նաև սրել է լարվածությունը ռուսական փոքրամասնությունների հետ, որոնք այս երկրներում պահպանել են ուժեղ կապեր Ռուսաստանի հետ: Գլոբալիզացիան նպաստել է Բալթյան երկրների եվրոպականացման գործընթացին, ինչը, միաժամանակ, ուժեղացրել է ռուսական փոքրամասնությունների ինքնության և լեզվական իրավունքների պաշտպանության պահանջները (Levinsson 2006):

Լարվածության աղբյուր կարող է լինել նաև **միգրացիան**, ինչպես ԵՄ-ի ներսում, այնպես էլ ԵՄ-ից դուրս¹. Հունգարիայում, ԵՄ-ի ներգաղթի բաշխման քաղաքականության դեմ պայքարը, որը նպատակ ունի կարգավորել Միջերկրական ծովի միջով ներգաղթյալների հոսքը, հանգեցրել է ազգային ինքնության պաշտպանության պահանջների սրմանը և ներքին և արտաքին քաղաքական լարվածությունների աճին (Hungary's Viktor Orban to defy EU over immigration law):

Բելգիայում միգրացիայի մեծացմանը, հատկապես Միջին Արևելքից և Աֆրիկայից եկած ներգաղթյալների պատճառով, առաջացել են էթնիկ և կրոնական կոնֆլիկտներ, ինչպես նաև սոցիալական խնդիրներ, որոնք սրվել են ծայրահեղական խմբերի կողմից (van Meeteren 2014):

Ֆրանսիայում միգրացիայի աճը, հիմնականում Արաբական աշխարհից, հանգեցրել է քաղաքային բախումների և սոցիալական լարվածության, հատկապես միգրանտների և տեղացի բնակչության միջև (Jossen 2018):

Որոշ դեպքերում միգրանտների համայնքները կարող են իրենց զգալ բացառված կամ խտրականության ենթարկված գերիշխող մշակույթի կողմից, մինչդեռ բնակչության մեծամասնությունը կարող է վտանգ զգալ միգրացիայի ընկալվող մշակութային, տնտեսական կամ անվտանգության հետևանքներից: Այս լարվածությունը կարող է ավելի սրվել ներգաղթի, ապաստանի և սահմանների վերահսկողության հետ կապված քաղաքական որոշումների արդյունքում:

ԵՄ-ի ընդլայնումը, որը նոր անդամ պետություններ է բերել իրենց հստակ պատմություններով և էթնիկական ինքնություններով, կարող է նաև բարդացնել էթնոքաղաքական հակամարտությունների դինամիկան: Սա հատկապես ճիշտ է այն դեպքերում, երբ կան պատմական դժգոհություններ կամ տարածքային վեճեր նոր անդամ պետության և նրա հարևանների միջև, ինչպես երևում է Սերբիայի և Կոսովոյի կամ Հունաստանի և Հյուսիսային Մակեդոնիայի դեպքերում:

Եվրոպական իշխանության բաշխման գործիքակազմը՝ Էթնոքաղաքական հակամարտությունների և (կամ) լարվածությունների հաղթահարման համատեքստում

Եվրամիությունում Էթնոքաղաքական լարվածությունը կառավարելու և կարգավորելու տարբեր մոտեցումներ կան: Այս մոտեցումներից մի քանիսը ներառում են իշխանության բաշխման պայմանավորվածություններ, ֆեդերալիզմ և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն:

Իշխանության բաշխման պայմանավորվածությունները ներառում են քաղաքական իշխանության բաժանում տարբեր էթնիկ կամ ազգային խմբերի միջև: Սա կարող է ներառել կոալիցիոն կառավարությունների ձևավորում կամ քվոտային համակարգերի ստեղծում՝ քաղաքական ինստիտուտներում տարբեր խմբերի ներկայացվածությունն ապահովելու համար: Նպատակն է յուրաքանչյուր խմբին ձայն տալ որոշումների կայացման հարցում և կանխել մեկ խմբի գերիշխանությունը:

¹ Այս գործոնը մշտապես մնում է նաև ԵՄ տարբեր պետությունների քաղաքական դերակատարների ուշադրության կենտրոնում, մասնավորապես Գերմանիայի Բունդեսլանդում AfD-ն (Alternative für Deutschland) կուսակցությունը, որը հանդես է գալիս Գերմանիայում ավելի սահմանափակող միգրացիոն քաղաքականության օգտին: Նրա որոշ անդամներ նախկինում կոչ են արել խստացնել սահմանային հսկողությունը և սահմանափակել ներգաղթը:

Բելգիա. Բելգիան բաժանված է երկու հիմնական լեզվական և մշակութային շրջանների՝ ֆլամանդական և վալոնական: Բյուրսելի դաշնային կառավարությունը կազմված է երկու շրջանների ներկայացուցիչներից, և իշխանությունը բաշխված է նրանց միջև: Կան նաև առանձին տարածաշրջանային կառավարություններ Ֆլանդրիայի և Վալոնիայի համար, որոնցից յուրաքանչյուրն ունի իր լիազորություններն ու պարտականությունները:

Հյուսիսային Իռլանդիա. 1998 թվականին Ավագ ուրբաթ համաձայնագրից (Wie stabil ist der Frieden in Nordirland?) հետո Հյուսիսային Իռլանդիայում հաստատվեցին իշխանության բաշխման պայմանավորվածություններ՝ օգնելու լուծել բողոքական և կաթոլիկ համայնքների միջև երկարատև հակամարտությունը: Հյուսիսային Իռլանդիայի ասամբլեան, որը ներառում է երկու համայնքների ներկայացուցիչներ, իր ստեղծման օրվանից կիսել է իշխանությունը յուևիոնիստական և ազգայնական կուսակցությունների միջև:

Բոսնիա և Հերցեգովինա. Բոսնիա և Հերցեգովինան բարդ բազմազգ պետություն է՝ երեք հիմնական էթնիկ խմբերով՝ բոսնիացիներ, խորվաթներ և սերբեր: Երկրի սահմանադրությունը ներառում է իշխանության բաշխման պայմանավորվածություններ՝ երաշխավորելու, որ յուրաքանչյուր էթնիկ խումբ իրավունք ունի որոշումներ կայացնելիս: Երկրի նախագահությունը, օրինակ, կազմված է երեք անդամից՝ յուրաքանչյուր էթնիկ խմբից մեկը:

Շվեյցարիա¹. Շվեյցարիան դաշնային պետություն է, որն ունի չորս հիմնական լեզվական և մշակութային շրջաններ՝ գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն և ռոմանշերեն: Դաշնային կառավարությունը կազմված է բոլոր շրջանների ներկայացուցիչներից, և իշխանությունը կիսվում է նրանց միջև: Երկրում գործում է նաև ուղղակի ժողովրդավարության համակարգ, որը թույլ է տալիս քաղաքացիներին քվեարկել հարցերի լայն շրջանակի շուրջ:

Կիպրոս. Կիպրոսը բաժանված կղզի է, որի հարավում կիպրահունական համայնքն է, իսկ հյուսիսում՝ կիպրական թուրքական համայնքը: Երկիրն ունի իշխանության բաշխման համակարգ, որը հայտնի է որպես «երկհամայնքային, երկգոտի դաշնություն» (Cyprus: Bi-communal and Bi-zonal Federation), որը ստեղծվել է 1977 թվականին: Համաձայնագիրը ներառում է առանձին հաստատություններ յուրաքանչյուր համայնքի համար, ինչպես նաև դաշնային կառավարություն՝ երկու համայնքների միջև բաշխված իշխանությունով:

Իսպանիա. Իսպանիան ունի ինքնավար շրջանների բարդ համակարգ, որոնք հիմնված են պատմական, լեզվական և մշակութային տարբերությունների վրա: Յուրաքանչյուր ինքնավար մարզ ունի իր կառավարությունն ու խորհրդարանը՝ տարբեր աստիճանի իշխանության և ինքնավարության: Բասկերի երկիրն ու Կատալոնիան, օրինակ, ունեն իրենց ոստիկանական ուժերը և կրթական համակարգերը:

Ֆեդերալիզմ: Դաշնային համակարգի հիմնական նպատակը հակամարտությունների նվազեցումն է և կրոնական ու բազմամշակութային խմբերի բազմազանության ընդունումը: Ֆեդերալիզմը կենտրոնական իշխանությունը ապակենտրոնացնելու մեխանիզմ է, որն առաջարկում է լավ կառավարման և խաղաղ համակեցության տարբերակներ: Այնուամենայնիվ, ֆեդերալիզմի ազդեցությունը տարբեր հասարակություններում տարբեր է: Միջազգային փորձի համաձայն, օրինակ՝ Շվեյցարիայում, Կանադայում և Նորվեգիայում, ֆեդերալիզմը արդյունավետ է էթնիկ բազմազանությունը կառավարելու և լարվածությունները թուլացնելու համար: Սակայն, որոշ երկրներում, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան և Իսպանիան, ֆեդերալիզմը չի կարողացել ամբողջովին վերացնել անկայության պահանջները: Մյուս կողմից, այն համայնքները, որոնք դեռ գտնվում են ազգի կառուցման

¹ Թեև չի մտնում Եվրամիության կազմի մեջ

գործընթացում և ունեն բազմազան կրոնական և էթնիկ համատեքստ, շարունակում են օգտագործել ֆեդերալիզմը որպես լարվածության նվազեցման մեխանիզմ: Սա ցույց է տալիս, որ ֆեդերալիզմի ազդեցությունը էթնիկ հակամարտությունների վրա կարող է լինել էական հետազոտության թեմա այս հասարակություններում (Ababakr 2022):

Շվեյցարիայի ֆեդերալ համակարգը բաղկացած է 26 կանտոններից, որոնցից յուրաքանչյուրն ունի ինքնավարություն տարբեր աստիճան: Երկիրն ունի չորս պաշտոնական լեզու՝ գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն և ռետոռոմաներեն: Այս խմբերի համար կանտոնները և համայնքները ունեն օրենքներ, որոնք թույլ են տալիս պահպանել և զարգացնել իրենց լեզուները և մշակույթը՝ առանց միջէթնիկ հակամարտությունների սրման և բևեռացման (Freitag & Vatter 2008):

Նորվեգիան, օրինակ, թեև չունի պաշտոնական ֆեդերալ համակարգ, սակայն դրա մայրաքաղաքային կառավարման մոդելն ունի որոշակի ինքնավարության տարրեր: Նորվեգիայի ներքին ինքնավարությամբ տարածաշրջանները, ինչպես Սամիական տարածքները, ունեն որոշակի մակարդակում ինքնավարություն, որը թույլ է տալիս պահպանել Սամիական մշակույթը և լեզուն: Մշակութային բազմազանության ճանաչումը և ինքնավարության ապահովումը նպաստում են համայնքների խաղաղ համակեցությանը (The Sámi Parliament in Norway: a “breaking in” perspective):

Եվրոպական իրավական գործիքակազմը՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համատեքստում

Փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը նույնպես կարևոր է էթնոքաղաքական լարվածությունը կառավարելու համար: Սա կարող է ներառել լեզվական իրավունքների երաշխիքներ, պաշտպանություն խտրականությունից և դրական գործողությունների քաղաքականություն՝ ուղղված պատմական անհավասարություններին: Այս պաշտպանությունները կարող են ամրագրվել ազգային սահմանադրությամբ, ԵՄ օրենսդրությամբ կամ մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերում:

«Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա» (FRAMEWORK CONVENTION FOR THE PROTECTION OF NATIONAL MINORITIES AND EXPLANATORY REPORT) 1995 թվականին Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված այս կոնվենցիան նպատակ ունի պաշտպանել ազգային փոքրամասնությունների իրավունքները և խթանել նրանց ինտեգրումը հիմնական հասարակությանը: Այն ստորագրող պետություններից պահանջում է միջոցներ ձեռնարկել՝ պաշտպանելու փոքրամասնությունների լեզուները, մշակույթները և ինքնությունը, ինչպես նաև խթանելու նրանց մասնակցությունը հասարակական կյանքում (Open Society Foundations 91):

«Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան» (About the European Charter for Regional or Minority Languages) Այս խարտիան, որը նաև ընդունվել է Եվրոպայի խորհրդի կողմից 1992 թվականին, նպատակ ունի պաշտպանել և խթանել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը հասարակական կյանքում: Այն ստորագրող պետություններից պահանջում է միջոցներ ձեռնարկել այդ լեզուների ուսուցումն ու օգտագործումը խթանելու և այդ լեզուներով ծառայություններ մատուցելու համար (Dunbar 90):

«Ռասայական հավասարության վերաբերյալ ԵՄ հրահանգ» (The Race Equality Directive: A Shadow Report). 2000 թվականին ընդունված այս հրահանգն արգելում է ռասայական կամ էթնիկական ծագման հիմքով խտրականությունը աշխատանքի, կրթության, կեցության և այլ ոլորտներում: Այն պահանջում է ԵՄ անդամ երկրներից միջոցներ ձեռնարկել հավասար վերաբերմունքը խթանելու և խտրականության դեմ

պայքարող անկախ մարմիններ ստեղծելու համար (Amnesty International, & Open Society Foundations 2021, 23):

Եվրոպական միջմշակութային գործիքակազմը

Էթնոքաղաքական լարվածության կառավարման մեկ այլ մոտեցում է միջմշակութային երկխոսությունը և կրթությունը: Այն ներառում է տարբեր մշակույթների և ինքնությունների ըմբռնումն ու գնահատումը խթանելը, ինչպես նաև տարբեր խմբերի միջև հաղորդակցությունն ու փոխգործակցությունը խրախուսելը:

«Էրազմուս+» ծրագիր. (Erasmus+ EU programme for education, training, youth and sport) «Էրազմուսը», որպես կրթության ոլորտում Եվրոպական միության ամենահավակնոտ ծրագրերից մեկը, հանդես է գալիս ոչ միայն որպես անհատական ակադեմիական հարստացման, այլև որպես ԵՄ ներսում Էթնիկ և քաղաքական խնդիրների հաղթահարման հզոր գործիք: Այս ծրագրի կարևորությունը դուրս է գալիս դասասենյակներից ու լսարաններից և օգնում է ձևավորել քաղաքացիների սերունդ, որը կապված է ընդհանուր փորձի հետ: Էրազմուսի հիմնական ներդրումն էթնիկ տարբերությունների լուծման գործում նրա շարժունակության և մշակութային փոխանակման խթանումն է: Տարբեր երկրներից և Էթնիկական ծագում ունեցող ուսանողները հնարավորություն ունեն սովորելու, ապրելու և միասին աշխատելու: Այս միջմշակութային փորձառությունները մասնակիցներին հնարավորություն են տալիս քանդել կարծրատիպերը և զարգացնել բազմազանության ավելի խորը պատկերացում ԵՄ ներսում և նրա սահմաններից անդին: Էրազմուսը ոչ միայն ստեղծում է կրթական միջազգային միջավայր, այլ նաև նպաստում է սոցիալական ինտեգրմանը և համախմբմանը: Մնալով տարբեր երկրներում՝ ուսանողները բախվում են տարբեր քաղաքական եկթառներին և մշակութային ավանդույթների հետ: Այս անմիջական հանդիպումներն օգնում են կոտրել նախապաշարմունքները և հիմք դնել եվրոպական ինքնության համար, որը գոյություն ունի քաղաքական սահմաններից այն կողմ: Էրազմուսի մեկ այլ կարևոր ասպեկտ է ընդհանուր արժեքների և քաղաքացիական ներգրավվածության խթանումը (González, Mesanza & Mariel 2011):

«Եվրոպական մշակութային մայրաքաղաքներ». (Designated European Capitals of Culture) Եվրոպական մշակութային մայրաքաղաք մրցանակը ոչ միայն պատիվ է ընտրված քաղաքի համար, այլ նաև տեսլական նախաձեռնություն, որը վճռական ներդրում է ունենում Եվրոպական միության Էթնիկ և քաղաքական մարտահրավերների հաղթահարման գործում: Այս ծրագիրը կարևոր նշանակություն ունի, քանի որ այն ոչ միայն ընդգծում է մշակութային զանօրոգի, այլև ծառայում է որպես հզոր գործիք՝ համայնքների միջև կամուրջներ կառուցելու և սոցիալական համախմբվածությունն ամրապնդելու համար: Եվրոպական մշակութային մայրաքաղաքների հիմնական մոտիվը ընդհանուր մշակութային արժեքների ընդգծումն ու վերհանումն է, որոնք կապում են մարդկանց ամբողջ ԵՄ-ում: Քաղաքը որպես մշակութային մայրաքաղաք ընտրելը հնարավորություն է տալիս ընդգծելու մշակութային բազմազանությունը և ստեղծել միջմշակութային երկխոսության հարթակ:

Ծրագրի կարևորությունը նաև Եվրամիության ընդհանուր պատմության և մշակութային ինքնության մասին իրազեկումը խթանելու կարողության մեջ է: Սա ստեղծում է ընդհանուր պատմություն, որը ոգեշնչում է մարդկանց միասին առաջ շարժվել (URBANČÍKOVÁ 2018):

«Եվրոպայի խորհրդի մշակութային երթուղիներ ծրագիր». (Cultural Routes of the Council of Europe programme) Եվրոպական մշակութային երթուղիներ նախաձեռնությունը երիտասարդ նախաձեռնություն է, որը ոչ միայն պահպանում է պատմական ուղիներն ու մշակութային ժառանգությունը, այլև նպաստում է Եվրոպական միության Էթնիկ խոչընդոտների հաղթահարմանը: Մշակութային ուղիները դառնում են փոխանակման և հանդիպման վայրեր, որտեղ կարող են

հավաքվել տարբեր մշակութային ծագում ունեցող մարդիկ: Տարբեր համայնքների միջև երկխոսությունը խթանվում է միջոցառումների, փառատոների և կրթական նախաձեռնությունների միջոցով, որոնք տեղի են ունենում այս ուղիներով: Սա օգնում է կոտրել կարծրատիպերը, հաղթահարել նախապաշարմունքները և զարգացնել միմյանց մասին ավելի խորը փոխըմբռնում: Ծրագրի կարևոր տարրը մշակութային ժառանգությունը որպես բազմազանությունը խթանելու միջոց օգտագործելու կարողությունն է: Կարևորելով պատմական վայրերը, ավանդույթներն ու պատմությունները՝ ստեղծվում է հարթակ, որը ծառայում է մշակութային ինքնության պահպանմանն ու ամրապնդմանը (Thomas-Penette 1996):

Եզրակացություն

Հաշվի առնելով Եվրամիությունում Էթնոքաղաքական լարվածության համապարփակ վերլուծությունը առաջին հերթին կարևոր է ունենալ Էթնիկ խմբերի ներսում հակամարտությունների տասնող բարդ գործոնների մանրամասն պատկերը: Ազգային ինքնության առավել խորին (որոշ դեպքերում նույնիսկ ծայրահեղական նրբերանգներով) գիտակցումը, տարածքային վեճերը, պատմական հիշողությունները, գլոբալացումը, միգրացիան և ԵՄ ընդլայնումը նպաստել են Էթնոքաղաքական լարվածությունների առավել սրմանն ու ծավալմանը:

Արտաքին ազդակների կարևորության շեշտադրումը, ինչպիսիք են գլոբալիզացիան և ԵՄ ընդլայնումը, պարզ է դարձնում, որ այդ հակամարտությունները չեն կարող դիտվել առանձին, այլ գտնվում են գլոբալ փոփոխությունների և քաղաքական զարգացումների ավելի լայն համատեքստում: Սա ընդգծում է հակամարտությունների կառավարման եվրոպական մոտեցման անհրաժեշտությունը, որը ամեն պարագայում պետք է հաշվի առնի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին դինամիկան:

Էթնոքաղաքական լարվածությունների ու հակամարտությունների դեմ պայքարի տարբեր մոտեցումների ուսումնասիրությունը, մասնավորապես, իշխանությունների տարանջատման, դաշնայնացման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության շեշտադրումը հիմք է տալիս հնարավոր լուծումների շուրջ կառուցողական քննարկման համար: Ինտեգրատիվ մոտեցումը, ներառյալ ինստիտուցիոնալ, իրավական և սոցիալական գործիքները, նշանավորվում են որպես ԵՄ-ում հակամարտությունների կայուն կառավարման կարևորագույն գործիքներ:

Կարևոր է նշել, որ ԵՄ-ում Էթնոքաղաքական լարվածությունը կառավարելու միասնական լուծում չկա: Որդեգրված մոտեցումը կախված է հակամարտության կոնկրետ համատեքստից և դինամիկայից: Հակամարտությունների արդյունավետ լուծումը պահանջում է կոնֆլիկտի հիմնական պատճառների բազմակողմ ըմբռնում, ինչպես նաև այդ պատճառները լուծելու համար անհրաժեշտ քաղաքական, իրավական և սոցիալական շրջանակների մանրակրկիտ դիտարկում:

Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ Էթնոքաղաքական լարվածության պատճառների մանրակրկիտ ըմբռնումը Եական է հակամարտությունների կարգավորման արդյունավետ միջոցներ մշակելու համար: Խնդիրն այս պատկերացումներն ինտեգրելն է քաղաքականության և մեխանիզմների նախագծման մեջ, որոնք նպաստում են երկարաժամկետ կայունությանը և ներդաշնակությանը Եվրոպական Միությունում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ababakr, Amer. "Federalism As a Tool for Ethnic Conflict Resolution: A Case Study of Iraq". *Mediterranean Journal of Social Sciences*, 2022, 13. 56. 10.36941/mjss-2022-0017, pp. 56-75.

2. COE.INT. "About the European Charter for Regional or Minority Languages". <https://www.coe.int/en/web/european-charter-regional-or-minority-languages/about-the-charter>. Accessed: 07 July 2024.
3. "Discrimination: Legal Standards and Key Definitions. In A Human Rights Guide for Researching Racial and Religious Discrimination in Counter-Terrorism in Europe". *Amnesty International, & Open Society Foundations*, 2021, pp. 22–38, <http://www.jstor.org/stable/resrep28828.8>. Accessed: 18 August 2024.
4. Bebler, A. "The Serbia-Kosovo conflict". *"Frozen Conflicts" in Europe*, in A. Bebler (Ed.), Verlag Barbara Budrich, 1st ed., pp. 151–170, 2015, <http://www.jstor.org/stable/j.ctvdf0bmg.18>. Accessed: 15 August 2024.
5. Fischer M. "Bosnien-Herzegowina". <https://www.bpb.de/themen/kriege-konflikte/dossier-kriege-konflikte/54780/bosnien-herzegowina/>. Accessed: 07 July 2024.
6. "Cultural Routes". *Council of Europe programme*, <https://www.coe.int/en/web/cultural-routes>. Accessed: 07 July 2024.
7. "Cyprus: Bi-communal and Bi-zonal Federation". *Bianet*, <https://m.bianet.org/english/politics/10239-cyprus-bi-communal-and-bi-zonal-federation>. Accessed: 07 July 2024
8. "Der Zypernkonflikt". *Bpb*, <https://www.bpb.de/themen/europa/tuerkei/185876/der-zypernkonflikt/>. Accessed: 07 July 2024.
9. "Designated European Capitals of Culture". European Commission, <https://culture.ec.europa.eu/policies/culture-in-cities-and-regions/designated-capitals-of-culture>. Accessed: 07 July 2024.
10. Dobbins, J., Miller, L. E., Pezard, S., Chivvis, C. S., Taylor, J. E., Crane, K., Trenkov-Wermuth, C., & Mengistu, T. *Bosnia and Herzegovina. In Overcoming Obstacles to Peace: Local Factors in Nation-Building*, RAND Corporation, 2013, pp. 93–124, <http://www.jstor.org/stable/10.7249/j.ctt3fgzrv.13>. Accessed 15 Aug. 2024.
11. Dunbar, R. "Minority Language Rights in International Law". *The International and Comparative Law Quarterly*, 50(1), 2001, pp. 90–120, <http://www.jstor.org/stable/761462>. Accessed: 18 August 2024.
12. "Erasmus+ EU programme for education, training, youth and sport". *European Commission*, <https://erasmus-plus.ec.europa.eu/>. Accessed: 07 July 2024.
13. "European Year of Cultural Heritage 2018". *European Commission*, <https://culture.ec.europa.eu/cultural-heritage/eu-policy-for-cultural-heritage/european-year-of-cultural-heritage-2018>. Accessed: 07 July 2024.
14. "Framework Convention for the Protection of National Minorities and Explanatory Report". Council of Europe, <https://rm.coe.int/16800c10cf>. Accessed: 07 July 2024.
15. Freitag, M., & Vatter, A. "Decentralization and Fiscal Discipline in Sub-National Governments: Evidence from the Swiss Federal System". *Publius*, 2008, 38(2), pp. 272–294, <http://www.jstor.org/stable/20184969> Accessed 15 Aug. 2024
16. González, C. R., Mesanza, R. B., & Mariel, P. "The Determinants of International Student Mobility Flows: an Empirical Study on the Erasmus programme". *Higher Education*, 62(4), 2011, pp. 414–416, <http://www.jstor.org/stable/41477876>. Accessed: 18 August 2024.
17. Hierro, María José, and Aina Gallego. "Identities in between: Political Conflict and Ethnonational Identities in Multicultural States". *The Journal of Conflict Resolution*, vol. 62, no. 6, 2018, pp. 1314–39, <https://www.jstor.org/stable/48596828> . Accessed 15 Aug. 2024.
18. "Hungary's Viktor Orban to Defy EU over Immigration Law". *BBC*, <https://www.bbc.com/news/world-europe-59748173>. Accessed 15 Aug. 2024.
19. "Intercultural cities programme (ICC)". COE, <https://www.coe.int/en/web/interculturalcities>. Accessed: 07 July 2024.

20. Jossen, M. *Undocumented Migrants, Healthcare and Health*. In *Undocumented Migrants and Healthcare: Eight Stories from Switzerland*, 1st ed., Vol. 6, pp. 7–24, Open Book Publishers, 2018, <http://www.jstor.org/stable/j.ctv4w3srn.5>. Accessed 15 Aug. 2024.
21. “Katalonien und die Unabhängigkeit”. DW, <https://www.dw.com/de/katalonien-und-die-unabh%C3%A4ngigkeit-ein-traum-spaltet-die-gesellschaft/a-66126745>. Accessed: 07 July 2024.
22. Levinsson, C. “The Long Shadow of History: Post-Soviet Border Disputes—The Case of Estonia, Latvia, and Russia”. *Connections*, 5(2), 2006, pp. 98–110, <http://www.jstor.org/stable/26323241>, Accessed 15 Aug. 2024.
23. Martí, J. *Catalonia vs Spain: How Sonorous Is Nationalism?* In M. MACHIN-AUTENRIETH, S. E.-S. CASTELO-BRANCO, & S. LLANO (Eds.), *Music and the Making of Portugal and Spain: Nationalism and Identity Politics in the Iberian Peninsula*, University of Illinois Press, pp. 205–224, 2023, <http://www.jstor.org/stable/10.5406/jj.6305470.15>. Accessed 15 Aug. 2024.
24. Moore, A. “ETHNO-TERRITORIALITY AND ETHNIC CONFLICT”. *Geographical Review*, 106(1), 2016, pp. 92–108. <http://www.jstor.org/stable/43916149>. Accessed 15 Aug. 2024.
25. Open Society Foundations. “Minority Protection in Bulgaria. In MONITORING THE EU ACCESSION PROCESS: MINORITY PROTECTION”. 2002, pp. 69–121, <http://www.jstor.org/stable/resrep27173.7>. Accessed: 18 August 2024
26. Tannam, E. “Brexit and the Future of the United Kingdom. Istituto Affari Internazionali (IAI)”. 2016, <http://www.jstor.org/stable/resrep09673>. Accessed 15 Aug. 2024.
27. Open Society Foundations. “The Race Equality Directive: A Shadow Report”. <https://www.opensocietyfoundations.org/publications/race-equality-directive-shadow-report#:~:text=The%20Race%20Equality%20Directive%20is,of%20racial%20or%20ethni c%20origin>. Accessed: 07 July 2024.
28. Josefsen E. “The Sámi Parliament in Norway: a “breaking in” perspective”. <https://www.tandfonline.com/doi/full/10.1080/2154896X.2024.2342122#abstract>. Accessed 15 Aug. 2024.
29. Thomas-Penette, M. “Cultural Routes”. *European Gardens*, 2, 1996, pp. 4–9. <http://www.jstor.org/stable/44784400>. Accessed: 18 August 2024.
30. Urbančíková, N. “European capitals of culture: what are their individualities?”. *Theoretical and Empirical Researches in Urban Management*, 13(4), 2018, pp. 43–55, <https://www.jstor.org/stable/26537540>. Accessed: 18 August 2024.
31. van Meeteren, M. “Immigration Policies in Belgium and the Netherlands. In Irregular Migrants in Belgium and the Netherlands: Aspirations and Incorporation”. *Amsterdam University Press*, 2014, pp. 61–80, <http://www.jstor.org/stable/j.ctt12877r7.7>. Accessed 15 Aug. 2024.
32. “Wie stabil ist der Frieden in Nordirland?”. Zdf Heute, <https://www.zdf.de/nachrichten/politik/nord-irland-konflikt-karfreitag-abkommen-grossbritannien-eu-100.html>. Accessed: 07 July 2024.
33. “Working together for Roma inclusion The EU Framework explained”. *European Commission*, https://www.ab.gov.tr/files/ardb/evt/1_avrupa_birligi/1_9_politikalar/1_9_5_azinlik_politika si/working_together_roma_inclusion.pdf. Accessed: 07 July 2024.

EUROPEAN TOOLS FOR OVERCOMING ETHNO-POLITICAL TENSIONS

VAHE ZARGARYAN

*Yerevan State University,
Department of International Relations,
Chair of the International Relations and Diplomacy
Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia*

The European Union, apart from being a large and influential structure, is also a single, common integration roof for different cultures and ethnic groups. And this difference is often the basis of various ethno-political conflicts within the Union. These conflicts are the result of tensions, economic inequality and political grievances carried over from the historical past to the present day and have a significant impact on political stability, social cohesion as well as economic development.

The purpose of this article is to explore the European toolkit to identify how European states and international organizations use existing mechanisms to prevent or mitigate ethno-political tensions, promote peace and stability.

In order to achieve the goal, the task was set to study the main factors of the emergence of ethno-political tensions in the EU, including historical, economic, political and social influences.

The methodological approach of the article is based on a combination of analytical, comparative, practical case studies, historical and documentary analysis methods.

It has been argued that ethno-political tensions are often caused by economic inequality, historical disputes, national identity issues and migration processes, which require a multi-faceted and comprehensive approach to manage.

The conclusion is that the effective management of ethno-political tensions in the EU requires a unified policy based on ethnic diversity and cultural integration, including mechanisms for the separation of power and the protection of minority rights, as well as the strengthening of global and regional cooperation to mitigate the impact of external factors.

Keywords: *Ethnopolitical conflicts, European Union, EU, Europe, intercultural relations, federalism, cultural dialogue.*

ЕВРОПЕЙСКИЕ ИНСТРУМЕНТЫ ПРЕОДОЛЕНИЯ ЭТНОПОЛИТИЧЕСКОЙ НАПРЯЖЕННОСТИ

ВАГЕ ЗАРГАРЯН

*соискатель кафедры международных отношений и дипломатии
факультета международных отношений
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Европейский Союз, помимо того, что он является большой и влиятельной структурой, также является единой общей интеграционной крышей для разных культур и этнических групп. И это различие часто является основой различных этнополитических конфликтов внутри Союза. Такие конфликты являются результатом напряженности, экономического неравенства и политических обид,

перенесенных из исторического прошлого в настоящее время, и оказывают существенное влияние на политическую стабильность, социальную сплоченность, а также экономическое развитие.

Цель данной статьи — исследовать европейский инструментарий, чтобы выявить, как европейские государства и международные организации используют существующие механизмы для предотвращения или смягчения этнополитической напряженности, содействия миру и стабильности.

Для достижения цели была поставлена задача изучить основные факторы возникновения этнополитической напряженности в ЕС, включая исторические, экономические, политические и социальные влияния.

Методологический подход статьи основан на сочетании аналитических, сравнительных, практических исследований случаев, исторических и документальных методах анализа. Утверждается, что этнополитическая напряженность часто вызвана экономическим неравенством, историческими спорами, проблемами национальной идентичности и миграционными процессами, для управления которыми требуется многогранный и комплексный подход.

Вывод заключается в том, что эффективное управление этнополитической напряженностью в ЕС требует единой политики, основанной на этническом разнообразии и культурной интеграции, включая механизмы разделения власти и защиты прав меньшинств, а также укрепление глобального и регионального сотрудничества для смягчения воздействия внешних факторов.

Ключевые слова: *этнополитические конфликты, Евросоюз, ЕС, Европа, межкультурные отношения, федерализм, культурный диалог.*

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՄՈՂԵԼԸ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ*

ՀԴՏ 321

DOI: 10.52063/25792652-2024.3.22-71

ԺԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի
փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի
քաղաքագիտության բաժնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
zhanna.harutyunyan@edu.isec.am
ORCID: 0000-0001-6971-9652

Սույն աշխատանքի նպատակն է ստեղծել Էլեկտրոնային կառավարման հասունության տեսական մոդել որպես թվային փոխակերպան հիմնական օպերացիոնալ շրջանակ՝ գնահատելու Հայաստանում տեղի ունեցող քաղաքական գործընթացները՝ կապված Էլեկտրոնային կառավարման անցման հետ: Ըստ այդմ, սույն աշխատանքի շրջանակում քայլերի հաջորդականությամբ ներկայացվել են Էլեկտրոնային կառավարման և կառավարման թվայնացման սկզբունքային տարբերակիչները և փոխկապակցվածությունը, վերլուծության ենթարկվել Էլեկտրոնային կառավարման հասունության տարբեր մոդելներ, մեկնաբանվել Էլեկտրոնային կառավարման հասունության չափման մակարդակները, վերջապես օպերացիոնալ վերլուծության ենթարկվել առաջարկվող հասունության մոդելը:

Սույն հոդվածում առաջարկվող տեսական մոդելի օպերացիոնալացումը կատարվել է յոթ կառուցվածքային բլոկերով՝ առաջնորդություն, ֆինանսներ, ենթակառուցվածքներ և տեխնոլոգիաներ, ծառայությունների մատուցում, մեծ տվյալների կառավարում և անվտանգություն, մարդուժի գնահատում, թվային օրակարգի տեղեկատվական համակարգեր:

Սույն տեսական մոդելը մշակվել է գիտական գրականության վերանայման, փաստաթղթերի վերլուծության և համեմատական գնահատման մեթոդներով:

Կատարված աշխատանքի արդյունքում կարելի է եզրակացնել, որ առաջարկվող մոդելը կօժանդակի Հայաստանում կառավարման թվայնացման գործընթացի մակարդակի գնահատմանը, հնարավորություն կտա սահմանելու Էլեկտրոնային կառավարման զարգացման տեսլականն իր հիմնարար առաջնահերթություններով և մշակելու ռազմավարական պլանավորման մշտադիտարկման ու գնահատման համար անհրաժեշտ ցուցիչները: Տվյալ մոդելը հավակնում է կիրառվելու ինչպես առանձին փորձագիտական ուսումնասիրությունների շրջանակներում, այնպես էլ բազմաբևեռ և բազմաշահառու համակողմանի գնահատումներում տվյալների հավաքագրման և վերլուծության մեկ կամ մի քանի համակցված մեթոդների կիրառմամբ: Այնուամենայնիվ, առաջարկվող մոդելը միտված է Էլեկտրոնային կառավարման և թվայնացման գործընթացների համապարփակ որակական, այլ ոչ թե քանակական նկարագրությանը:

* Հոդվածը ներկայացվել է 24.08.2024թ., գրախոսվել՝ 28.09.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

Հիմնաբառեր՝ *Էլեկտրոնային կառավարում, թվայնացում, մեծ տվյալներ, հասունության մոդել, քաղաքական գործընթաց, քաղաքականության մշակում, որոշումների կայացում:*

Ներածություն

Չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը, որի հիմքում թվային, ֆիզիկական և կենսաբանական տեխնոլոգիաների սերտաճումն է, հեղափոխում է ողջ աշխարհը (Rusmiyati, et al. 2024): Այն ակտիվորեն նպաստում է կառավարման թվայնացման գործընթացների արագացմանը և անալոգայինից դեպի էլեկտրոնային կառավարման անցմանը (Cloete 2023): Թեև էլեկտրոնային կառավարումը և կառավարման թվայնացումը ենթադրում են տեխնոլոգիաների կիրառում կառավարման գործընթացներում, և հաճախ նույնական են ընկալվում, այնուամենայնիվ, դրանք ունեն եական տարբերություններ: Ծառայությունների թվայնացումն էլեկտրոնային կառավարման անհրաժեշտ, սակայն ոչ բավարար գործոնն է: Էլեկտրոնային կառավարման հասունության չափումը տրվում է մի քանի մակարդակով՝ ա) հիմնական թվային ներկայությամբ, երբ կառավարությունն ունի հիմնական կայքեր՝ ստատիկ տեղեկություններով, սակայն հիմնական թվային ծառայությունները հիմնելու կարիք ունի բ) գործարքների թվային սահմանափակ կամ հատվածային առցանց ծառայություններ, գ) ինտեգրված ծառայություններ, երբ պետական բոլոր ծառայությունները փոխգործունակ են՝ թույլ տալով քաղաքացիներին դրանց հասանելիություն ունենալու մեկ պորտալի միջոցով, և վերջապես, դ) անհատականացված ծառայություններ և անխափան կառավարում, երբ ծառայությունները անհատականացվում են տվյալների, արհեստական բանականության և կանխատեսող վերլուծությունների միջոցով, իսկ կառավարումն իրականացվում է լիովին օպտիմիզացված համակարգերի միջոցով՝ ինքնաշխատ գործընթացներով, օգտատերերի ներգրավվածության բարձր մակարդակով և շարունակական կատարելագործմամբ:

Էլեկտրոնային կառավարում, թե՛ կառավարման թվայնացում

Էլեկտրոնային կառավարումը ներկայացնում է համապարփակ մոտեցում, որն ինտեգրում է տեխնոլոգիաները կառավարման պրակտիկայում՝ քաղաքականությունների մշակման արդյունավետության, թափանցիկության և քաղաքացիների իրավունքների և հնարավորությունների ընդլայնման նպատակով: Մինչդեռ կառավարման թվայնացումը կենտրոնանում է հատկապես անալոգային տեղեկույթը թվային ձևաչափերի փոխակերպելու վրա՝ բարելավելու պետական հաստատություններում տվյալների հասանելիությունը և կառավարումը թվային տեխնոլոգիաների միջոցով:

Անալոգային ընթացակարգերը ենթադրում են փակ գործառնություններ և ներքին անալոգային գործողությունների վրա կենտրոնացում, մինչդեռ էլեկտրոնային կառավարումն ապահովում է առավել մեծ թափանցիկություն, օգտատիրականություն մոտեցումներ և տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաներին (ՏՀՏ) միացված ընթացակարգեր: Ինչ վերաբերում է թվային կառավարմանը, ապա այն ենթադրում է բաց և օգտատերերին ուղղված մոտեցումներ ու գործընթացներ և գործառնական վերափոխումներ (Welby 2019):

Այսօր Հայաստանում թերևս առավել արդիական է կառավարման թվայնացման գործընթացը (Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 183-L որոշման հավելված 1)՝ ի վերջո էլեկտրոնային կառավարմանն ամբողջովին անցման հեռանկարով (ՀՀ

կառավարություն 2014): Ինչպես նշվում է ՀՀ էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի (ԷԿԵՆԳ) պաշտոնական կայքում, Հայաստանի կառավարությունը 2000-ական թվականներից ի վեր իրականացնում է մի շարք նախաձեռնություններ էլեկտրոնային կառավարման ոլորտում: Ըստ այդմ, էլեկտրոնային փոխգործունակությունը և հաղորդակցությունը կառավարության և քաղաքացիների միջև արդեն իսկ իրականություն է: Քաղաքացիների, ձեռնարկությունների և կառավարության կապը ապահովելու համար ստեղծվել են մի շարք բարդ և ինտեգրված համակարգեր, որոնք ամփոփ ներկայացված են www.e-gov.am կայքում: Ըսկ ԷԿԵՆԳ համակարգի տված գնահատականի, «էլեկտրոնային կառավարման համակարգերի զարգացման գործընթացը Հայաստանում իրականանում է շատ արագ՝ չնայած էլեկտրոնային ծառայությունների օգտագործումը բնակչության կողմից դեռևս համընթաց չէ»¹:

Էլեկտրոնային կառավարումն ընդգծում է կառավարման ավանդական գործելակերպի վերափոխումը թվային տեխնոլոգիական լուծումների ինտեգրման միջոցով՝ պետական ծառայություններն առավել արդյունավետ մատուցելու, քաղաքացիների մասնակցության ընդլայնման և վարչական գործընթացների պարզեցման համար: Այն ընձեռում է առցանց հասանելիություն պետական բոլոր ծառայություններին, օրինակ՝ հարկերի էլեկտրոնային հայտերի ու առցանց դիմումների ներկայացում, ծննդան/մահվան թվային վկայականների կիրառում և այլն: Էլեկտրոնային կառավարման սկզբունքներից է քաղաքացիների մասնակցության խթանումը թվային հարթակների միջոցով (Lee-Geiller 2024), ինչպիսիք են էլեկտրոնային քվեարկությունը, առցանց խորհրդատվությունները և հետադարձ կապի մեխանիզմները (Kyeong, Ra and Im 2023): Պակաս կարևոր չէ կառավարության ներքին գործընթացների թվայնացումը, օրինակ՝ գնումները, մարդկային ռեսուրսների կառավարումը, փաստաթղթեր ու տվյալափոխերը որոշումների կայացումը:

Կառավարման թվայնացումը ներառում է անալոգային կամ թղթային շրջանառությամբ կառավարական գործընթացների և գրառումների վերածումը թվային ձևաչափերի: Թվայնացումը հիմնականում կենտրոնանում է պետական տեղեկության և տվյալների էլեկտրոնային ձևաչափերով փոխակերպման և պահպանման վրա՝ հեշտացնելով տվյալների մուտքագրումը, առբերումը և փոխանակումը: Կառավարման թվայնացումը ենթադրում է, օրինակ՝ թղթային փաստաթղթերի սկանավորում և թվայնացում՝ էլեկտրոնային գրառումներ և արխիվներ ստեղծելու համար (Larsson and Teigland 2020):

Այսպիսով՝ եթե էլեկտրոնային կառավարումը նպատակ ունի բարելավելու կառավարման գործընթացները և ծառայությունները տեխնոլոգիական լուծումների միջոցով, որոնք կբարձրացնեն կառավարման արդյունավետությունը, թափանցիկությունը և քաղաքացիների գոհունակությունը, ապա թվայնացումը հիմնականում նպատակ ունի հեշտացնելու պետական տվյալների և գրառումների ավելի հեշտ մուտքագրումը, պահպանումը և կառավարումը: Հետևաբար, էլեկտրոնային կառավարումը փոխակերպող ազդեցություն ունի կառավարման վրա՝ վերասահմանելով ծառայությունների մատուցման մոդելները, խթանելով քաղաքացիների մասնակցությունը և տվյալների վրա հիմնված որոշումների կայացման հնարավորություն տալով: Թվայնացումը հեշտացնում է տեղեկատվության կառավարումն ու հասանելիությունը, սակայն պարտադիր չէ, որ հանգեցնի

¹ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ, Կառավարության փոխգործելիության հարթակ https://www.ekeng.am/hy/sub/e_manage (վերջին այցը՝ 19-ը սեպտեմբերի 2024 թ.):

կառավարման ավելի լայն բարեփոխումների կամ ծառայությունների որակի բարելավմանը:

Էլեկտրոնային կառավարման հասունության գնահատման մոդելները

«Հասունություն» եզրույթը հաճախ օգտագործվում է շարունակական գործընթացներում տվյալ մակարդակի վիճակը բնութագրելու համար: Կան մի շարք ակադեմիական ուղղություններ, որոնք օգտագործում են «հասունություն» եզրույթը և մշակում հասունության մոդելները որպես դասակարգման սխեմաներ: Էլեկտրոնային կառավարման հասունության մոդելային սխեմաներ են մշակել Զ. Անդերսենը և Յ. Յենրիքսենը (Andersen and Henriksen 2006), որոնք փորձ են կատարել ընդլայնելու մինչ այդ ամենահայտնի և տարածված մոդելներից մեկը՝ Լայնի և Լիի հեղինակությամբ (Layne and Lee 2001): Նրանց մոդելի հիմնական շեշտադրումը տեխնիկական ինտեգրման խնդիրներից դեպի պետական ծառայությունների առաջնահերթության անցումն է: Մոդելը ջատագովում է հիմնական գործունեության թվայնացումը՝ շեշտը դնելով այն բանի վրա, թե ինչն է շահավետ թվայնացված ծառայությունների օգտագործողների համար, այլ ոչ թե առաջնորդվում բացառապես տեխնոլոգիական իրագործելիությամբ: Հետագայում Անդերսենի և Յենրիքսենի մշակած մոդելը կատարելագործվել և ներկայացվել է Կոպենհագենի բիզնես դպրոցի հետ համատեղ գիտական հոդվածներում՝ հիմնվելով «Հանրային հատվածի գործընթացի վերակառուցման մոդելի» (ՀԳՎ) վրա (Andersen, Henriksen, and Medaglia 2012):

Հասունության մոդելների հիմնական սահմանափակումներից մեկն այն է, որ սովորաբար դրանք հակադրության մեջ են դնում «հասունություն» ու «անհասունություն» կատեգորիաները որպես դիսկրետ փոփոխականներ, մինչդեռ պարզատիր չէ, որ դրանք միայն որոշակի արժեքներ ընդունող և իրար ուղղակիորեն հակասող դիսկրետ միջոցներ են: Անդերսենն ու Յենրիքսենը ռազմավարական մտածողության տեսանկյունից ավելի կառուցվածքային մոտեցում են համարում իրենց իսկ առաջարկած ՀԳՎ մոդելը, որը փորձում է ոչ թե պարզապես «հասուն» կամ «անհասուն» համարել կառավարման որևէ միավոր, այլ թույլ է տալիս կենտրոնանալ սպառողների կամ օգտատերերի աչքերով դիտվող գործողությունների բազմության վրա (Andersen, Henriksen, and Medaglia 2012): ՀԳՎ մոդելը փոխում է Էլեկտրոնային կառավարման հասունության չափելիությունը՝ մի քայլ առաջ տանելով Լայնի և Լիի տեխնիկական ինտեգրման հասունության խնդրից: ՀԳՎ մոդելը հիմնականում կենտրոնանում է օգտատերերին տրվող ծառայությունների լավարկման վրա: Այն նաև կենտրոնանում է հիմնաքարային գործողությունների թվայնացման վրա, ոչ թե այն տեսանկյունից, թե ինչն է տեխնոլոգիապես իրատեսական, այլ այն հարցը, թե որն է օգտատերերի համար օգտակար: Այսպիսով՝ ՀԳՎ մոդելը տեխնոլոգիական դեմոնստրացիայի փոխարեն ավելի անցում է կատարում օգտատիրական տեսանկյունից:

Ըստ Էռնայի, ՀԳՎ մոդելը դիտարկում է օգտատիրոջը, այլ ոչ թե մարդուն, որը սահմանափակում է Էլեկտրոնային կառավարման հասունության չափման և զարգացման հեռանկարները: Այս մոդելով ի սկզբանե սահմանափակում է դրվում մարդու մասնակցության վրա՝ հռչակելով, որ լրելային տարբերակով յուրաքանչյուր մարդ Էլեկտրոնային կառավարման համակարգի օգտատեր է: Չնայած թվային հասարակության հայեցակարգում այս թեզն արդիական և կիրառելի է, սակայն «մարդ-օգտատեր» հավասարեցումը հասունության մոդելից դուրս է թողնում այն կարևորագույն չափումը, թե որքանով են մարդիկ պատրաստակամ և ադապտացված ինտեգրվելու թվային հասարակության սկզբունքներին, որքանով են նրանք օգտվում այս կամ այն թվային համակարգից՝ այդպիսով իսկ հանդես գալով կամ չգալով որպես

«օգտատեր», ըստ այդմ, ինչպիսի միջոցառումներ է պետք կիրառել բոլոր մարդկանց որպես օգտատերեր ներառականության և մասնակցության ապահովման համար:

Վերոնշյալ մոդելները չնայած իրար հակասական չեն, սակայն առանձին դիտարկելիս կարող են հանգեցնել այնպիսի սահմանափակումների, որի արդյունքում չդիտարկվի տեխնոլոգիական ժամանակակից ներուժը, կամ էլ այն չհամապատասխանի օգտատերերի կարիքներին և ծառայությունների լավարկման միտումներին: Ըստ այդմ, անհրաժեշտ է ձևավորել էլեկտրոնային կառավարման հասունության չափման համապարփակ անձակենտրոն մոտեցում, որն առաջնահերթություն կտա տեխնոլոգիական նորարարությանը՝ միաժամանակ մարդուն՝ որպես պոտենցիալ օգտատիրոջ, դնելով քաղաքականությունների մշակման և ծառայությունների մատուցման կենտրոնում: Այս ինտեգրված մոտեցման կարևորագույն դրույթները հետևյալն են.

- Թվային փոխակերպում. այն ենթադրում է պետական ծառայությունների ու գործառնությունների արդիականացման համար այնպիսի զարգացող տեխնոլոգիաների կիրառում, ինչպիսիք են արհեստական բանականությունը, մեքենայական ուսուցումը, բլոկչեյնը և իրերի համացանցը (World Bank 2024):

- Տվյալների վրա հիմնված կառավարում. ենթադրում է մեծ տվյալների վերլուծության և տվյալների վրա հիմնված որոշումների կայացման կիրառում՝ ռեսուրսների բաշխումը, քաղաքականության մշակումը և ծառայությունների մատուցումն օպտիմալացնելու համար (Bousdekis, Lepenioti and Apostolou 2021):

- Փոխգործունակություն և ինտեգրում. կառավարական համակարգերի և տվյալների բազաների փոխգործունակության խթանում՝ բարելավելու քաղաքացիներին տրվող ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը և հնարավորություն տալով տեղեկատվության ու տվյալների անխափան փոխանակումը (Pardo, Nam and Burke 2012):

- Կիբերանվտանգություն և գաղտնիություն. կիբերանվտանգության ամուր միջոցառումների կիրառում և գաղտնիության ապահովում՝ քաղաքացիների զգայուն տվյալները պաշտպանելու և էլեկտրոնային կառավարման համակարգերի նկատմամբ վստահությունն ամրապնդելու համար (Jha and Jha 2024):

- Ունիվերսալ և ներառական մարդակենտրոն դիզայն. էլեկտրոնային կառավարման հարթակների համար մարդակենտրոն սկզբունքների կիրառում՝ հասանելի, մատչելի, ներառական, օգտագործողի համար հարմար ինտերֆեյսներ նախագծելու համար (Sherman, Stiehl and Pratap 2024):

- Քաղաքացիների ներգրավվածություն. քաղաքացիների ակտիվ մասնակցության խթանում որոշումների կայացման մասնակցային գործընթացների, հետադարձ կապի մեխանիզմների և համագործակցային կառավարման նախաձեռնությունների միջոցով (Pislaru, Vlad and Ivascu 2024):

- Անհատականացում. անհատականացված ծառայությունների մատուցում՝ հարմարեցված առանձին քաղաքացիների կարիքներին ու նախասիրություններին՝ օգտագործելով մեծ տվյալների վերլուծությունը և օգտատերերի պրոֆիլավորումը (Ilieva, Yankova and Ruseva 2024):

- Թափանցիկություն և հաշվետվողականություն. կառավարության գործունեության թափանցիկության ընդլայնում՝ քաղաքացիներին իրական ժամանակում տրամադրելով տեղեկատվության, արդյունավետ կառավարման ցուցանիշներին ու տվյալներին հասանելիություն (Shakya and Kumar 2024):

Հաշվի առնելով վերը նշված սկզբունքները և զարգացնելով էլեկտրոնային կառավարման հասունության մոդելները տեխնոլոգիական նորարարությունների և անձակենտրոն մոտեցման համակցման միջոցով՝ կառավարությունները կարող են ստեղծել փոխակերպվող թվային էկոհամակարգեր, որոնք հզորացնում են

քաղաքացիներին, բարձրացնում կառավարման արդյունավետությունը և խթանում կայուն սոցիալ-տնտեսական զարգացումը:

Հարկ է նկատի ունենալ, որ տեխնոլոգիաներն, ըստ Էռլթյան, չեն կարող որակվել որպես լավ կամ վատ, նույնիսկ չեզոք (Kranzberg 1986), դրանք ինքնուրույնաբար չեն զարգանում, և խոսքը այն որոշումների մասին է, թե ինչպես զարգացնել տեխնոլոգիաները հասարակական, կազմակերպական և անհատական մակարդակներում: Տեխնոլոգիական համակարգերը կարող են մարմնավորել քաղաքական արժեքներ և ունենալ հետևանքներ, որոնք դուրս են գալիս դրանց բուն նպատակներից: Դրանք ձևավորվում և ազդում են սոցիալական, քաղաքական և էթիկական համատեքստերի վրա (Winner 1980): Տեխնոլոգիաները նաև ձևավորում են մարդկային փոխհարաբերություններն ու ինքնությունը (Turkle 2011):

Էլեկտրոնային կառավարման հասունության առաջարկվող մոդելի օպերացիոնալացում

Առաջարկվող մոդելը հիմնված է չորս բալանոց Լիկերտի սանդղակի (Croasmun and Ostrom 2011) վրա, որտեղ «մեկ» միավորը նշանակում է ցուցանիշի ամբողջովին բացակայություն, որը հիմնելու կարիք ունի, «երկու» միավորը ենթադրում է ցուցանիշի սահմանափակ առկայություն, որը դեռևս բավականաչափ զարգացման կարիք ունի, «երեք» միավորը ցույց է տալիս ցուցանիշի առկայությունը, սակայն հետագա զարգացման հեռանկարով, և «չորս» միավորն այն ցանկալի տեսլականն է, որին պետք է ձգտի կառավարությունը՝ ապահովելու համար թվայնացման բավականաչափ հասունությունը: Սույն մոդելի կիրառումը պայմանական է և պետք է հիմնված լինի բազմաբևեռ գնահատականների վրա՝ ներառելով ոչ միայն կառավարության բոլոր ենթակառուցվածքները, այլև թվային տեխնոլոգիաներ արտադրող և ծառայություններ մատուցող մասնավոր հատվածին, քաղաքացիական հասարակությանը, փորձագիտական լսարանին, թվային օրակարգի առաջադար միջազգային կազմակերպություններին:

Ստորև բերված *Աղյուսակ 1-ում* տրված է Էլեկտրոնային կառավարման հասունության առաջարկվող մոդելի օպերացիոնալ նկարագիրը հիմնական յոթ կատեգորիաներով և դրանց ենթակատեգորիաներով: Յուրաքանչյուրի համար տրված է գնահատականի ստանդարտ հիմնավորում, որը, սակայն, վերլուծության ժամանակ անհրաժեշտ է մանրամասնել և փաստարկել: Յուրաքանչյուր առանձին կատեգորիայի փաստարկումը կարող է իրականացվել մի շարք մեթոդներով, երբեմն դրանց համակցմամբ՝ փաստաթղթերի վերլուծություն, իրավիճակային գնահատումներ, որակական հետազոտություններ՝ ֆոկուս խմբային քննարկումներ, փորձագիտական հարցումներ, որոշ դեպքերում՝ առանձին կառուցվածքով քանակական հարցումներ: Սահմանափակ ռեսուրսների պարագայում հնարավոր է ամբողջ օպերացիոնալ սխեման գնահատել ոլորտի պատասխանատուների հետ և կոնսենսուսային քննարկումների արդյունքում ընտրել այն գնահատականը, որը ռազմավարական զարգացման տեսանկյունից ամենաընդունելին կլինի:

Աղյուսակ 1. Էլեկտրոնային կառավարման հասունության մոդելի օպերացիոնալ նկարագիրը

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ		
Օպերացիոնալացում		
Միավորների հակիրճ բանալի		Հիմնավորում
4	Ցանկալի տեսլականը, որին պետք է ձգտել	Մոդելն ապահովում է ստանդարտ նկարագրողական բովանդակություն յուրաքանչյուր հասունության մակարդակի համար:
3	Բավականաչափ զարգացած է, սակայն համապարփակ միտեցման կարիք ունի	
2	Սահմանափակ կամ հատվածային առկայություն, հետագա զարգացման կարիք ունի	
1	Բացակայություն կամ աննշան առկայություն, հիմնականում հիմնելու կարիք ունի	
1. Առաջնորդություն և կառավարում		
1.1. Օրենսդրություն, կանոնակարգում և տարվող քաղաքականություն		
Մշակված օրենսդրության և պլանավորված քաղաքականության բացակայություն, թերի և սակավ կանոնակարգում		1 ☐
Առկա կանոնակարգված օրենսդրություն, սակայն առանց պրակտիկ կիրարկման հնարավորյան և տարվող հատվածային քաղաքականությամբ		2 ☐
Հստակորեն սահմանված և կանոնակարգված օրենսդրության առկայություն և տարվող պլանավորված քաղաքականություն		3 ☐
Համապարփակ կանոնակարգված օրենսդրական դաշտ և տարվող հետևողական քաղաքականություն գործնական		4 ☐
1.2. Երկարաժամկետ ռազմավարական պլանավորում		
Չկան պաշտոնական ռազմավարություն, հատվածային նախաձեռնություններ		1 ☐
Ռազմավարություն գոյություն ունի, բայց չկա հստակություն կամ ոլորտային համապատասխանեցում		2 ☐
Առկա է հստակորեն սահմանված և համապատասխանեցված ռազմավարություն, կարիք կա հետագա զարգացման		3 ☐
Առկա է համապարփակ, լավ սահմանված ռազմավարություն, որը		4

համահունչ է ընդհանուր նպատակներին	☐
1.3. Կառավարության հանձնառություն, կոորդինացում և կոալիցիոն համաձայնություն	
Հանձնառության և արդյունավետ կոորդինացիայի բացակայություն, և կոալիցիոն համաձայնությանը նվազագույն տեսանելի աջակցություն	1 ☐
Տեսանելի հանձնառություն, սակայն թերի կոորդինացիա, հատվածային աջակցություն և կոալիցիոն համաձայնություն	2 ☐
Հետևողական և տեսանելի հանձնառություն, առավել համակարգված կոորդինացիա և ձևավորված կոալիցիոն համաձայնություն	3 ☐
Թվայնացման նախաձեռնությունները ակտիվորեն խթանող հանձնառություն, արդյունավետ կոորդինացիա և կոալիցիոն գործուն համագործակցություն	4 ☐
1.4. Կառավարման թվայնացման գործընթացի իրագործելիության կարողունակություն	
Թվայնացման գործընթացի նվազագույն կարողունակություն	1 ☐
Թվայնացման գործընթացի իրագործելիության համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար կարողունակություն	2 ☐
Կարողունակության բավարար մակարդակ, սակայն անընդմեջ զարգացման միտումով	3 ☐
Կարողունակության առաջատար շրջանակ՝ ներուժով կիսվելու հնարավորությամբ	4 ☐
1.5. Հաշվետվողականություն և թափանցիկություն	
Նվազագույն հաշվետվողականություն և թափանցիկություն	1 ☐
Բավարար, բայց ոչ հետևողական և թերի հաշվետվողականություն	2 ☐
Արդյունավետ հաշվետվողականության համար առկա գործիքակազմ, մշտադիտարկման ու գնահատման ներդրված ընթացակարգեր	3 ☐
Թափանցիկ ու հաշվետվողական գործուն համակարգ՝ մշտադիտարկման ու գնահատման կիրառվող համակարգ	4 ☐
2. Ֆինանսավորում	
2.1. Թվայնացման օրակարգի ֆինանսավորման կայունություն և ծառայությունների ֆինանսական ծածկույթ	
Պետական ապարատի թվայնացման գործընթացի աննշան ֆինանսավորում	1 ☐
Պետական ապարատի թվայնացման գործընթացի հատվածային և սահմանափակ ֆինանսավորում	2 ☐
Պետական ապարատի թվայնացման գործընթացի նպատակային ֆինանսավորում	3 ☐
Պետական ապարատի թվայնացման գործընթացի համապարփակ ֆինանսավորում	4 ☐

2.2. Պետական ֆինանսավորման մեջ ներառված թվայնացման շրջանակը	
Պետական ինստիտուտների և ծրագրերի թվայնացման օրակարգերի պետական ֆինանսավորման բացակայություն	1 ☐
Սահմանափակ քանակով պետական ինստիտուտների և ծրագրերի ներգրավում պետական ֆինանսավորման մեխանիզմներում	2 ☐
Տեսանելի քանակով պետական ինստիտուտների և ծրագրերի ներգրավում պետական ֆինանսավորման մեխանիզմներում	3 ☐
Բոլոր պետական ինստիտուտների և ծրագրերի ներգրավում պետական ֆինանսավորման մեխանիզմներում	4 ☐
2.3. Օգտատերերի ֆինանսական պաշտպանվածություն	
Գրպանից կատարվող ծախսերի բարձր մակարդակ և թվային ծառայություններին հասանելիության բարձր գին	1 ☐
Գրպանից կատարվող զգալի ծախսեր՝ թվային որակյալ ծառայություններին հասանելիության համեմատ	2 ☐
Ծախս-որակ ներդաշնակեցում, ֆինանսական բեռի թեթևացման մեխանիզմներ	3 ☐
Պետական ամբողջական հոգածություն և որակյալ թվային ծառայություններ	4 ☐
3. Ենթակառուցվածքներ և տեխնոլոգիաներ	
3.1. Թվային ենթակառուցվածքների հասանելիություն և մատչելիություն	
Սահմանափակ թվային ենթակառուցվածքներ, հասանելիության և մատչելիության մարտահրավերներ	1 ☐
Թվային ենթակառուցվածքների համարժեք, բայց սահմանափակ մատչելիություն և հասանելիություն	2 ☐
Թվային ենթակառուցվածքների լայնամասշտաբ հասանելիություն ու մատչելիություն	3 ☐
Զարգացող թվային տեխնոլոգիաներին համահունչ անընդհատ թարմացվող և արդիականացվող թվային ենթակառուցվածքներ	4 ☐
3.2. Թվայնացման համար անհրաժեշտ ֆիզիկական ենթակառուցվածքների առկայություն	
Նվազագույն ապարատային հագեցվածություն, օժանդակ սարքավորումներ և լիցենզավորված օպերացիոն համակարգեր	1 ☐
Սահմանափակ թվով և ոչ բավարար որակի առկա ապարատային հագեցվածություն, օժանդակ սարքավորումներ սակայն չլիցենզավորված օպերացիոն համակարգեր	2 ☐
Բավարար թվով և որակի առկա ապարատային հագեցվածություն, օժանդակ սարքավորումներ և լիցենզավորված օպերացիոն համակարգեր	3 ☐
Ապարատային հագեցվածության, օժանդակ սարքավորումների և լիցենզավորված օպերացիոն համակարգերի ամբողջական ծածկույթ	4 ☐
3.3. Թվային ցանցերի և մեծ տվյալների կենտրոնների հագեցվածություն	
Ֆիզիկական և թվային ցանցերի, մեծ տվյալների սերվերների բացակայություն	1 ☐
Ֆիզիկական և թվային ցանցերի, մեծ տվյալների սերվերների հատվածային ապահովում	2 ☐

Ֆիզիկական և թվային ցանցերի, մեծ տվյալների սերվերների առկայություն	3 ☐
Ֆիզիկական և թվային ցանցերի, տվյալների սերվերների համապարփակ ծածկույթ և անխափան աշխատանք	4 ☐
3.4. Բարձր տեխնոլոգիական ինտեգրում	
Առաջադեմ և բարձր տեխնոլոգիաների նվազագույն օգտագործում և սակավ ինտեգրում	1 ☐
Առաջադեմ և բարձր տեխնոլոգիաների բավարար օգտագործում, բայց պակաս ինտեգրում	2 ☐
Առաջադեմ և բարձր տեխնոլոգիաների լայնածավալ օգտագործում և ինտեգրում	3 ☐
Առաջադեմ և բարձր տեխնոլոգիաների հետևողականորեն և շարունակական տեղայնացում և հարմարում	4 ☐
4. Ծառայությունների մատուցում	
4.1. Մարդակենտրոն ծառայություններ	
Ծառայությունների ոչ բավարար և սահմանափակ հասանելիություն	1 ☐
Որոշակի հասանելի ծառայություններ՝ մատչելիության սահմանափակումներով	2 ☐
Բավականաչափ հասանելի և մատչելի ծառայություններ	3 ☐
Մարդակենտրոն և հետևողականորեն բարելավվող ծառայություններ	4 ☐
4.2. Որակյալ, մատչելի և հասանելի թվային ծառայություններ	
Որակյալ թվային ծառայությունների բացակայություն կամ աննշան քանակ	1 ☐
Որակյալ թվային ծառայությունների առկայություն, սակայն մատչելիության և հասանելիության պակաս	2 ☐
Բավարար չափով որակյալ, աստիճանաբար ավելացվող մատչելի և հասանելի թվային ծառայություններ	3 ☐
Որակյալ, մատչելի և հասանելի թվային ծառայությունների կայուն համակարգ	4 ☐
4.3. Թվային ծառայությունների հավասարաչափ և անկողմնակալ բաշխում	

Հասարակության լայն շերտերին անհասանելի և թանկարժեք թվային ծառայություններ	1 ☐
Հասարակության թիրախավորված շերտերին հասանելի և համեմատաբար մատչելի թվային ծառայություններ	2 ☐
Հասարակության լայն շերտերին հասանելի և համեմատաբար մատչելի թվային ծառայություններ	3 ☐
Համապարփակ հասանելի և բոլորի համար մատչելի թվային ծառայություններ	4 ☐
4.4. Էլեկտրոնային կառավարման ծառայություններ և գործիքակազմ	
Սահմանափակ առցանց ծառայություններ, նվազագույն գործառնություն	1 ☐
Բարելավումների կարիք ունեցող հիմնական առցանց ծառայություններ	2 ☐
Համապարփակ և գործառնական առցանց ծառայություններ	3 ☐
Լիարժեք փոխգործունակ առցանց ծառայություններ	4 ☐
5. Մեծ տվյալների կառավարում և անվտանգություն	
5.1. Մեծ տվյալների կառավարում և կայունություն	
Մեծ տվյալների կառավարման թույլ և անգործունակ մեթոդներ	1 ☐
Մեծ տվյալների համարժեք կառավարում՝ որոշ բացերով կամ անհամապատասխանություններով	2 ☐
Համապարփակ և լավ կայացած մեծ տվյալների կառավարում	3 ☐
Մեծ տվյալների կառավարման ոլորտում առաջատար պրակտիկաների կիրառում և պահանջների համապատասխանություն	4 ☐
5.2. Կիբեռանվտանգության միջոցառումներ և տվյալների պաշտպանություն	
Կիբեռանվտանգության նվազագույն միջոցառումներ և հակազդող արձագանք	1 ☐
Կիբեռանվտանգության բավարար միջոցառումներ և հակազդող արձագանք	2 ☐

Արդյունավետ կիբերանվտանգության միջոցառումներ և ակտիվ արձագանք	3 ☐
Կիբերանվտանգության առաջադեմ միջոցառումներ և նախաձեռնող պրոակտիվ արձագանք	4 ☐
6. Աշխատուժի կարողություններ	
6.1. Թվային գրագիտություն	
Սահմանափակ թվով և բովանդակությամբ առկա թվային գրագիտության ծրագրեր աշխատուժի համար	1 ☐
Թվային գրագիտության ոլորտում աշխատուժի կատարելագործման հատվածային նախաձեռնություններ	2 ☐
Թվային գրագիտության ծրագրերի բավականին կայուն շրջանակ աշխատուժի կատարելագործման նպատակով	3 ☐
Թվային գրագիտության անընդմեջ թարմացվող ծրագրերի համակարգված ներդրում՝ աշխատուժի շարունակական մասնագիտական զարգացման նպատակով	4 ☐
6.2. Փոփոխությունների կառավարում	
Փոփոխություններին ուժեղ դիմադրություն, փոփոխության սահմանափակ նախաձեռնություններ	1 ☐
Փոփոխությունների կառավարման որոշ ռազմավարություններ, փոփոխությունների չափավոր ընդունում	2 ☐
Զարգացող կարիքներին հարմարվող փոփոխությունների արագ կառավարում	3 ☐
Փոփոխությունների կառավարման ակտիվ պրակտիկա, ընդունման բարձր մակարդակ	4 ☐
7. Թվային օրակարգի տեղեկատվական համակարգեր և իրազեկվածություն	
7.1. Թվային ծառայությունների մասին տեղեկատվություն	
Թվային ծառայությունների հասանելիության, դրանց օգուտների և օգտագործման մասին սահմանափակ տեղեկատվություն և դրա անմատչելիություն	1 ☐
Թվային ծառայությունների հասանելիության, դրանց օգուտների և օգտագործման մասին հատվածային տեղեկատվություն և դրանց վերաբերյալ հաղորդակցման պակաս արդյունավետ մեթոդներ	2 ☐
Թվային ծառայությունների, հասանելիության, դրանց օգուտների և	3

օգտագործման մասին բավարար հասանելի տեղեկատվություն և հաղորդակցման համեմատաբար արդյունավետ մեթոդներ	☐
Թվային ծառայությունների, հասանելիության, դրանց օգուտների և օգտագործման մասին շարունակաբար թարմացվող և համապարփակ տեղեկատվություն, հաղորդակցման արդիական մեթոդներ	4 ☐
7.2. Մեծ տվյալների հիմքով թվային տեղեկատվության կիրառումը որոշումների կայացման գործընթացում	
Որոշումների կայացման գործընթացում մեծ տվյալների հիմքով թվային վերլուծությունների կիրառման և թվային համակարգերի փոխգործունակության բացակայություն	1 ☐
Որոշումների կայացման գործընթացում մեծ տվյալների հիմքով թվային վերլուծությունների սահմանափակ և հատվածային կիրառում, թվային համակարգերի թերի փոխգործունակություն	2 ☐
Որոշումների կայացման գործընթացում մեծ տվյալների հիմքով թվային վերլուծությունների վրա հիմնված պլանավորում, թվային համակարգերի փոխգործունակության հնարավորությունների մեծացում	3 ☐
Որոշումների կայացման գործընթացում մեծ տվյալների հիմքով թվային վերլուծությունների վրա հիմնված պլանավորում և ամբողջական փոխգործունակ համակարգ	4 ☐

Եզրակացություն

Կառավարման թվայնացման հասունության սույն տեսական մոդելը նպատակ ունի օժանդակելու պետական կառավարման համակարգի ոլորտային պատասխանատուներին՝ հասկանալու կառավարման թվայնացման գործընթացի տվյալ ժամանակահատվածի իրավիճակը, վերհանելու գործընթացում առկա սխտեմատիկ խնդիրները և թերությունները, արձանագրելու առկա ռեսուրսները և պոտենցիալը, կատարելու իրատեսական նպատակադրումներ ռազմավարական պլանավորման գործընթացում և հասնելու ցանկալի տեսլականին: Մոդելի կիրառմամբ գնահատումները կարող են իրականացվել որոշակի ժամանակային ինտերվալներով՝ ռազմավարական գործողությունների պլանը չափելի դարձնելու նպատակով: Այս մոդելը կարող է նաև կիրառվել որպես կառավարման թվայնացման գործընթացի մշտադիտարկման որակական գործիք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարության: «Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025, 2021 թվականի փետրվարի 11-ի N 183-L որոշման հավելված 1»։ 11 02, 2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957>:
2. ՀՀ կառավարություն. «Էլեկտրոնային կառավարման ռազմավարական ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության 2014 թ. ապրիլի 10-ի նիստի N 14

- արձանագրային որոշման».
Երևան, 2014, https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/04/14-44_1ardz.pdf:
3. Andersen , Kim Normann; Henriksen, Helle Zinner; Medaglia, Rony; Copenhagen Business School. “Maturity models in the age of digital diversity: Beyond the Layne & Lee legacy.” *Public Administration in the Information Age: Revisited* 19, 2012, pp. 205-219.
 4. Andersen, Kim Normann and Helle Zinner Henriksen. “e-Government Maturity Models: Extension of the Layne and Lee Model.” *Government Information Quarterly* (23) 23, 2006, pp. 236-248. https://www.researchgate.net/publication/222658012_e-Government_Maturity_Models_Extension_of_the_Layne_and_Lee_Model Accessed: 11 October 2024.
 5. Bousdekis, Alexandros and others. “A Review of Data-Driven Decision-Making Methods for Industry 4.0 Maintenance Applications.” *Electronics*, 10.7, 2021, pp. 828-847.
 6. Cloete, F. “Transition from Paper-based Analogue Government to Sustainable Digital Governance Outcomes in Africa.” *Administratio Publica*, 31, N 2, 2023, pp. 70-90.
 7. Croasmun, James and Lee Ostrom. “Using Likert-Type Scales in the Social Sciences.” *Journal of Adult Education*, 40.1, 2011, pp. 19-22.
 8. Edelman Trust Institute. “2024 Edelman Trust Barometer, Global Report”, 88, 2024. https://www.edelman.com/sites/g/files/aatuss191/files/2024-02/2024%20Edelman%20Trust%20Barometer%20Global%20Report_FINAL.pdf. Accessed: 03 March, 2024.
 9. Ilieva, Galina, et al. “Factors Influencing User Perception and Adoption of E-Government Services.” *Administrative Sciences*, 14.3, 2024, pp. 54-84.
 10. Internet Governance Forum. “IGF 2023 Summary, Eighteenth Meeting of Internet Governance Forum.” *IGF 2023 Summary*, Kyoto, 2023. https://intgovforum.org/en/filedepot_download/300/27144. Accessed: 03 March 2024.
 11. Jha, Rahul and Mona Jha. “Optimizing E-Government Cybersecurity through Artificial Intelligence Integration.” *Journal of Trends in Computer Science and Smart Technology*, 6.1, 2024, pp. 67-87.
 12. Kranzberg, Melvin. “Technology and History: ‘Kranzberg’s Laws’.” *Technology and Culture*, 27.3, 1986, pp. 544–560.
 13. Kyeong, Kyuwoong and others. “How does the government interact with citizens within an electronic governance system? Selective government responsiveness.” *International Review of Administrative Sciences*, 89.4, 2023, pp. 1079-1096.
 14. Larsson, Anthony and Robin Teigland, *Digital Transformation and Public Services*. Abingdon, Oxon and NY: Routledge, 2020.
 15. Layne, Karen and Jungwoo Lee. “Developing a Fully Functional E-government: A Four Stage Model.” *Government Information Quarterly*, 18, 2001, pp. 122-136.
 16. Lee-Geiller, Seulki. “Technology Married to Good Governance and Diversity: Explaining E-participation Preparedness in Government.” *Technological Forecasting and Social Change*, 201, 2024.

17. Pardo, Theresa, Taewoo Nam and Brian Burke. "E-Government Interoperability: Interaction of Policy, Management, and Technology Dimensions." *Social Science Computer Review*, 30.1, 2012, pp. 7-23.
18. Pislaru, Marius, et al. "Citizen-Centric Governance: Enhancing Citizen Engagement through Artificial Intelligence Tools." *Sustainability*, 16.7, 2024, 2686-2703.
19. Rusmiyati, Rusmiyati, et al. "Strategic Economic Paradigms in the Fourth Industrial Revolution: A Multidimensional Analysis of Policy, Technology, and Socio-Economic Dynamics." *International Journal of Economic Literature*, 2.1, 2024, pp. 239-253.
20. Shakya, Abhinav Singh and Rajesh Kumar. "Empowering Governance through Big Data: Unlocking Potential, Addressing Obstacles, and Best Practices." *Idealistic Journal of Advanced Research in Progressive Spectrums*, 3.3, 2024, pp. 8-15.
21. Sherman, Bruce, Emily Stiehl and Preethi Lakshmi Pratap. "The Importance of Human-centered Design in Equitable Health Promotion Initiatives." *American Journal of Health Promotion*, 38.3, 2024, pp. 443-447.
22. Turkle, Sherry. *Alone Together: Why We Expect More from Technology and Less from Each Other*. New York: Basic Books, 2011.
23. United Nations General Assembly. *Declaration on the Commemoration of the Seventy-fifth Anniversary of the United Nations*, A/RES/75/1. New York: United Nations, 2020.
<https://documents.un.org/doc/undoc/gen/n20/248/80/pdf/n2024880.pdf>. Accessed: 02 March 2024.
24. United Nations. *Our Common Agenda – Report of the Secretary-General*. New York: United Nations, 2021. https://www.un.org/en/content/common-agenda-report/assets/pdf/Common_Agenda_Report_English.pdf. Accessed: 2 March 2024.
25. Welby, Benjamin. *The Impact of Digital Government on Citizen Well-being*. 2019.
26. Winner, Langdon. "Do Artifacts Have Politics?". *Daedalus* 109.1, 1980, pp.121–136. <https://www.jstor.org/stable/20024652?origin=JSTOR-pdf>. Accessed: 27 April 2024.
27. World Bank. *Digital Progress and Trends Report 2023*. Washington, DC: World Bank, 2024.

WORKS CITED

1. Hayastani t'vaynacman r'azmavarut'yun 2021-2025, HH kar'avarout'yan 2021 t'vakani p'etrvari 11-i N 183-L oroshman havelvac' 1. 11 02 2021. [Armenia's Digitalization Strategy 2021-2025, Appendix 1 of the RA Government's Decision N 183-L of February 11, 2021.] 2021. (in Armenian)
2. HH kar'avarut'yun. "E'lektronayin kar'avarman r'azmavarakan c'ragir, Havelvac' HH kar'avarut'yan 2014 t'. aprili 10-i nisti N 14 ard'anagrayin voroshman." Erevan, 2014. [RA Government. "Strategic Program of Electronic Management, Annex of the RA Government Protocol Decision N 14 of the Session on April 10, 2014."] 2014. (in Armenian)

THE E-GOVERNANCE MATURITY MODEL IN THE CONTEXT OF THE DIGITAL TRANSFORMATION AGENDA

ZHANNA HARUTYUNYAN

*National Academy of Science of the Republic of Armenia, Institute of Philosophy,
Sociology and Law, Department of Political Science,
Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

This paper aims to develop a theoretical model of e-governance maturity as a core operational framework for digital transformation, in order to evaluate the policy processes occurring in Armenia during the transition to e-governance. Accordingly, the study outlines the key distinctions and interconnections between e-governance and the digitalization of governance in a step-by-step manner, analyzes various e-governance maturity models, interprets the levels of e-governance maturity assessment, and concludes with an operational analysis of the proposed maturity model.

The proposed model is structured around seven key components: leadership, finance, infrastructure and technology, service delivery, big data management and security, human resources assessment, and digital agenda information systems. . The development of this theoretical model employed scientific literature reviews, document analysis, and comparative evaluations.

As a result of the work done, it can be concluded that this model claims to assist in assessing the current state of government digitalization in Armenia, establishing a vision for e-governance development with key priorities, and formulating the necessary indicators for monitoring and evaluating strategic planning efforts. This model is designed for application in both specialized expert analyses and broader, multi-stakeholder evaluations, utilizing diverse data collection and analysis methods. Importantly, the model emphasizes a qualitative approach, providing a comprehensive description of e-governance and digitalization processes rather than a purely quantitative assessment

Keywords: *e-government, digitalization, big data, maturity model, political process, policymaking, decision making.*

МОДЕЛЬ ЗРЕЛОСТИ ЭЛЕКТРОННОГО УПРАВЛЕНИЯ В КОНТЕКСТЕ ПОВЕСТКИ ДНЯ ЦИФРОВОЙ ТРАНСФОРМАЦИИ

ЖАННА АРУТЮНЯН

*соискатель кафедры политологии
Института философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения,
г. Ереван, Республика Армения*

Целью данного исследования является выявление фундаментальных различий и взаимосвязей между электронным управлением и цифровизацией правительства. В исследовании последовательно анализируются различные модели зрелости электронного управления для разработки теоретической основы для оценки политических процессов в Армении, связанных с переходом к электронному управлению. Предлагаемая модель структурирована вокруг семи ключевых компонентов: лидерство, финансы, инфраструктура и технологии,

предоставление услуг, управление большими данными и безопасность, оценка человеческих ресурсов и информационные системы цифровой повестки дня.

При разработке данной теоретической модели использовались обзор научной литературы, анализ документов и сравнительные оценки.

В результате проделанной работы можно сделать вывод о том, что данная модель поможет в оценке текущего состояния цифровизации правительства в Армении, создании видения развития электронного управления с ключевыми приоритетами и в формулировании необходимых показателей для мониторинга и оценки усилий по стратегическому планированию. Данная модель предназначена для применения как в специализированных экспертных анализах, так и в более широких многосторонних оценках с использованием разнообразных методов сбора и анализа данных. Важно отметить, что данная модель подчеркивает качественный подход, предоставляя всестороннее описание процессов электронного управления и цифровизации, а не чисто количественную оценку.

Ключевые слова: *электронное правительство, цифровизация, большие данные, модель зрелости, политический процесс, разработка политики, принятие решений.*

THE DYNAMICS OF DEVELOPMENT OF RA-GEORGIAN POLITICAL RELATIONS IN THE POST-SOVIET PERIOD*

UDC 327

DOI: 10.52063/25792652-2024.3.22-88

KAREN GHAZARYAN

*Yerevan State University, Faculty of International Relations,
Department of Political Science, Ph.D. Student*

Spitak, the Republic of Armenia

kar.ghazaryan5@gmail.com

ORCID: 0009-0009-9413-8329

Georgia has transit strategic importance for Armenia. The purpose of this article is to present the development of RA-Georgia relations, the impact of changes in political leaders, and geopolitical developments in both countries in the post-Soviet period. The following objectives were set in the given research:

- 1. to study RA-Georgia relations and their changes, basic and main documents,***
- 2. to analyze the influence of political leaders and geopolitical developments of the two countries on bilateral relations,***
- 3. to present the role of regional and extraterritorial actors, balancing policy and influence in regional developments.***

The systematic methods of historical-comparative, event, and content analysis were used in the research.

The research resulted in the following conclusions:

- 1. Based on the historical and geopolitical circumstances of the two countries, they have always emphasized the neighborly relations between the two countries and their development.***
- 2. The character of relations can be considered strategic and friendly. Georgia can have a positive influence on the RA-Azerbaijan and RA-Turkey dialogue. RA can be an important bridge in Iran-Georgia relations.***
- 3. Georgia-Azerbaijan-Turkey strategic cooperation can become a big threat for Armenia.***

Key words: *Armenia, Georgia, Bilateral relations, Regional policy, Security, Regional cooperation, South Caucasus.*

Introduction

A new course of relations between Armenia and Georgia began in the 1990s. The entire region, being in a rather complicated and tangled state, had its influence on the formation of the relations between the two countries, as both newly independent states were under various threats, up to the loss of independence. The two countries pay quite a lot of attention to their relations with each other and try to constantly develop relations, both in bilateral and multilateral fields.

* Հոդվածը ներկայացվել է 30.08.2024թ., գրախոսվել՝ 26.09.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

Since the declaration of independence, regional factors such as.

- The different character of the approaches shown by the parties in the relations between the regional powers (Russia, Turkey, Iran and Azerbaijan),
- The disunity of the parties regarding the settlement of regional conflicts,
- Georgia's strategic cooperation with Turkey and Azerbaijan in the conditions of Turkey and Azerbaijan's policy aimed at isolating Armenia,
- Differences in approaches to involvement in regional processes and international organizations, etc.

From the beginning of the 1990s, the turbulent events in Georgia and Armenia caused great obstacles for the formation of bilateral relations. However, taking into account the previous experience and a number of other circumstances, the two states also initiated steps aimed at creating the prerequisites for contact with each other. As a result, diplomatic relations were established between the two countries already on July 17, 1992, and already in 1993. The RA Embassy in Tbilisi was opened in July (RA, MFA, RA-Georgia bilateral relations 2023). The agreement "On Friendship, Cooperation and Mutual Security" signed between the two countries on May 19, 1993 was quite significant (Ratifying the Agreement on Friendship 1995).

Armenian-Georgian Relations Prior to Saakashvili's Presidency

The first and second presidents of Georgia have always emphasized the role of RA in the foreign policy of Georgia, about which statements have been made many times. I would also like to mention that the relations with the neighbors have a great role and importance for RA, in which special attention is paid to the relations with Georgia. During the tenure of Levon Ter-Petrosyan, the first president of the Republic of Armenia, Georgia, as a neighboring country, was important in Armenia's foreign policy direction, the clear proof of which was the state and official visits to both sides and the many agreements signed during those years. In 1998 after the February elections, Robert Kocharyan was elected the second president of RA, who in his turn gave a new impetus to foreign policy and especially to Armenian-Georgian relations. On April 28-30, during the summit of the heads of the CIS countries held in Moscow, the President of Armenia supported Georgia's point of view regarding the settlement of the Georgian-Abkhazian conflict. This was an additional boost to that relationship. On April 29, R. Kocharyan and E. Shevardnadze had the first meeting in Moscow, during which the presidents confirmed their willingness to continue cooperation, develop and deepen bilateral relations, both in the fields of political and economic, as well as regional cooperation (Caucasus Report 1998). In November 1998, within the framework of the official visit of the RA President Robert Kocharyan, various meetings were held with the official representatives of the neighboring country and an agreement was reached to activate the bilateral economic relations using the existing legal framework between the two countries, and they also agreed to sign new agreements for closer cooperation in the future. The Georgian side expressed interest and willingness to develop cooperation with Armenia in a number of regional projects. About a month later, on December 21-23, the Ministers of Transport of Armenia, Georgia and Bulgaria met in Yerevan and agreed on the creation of a railway corridor between the three states through the Poti-Varna ferry connection (Karapetyan 2012). In the concept of national security of Georgia, Armenia is mentioned as its close partner, a good neighbor, with whom there are areas of overlap of interests and great prospects for the development of cooperation, and these factors can contribute to the stabilization of bilateral political ties (National Security Concept of Georgia 2005). In the concept of national security of RA (The decree of the President of RA 2007), the relations

with Georgia are mentioned as friendly and it is also mentioned that Georgia is important as a state with high-level relations with Armenia in the region, and the development of mutually beneficial cooperation in various fields and their deepening derives from the long-term strategic interests of Armenia and Georgia. Georgia is also important for Armenia due to the presence of a large Armenian community living in that country. The Republic of Armenia cooperates with the Government of Georgia in the direction of solving the socio-economic problems of Georgian-Armenians, including the Armenian community of Samtskhe Javakheti region.

The external factor was an obstacle in the development of bilateral relations, in the hands of a number of states and large international structures, which tried to quickly establish themselves in the South Caucasus region and fill the gap created here after the collapse of the Soviet Union. In RA-Georgia relations, there is a number of uneven or unsolved problems, around which both sides are trying to reach mutually beneficial solutions through negotiations. The relations between the two countries have a rather large influence on the differences between the parties regarding the settlement of regional conflicts. On November 5 (1999), Shevardnadze, speaking at the session of the Government of Georgia, stated that one of the main priorities of the country's foreign policy is relations with its closest neighbors, Azerbaijan and Armenia, and also stated that Georgia can assume a unique role in the regulation of Armenian-Azerbaijani relations, emphasizing that everything should be done to fully involve Armenia in regional programs, because Armenia's isolation is not in Georgia's interests (Minasyan 2012). The President of Georgia E. Shevardnadze's official visit to Yerevan in 2001 (RA, MFA, RA-Georgia bilateral relations 2024). (October 23-24). Within the framework of the latter, the parties signed the Treaty on Friendship, Cooperation and Mutual Security between the Republic of Armenia and Georgia (according to Article 1 of that "Great" Treaty, the two countries sought to deepen partnership relations) (RA, MFA, RA-Georgia bilateral relations 2024). With the new agreement, the parties also undertake to hold consultations in the event of a situation creating a threat to the security of their countries and the region, in order to determine measures and actions for the maintenance of peace and mutual security. In addition, the parties undertake not to undertake any action directed against the other party, as well as not to allow the formation of such groups and organizations in their territory that may create danger or cause economic damage to the other party. It should be noted that the above-mentioned "Great" contract shows that Yerevan was able to use the recently created geopolitical situation in the region, simultaneously, for the protection of Armenia's national interests and for ensuring stable and long-lasting peace. Agreeing with the point of view of the Armenian side that RA-Georgia relations are one of the most important guarantees of maintaining stability in the region.

However, sometimes many promises made by Georgia had a more declarative character and Georgia continued its traditional policy in the European structures, that is, to silently defend the anti-Armenian resolutions presented by Azerbaijan. On May 4, 2001, on the eve of the meeting of the Committee of Ministers of the Council of Europe, the Committee of Delegates of Ministers of the Council of Ministers discussed the draft resolution of the Committee of Ministers, where the Council of Ministers included the Caucasus, in particular, the Nagorno-Karabakh issue. Here, Azerbaijan proposed an amendment to the principles of the settlement of the Nagorno-Karabakh conflict, giving the priority to the peaceful settlement of the conflict to the territorial integrity of Azerbaijan (Tbilisi recognizes the territorial integrity of Azerbaijan 2011), and the delegate of Georgia, Lana Gogoberidze, supported the Azerbaijani amendment (Sportel and Tchikoidze 2011). Unfortunately this is not the only case when Georgia openly supports Azerbaijan and its anti-Armenian propaganda, thus violating the agreements with the RA

official circles and provisions of a number of bilateral agreements. 2003 was quite an important period in Armenian-Georgian interstate relations. As a result of the presidential elections held in February, Robert Kocharyan was re-elected to the position of president (The second (President of the Republic of Armenia 2008). On June 27 of the same year, at the invitation of the President of Georgia, Shevardnadze, he went on a two-day official visit to Tbilisi. The main topic of discussion was that Robert Kocharyan emphasized that Armenia is faithful to the principles it adopted within the framework of friendly relations with Georgia. A number of agreements was also reached regarding future activities, covering fields like free trade, indirect taxes, goods and services etc. At the end of the meeting, the parties ratified protocols. (Agreement "Between the Government of RA and The Government of the Republic of Georgia on Free Trade"; Agreement "Between the Government of RA and The Executive Authority of Georgia on the Principles of Collection of Indirect Taxes During the Export and Import of Goods (Works, Services)").

Developments in Georgia during the First Period of Saakashvili's Presidency

In the extraordinary presidential elections of January 4, 2004 in Georgia, Mikheil Saakashvili was elected president with an absolute majority of votes (Kandelaki 2006). It is worth noting that the newly elected young president introduced quite serious and radical changes in the internal and external political life of the country. Saakashvili, who had an extreme pro-Western orientation, announced the importance of relations with Armenia. It was no coincidence that he arrived in Yerevan on a two-day official visit on March 12, 1.5 months after assuming the post of president. During the press conference, he announced that Armenia is an excellent partner for Georgia and he is in Armenia primarily on a visit to the heart (Saakashvili wants to "learn" from Kocharyan 2004). Then there were statements regarding the discussion of issues and problems on the agenda of bilateral relations and their solution in the near future. It is also noteworthy that during the meeting, Georgian President Saakashvili emphasized that Armenia plays an important role in Georgian-Russian relations, and Georgia plays an important role in Armenian-Turkish relations. RA President Robert Kocharyan paid a return visit on November 21, where he met with high-ranking officials of Georgia. The strained Russian-Georgian relations could not leave their mark on the Armenian-Russian relations, as Armenia is Russia's strategic ally. The next event of 2005, which had an impact on Armenian-Georgian relations, was the agreement signed on May 25 between Georgia, Azerbaijan and Turkey, by which the parties planned the construction of the Kars-Akhalkalak-Tbilisi-Baku railway (Lussac 2008), which was rather negatively received by Armenia, because it contributed to the isolation of Armenia in the region. Despite the fact that Georgia made a formal proposal to involve Armenia in regional programs, which was initially rejected by the parties, in particular, Turkish Foreign Minister Abdullah Gul and Azerbaijani President Ilham Aliyev announced that Armenia would be able to participate if it resolves the Karabakh conflict. Another important event in 2005 the opening of the Baku-Tbilisi-Ceyhan oil pipeline (Starr and Cornell 2005) was the act of isolating Armenia once again. As a result of these programs, Georgia would have serious financial gains, which would later be effectively used in the way of solving its foreign political relations. Georgia's position regarding the Armenian Genocide is noteworthy, where Georgia states that in 1915, Armenians were forcibly deported, avoiding the terms **genocide**, **extermination** or other similar terms. Russian-Georgian relations sharply worsened due to Georgia's decision to withdraw Russian peacekeeping troops from Tskhinvali, the capital of South Ossetia. These troops were there to maintain peace within the framework of the CIS (Commonwealth of Independent States), actually covering up Russian influence in Tskhinvali region. Russia had quite moved away from the South Caucasus, losing its

influence on Georgia, and was trying to provoke separatist aspirations in the territory of the latter. Georgia, which had clearly chosen the path of European integration, orienting its foreign policy to the west, having the support of the USA there, wanted to keep South Ossetia so that it would not inherit the fate of Abkhazia. The situation escalated sharply after July 8, when Georgia unilaterally closed the only legal Georgian-Russian crossing, Upper Lars (Silaev and Sushentsov 2012).

Հարկ է նշել, որ տեղեկատվական օպերացիաները ինչպես կարող են լինել տեղեկատվական պատերազմների բաղկացուցիչ մաս, այնպես էլ կարող են հանդես գալ որպես առանձին գործողություն: Վերջին դեպքում դրանք կարող են լինել կարճաժամկետ և նպատակին հասնելուց հետո չստանալ շարունակություն կամ կապակցված չլինել մեկ այլ տեղեկատվական գործողության հետ: Այս առումով տեղեկատվական օպերացիան լայն հասկացություն է և կարող է կիրառվել տարբեր համատեքստերում:

Տեղեկատվական օպերացիաները այնպիսի գործողություններ են, որոնք պետք է ունենան սահմանված ժամանակային սահմաններ և որոնց վերջնարդյունքը պետք է լինի հստակ չափելի: Այս հատկանիշները բնորոշ են նաև տեղեկատվական գրոհներին, սակայն եթե գրոհները հստակ հարձակողական գործողություններ են ենթադրում, տեղեկատվական գործողությունների դեպքում նման սահմանափակում չկա: Օրինակ՝ տեղեկատվական գործողության նպատակը կարող է լինել հակառակորդ կողմից որևէ ինֆորմացիայի ստացումը կամ սեփական երկրում սպասվող որևէ իրադարձության առիթով տրամադրությունների շոշափումը, որևէ գործողության համար հող նախապատրաստելը և այլն:

Տեղեկատվական դիմակայություն

Տեղեկատվական պատերազմների հաջորդ բաղադրիչը *տեղեկատվական դիմակայությունն* է: Մասնագիտական գրականությունում հաճախ «տեղեկատվական պատերազմ» և «տեղեկատվական դիմակայություն» եզրերը օգտագործվում են զուգահեռ՝ փոխարինելով մեկը մյուսին: Անգլիայեզու աղբյուրներում երկու տերմինների համար էլ կիրառվում է “Information Warfare” արտահայտությունը: Ռուսական աղբյուրներում տարանջատվում են “Информационная война” և “Информационное противоборство” տերմինները:

Լայն առումով այս երկու հասկացությունների՝ մեկը մյուսին փոխարինելը հասկանալի և ընդունելի է, քանի որ տեղեկատվական դիմակայությունը ևս սահմանվում է որպես «պետությունների կողմից տարվող պայքարի ձև և բաղկացուցիչ մաս, որում կողմերից յուրաքանչյուրը ձգտում է հակառակորդին վնասել տեղեկատվական միջոցներով» (Информационное Противоборство, www.encyclopedia.mil.ru, 31.10.2023):

Մեկ այլ սահմանման համաձայն այն «միջպետական հակամարտության ձև է, որը ենթադրում է հատուկ մշակված միջոցների օգտագործում՝ հակառակորդ կողմի տեղեկատվական ռեսուրսի վրա ազդելու և սեփական ռեսուրսները պաշտպանելու համար՝ ի շահ սեփական քաղաքական և ռազմական նպատակների» (Информационное противоборство на современном этапе: анализ и тенденции, “Молодой учёный”, N2):

Ինչպես տեսնում ենք, տեղեկատվական դիմակայության վերընշված բնութագրիչները գրեթե նույնական են տեղեկատվական պատերազմի բնութագրիչների հետ: Այնուամենայնիվ, այս երկու տերմինների միջև կա տարբերություն՝ կապված այն բանի հետ, թե տեղեկատվական պայքարում որ կողմն է պրոակտիվ: Տեղեկատվական դիմակայությունը ենթադրում է հակառակորդի կողմից արդեն իսկ ձեռնարկված տեղեկատվական գործողությունների, ընդհուպ տեղեկատվական պատերազմի հակադարձում: Այս առումով տեղեկատվական դիմակայությունը առավելապես ռեակտիվ գործողությունների շարք է, արդեն իսկ ձեռնարկված գործողություններին պատասխան արձագանքն է:

Այն դեպքում, երբ հակամարտող կողմերից որևէ մեկը աչքի չի ընկնում պրոակտիվ գործողություններով կամ մյուս կողմը առավելապես պաշտպանվողի

դիրքերում չէ, ևս ընդունելի է տեղեկատվական պատերազմին տալ «տեղեկատվական դիմակայություն» անվանումը:

Այս համատեքստում, տարընթերցումներից խուսափելու համար, տեղեկատվական գործողության ռեակտիվ տեսակը բնութագրելիս ավելի նախընտրելի է «տեղեկատվական դիմադրություն» եզրույթի կիրառումը, որն առավել հստակ է արտահայտում հասկացության իմաստային ծավալը: «Տեղեկատվական դիմադրության» դեպքում թե՛ անգլիալեզու, թե՛ ռուսալեզու աղբյուրներում հստակ սահմանվում է տեղեկատվական գործողության ռեակտիվ լինելը: Անգլիալեզու գրականության մեջ կիրառվում է «Information Resistance» կամ «Information Resilience» տերմինը, դե իսկ ռուսական աղբյուրներում այն հիշատակվում է որպես «информационное сопротивление»:

Հատկանշական է, որ ռուս-ուկրաինական պատերազմի ընթացքում ձևավորված համացանցային քարոզչական խմբերից մեկը ստացել է «Տեղեկատվական դիմադրություն» անվանումը: Այն ոչ կառավարական նախագիծ է, որի նպատակն է հակազդել Ուկրաինայի տեղեկատվական տարածքի նկատմամբ իրականացվող սպառնալիքներին, որոնք ուղղված են ռազմական, տնտեսական, էներգետիկ ոլորտներին, ինչպես նաև հենց բուն տեղեկատվական ոլորտին (Information Resistance, Euromaidan Press լրատվական ընկերության վեբ կայքը):

Ընդհանուր առմամբ, տեղեկատվական դիմադրությունը գործողությունների համալիր է, որն ուղղված է չեզոքացնելու հակառակորդ կողմից եկող տեղեկատվական գրոհները:

Այս գործում շատ կարևոր է ճիշտ գործիքակազմի ընտրությունը և ընտրված գործիքների ճիշտ կիրառումը: Տեղեկատվական դիմադրության բաղկացուցիչ մասն են՝

1. հակառակորդի կողմից առաջ քաշած թեզերին հակադարձումը՝ սեփական հակաթեզերի առաջ քաշմամբ և հիմնավորմամբ,
2. հակառակորդի կիրառած էլեկտրոնային պայքարի միջոցների չեզոքացումը,
3. սեփական կիբերտարածքի՝ հակառակորդի հնարավոր հարձակումներից պաշտպանումը,
4. միջազգային, ինչպես նաև տեղական մամուլում բարենպաստ տեղեկատվության տարածումը:

Այս ցանկը, իհարկե, շարունակելի է: Հարկ է ընդգծել տեղեկատվական դիմադրության միջոցների կիրառումից հետո սեփական գրոհների ձեռնարկումը: Վերջինս տեղեկատվական դիմադրության կարևորագույն և ամենից արդյունավետ բաղադրիչն է:

Իսկ տեղեկատվական դիմակայության, և առհասարակ տեղեկատվական պատերազմների ընթացքում ոչ խոցելի հասարակությունն ունենալու համար կարևորվում են հետևյալ բաղադրիչները՝

- մեդիագրագիտություն (մեդիային, ստացվող տեղեկատվությանը քննադատաբար և գրագետ մոտեցում),
- տեղեկատվական հիգիենա (ստացվող տեղեկատվության մանրակրկիտ գնահատում՝ մինչև հավատալը կամ տարածելը),
- հանրային իրազեկում (սպասվող գործողությունների մասին հանրությանը իրազեկելը և դրանց ճիշտ արձագանքելուն պատրաստելը):

Այս ամենը հաճախ ենթադրում է երկարատև նախապատրաստություն և մեծ ջանքեր: Յուրաքանչյուր պետություն, որը գտնվում է տևական հակամարտության մեջ կամ նշմարում է հնարավոր սպառնալիքներ, պետք է համակարգված ջանքեր իրականացնի սեփական երկրում վերոնշյալ բաղադրիչների ուժեղացման ուղղությամբ:

Տեղեկատվական գրոհներ

Հաճախ տեղեկատվական գործողությունները սպասվող գործողությունների (ռազմական, դիվանագիտական) նախապատրաստական աշխատանքների հիմնական մասն են: Նման դեպքերում պետությունները հաճախ են իրականացնում այսպես կոչված *տեղեկատվական գրոհներ*: Տեղեկատվական գրոհները հաճախ էլ կարող են լինել իրականացվող պայքարի հիմնական գործիքը: Հատկապես ռազմական գործողությունները մշտապես ուղեկցվում են համապատասխան տեղեկատվական գրոհներով:

Տեղեկատվական գրոհները հետապնդում են մի քանի նպատակներ՝

1. սպասվող գործողությունների համար հող նախապատրաստելը (այս կամ այն ձևով արդարացնելը սպասվող արարքները),
2. ստանալ հետադարձ (feedback) կապ սպասվելիք կամ մտածված գործողության վերաբերյալ,
3. ձեռնարկված գործողություններին տալ ցանկալի ընթացք,
4. մեղմել կատարված գործողության հետևանքների վերաբերյալ բացասական արձագանքը կամ վերացնել այն,
5. միջազգային հարաբերությունների այլ ակտորների առջև դրական կերպար ստեղծել,
6. հակառակորդի վրա ճնշում կիրառել,
7. հակառակորդի կողմից ձեռնարկվելիք գործողությունները բացասական լույսի տակ ներկայացնել,
8. ինֆորմացիոն դաշտում հակառակորդի նկատմամբ առավելություն ունենալ:

Տեղեկատվական գրոհը սահմանվում է որպես պլանավորված, կազմակերպված և նպատակաուղղված զանգվածային գործողություն, որն ուղղված է հասցեատիրոջ վրա ազդելու միջոցով գրոհի կազմակերպիչների շահերին համապատասխան հասարակական կարծիքի ու վարքագծի ձևավորմանը:

Տեղեկատվական գրոհի իրականացման հիմնական գործիքները լրատվամիջոցներն ու համացանցն են (Дипломатический словарь առցանց բառարան):

Տեղեկատվական գրոհները, ի տարբերություն մշտական տեղեկատվական պատերազմի, ունենում են հստակ սահմանված ժամանակային սահմաններ (“Информационная атака: понятие и онтологические свойства”, Политическая лингвистика ամսագիր,

Раздел 2): Այս պնդումը տեղեկատվական օպերացիաների դեպքում ևս լիովին կիրառելի է:

Տեղեկատվական գրոհները ունենում են թիրախավորված լսարան կամ մարդկանց խումբ: Դրանց նպատակն է խաթարել հակառակորդի հեղինակությունը կամ ստանալ ցանկալի տեղեկատվության ավելի շատ լուսաբանում առավել ցանկալի ձևով: Հաճախ տեղեկատվական գրոհների ժամանակ թիրախային խմբին են ներկայացվում այնպիսի փաստեր կամ տեղեկատվություն, որը ստուգելը դժվար է կամ անհնար: Երբեմն տեղեկատվության նման հոսքը մատուցվում է բացառիկ լուրի տեսքով, ներկայացվում է որպես «բացահայտում», «գաղտնագերծում»: Ամեն ինչ արվում է գրգռելու համար թիրախային լսարանի հետաքրքրասիրությունը: Նմանատիպ դեպքերում, որպես կանոն, գտնվում է թիրախային լսարանին հետաքրքիր որևէ լրահոս, այնուհետև որոշվում է տարածման աղբյուրը: Տեղեկատվական գրոհների հաջողությունը մեծապես պայմանավորված է դրանց կիրառման հետևողականությամբ, թիրախային լսարանի մշտադիտարկմամբ, թեման ըստ անհրաժեշտության «թեժ» պահելու մարտավարությամբ, ինչպես նաև հակառակորդի հնարավոր պատասխան գործողությունների կանխատեսմամբ:

Տեղեկատվական գրոհի արդյունավետությունը նկատելի է դառնում նրա ավարտից հետո և գնահատվում է *որակական* ու *քանակական* չափանիշներով:

Որպես քանակական չափանիշ կարելի է դիտարկել այն լսարանի կամ թիրախային խմբի մեծությունը, որի վրա տվյալ տեղեկատվական գրոհը այս կամ այն չափով ունեցել է ազդեցություն: Իսկ որպես որակական ցուցիչ դիտարկվում է հենց վերջնարդյունքը. արդյոք ձեռնարկված տեղեկատվական գրոհը տվել է ցանկալի արդյունքը թե ոչ: Օրինակ՝ եթե տեղեկատվական գրոհի նպատակը որևէ զանգվածի ուղղորդելն է քվեարկել այս կամ այն անձի կամ որոշման օգտին, և արդյունքում հաջողվում է ստանալ մեծամասնության քվեն կամ համակրանքը, ապա տեղեկատվական գրոհը կարելի է համարել հաջողված:

Տեղեկատվական գրոհները կարող են լինել ուղղակի և անուղղակի:

Ուղղակի տեղեկատվական գրոհը բաղկացած է հակառակորդի տեղեկատվական տարածք անմիջական ներխուժումից և նրա միջավայրում կեղծ տեղեկատվության ներմուծումից: *Անուղղակի* տեղեկատվական գրոհը կարող է դրսևորվել ոչ հավաստի կամ ոչ ճիշտ տեղեկատվության ստեղծմամբ, որը հակառակորդին հրամցվում է որպես ճշմարտություն: Երկրորդ դեպքում հակառակորդի տեղեկատվական դաշտում ներքին միջամտություն տեղի չի ունենում (Дипломатический словарь առցանց բառարան):

Ինչպես վերընշվածից երևում է, տեղեկատվական գրոհը ինֆորմացիոն հոսքերի միջոցով իրականացվող գործողություն է: Այն դասվում է տեղեկատվական-հոգեբանական պատերազմի մեթոդների թվին: Սակայն արևմտյան աղբյուրներում «տեղեկատվական գրոհ» հասկացությունը առավելապես ասոցացվում է կիբեռ գրոհների հետ և ֆիզիկական ներխուժում է՝ գրոհ հակառակորդի համակարգիչների, հաշվողական համակարգերի, համակարգչային ցանցի վրա՝ չարտոնված մուտք ստանալու նպատակով և վնաս պատճառելու մտադրությամբ: Կիբեռհարձակումները նպատակ ունեն անջատելու, խափանելու, ոչնչացնելու կամ վերահսկելու համակարգչային ցանցերը կամ փոխելու, արգելափակելու, ջնջելու, շահարկելու կամ գողանալու այդ համակարգերում պահվող տվյալները (Pratt, TeckTarget տեխնոլոգիական կայք):

ԱՄՆ Ստանդարտների և տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի սահմանման համաձայն՝ տեղեկատվական օպերացիաները (հարձակվողական) այնպիսի գործողություններն են, որոնք փորձում են հավաքել, խաթարել, հերքել, նսեմացնել կամ ոչնչացնել տեղեկատվական համակարգի ռեսուրսները կամ բուն տեղեկատվական համակարգը: Մեկ այլ ձևակերպմամբ՝ դրանք հարձակումներ են կիբեռտարածության միջոցով, որոնք թիրախավորում են ձեռնարկության կողմից կիբեռտարածության օգտագործումը՝ նպատակ ունենալով խափանել, անջատել, ոչնչացնել կամ վերահսկել համակարգչային տիրույթը, կամ էլ ոչնչացնել տվյալների ամբողջականությունը կամ գողանալ վերահսկվող տեղեկատվությունը (Website of National Institute of Standards and Technologies):

Վերջին ձևակերպումը կրկնում է Զ. Պրատի տված կիբեռհարձակման սահմանումը:

Կիբեռհարձակումները տարբերվում են տեղեկատվական գրոհներից, տեղեկատվական պատերազմների առանձին բաղադրիչ են և առանձին ուսումնասիրության կյուր:

Այն հիմնական հատկանիշներ, որոնցով տեղեկատվական գրոհները ձեռք են բերում առանձնահատուկ բնույթ և առանձնանում են տեղեկատվական պատերազմների մյուս բաղադրիչներից, հետևյալներն են՝ անկանխատեսելիություն, պրոակտիվություն, արագություն, թիրախայնություն և արդյունքների հստակ չափելիություն:

Եզրահանգումներ

Ամփոփելով հոդվածը՝ կարելի է արձանագրել, որ աշխարհի տարբեր մասերում տեղի ունեցող տարաբնույթ հակամարտությունները ուղեկցվում են տեղեկատվական պատերազմների տարբեր բաղադրիչներով: Ի հավելումս սրա՝ կարող ենք անել հետևյալ եզրահանգումները.

- Միջազգային խոշոր շատ դերակատարներ մինչ տնտեսական, ռազմական կամ քաղաքական ոլորտում որևէ խոշոր նախաձեռնություն իրականացնելը դիմում են լավ մշակված տեղեկատվական գործողությունների: Հաճախ տեղեկատվական պատերազմը «տաք» պատերազմի նախերգանքն է, երբեմն էլ «տաք» պատերազմին փոխարինելու է գալիս տեղեկատվական պատերազմը: Տեղեկատվական պատերազմի նախապատրաստումը կամ դրա անմիջական վարումը կարող է տևել տարիներ, անգամ տասնամյակներ:
- Այս ոլորտի առաջատար շատ պետություններ, օգտագործելով տեղեկատվական պատերազմի տարբեր բաղադրիչներն ու գործիքակազմերը, կարողանում են տեղեկատվական գերակայության հասնել իրենց հիմնական հակառակորդների նկատմամբ՝ միաժամանակ բարենպաստ հանրային կարծիք ստեղծելով իրենց արտաքին քաղաքական շահերն առաջ տանելու համար: Այս ոլորտում կարելի է առանձնացնել ԱՄՆ-ի վարած «փափուկ ուժի» քաղաքականությունը:

Քննարկման տեղիք չի տալիս այն փաստը, որ ցանկացած պետություն իր քաղաքականությունը իրականացնում է սեփական շահերից դրդված: Եթե գիտության տեսանկյունից լավ կամ վատ, դրական կամ բացասական պետությունների տարանջատումը հակագիտական կարող է հնչել, ապա մարդկանց ընկալումներում այն այլ է, և այդ ընկալումների վրա մեծապես ազդում է պետությունների իրականացրած տեղեկատվական քաղաքականությունը:

Յուրաքանչյուր պետության առջև դրված խնդիրներից է օգտագործել տեղեկատվական պայքարի ընձեռած գործիքակազմերը՝ նպաստավոր դիրք, համբավ ձեռք բերելու, հակառակորդի նկատմամբ առավելություն ունենալու և լայն շրջանակների համակրանքը շահելու համար:

Գտնվելով հակամարտությունների գոտում և ունենալով սահմանափակ նյութական ռեսուրսներ, թե՛ իմիջի ձևավորման, թե՛ սեփական թեզերը առաջ տանելու և լսելի դառնալու, թե՛ հակառակորդի կեղծ թեզերին ու տեղեկատվական գրոհներին դիմակայելու համար՝ մեր երկրին անհրաժեշտ է ճիշտ տեղեկատվական քաղաքականության մշակում և իրականացում: Հոդվածում դիտարկվող տեղեկատվական գործողությունների կազմակերպումը և պետական մակարդակով իրականացումը պահանջում են լուրջ և համակարգված ջանքեր և որ ամենակարևորն է՝ հետևողականություն:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն, Բաց և անվտանգ տեղեկատվական և կիբեռտիրույթների ապահովում, Երևան, 2020, https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf: Վերջին մուտք՝ 18.11.2023թ.:

2. Armistead, Leigh. *Information Operations. Warfare and the Hard Reality of Soft Power*. Joint Forces Staff College and the National Security Agency, 2004.

3. Chapple, Mike; Seidl, David. *Cyberwarfare: Information Operations in a Connected World*. Burlington, 2015.

4. Hutchinson, William; Warren Matthew. *Information Warfare: Corporate Attack and Defence in a Digital World*. London, 2001.

5. "Information Resistance", "Euromaidan Press" Information Company Website. <https://euromaidanpress.com/author/informationresistance/>. Accessed: 05.11.2023թ.:

6. Kuehl, Daniel. *Information Operations, Information Warfare, and Computer Network Attack. Their Relationship to National Security in the Information Age*. International Law Studies, Volume 76. <https://digital-commons.usnwc.edu/cgi/viewcontent.cgi?article=1400&context=ils>. Accessed: 29.10.2023.
7. "Cyber Attack". *National Institute of Standards and Technologies Website*, https://csrc.nist.gov/glossary/term/cyber_attack. Accessed: 22.11.2023.
8. "Media – (Dis)information – Security". *NATO website*, https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/2020/5/pdf/2005-deepportal4-information-warfare.pdf. Accessed: 19.11.2023.
9. Pratt, Mary K. Cyber Attack, "Cyber Attack", *TechTarget Technological Website*. <https://www.techtarget.com/searchsecurity/definition/cyber-attack>. Accessed: 19.11.2023.
10. US Department of Air Force. *Information Warfare*. 1996, https://www.google.am/books/edition/Information_Warfare/kK0ChVZRL5QC?hl=en&gbpv=1&dq=information+warfare&printsec=frontcover. Accessed: 17.11.2023.
11. Ventre, Daniel. *Information Warfare*. London, 2016, 2nd edition.
12. «Информационная атака», *Дипломатический словарь*, <http://diplomaticdictionary.com/dictionary/информационная-атака/>. Доступно: 05.11.2023.
13. Коцюбинская, Любовь Вячеславовна, «Информационная атака: понятие и онтологические свойства», *Политическая лингвистика журнал*. Раздел 2, Москва, <https://cyberleninka.ru/article/n/informatsionnaya-ataka-ponyatie-i-ontologicheskie-svoystva/viewer>. Доступно: 05.11.2023.
14. Иванцов, Алексей Васильевич, «Информационные войны в современном мире: понятие, сущность и содержание», <https://elib.bsu.by/bitstream/123456789/286723/1/24-35.pdf>. Доступно 30.08.2024.
15. «Информационные операции - что это такое?», *R-techno website*, <https://r-techno.com/ru/Information-operations/>. Доступно: 31.10.2023.
16. «Информационное противоборство». www.encyclopedia.mil.ru/encyclopedia/dictionary/details.htm?id=5221. Доступно: 31.10.2023.
17. «Информационное противоборство на современном этапе: анализ и тенденции». *Молодой учёный*, N2, Москва, 2009, <https://moluch.ru/archive/2/153/>. Доступно: 31.10.2023.
18. Макаров, Василий Емельянович. *Политические и социальные аспекты информационной безопасности*. Москва, 2015.
19. Панарин, Игорь. *Первая мировая информационная война: развал СССР*. Москва, 2010.

WORKS CITED

1. HH Azgayin anvtangut'yan r'azmavarut'yun, Bac ev anvtang teghekatvakan ev kibirtiruyt'neri apahovum [RA National Security Strategy, Ensuring Open and Secure Information and Cyberspace], Erevan, 2020, https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf. verjin mutqy" 18.11.2023t'. (in Armenian)
2. Informacionnaja ataka, Diplomateskij slovar'. [Information Attack]. <http://diplomaticdictionary.com/dictionary/informacionnaja-ataka/>. Poslednij vhod: 05.11.2023. (in Russian)

3. "Informacionnaja ataka: ponjatie i ontologicheskije svojstva", Politicheskaja lingvistika zhurnal. Razdel' 2, Moskva, Kocjubinskaja, Ljubov Vjacheslavovna, [Information Attack: Concept and Ontological Properties]. <https://cyberleninka.ru/article/n/informatsionnaya-ataka-ponyatje-i-ontologicheskije-svojstva/viewer> Poslednij vhod: 05.11.2023. (in Russian)
4. Informacionnye voyni v sovremennom mire: pojatiye, sushnost i sodержanie, Ivantsov, Aleksei Vaslievich, [Information Warfare: Concept, Essence and Content], <https://elib.bsu.by/bitstream/123456789/286723/1/24-35.pdf>. Poslednij vhod: 30.08.2024. (in Russian)
5. Informacionnye operacii - chto jeto takoe?, R-techno web site. [What is information operation?]. <https://r-techno.com/ru/Information-operations/>. Poslednij vhod: 31.10.2023.
6. Informacionnoe Protivoborstvo. [Information Resistance]. www.encyclopedia.mil.ru/encyclopedia/dictionary/details.htm?id=5221. Poslednij vhod: 31.10.2023. (in Russian)
7. Informacionnoe protivoborstvo na sovremennom jetape: analiz i tendencii. "Molodoj uchjonyj", N2, Moskva, 2009, [Information Resistance in Modern Stage: Analysis and Trends]. <https://moluch.ru/archive/2/153/>. Poslednij vhod: 31.10.2023. (in Russian)
8. Makarov, Vasilij Emel'janovich. Politicheskije i social'nye aspekty informacionnoj bezopasnosti. Moskva 2015. (in Russian)
9. Panarin, Igor'. Pervaja mirovaja informacionnaja vojna: Razval SSSR. [First Information World War: Collapse of USSR]. Moskva, 2010. (in Russian)

ON THE CONCEPT OF INFORMATION WARFARE

ANNA SISOYAN

*Yerevan State University,
Department of International Relations,
Chair of Political Science, Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to study the concept of "Information Warfare" and its components. In particular, the concepts of information warfare, information operation, information confrontation and information attack are separately discussed, the substantive and semantic relations of above-mentioned components are revealed. In order to achieve the goal, we set ourselves the following tasks: to study the approaches and definitions of the concepts mentioned in Western and Russian sources, to make a comparison and to highlight the prerequisites for the effective use of the components of information warfare.

Descriptive, comparative and analysis methods were used during the research.

Formulations and approaches put forward by well-known theoreticians and specialists of the field were used as a source in the article.

Within the framework of the article, the modern tools for conducting competent information wars in the context of the implementation of the foreign policy of the states are also considered.

In the result of the research it was concluded that the competent use of various components and tools of information war gives an opportunity to achieve superiority over the enemy. In order to resist the enemy's fake theses and information attacks, our country needs the development and implementation of the correct information policy, which in turn requires serious and coordinated efforts and consistency at the state level.

Key words: *Information Warfare, Information Resistance, Information Operation, Cyberspace, Cyber Attacks.*

К ВОПРОСУ О ПОНЯТИИ ИНФОРМАЦИОННОЙ ВОЙНЫ

АННА СИСОЯН

*соискатель кафедры политологии
факультета международных отношений
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – исследование понятия «Информационная война» и ее компонентов. В частности, отдельно рассматриваются понятия информационной войны, информационной операции, информационного противоборства и информационной атаки, раскрываются содержательные и смысловые связи названных компонентов. Для достижения цели мы поставили перед собой следующие задачи: изучить подходы и определения понятий, упомянутых в западных и российских источниках, провести сравнение и выделить предпосылки эффективного использования компонентов информационной войны.

В ходе исследования использовались описательный, сравнительный и аналитический методы.

В качестве источников в статье использованы формулировки и подходы, выдвинутые известными теоретиками и специалистами данной области.

В рамках статьи также рассматриваются современные инструменты ведения грамотных информационных войн в контексте реализации внешней политики государств.

В работе мы пришли к выводу о том, что грамотное использование различных компонентов и инструментов информационной войны дает возможность добиться превосходства над противником. Чтобы противостоять фейковым тезисам и информационным атакам противника, нашему государству необходима разработка и реализация правильной информационной политики, что, в свою очередь, требует серьезных и скоординированных усилий и последовательности на государственном уровне.

Ключевые слова: *информационная война, информационное противостояние, информационная операция, киберпространство, кибератаки.*

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՍԼԱՄԻ» ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ԹՈՒՐԵԻԱՅՈՒՄ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.
ԲԱՐՕՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ «ՎԵՐԱԴԱՐՁԸ»*

ՀՏԴ 329

DOI: 10.52063/25792652-2024.3.22-116

ԳՈՒ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի
թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ և դասախոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

gor.hovhannisyan@ysu.am

ORCID: 0009-0005-6230-9446

Հոդվածի նպատակն է համապարփակ վերլուծության ենթարկել
Թուրքիայի նախկին վարչապետ Նեջմեթին Էրբաքանի հիմնադրած
«Ազգային տեսակետի» շարժման գաղափարները կրող, վերջինիս որդու՝
Ֆաթիհ Էրբաքանի կողմից հիմնադրված Կրկին բարօրություն (ԿԲԿ, Yeniden
Refah Partisi) կուսակցությունը:

ՉԼՄ-ների մշտադիտարկման, պատմահամեմատական մեթոդների
կիրառմամբ ուսումնասիրելով բուն շարժման պատմությունը, ԿԲԿ
հիմնադրումը, գաղափարախոսական սկզբունքները և կուսակցության անցած
ճանապարհը՝ նպատակ ունենք ուրվագծելու, թե ինչպես է ԿԲԿ-ն իրեն
դիրքավորում որպես Ն. Էրբաքանի քաղաքական և գաղափարական
ժառանգության իրավահաջորդ:

Հոդվածում ուսումնասիրվում են կուսակցության ռազմավարու-
թյունները՝ այդ թվում ազգայնամոլական և իսլամական հռետորաբանության
կիրառումը, հակաարևմտյան, հակահրեական և հակահայկական
հռետորաբանությունը, ինչպես նաև ընտրական արդյունքները և
կուսակցության դերը ներկայիս Թուրքիայի քաղաքական դաշտում:

Բացի այդ, հոդվածը նպատակ ունի գնահատելու ԲԿԿ-ի և նրա
առաջնորդ Ֆաթիհ Էրբաքանի հեռանկարները քաղաքական ասպարեզում՝
հաշվի առնելով կուսակցության ներուժը, քաղաքական գործընթացների վրա
ազդեցություն ունենալու հնարավորությունը, ինչպես նաև արտաքին ու
ներքին գործոններով պայմանավորված մարտահրավերներին դիմակայելու
կարողությունը: Հատկանշական է, որ սույն հոդվածը 2024թ. ՏԻՄ
ընտրություններից հետո ԿԲԿ գործունեության մանրամասն վերլուծության
առաջին փորձն է ոչ միայն Հայաստանում, այլև ընդհանուր գիտական
միջավայրում:

* Հոդվածը ներկայացվել է 09.08.2024թ., գրախոսվել՝ 21.08.2024թ., տպագրության
ընդունվել՝ 31.10.2024թ.:

Հիմնաբառեր՝ ազգային տեսակետ, Նեջմեթին Էրբաքան, Կրկին բարօրություն կուսակցություն, քաղաքական իսլամ, իսլամ և ազգայնականություն, Ֆաթիհ Էրբաքան, Նեոսունիզմ:

Նախաբան

«Ազգային տեսակետ» (թրք.՝ Milli Görüş) անվանումը ստացած շարժումը 1960-ականներին իր հիմնադրումից ի վեր լրջագույն ազդեցություն է ունեցել Թուրքիայի ընդհանուր քաղաքական դաշտի և ներքաղաքական զարգացումների վրա: Թուրքիայի նախկին վարչապետ Նեջմեթին Էրբաքանի կողմից հիմնադրված և ղեկավարվող շարժումն իր բնույթով հակազդեցություն էր Թուրքիայի Հանրապետության ստեղծումից ի վեր քեմալական բարեփոխումների արդյունքում հաստատված աշխարհիկության (laicism) հայեցակարգի և դեպի արևմուտք ուղղված արտաքին քաղաքականության դրույթներին: «Ազգային տեսակետ»-ի շարժումը 1950 թ. իշխանության եկած և 1960 թ. ռազմական հեղաշրջման միջոցով իշխանությունից հեռացված ժողովրդավարական կուսակցության (ԺԿ) սկիզբ դրած քաղաքական իսլամի կամ իսլամի քաղաքականացման շարունակությունն էր՝ արդեն դոկտրինի տեսքով:

1960-ականների ընդհանուր ներքաղաքական իրավիճակը, իսլամի աճող դերն ու ամրապնդվող դիրքերը հանգեցրին քաղաքական իսլամի գաղափարախոսության դոկտրինացմանը, որի հիմնական առաջ մղող ուժը «Ազգային տեսակետն» էր և նրա հռչակած հավատարմությունը պահպանողական, իսլամական արժեքներին¹: Այստեղ Milli (ազգային) բառն ավելի շատ վերաբերում է ոչ թե բառարանային «ազգ» (nation) տերմինին, այլ կրոնին: Կոնտեքստի առավել ճշգրիտ բացատրության համար տեղին է մեջբերել թուրք պատմաբան Իլքեր Օրթայիի հետևյալ միտքը. «Ազգ (Millet) բառն արամեերեն և եբրայերեն է, ավելի ուշ անցել է արաբերենին: Նշանակում է «խոսք»: Իսկ խոսքը հենց ինքն Ալլահն է: Այստեղից ծագող ազգային (milli) բառը թուրքական քաղաքական պատմության մեջ ճիշտ են օգտագործել միայն Նեջմեթին Էրբաքանն ու իր կուսակցությունը: Բառը որևէ կապ չունի ազգ, nation եզրույթի հետ: Այն հենց ումման² է, բոլոր նրանք, ովքեր հավաքվում են խոսքի շուրջ» (Engin 31):

«Ազգային տեսակետը» ժամանակի ընթացքում դարձավ հավաքական անուն բոլոր այն շարժումների և կուսակցությունների համար, որոնք, ըստ թուրք քաղաքագետ Ահմեթ Յըլդըզի, «աջակցում են իսլամական ավանդույթներ արտահայտող քաղաքական կուսակցությունների կրոնական օրակարգին» (Yıldız 188): «Ազգային տեսակետի» հիմնական գաղափարը թուրք հասարակության մեջ իսլամի որոշիչ դերի վերածնունդն է՝ որպես թուրքական ազգային գաղափարի կամ ազգային ինքնության անբաժանելի մաս: Այն պարունակում է նաև տնտեսական, հասարակական, արտաքին քաղաքական հստակ տարրեր:

«Ազգային տեսակետը» տնտեսական անկախությանն ու տեխնոլոգիական առաջընթացի հետ մեկտեղ որպես հասարակության զարգացման բանալի նախանշում է հոգևոր և բարոյական աճը: Շարժումը որպես նպատակ է սահմանում «արդար տնտեսական» կարգը՝ ժխտելով տոկոսադրույքային բանկային համակարգը և առաջարկելով միջոցների արդար բաշխում: «Ազգային տեսակետը» դեմ է արևմտականության և աշխարհիկության գաղափարներին՝ դիտելով դրանք որպես սպառնալիքներ թուրքական ինքնությանը:

¹ Ազգային տեսակետի մասին ավելի մանրամասն տեղեկության համար տե՛ս, Erbakan N., Milli Görüş, Dergah Yayınları, İstanbul, 1975.

² Ումմա նշանակում է իսլամական համայնք:

Ճարժման կազմավորումն ու դրսևորումները

«Ազգային տեսակետի» շարժման ծավալման համատեքստում առաջին լուրջ քայլը Էրբաքանի կողմից 1970թ. Թուրքիայի առաջին իսլամամետ կուսակցության՝ Ազգային կարգի կուսակցության (ԱԿԿ, Milli Nizam Partisi) ստեղծումն էր: Կուսակցության գործունեությունը 1971 թ. արգելվեց. այն չհասցրեց մասնակցել որևէ քաղաքական գործընթացի, սակայն կարողացավ իր շուրջը համախմբել ընտրողների զանգված՝ ճանապարհ բացելով շարժման հետագա զարգացման համար: ԱԿԿ-ի փակվելուց հետո Էրբաքանն ու կողմակիցները 1972 թ. հիմնադրեցին «Ազգային փրկության» կուսակցությունը (ԱՓԿ, Milli Selamet Partisi), որն էլ դարձավ «Ազգային տեսակետի» շարժիչ ուժը 1970-ականների ընթացքում՝ ստանալով զգալի աջակցություն հատկապես գյուղաբնակ, պահպանողական շրջանակներից:

1973 թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում ԱՓԿ-ի հաջողությունը պատմական շրջափուլ բացեց «Ազգային տեսակետի» համար: Կուսակցությունը ստացավ քվեների 12%-ը և դարձավ կոալիցիոն կառավարության անդամ՝ ստանալով լայն հնարավորություններ իրենց գաղափարների տարածման համար: Կոալիցիոն կառավարության կազմում Էրբաքանը զբաղեցնում էր փոխվարչապետի պաշտոնը՝ ձեռնարկելով հասարակության մեջ իսլամական արժեքների տարածմանն ուղղված քայլեր: Կուսակցության ազդեցության աճը շարունակվեց մինչև 1980 թ. ռազմական հեղաշրջումը, որի արդյունքում ԱՓԿ գործունեությունն արգելվեց, իսկ Էրբաքանի հանդեպ կիրառվեց քաղաքականությամբ զբաղվելու արգելք:

1983 թ. հիմնադրվեց «Ազգային տեսակետի» թվով երրորդ՝ Բարօրություն կուսակցությունը (ԲԿ, Refah Partisi), որը շարունակեց իր երկու «նախորդների» սկսած գիծը: Կուսակցությունը դե ֆակտո ղեկավարը Նեջմեթդին Էրբաքանն էր՝ չնայած գործող իրավական արգելքին: 1987 թ. անցկացված հանրաքվեի արդյունքում Էրբաքանի հանդեպ կիրառված քաղաքականությամբ զբաղվելու արգելքը վերացվեց, ինչից հետո վերջինս ստանձնեց ԲԿ արդեն դե յուրե ղեկավարի պաշտոնը: 1995 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում ԲԿ-ն կարողացավ ստանալ ամենաշատ քվեները՝ 20%, և «Ճշմարիտ ուղի» կուսակցության հետ կազմել կոալիցիոն կառավարություն, որի վարչապետը դարձավ հենց Էրբաքանը: 1996 թ. Էրբաքանի վարչապետության շրջանը «Ազգային տեսակետի» շարժման քաղաքական ազդեցության բարձրակետն էր: «Ազգային տեսակետը» ոչ միայն մեծամասնություն էր օրենսդիր և գործադիր իշխանություններում, այլև իր ձեռքում էր կենտրոնացրել երկրի խոշորագույն քաղաքների՝ Ստամբուլի և Անկարայի կառավարումը: Օրենսդիր և գործադիր իշխանության ներկայացուցիչներն աչքի էին ընկնում հակաաշխարհիկ, իսլամական հռետորաբանությամբ և ծրագրերով: Վարչապետ Էրբաքանը խոսում էր «իսլամական ումմայի համախմբման» և արևմուտքի հետ հարաբերությունների վերանայման անհրաժեշտության մասին: Սակայն այս շրջանն ընդհատվեց 1997 թ. փետրվարի 28-ին տեղի ունեցած «պոստ-մոդեռնիստական» հեղաշրջումով, երբ զինվորականության կողմից ներկայացված վերջնագրի ու ճնշումների պայմաններում Էրբաքանը հրաժարական տվեց, ինչին էլ հետևեց 1998 թ. սահմանադրական դատարանի կողմից հակաաշխարհիկ գործունեության պատճառաբանությամբ ԲԿ-ի արգելումը: Դրանից հետո փակված կուսակցության Էրբաքանի գաղափարակիրները հիմնեցին «Առաքինություն» կուսակցությունը (ԱԿ, Fazilet Partisi), որը ևս կարճ կյանք ունեցավ և 2001 թ. արգելվեց:

Ի վերջո, չդադարող ճնշումների պայմաններում «Ազգային տեսակետի» շարժումը պառակտվեց երկու հատվածի՝ պահպանողականների և բարեփոխականների: Վերջիններս, ելնելով ԱԿԿ, ԱՓԿ և ԲԿ ճակատագրերից, պնդում

Էին, որ գաղափարախոսությունը պետք է ավելի ճկուն լինի և զերծ մնա ծայրահեղականությունից՝ ավելի ընդունելի դառնալով բանակի ու աշխարհիկ քեմալականների համար, իսկ պահպանողականների թւը որևէ փոփոխություն անհրաժեշտություն չէր տեսնում: Բարեփոխականների թւը՝ Աբդուլլահ Գյուլի և Ռեջեփ Թայյիփ Էրդողանի գլխավորությամբ, զոնե արտաքուստ, հրաժարվեց դասական «Ազգային տեսակետի» գաղափարախոսությունից և ընդունեց ավելի չափավոր դիրքորոշում՝ հիմնադրելով «Արդարություն և ցարգացում» կուսակցությունը (ԱԶԿ, Adalet ve Kalkınma Partisi), որն արդեն 22 տարի է Թուրքիայի իշխող ուժն է: Իսկ պահպանողականների թւը հիմնադրեց «Երջանկություն» կուսակցությունը (ԵԿ, Saadet Partisi), որը դարձավ «Ազգային տեսակետի» կուսակցություններից թվով հինգերորդը: ԵԿ-ն, ի տարբերություն իր «Նախորդ» կուսակցությունների, մինչ օրս չի կարողացել որևէ լուրջ հաջողությունների հասնել քաղաքական դաշտում՝ պարարտ դաշտ թողնելով «Ազգային տեսակետի» ծիրում գործող Նոր, ավելի հավակնոտ ուժի գործունեության համար:

«Ազգային տեսակետի» շարժումը 2002 թ. հետո

«Ազգային տեսակետի» շարժման պառակտումից հետո պահպանողական և իսլամամետ ընտրողների ճնշող մեծամասնությունը իրենց ձայնը տվեցին ԱԶԿ-ին: 2002 թ. ընտրությունների ժամանակ ԵԿ-ն ստացավ քվեների ընդամենը 2. 48%-ը (3 Kasım 2002 Milletvekili Genel Seçimi sonuçları)՝ չկարողանալով հաղթահարել խորհրդարան մտնելու համար անհրաժեշտ 10%-ի շեմը: «Ազգային տեսակետի» շարժումը այսպիսով իր տեղը զիջեց ԱԶԿ-ի հռչակած «պահպանողական ժողովրդավարության» (Cagaptay 83) գաղափարին: 2007 թ. ԵԿ-ն ստացավ ձայների 2%-ը (2007 Genel Seçim Sonuçları), 2011 թ.՝ 1.25% (2011 Genel Seçim Sonuçları), իսկ 2015 թ.՝ 2. 1% (1 Kasım 2015 Genel Seçim Sonuçları): 2018 թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ ԵԿ-ն անդամակցեց «Հանրապետական ժողովրդական» կուսակցության գլխավորած «Ազգ» դաշինքին: Ի վերջո, ԵԿ պատգամավորական երկու թեկնածու՝ Ջիհանգիր Իսլամ և Աբդուլբադիր Զարադուդանը կարողացան ձԺԿ ցուցակով խորհրդարան մտնել՝ դառնալով ԵԿ-ի պատմության առաջին պատգամավորները (Saadet Partisi milletvekilleri Cihangir İslam ve Abdulkadir Karaduman TBMM'de yemin etti): Իսլամամետ, հակաարևմտյան շարժման ներկայացուցիչ ԵԿ-ի և Թուրքիայի պատմության մեջ արևմտականության ու աշխարհիկության գաղափարախոսության հիմնադիր ու կրող ձԺԿ-ի միջև դաշինքը ուսումնասիրողների կողմից որակվում էր որպես «քաղաքականապես անհնար» (Akkir):

ԵԿ-ի քաղաքական պասիվությունը, ինչպես նաև շարունակական անհաջողությունները առաջացրին ներկուսակցական բևեռացում՝ Էլ ավելի պառակտելով «Ազգային տեսակետի» շարժումը: ԵԿ-ի հիմնադրումից հետո կուսակցության ղեկավարությունը ստանձնեց Ռեջայի Զուլթանը՝ հաշվի առնելով Էրբաքանի հանդեպ կիրառված արգելքը: 2008 թ. Զուլթանին հաջորդեց Նուման Զուլթուլմուշը, որը պաշտոնավարեց մինչև 2010 թ. հոկտեմբեր: 2010 թ. հոկտեմբերին ԵԿ նախագահ ընտրվեց Էրբաքանը: 2011 թ. փետրվարին Էրբաքանի մահից հետո կուսակցության ղեկավարությունն անցավ Մուստաֆա Զամալաբին: Նեջմեթթին Էրբաքանի որդին՝ Ֆաթիհ Էրբաքանը, լինելով «Նեջմեթթին Էրբաքան հիմնադրամի» նախագահն ու ԵԿ նախագահի խորհրդականը, Ել հիմնադրման առաջին տարիներից ի վեր ակտիվորեն ներգրավված էր երիտասարդական կառույցների աշխատանքում: 2014 թ. կուսակցության ղեկավարի ընտրություններից

առաջ վերջինս առաջադրեց սեփական թեկնածությունը: 2014 թ. մայիսին կայացած համագումարի ընթացքում ԵԿ ղեկավար վերընտրվեց կուսակցության գործող նախագահ Բամալաքը՝ 656 ձայնով: Երբաքան կրտսերը երկրորդն էր՝ 212 ձայնով (Fatih Erbakan'la yarışan Mustafa Kamalak yeniden Saadet Partisi lideri): Կուսակցության ներսում սկսված պայքարի արդյունքում Ֆաթիհ Երբաքանը լքեց ԵԿ-ն: 2019 թ. լրագրող Զեմալ Օզթյուրքին տված հարցազրույցի ընթացքում Երբաքանը որպես կուսակցությունից դուրս գալու պատճառներ՝ նշեց իր և իր աջակիցների հանդեպ ճնշումները, ինչպես նաև ԵԿ-ի՝ «Ազգային տեսակետի» ճանապարհից շեղվելու և դրան հակասող քայլեր կատարելու հանգամանքը (Saadet Partisi'nden neden ayrıldım?):

1979 թ. ծնված Երբաքանը, որն ավարտել է Բաշքենթի համալսարանի ճարտարագիտության ֆակուլտետը և ունի գիտությունների թեկնածուի կոչում, քաղաքական դաշտում հատկապես ակտիվացավ 2016 թ. հուլիսի 15-ին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման փորձից հետո՝ կատարվածի մեջ մեղադրելով ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությանը և «համաշխարհային սիոնիզմին» (Fatih Erbakan'dan FETÖ için çok çarpıcı tespitler): Արդեն 2017 թ. հունիսին Երբաքանը ակնարկեց նոր կուսակցության ստեղծման մասին՝ նշելով, որ «քանի որ ԵԿ-ն հեռացել է «Ազգային տեսակետի» շահերից, մենք մեր ձեռքը կոնենք քարի տակ՝ հանուն մեր դատի շարունակության» (Fatih Erbakan'dan yeni parti açıklaması): Հոկտեմբերին էլ վերջինս հայտարարեց. «Մենք ստացանք մեր արդեսը¹ և ճանապարհ ենք ընկնում» (Fatih Erbakan parti kuruyor):

2018 թ. նոյեմբերի 23-ին Անկարայի Յաշը Բայրամ մզկիթի դիմաց ուրբաթօրյա նամազից հետո հրավիրված հանդիպման ժամանակ Ֆաթիհ Երբաքանը հայտարարեց «Ազգային տեսակետի» «Կրկին բարօրություն» կուսակցություն անվանումով (ԿԲԿ, Yeniden Refah Partisi) նոր կուսակցություն հիմնելու մասին: Ելույթից առաջ մզկիթի իմամը աղոթք կարդաց, Երբաքանն իր ելույթը սկսեց արաբերեն ողջույնով (Yeniden Refah Partisi Kuruluşu - Hacı Bayram Veli Camii): Հատկանշական է, որ Երբաքանին ուղեկցում էր օսմանյան սուլթանական դինաստիայի ներկայացուցիչ Աբդուլհամիդ Զայրհան Օսմանօղլուն (Yeniden Refah Partisi Kuruluşu - Hacı Bayram Veli Camii):

Նեոօսմանականության և իսլամականության գաղափարախոսության կրող նորաստեղծ կուսակցությունը կարող էր այլընտրանք ներկայացնել ոչ միայն ԵԿ-ին, այլ նաև ԱԶԿ-ին՝ հաշվի առնելով կուսակցությունների միջև գաղափարական նմանությունները: Այս առումով հատկանշական է, որ կուսակցության ղեկավարի պաշտոնում իր առաջին հարցազրույցներից մեկում Երբաքանը իշխող ուժի վերաբերյալ մի շարք զգուշավոր հայտարարություններ արեց՝ նշելով, որ «իրենք դառնալու են կառուցողական ընդդիմություն» և իր գոհունակությունը հայտնելով որոշ համայնքների ԱԶԿ-ական ղեկավարների աշխատանքի կապակցությամբ (Fatih Erbakan "yapıcı" muhalefet yapacak: Faydalı işlere teşekkür etmek vazifemiz):

ԿԲԿ գործունեության առաջին տարիները

Չնայած այն հանգամանքին, որ կուսակցությունը հիմնադրվել էր հենց 2019 թ. մարտի 31-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախօրեին, ԿԲԿ-ն չմասնակցեց ընտրություններին՝ իր աջակցությունը հայտնելով ԱԶԿ գլխավորած «Հանրապետություն» դաշինքին (31 MART YEREL SEÇİMLERİ AÇIKLAMASI): ԿԲԿ-ն այս շրջանում կենտրոնացավ կուսակցությունը զարգացնելու, նոր անդամներ ներգրավելու և քաղաքական

¹ Ըստ իսլամական կարգի՝ աղոթքից առաջ պարտադիր արվող լվացման արարողություն, որի ժամանակ լվանում են երեսը, ոտքերն ու ձեռքերը:

դաշտում որպես «Ազգային տեսակետի» շարժման ներկայացուցիչ-ուժ ամրապնդվելու վրա:

2019 թ. ԿԲԿ-ն դատական գործընթաց սկսեց ԵԿ-ի դեմ՝ նպատակ ունենալով վերջինիս հանել Անկարայի Չանքայա թաղամասում գտնվող կենտրոնական գրասենյակից, որն ավանդաբար եղել է «Ազգային տեսակետի» բոլոր կուսակցությունների գրասենյակը: Ի վերջո, ապրիլին դատարանը «վարձակալության պայմանների խախտելու» պատճառաբանությամբ կարգադրեց ԵԿ-ին լքել շենքը, իսկ շենքի նոր վարձակալը դարձավ ԿԲԿ-ն (Şahin)՝ տոնելով առաջին խորհրդանշական հաղթանակը ԵԿ-ի հանդեպ:

2019 թ. նոյեմբերի 17-ին տեղի ունեցավ կուսակցության առաջին համագումարը, որն անցկացվում էր Անկարայի մարզադաշտում: Դահլիճում կողք կողքի կախված էին Աթաթյուրքի, Նեջմեթթին Էրբաքանի և Ֆաթիհ Էրբաքանի դիմանկարները: Էրբաքանը դահլիճ մտավ «մոջահեդ¹ Էրբաքան» վանկարկումների ներքո (Yeniden Refah Partisi 1. Olağan Büyük Kongresi 32:44), իսկ համագումարի վարողը Էրբաքանին բնորոշեց որպես «Ազգային տեսակետի առաջնորդ» (Yeniden Refah Partisi 1. Olağan Büyük Kongresi, 33:10), «ումմայի հույս» (Yeniden Refah Partisi 1. Olağan Büyük Kongresi, 26:25), «Այա Սոֆիայի շղթաները կտորող» (Yeniden Refah Partisi 1. Olağan Büyük Kongresi, 39:35) և «Ալ-Աքսայի մզկիթը սիոնիստական աղետից փրկող» (Yeniden Refah Partisi 1. Olağan Büyük Kongresi, 39:40):

Կուսակցության գործունեության առաջին տարիներին Ֆաթիհ Էրբաքանն իր ուշադրությունը կենտրոնացրեց կուսակցության գաղափարախոսական հղկման վրա՝ ժամանակի ընթացքում հարցազրույցների ու հայտարարությունների միջոցով ավելի շատ բացահայտելով տարատեսակ խնդիրների շուրջ իրենց տեսակետը:

Վերլուծելով Էրբաքանի հայտարարություններն ու քայլերը՝ կուսակցության գաղափարախոսական հիմքը կարող ենք բաժանել երեք պայմանական հատվածի.

1. **Խալամականություն-հակաաշխարհիկություն.** լինելով «Ազգային տեսակետի» շարժման կուսակցություն՝ ԿԲԿ գաղափարական կորիզը հենց խալամականությունն ու հակաաշխարհիկությունն է: Հակաաշխարհիկ հայտարարությունների համատեքստում Էրբաքանը, խոսելով Մուստաֆա Զեմալ Աթաթյուրքի մասին, ավելի զգուշավոր էր արտահայտվում՝ նշելով, որ Աթաթյուրքը դեռ 100 տարի առաջ գործում էր «Ազգային տեսակետի» շարժմանը համապատասխան (22/40 • Atatürk devrimlerine karşı mısınız?):

2. **Ազգայնականություն-նեոօսմանիզմ.** «Ազգային տեսակետի» գաղափարախոսության մեջ զգալի տեղ է զբաղեցնում ազգայնականությունը և հատկապես նեոօսմանականությունը: Ի սկզբանե օսմանյան անցյալի ոգեկոչումը հակազդեցություն էր քեմալական կարգերին և գաղափարներին: Այն նաև որոշակի նոստալգիկ զգացումներ է առաջացնում բնակչությանն պահպանողական զանգվածի մեջ, ինչը նպաստում է «Ազգային տեսակետի» կուսակցությունների ազդեցության աճին: Ինչպես նշեցինք վերևում, կուսակցության հիմնադիրների կազմում կային նաև սուլթանական Օսմանյան կայսրության դիմադիրների անդամներ: Էրբաքանը իր խոսքում մշտապես հղումներ է կատարում օսմանյան անցյալին՝ նշելով, որ «իրենց դատը սուլթան Ֆաթիհ Մեհմեդի դատն է» (DR. FATİH ERBAKAN: DAVAMIZ; SULTAN FATİH'İN DAVASIDIR ..): Մի ուրիշ առիթով էլ Էրբաքանը նշել էր, որ իշխանության գալու դեպքում օսմանյան վերջին սուլթան Մեհմեդ Վահիդեդդինի գերեզմանը տեղափոխելու են Թուրքիա (21/40 • Yeniden Refah Partisi son padişah Vahdettin'in mezarını Türkiye'ye getirmek istiyor?): ԿԲԿ որոշ անդամներ հայտարարություններ են անում խալիֆայության վերադարձի մասին (Fatih Erbakan'ın Partisi Hilafet Rüyasında),

¹ Խալամում սրբազան պատերազմի՝ ջիհադի մասնակից, արաբերեն բառացի՝ «ճիգեր կատարող մարտիկ»:

իսկ արդեն 2024 թ. ԿԲԿ հանրահավաքներից մեկի ժամանակ բեմի վրա կախված էր Աբդուլ Յամիլ II-ի դիմանկարը (Ey Siyonistler! Yeniden Büyük Türkiye'yi ve İslam Birliğini mutlaka kuracağız! 00:03):

3. Հակաարևմտականություն. ԿԲԿ-ն շարունակեց «Ազգային տեսակետի» բոլոր ուժերին բնորոշ հակաարևմտականության հռետորաբանությունը, որը հիմնավորվում է Թուրքիայի և Արևմուտքի միջև մշակութային ու կրոնական տարբերություններով, ինչպես նաև տնտեսական և աշխարհաքաղաքական անկախության ձգտումներով: Ֆաթիհ Էրբաքանը հենց սկզբից աչքի է ընկել ՆԱՏՕ-ի հասցեին խիստ քննադատությամբ՝ պնդելով, որ այն սպասարկում է միայն ԱՄՆ-ի շահերը (NATO ile ilgili açıklamamız): Նա նշում է, որ ԱՄՆ-ն Թուրքիայի «այսպես կոչված» դաշնակիցն է և չի կարող լինել իրական դաշնակից (Dr. Fatih Erbakan: Amerika bizim sözde stratejik ortağımızdır. Amerika'dan ortak olmaz) : Էրբաքանը նաև հայտարարել էր, որ իշխանության գալու դեպքում կփակեն ինչիլիք գյուղում գտնվող ՆԱՏՕ-ի ռազմաբազան (23/40 • İktidara gelerseniz İncirlik Üssü'nü kapatır mısınız?) : Հակաարևմտականությանը զուգահեռ Էրբաքանը հանդես է գալիս նաև հակաիրեական ակտիվ հռետորաբանությամբ:

Կուսակցության այլաոյաց հռետորաբանությունը մեջ հարկ ենք համարել առանձնացնել նաև հակահայկական քայլերը, հայտարարություններն ու գաղափարները, որոնք պետք է դիտարկել թուրքական ազգայնամոլության համատեքստում: Հայտարարությունների թեմաներն առնչվում են պատմական որոշակի իրողությունների՝ մասնավորապես Հայոց ցեղասպանության ժխտմանը՝ ներկայացնելով հայերին որպես հակառակորդ ազգ՝ ազգայնական հասարակության մեջ հավելյալ ազդեցություն ձեռք բերելու համար: Բացի այդ, ԿԲԿ-ն հանդես է գալիս Թուրքիայի դաշնակից Ադրբեյջանի շահերի պաշտպանության օգտին՝ շեշտը դնելով ոչ միայն թուրքականության, այլև իսլամի վրա:

ԿԲԿ հակահայկական հռետորաբանությունը հատկապես ակտիվացավ 2020 թվականից հետո: 2020 թ. հուլիսին Տավուշի մարզի սահմանային գոտում մարտական գործողություններից հետո Էրբաքանը հայտարարեց, որ «ընկեր և եղբայր Ադրբեյջանի կողքին է»՝ մեղադրելով Հայաստանին և «նրա հետևում կանգնած ուժերին» (Fatih Erbakan'dan Ermenistan'ın Azerbaycan'a yönelik saldırılarına ilişkin açıklama): 2020 թ. սեպտեմբերի 30-ին՝ 44-օրյա պատերազմի սկզբից 3 օր անց, Էրբաքանն այցելեց Թուրքիայում Ադրբեյջանի դեսպանատուն, որտեղ աջակցություն հայտնեց Ադրբեյջանին՝ նշելով, որ «մուսուլման բոլոր երկրները պետք է աջակցեն Ադրբեյջանին» (GENEL BAŞKANIMIZ'DAN AZERBAYCAN ANKARA BÜYÜKELÇİSİ'NE ANLAMLI ZİYARET): Էրբաքանը Ադրբեյջանին աջակցություն հայտնեց նաև հոկտեմբերի 4-ին ԿԲԿ Իգդիրում կայացած համագումարի ընթացքում՝ սպառնալիքներ հնչեցնելով Հայաստանի հասցեին (Yeniden Refah Partisi Genel Başkanı Erbakan'dan Ermenistan'a: Azerbaycan'ın Karabağ topraklarından çık): 2021 թ. ապրիլին՝ Ֆաթիհ Էրբաքանը քննադատեց ԱՄՆ նախագահ Ջո Բայդենին՝ «Հայոց ցեղասպանություն» եզրույթն օգտագործելու համար՝ թուրքերի հասցեին նման մեղադրանքները որակելով «վտիություն» (Fatih Erbakan'dan Meclis'e ABD çağrısı: 'Kızıldere soykırımı' kararı alalım):

ԿԲԿ մասնակցությունը 2023 թ. խորհրդարանական և 2024 թ. ՏԻՄ ընտրություններին

2021 թ. սկսած ԿԲԿ-ն սկսեց նախապատրաստվել 2023 թ. կայանալիք խորհրդարանական ընտրություններին՝ ակնարկելով ԱԶԿ գլխավորած «Հանրապետություն» և ՀԺԿ գլխավորած «Ազգ» դաշինքներին զուգահեռ երրորդ դաշինք կազմելու հնարավորության մասին (Yeniden Refah Partisi Genel Başkanı Fatih

Erbakan'dan "üçüncü ittifak" açıklaması: Görüşmeler yapıyoruz): Ամիսներ անց Էրբաքանը հայտարարեց, որ նման դաշինք կարող է կազմվել «Լավ» կուսակցության (İyi parti) առաջնորդությամբ՝ միևնույն ժամանակ նշելով, որ իրենք ավելի շատ կցանկանան միայնակ մասնակցել ընտրություններին (Fatih Erbakan, İYİ Parti liderliğinde üçüncü ittifak önerdi: 'Millet bizi mevcut hiçbir ittifaka yakıştırmıyor'):

Հետագա ամիսներին Էրբաքանը աստիճանաբար ավելի քննադատական մոտեցում էր ցուցաբերում իշխանությունների հասցեին՝ հանդես գալով առավել սուր հայտարարություններով: ԿԲԿ համար առաջին ընտրություններին ընդառաջ հռետորաբանության նման խստացումը կարող ենք պայմանավորել ԿԲԿ-ի և ԱԶԿ-ի ընտրազանգվածի գաղափարական նմանություններով և սեփական կուսակցության օգտին ձայներ ապահովելու պարզ հաշվարկով: 2022 թ. փետրվարին Gazete Duvar լրատվամիջոցին իր հարցազրույցի ժամանակ Էրբաքանը հայտարարեց, որ ԱԶԿ գլխավորած «Հանրապետություն» դաշինքին ԿԲԿ մասնակցության հավանականությունը 1%-ից էլ ցածր է՝ նշելով, որ «չեն ցանկանում վերջին վայրկյանին դառնալ 20 տարվա մեղքի գործընկերը» (Fatih Erbakan: 20 senenin günahına son dakika ortak olmak bizim açımızdan çok uygun değil): Խոսելով ընտրություններում ԱԶԿ նախագահի թեկնածու Էրդողանի և նրա հիմնական մրցակցի՝ ՀԺԿ թեկնածու Քեմալ Զըրըչդարողլուի՝ երկրորդ փուլ անցնելու հավանականության մասին՝ Էրբաքանը հայտարարում էր, որ որևէ կողմի աջակցություն չեն ցույց տալու (Fatih Erbakan: Çok büyük tepki oldu, Erdoğan'a destek olmayacağıız): Էրբաքանը նաև հրապարակայնորեն քննադատում էր Էրդողանին Իսրայելի հետ հարաբերությունները զարգացնելու համար (One minute Sayın Erdoğan!):

2023 թ. ընտրություններին ընդառաջ ԿԲԿ-ն հրապարակել էր իր նախընտրական ծրագիրը (2023 Genel Seçimleri Beyannamemiz), որն իր բնույթով պոպուլիստական էր և համապատասխանում էր կուսակցության պահպանողական-խլամամետ գաղափարներին: Ծրագրի մեջ մեծ տեղ էր հատկացված տնտեսական, գյուղատնտեսական և արդյունաբերական բարեփոխումների ծրագրերին և խոստումներին: Հանրային ոլորտի փոփոխությունների շարքում էին նաև ԼԳԲՏ համայնքի կազմակերպությունների արգելումն ու կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայից («Ստամբուլյան կոնվենցիա») դուրս գալը: Առանձին բաժին էր հատկացված երիտասարդությանը. նախատեսվում էր ստեղծել երիտասարդության նախարարություն: Ծրագրում առկա էին նաև ընտանիքի ու կնոջ դերի ամրապնդմանն ուղղված քայլեր: Հատկապես հետաքրքիր էր կրթական քաղաքականությանն առնչվող հատվածը, որտեղ նշված էր, որ ԿԲԿ իշխանության օրոք Թուրքիան դուրս կգա Ֆուլբրայթի միջազգային կրթական ծրագրից, կներդրվեն Ղուրանի 12-ամյա դասընթացներ, իսկ դպրոցներում իսլամի վերաբերյալ կամընտրական առարկաները կդառնան պարտադիր: Արտաքին քաղաքականությանն առնչվող հատվածում էլ խոսվում էր դեռ ավագ Էրբաքանի կողմից հիմնադրված ու իսլամադավան խոշոր 8 երկրները միավորող D-8 կազմակերպության ընդլայման և D-60-ի ստեղծման, թյուրքական պետությունների միջև համագործակցության խորացման, պաղեստինյան հակամարտության համատեքստում պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի ճանաչման և հակամարտության լուծմանն ուղղված ջանքերի մասին: Պաշտպանությանն առնչվող հատվածում նշվում էր D-8 կազմակերպության անդամ երկրների և թյուրքական այլ երկրների հետ պաշտպանական ոլորտում համագործակցության ընդլայնման մասին ծրագրերի մասին:

2023 թ. նախընտրական քարոզարշավի մեկնարկից հետո՝ մարտի 20-ին, Էրբաքանը հայտարարեց, որ ԿԲԿ-ն որևէ դաշինքի մաս չի կազմելու և

ընտրություններին մասնակցելու է որպես առանձին ուժ: Վերջինս նաև հավելեց, որ կուսակցության նախագահի թեկնածուն ինքն է (Fatih Erbakan: Hiçbir ittifaka dahil olmayacağı): Սակայն օրեր անց՝ մարտի 24-ին, Էրբաքանը հայտարարեց, որ անձամբ նախագահ Էրդողանից ստանալով իրենց համար կարևոր մի շարք կետերի իրագործման վերաբերյալ երաշխիքներ՝ միանում է ԱԶԿ գլխավորած «Հանրապետություն» դաշինքին՝ ընտրություններին մասնակցելով սեփական կուսակցության տարբերակչանի ներքո (Fatih Erbakan adaylıktan çekildi):

Խորհրդարանական և նախագահական ընտրությունների ընթացքում ԿԲԿ-ի՝ ԱԶԿ ղեկավարած դաշինքին միանալու քայլը կարող ենք բացատրել երկու հանգամանքով.

1. 2023 թ. ընտրությունները լինելու էին ԿԲԿ առաջին ընտրությունները, և ըստ Էռբաքան՝ առաջին լուրջ փորձությունը, և ծախսողումը կարող էր շատ արագ փակել Ֆաթիհ Էրբաքանի քաղաքական կարիերայի էջը՝ այդպիսով շարունակելով Թուրքիայում ձևավորված ավանդույթը, որի համաձայն՝ հաջողակ քաղաքական գործիչների որդիների քաղաքական փորձերն ավարտվում են անհաջողությամբ կամ մասնակի հաջողությամբ (Իսմեթ Ինոյուկի որդի Էրդալ Ինոյուկ, Ադնան Մենդերեսի որդի Յուքսեյ Մենդերես, Ալիարսլան Թուրքեշի որդի Թուրույ Թուրքեշ): Էրբաքանը «ապահով խաղ» խաղաց՝ ընդգրկվելով ընտրություններում ֆավորիտ դաշինքի կազմում՝ հաշվի առնելով նաև դաշինքի անդամների հետ գաղափարական ընդհանրությունները:

2. ԿԲԿ-ն չէր կարող համագործակցել ԶԺԿ ղեկավարած «Ազգ» դաշինքի հետ մի քանի պատճառներով: «Ազգային տեսակետի» գաղափարախոսության կարևորագույն հիմքերից են իսլամն ու հակաաշխարհիկությունը, իսկ ԶԺԿ-ն աշխարհիկության ջատագով կուսակցություն է: ԿԲԿ-ի անդամների և անձամբ Ֆաթիհ Էրբաքանի հռետորաբանության մեջ զգալի տեղ են կազմում ԶԺԿ-ի դեմ հայտարարությունները՝ կապված հատկապես 1997 թ. փետրվարի 28-ի պոստմոդերնիստական հեղաշրջման հետ, ինչը ևս անհնար էր դարձնում համագործակցությունը: ԶԺԿ դաշինքի մեջ էր նաև ԵԿ-ն, որը ԿԲԿ-ի հիմնական քաղաքական մրցակիցն է, որից ԿԲԿ-ն ամեն կերպ փորձում է տարբերվել և տարանջատվել: «Ազգ» դաշինքին հարելը նաև կվերացներ ԿԲԿ-ի՝ նույն գաղափարախոսական դաշտում, սակայն, այնուամենայնիվ, ԱԶԿ-ին այլընտրանք հանդիսանալու հանգամանքը: Դեռ 2020 թ. Էրբաքանն ինքն էր խոստովանել, որ իրենց նոր անդամների 60%-ը ԱԶԿ նախկին անդամներ են (29/40 • Oyunuz Saadet Partisi'nden fazla mı?):

«Բուրաստան սուրբ Սահակեանում» ենք հանդիպում նաև պատմականագրական ակնարկների առաջին նմուշներին: Թարգմանաբար ներկայացվում է Թովմաս Ինկլիլոտի կենսագրությունը՝ «Կենցաղագրութիւն» խորագրով. նշենք, որ հետագայում երևելի մարդկանց մասին պատմականագրական ակնարկներ տպագրվել են նաև «Թութակ Յայկազեանում», օրինակ, «Աշխարհիս մեջ եկած երեւելի մարդկան երիտասարդութեան ժամանակը» գրույցը, որը հունարենից թարգմանել է Վ. Յար. Սիմոնեարեանը:

Կարծես անգլիական պատմությունները օրինաչափ են եղել «Բուրաստանի» համար, հետևաբար, հիշատակենք ևս երկու թարգմանական գործ՝ **Բանասիրական** բաժնում տպագրված «Թոֆան անունով զօրեղ մարդու մը պատմութիւնը»՝ Միքայել Սիսակ. Մ. Նաւալարեանի թարգմանությամբ և **Երախտագիտութիւն** բաժնում տպագրած՝ «Ագայ ու ծիաւորին և Սօնթառնկենին շանը պատերազմը»՝ Յարութիւն Արամ Մ. Այտընեանի թարգմանությամբ: Թոֆան-ի պատմության հիմքում հսկա Թովմաս Թոֆամի մասին պատմությունն է (Thomas Topham, c. 1710 – 10 August 1749), որը ցուցադրել է իր ուժը Մեծ Բրիտանիայի տարբեր քաղաքներում: Պատմությունը վերցված է Ուիլյամ Յոուլիթի «Լոնդոնի հյուսիսային բարձունքները...» աշխատությունից ("The northern heights of London; or, Historical associations of Hampstead, Highgate, Muswell Hill, Hornsey, and Islington", William Howitt, London, 1869, 538-542): Նույն տարում գործը տպագրվել է նաև Colonist (1857-1920) պարբերականում: Հաշվի առնելով սույն գործի թվականը՝ ենթադրում ենք, որ ավելի վաղ հրատարակություններ ևս եղել են, որոնցից օգտվել են «Բուրաստանի» թարգմանիչները: Ամենայն հավանականությամբ, նպատակ են ունեցել ընթերցողների հետաքրքրությունը գրավելու նաև օտար երկրների տարօրինակ մարդկանց պատմություններով:

«Ագայ ու ծիաւորին և Սօնթառնկենին շանը պատերազմը» Յարութիւն Արամ Մ. Այտընեանի թարգմանությամբ հիմնված է Մոնթարգիսի Լեգենդի վրա ("Legend of Montargis"), որի համաձայն 14-րդ դարում Կառլոս 5-րդի պալատականներից մեկի սպանության միակ վկան շունն է լինում, ով վրեժ է լուծում տիրոջ համար: "Le Chien de Montargis" կամ "The Dog of Montargis" պատմությունը գրվել է Ռոբերտ Մքկեր գրական կերպարի մասին հյուսված պատմության հիմքով:

«Բուրաստանի» հետաքրքրաշարժ կյուբերից հիշատակության արժանի է նաև **Չուարճավէպ** բաժնում տպագրված «Փնչինելլօ Խեղկատակին խաղերը» պատմվածքը, որը շարունակաբար լույս է տեսել «Բուրաստանի» 1851 թվականի 3-ից 12-րդ թողարկումներում: Թարգմանել է Միքայել Սիսաք Մ. Նաւալարեանը: Պունչինելլան, որը հայերեն տարբերակում տառադարձվել է Փրնչինելլօ, իտալական մշակույթում հայտնի տիկնիկն է կամ խեղկատակը, ով ներկայացումներով զույմար էր վաստակում ծիծաղեցնելով մարդկանց: Ըստ ավանդության՝ Պունչինելլան խորհրդանշել է Նեապոլյան հասարակ մարդկանց, որոնք իրենց խնդիրներին վերաբերում էին ժպիտով: Պունչինելլայի մասին զանազան պատմություններ են տպագրվել ժամանակի հայտնի տարբեր պարբերականներում: Մենք դիտարկել ենք մի շարք հասանելի տարբերակներ, այդ թվում՝ անգլերենով գրված "The Life and adventures of Punchinello" վիպակը: Այն տպագրվել է 1856 թվականին Նյու Յորքում:

Անգլերեն տարբերակը թարգմանված է ֆրանսերեն բնօրինակից, որը գրված է Օկտավ ֆոյեի (1821-1890) կողմից: Բնօրինակն է *“La Vie de Polichinelle et ses nombreuses aventures”*. Հավանաբար ժամանակին եղել է նաև կրճատ տարբերակ, որից էլ թարգմանել են Սուրբ Սահակեան վարժարանի աշակերտները:

«Թուլթակ Հայկազեանը» համարվում է օրագիր բարոյական, բանասիրական և ուսումնական: Գործել է 1854 թվականից Մեսրոպ Նուպարեան վարժարանի սաների և Տեր Վրթանեսի ջանքերով: «Թուլթակ Հայկազեան»-ից միայն 3 և 5 համարներն են հասանելի ուսումնասիրության համար: Թարգմանական գործերից շատերը նույնությամբ կամ մշակումներով արտատպվել են այլ մանկական պարբերականներում, ինչպես օրինակ «Ռուս ճամփորդի մը Ամերիկայի մեջ գլխուն եկածները» Պարոնյանի «Թատրոն. բարեկամ մանկանցում»: Մեզ հասած համարներից մեկում 1855 թվականին տպագրվել է «Նշանախօս Վարժապետը» պատմվածքը (անգլերենից թարգմանված Ա. Գալուստի և Գ. Կոստանդեանի կողմից), որտեղ ընթերցողը ծանոթանում է Լոնդոնյան կրթական միջավայրին և հարաբերություններին. «Լոնտրայի մեջ հռչակաւոր օտարազգի լեզուագետ մը կար, եւ իրեն գիտցած լեզուներովը խօսիլ կ'ուզէր Անգղիացւոց երեւելի վարժապետներուն հետ. ուստի իր միտքը առաջարկեց Օքսֆորդի մեծ վարժապետին.....» («Թուլթակ» հ. 3, 38-40): Պարոնյանի «Նշանացի խօսակցութիւն» պատմվածքը հիմնված է նույն ստեղծագործության վրա: «Թուլթակում» ևս պատմությունները տարբեր երկրների մասին են, ինչպես, օրինակ, «Հնդկաստանի իշխանի մը ապերախտութիւնը» անստորագիր գրույցը և «Ակամայ աստղաբաշխ» հեքիաթը: Այստեղ նաև կան այլ թարգմանական գործեր, օրինակ՝ ֆրանսերենից թարգմանած չափածո ստեղծագործությունը՝ «Բնական ապացոյց գոյութեան Աստծոյ», որը Ռասինի «Երգ վասն կրօնից» գրքի հայերեն թարգմանությունից է՝ հրատարակված Վիեննայում 1842 թվականին Մ. Գարագաշյանի կողմից: Ինչպես տեսնում ենք, խմբագիրները ծանոթ են եղել արևմտաեվրոպական ստեղծագործություններին:

1855-ին Չմյուռնիայում լույս է տեսել «Երկասեր» աշակերտական պարբերականը, որի միայն թիվ 7-ն է հասանելի թվայնացված մամուլի էջերում: Բանասիրական, ուսումնական և շուրճարձային բաժիններում տպագրել են մանկական երկեր, հանելուկներ, հեքիաթներ և այլ ստեղծագործություններ: «Երկասերի» հասանելի համարում տեղ է գտել «Գորտը թագաւոր կը խնդրեն» առակը՝ գրաբար թարգմանությամբ: Այն Եգոպոսին վերագրվող քաղաքական ամենահայտնի առակներից էր և մեկը այն 39 առակներից, որոնց բնութագրող արձանները Շարլ Պերրոյի խորհրդով ցուցադրված էին Վերսալի «Արքայի այգու» լաբիրինթոսում: Ամենայն հավանականությամբ, աշակերտները մշակել են առակի տարբերակներից մեկը և հայ ընթերցողին առավել հասանելի դարձնելու համար առակի տարբերակներում ամենահաճախ հանդիպող Յուպիտերին փոխարինել Արամազդի անունով՝ «.....գորտը համայն առ Արամազդ բառնան գծայն.....» («Երկասեր», 1855, հ. 7, 115): Առակն անտեղի դժգոհություններով Աստծուն զայրացնելու, ունեցածը չգնահատելու խորհուրդն է շեշտում: Առակի այլ թարգմանություն տպագրվել է նաև «Բազմավեպում»՝ «Գորտը խնդրեն յԱրամազդայ ինքեանց թագաւոր» վերնագրով («Բազմավեպ», 1865, թ. 6, 187-188):

«Երկասերում» լույս տեսած այլ գործերից է «Շատակեր զինուորը»: Այս պատմվածքը հավանաբար 18-րդ դարավերջին ապրած ֆրանսիացի որկրամոլ Տարարեի մասին է, որը կերել է հնարավոր ու անհնար ամեն ինչ, բայց չի հազեցել: Նա կյանքի որոշ տարիներ եղել է զինվորական և «Երկասերի» պատումը համընկնում է Տարարեի կենսագրական հոդվածների որոշ դրվագներին, թեև աղբյուրի կամ բնագրի լեզվի մասին որևէ տեղեկություն չի փոխանցվում: Շատակերի մասին պատմող տարբեր պատառիկներ տպագրվել են ժամանակի բազմաթիվ պարբերականներում անգլերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով: Օրինակ, հանդիպել ենք ավստրալական մի թերթում 1832 թվականին տպագրված հոդվածի, որտեղ հիշատակում է անգլիական

քնազիր տեքստ “Amusing, English Extracts” բաժնում “Spiritual glutton” [Յոգեւոր որկրամոլ] վերնագրով: Մյուս պատմվածքը «Ծերու մը խօսքեր» վերնագրով գործն է (թարգ. Ի Գաղղ. Ե. Յ. Չայեան): Բովանդակությամբ առնչվում է Նախախնամությանն ու Աստծուց գոհունակ լինելու խնդիրներին: «Հպարտութենէ յառաջ եկած թշուառութիւնը» հնազանդությունն քաջալերող կյուր է, որտեղ քննադատում է հպարտությունը Բավարիայի իշխան Սամուէլի կյանքի օրինակով: Սկզբնաղբյուրի և թարգմանության մասին տեղեկությունները բացակայում են: **Ուսումնական** բաժնում ներկայացված են տարբեր պատմություններ, որոնցից հետաքրքրական են «Շամիրամայ ծննդեանը վրայ համառօտ տեղեկութիւն» և անտիկ աշխարհի նկարիչ Ապելլեսի մասին թարգմանած գրույցները՝ «Ապելես»:

Ինչպես բնորոշ է եղել ժամանակի եվրոպական պարբերականներին, «Երկասերը» ևս ունեցել է «Չուարճալիք» կոչվող բաժին, որտեղ թարգմանաբար տպագրվել են հետևյալ գրույցները՝ «Խելացի ծառայ», «Ճանճ», «Յարմար պատասխանի», «Ճարտար պատասխանի»: Այս բոլոր գրույցները մինչ օրս պատմվում են և հայտնի են բազմաթիվ լեզուներով: Ինչպես նախորդ պարբերականներում ենք տեսնում, աշակերտները տարբեր տարօրինակ մարդկանց պատմությունների թարգմանությամբ փորձել են հետաքրքրել ընթերցողներին: Թեև այս գործերը մանկապատանեկան գրականության դասական նմուշներ չեն, սակայն պատանի ընթերցողի ժամանցի, աշխարհայացքի ընդլայնման և գաղափարական դաստիարակությանն են ուղղված: Այդ ամենով հանդերձ, կարևոր դեր են կատարել նաև աշխարհիկ թարգմանական գրականության զարգացման գործում:

Եզրակացություն

Այսպիսով՝ առաջին աշակերտական պարբերականների թարգմանական գործերը հիմնականում դպրոցական ընթերցանության համար նախատեսված կյուրեր էին, որոնք հիմք ստեղծեցին մանկապատանեկան գրականության զարգացման համար:

«Բուրաստան սուրբ Սահակեանը», «Երկասերը» և «Թութակ Հայկազեանը» հող նախապատրաստեցին հետագայում նոր գրականության և առավել հասցեական մասնագիտական ուղղություններով պարբերականների առաջացման և զարգացման համար:

Թեև պարբերականները լույս էին տեսնում որոշակի դժվարություններով և կարճ կյանք ունեցան, սակայն շնորհիվ աշակերտների լեզվական գիտելիքների և թարգմանական գործունեության, համաշխարհային գրականության բազմաթիվ գործեր ինչպես առանձին հրատարակություններից, այնպես էլ համաշխարհային մամուլի էջերից, ենթարկվեցին լեզվամշակության փոխակերպումների և փոխադրվեցին հայախոս միջավայր: Դա հնարավորություն տվեց հայախոս ընթերցողին հաղորդակից դառնալու համաշխարհային գրական և կրթական միտումներին և գաղափարական շարժումներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Բազմավեպ». թիվ 6, 1865թ., Վենետիկ:
2. «Բուրաստան Սուրբ Սահակեան» պարբերական. թիվ 1, 1851թ., Կոստանդնուպոլիս:
3. «Բուրաստան Սուրբ Սահակեան» պարբերական. թիվ 6, 1851թ., Կոստանդնուպոլիս:
4. «Բուրաստան Սուրբ Սահակեան» պարբերական. թիվ 7., 1851թ., Կոստանդնուպոլիս:
5. «Բուրաստան Սուրբ Սահակեան» պարբերական. թիվ 3, 1852թ., Կոստանդնուպոլիս:
6. «Երկասեր». թիվ 7, 1855թ., Չմյունխա:

7. «Թուրակ Հայկազեան» պարբերական. Բ, թիվ 3, 1855թ., Չմյուռնիա:
8. Խառնադան, Ալբերտ. *Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր*, Զ. 1: Գահիրե, ՀՀ ԳԱԱ, 2006:
9. Մամուրեան, Մատթեոս. «Յառաջաբան». Արեւելեան Մամուլ, հ. 1, Հունվար 1871թ., էջ 36-37:
10. Նազարյան, Սիլվա. *Հայ մանկապատանեկան մամուլը (1851-1917)*., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1979:
11. Նուպարեան, Մեսրոպ. *Իմ մանկական յիշատակներես. Արեւելեան Մամուլ*, հ. 22, Դեկտեմբեր 1894թ., էջ 703-704:
12. Փարթամյան, Վարդան. *Հայ-անգլիական գրական առնչությունները*. ՀՍՍՀ ԳԱ հրատ, Երևան, 1975, էջ 335:

WORKS CITED

1. Bazmavep [Polugistory]. 1865, V. 6, Venice. (in Armenian)
2. Bourastan Sourb Sahakean [Bourastan Sourb Sahakyan]. 1851. v. 1. Constantinople. (In Armenian)
3. Bourastan Sourb Sahakean [Bourastan Sourb Sahakyan]. 1851, v. 6. Constantinople. (In Armenian)
4. Bourastan Sourb Sahakean [Bourastan Sourb Sahakyan]. 1851. v. 7. Constantinople. (In Armenian)
5. Bourastan Sourb Sahakean [Bourastan Sourb Sahakyan]. 1852. v. 3. Constantinople. (In Armenian)
6. Erkaser [Laborious]. 1855, V. 7. Smyrna. (in Armenian)
7. Kharatyan, Albert. *Hay parberakan mamuli patmut'yun XVIII-XIX darer [History of Armenian Periodical Press between XVIII-XIX centuries]*. V. 1. Cairo. 2006. (In Armenian)
8. Mamourear, Mesrop. *Harajaban [Preface]*. Arevelean Mamoul. 1871, p. 36-37
9. Nazaryan, Silva. *Hay mankatatanekan mamuly' (1851-1917). [Armenian Children's Press]*. Yerevan. NAS of ASSR. 1979. p. 219. (In Armenian)
10. Nouparean, Mesrop. *Im mankakan jishatakneres [From my Childhood Memrories]*. Areueyan Mamowl. V. 22, December 1894.
11. Partamian, Vardan. *Hay-angliakan grakan ar'nchut'yunnery' [Armenian-English Literary Relations]*. Yerevan. NAS ASSR. 1975. 335. (In Armenian)
12. Toutak Haykazean. [Toutak Haykazean] 1855. Zmyrna. V. 3. (In Armenian)

TRANSLATED CHILDREN'S LITERATURE IN THE FIRST ARMENIAN CHILDREN'S PERIODICALS

VARDUHI BALOYAN

*Institute of Literature after M. Abeghyan, Ph.D. Student;
Armenian State University of Economics, Gyumri Branch, Lecturer,
Gyumri, the Republic of Armenia*

This article aims to examine the role and impact of translated literature as reflected in the first Armenian children's and youth periodicals ('St. Burastan. Sahakyan,' 1851-1853, Constantinople; 'Tutak Haykazian,' 1854-1855; 'Erkaser,' 1855, Smyrna).

The primary objective is to identify and analyze the content of materials translated for teenage readers. This study serves as an extension of our comprehensive research on children's literature translated in Armenian publications during the pre-Soviet era.

The methodology employed in this study incorporates both qualitative and quantitative analyses, along with a historical approach. As part of the comparative

analysis, reprints and individual translations of literary works were also examined, as they play a crucial role in shaping independent children's and young adult literature.

Translated literature significantly influenced the literary and social landscape of Armenian-European interactions, aiding in the dissemination and preservation of global literary heritage. The Armenian intelligentsia of the time believed that national education and awakening required the adoption and spread of the finest European Enlightenment ideals among Armenian children and adolescents. This goal was pursued through the translation of ideologically relevant literature, which was published in the newly emerging periodicals aimed at students.

Key words: *Language, mindset, translation, children's literature, cross-cultural, Armenian, periodicals.*

ПЕРЕВОДНАЯ ДЕТСКАЯ ЛИТЕРАТУРА В ПЕРВЫХ АРМЯНСКИХ ШКОЛЬНЫХ ЖУРНАЛАХ

ВАРДУИ БАЛОЯН

*соискатель Института литературы им. М. Абега,на,
преподаватель Гюмрийского филиала Армянского государственного
экономического университета,
г. Гюмри, Республика Армения*

Переводные работы, опубликованные в первых периодических изданиях для учащихся, прежде всего, служили образовательным целям и заложили основу для развития детской и юношеской литературы.

Цель статьи - изучить роль и влияние переводной литературы, опубликованной в первых армянских детских и юношеских периодических изданиях («Бурастан Св. Саакан», 1851-1853 гг., Константинополь, «Тутак Айказан», 1854-1855 гг., «Еркасер» («Трудолюбивый»), 1855, Смирна).

Основная задача исследования – выявить и проанализировать содержание переводных произведений для юных читателей. Настоящее исследование является продолжением нашего обширного исследования переводной детской литературы в армянской периодической печати досоветского периода.

Методология, использованная при данном исследовании, включает качественный и количественный анализ, а также исторический подход. При сравнительном анализе мы коснулись также репринтов переводного материала и отдельных переводов, занимающих важное место в формировании самостоятельной детской литературы.

Переводная литература сформировала литературную и социальную среду армянского и европейского взаимодействия и способствовала распространению и сохранению мирового литературного наследия. Армянские мыслители того времени считали, что для национального воспитания и национального пробуждения необходимо заимствовать лучшие идеи европейского просвещения и распространять их среди армянских детей и молодежи.

Это стало возможным благодаря переводам соответствующей идеологической литературы, которая публиковалась в создающихся периодических изданиях для учащихся.

Ключевые слова: *язык, мышление, перевод, детская литература, межкультурный, армянский, пресса.*

ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ, PSYCHOLOGY, ПСИХОЛОГИЯ



ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՉՈՒԳԸՆԿԵՐՈՋ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ *

ՀՏԴ 159.9 (07)

DOI: 10.52063/25792652-2024.3.22-163

ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ,
հոգեբանական գիտությունների թեկնածու
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Narine.harutyunyan@ysu.am
ORCID: 0000-0001-7264-2705

ԻՐԻՆԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարանի քաղաքացիական պաշտպանության
ամբիոնի վարչարարության մասնագետ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
irina.markaryan@ysu.am
ORCID: 0009-0007-5367-9466

Ժամանակակից աշխարհում հաղորդակցության գործընթացի վիրտուալացումը հնարավորություններ ստեղծեց մարդկանց համար հաղորդակցվելու ժամանակից և տարածությունից դուրս: Մարդկանց հետ շփումները, տարատեսակ տեղեկատվության փոխանցումը, ինչ որ տեղեկույթի որոնումները և այլն, որոնք տեղի են ունենում համացանցի միջոցով, հնարավորություն են տալիս անձին ոչ միայն լինելու տեղեկացված աշխարհում տեղի ունեցող զանազան փոփոխությունների և իրադարձությունների մասին, այլև՝ տարածելու սեփական փորձը, կյանքի այս կամ այն իրադարձությունները, ինչպես նաև ձեռք բերելու ճանաչվածություն: Համացանցային տարածքում ծանոթությունների համար վիրտուալ հարթակների տարածվածությունը մեծացրեց ռոմանտիկ հարաբերությունների ձևավորման հնարավորությունները:

Մեր աշխատանքի նպատակն է դուրս բերել երիտասարդության միտումները համացանցի միջոցով ամուսնական զուգընկերոջ ընտրության հարցում: Ուսումնասիրել ինչպես երիտասարդների դիրքորոշումները, այնպես էլ սուբյեկտիվ ընկալումների իմաստային պատկերացումները համացանցային տիրույթի՝ որպես զուգընկերոջ ընտրության հարթակի վերաբերյալ:

Հետազոտության համար կիրառել ենք հոգեբանական թեստեր և ստացված արդյունքները ենթարկել քանակական ու որակական վերլուծության:

* Հոդվածը ներկայացվել է 14.07.2024թ., գրախոսվել՝ 15.08.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

Կարող ենք եզրակացնել, որ առցանց տարածությունը երիտասարդների կողմից ընկալվում է որպես անձնական հարաբերությունների ձևավորման յուրօրինակ միջավայր, որտեղ դյուրին և արդյունավետ, կարևոր ու օգտակար, հաճելի ու գրավիչ է դառնում նոր ընկերներ և նոր գոյուցակիցներ գտնելը, սիրային կապեր հաստատելը, կյանքի ընկեր ընտրելը:

Հիմնաբառեր՝ համացանց, սոցիալական ցանցեր, վիրտուալ տարածք, առցանց ծանոթություններ, հաղորդակցում, շփում, ամուսնական գույճընկեր, երիտասարդություն, արժեքներ, դիրքորոշումներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում շփումը մարդկանց միջև մեծ մասամբ իրական տարածքից տեղափոխվել է առցանց հարթակ, մասնավորապես՝ սոցիալական ցանցեր: Համացանցի ի հայտ գալը մեծ դեր է խաղացել ժամանակակից հասարակության և ժամանակակից մարդու համար, որն առօրյայի մեծ մասը անցկացնում է վիրտուալ տարածքում: Ե. Ա. Ռիսկայան և Դ. Ն. Պոգորելովը կարծում են, որ ժամանակակից հասարակության կյանքը նույնիսկ անհնար է պատկերացնել առանց համացանցի, որի միջոցով կատարվում է տեղեկատվության որոնում և փոխանցում, շփում և տարատեսակ գործունեություն ծավալվում (Рытская, Порогелов 2021): «Համացանցից օգտվող անձինք հիմնականում ծավալում են հետևյալ գործունեությունները. էլեկտրոնային շփում տարբեր սոցիալական ցանցերում, տեղեկատվության որոնում համացանցում, էլեկտրոնային նամակագրություն, գիտական և մասնագիտական գործունեության ծավալում, կրթական գործընթացի կազմակերպում, մշակութային ոլորտի ուսումնասիրություններ, համացանցային խաղեր, երաժշտության ու ֆիլմերի ներբեռնում, դրանց ունկնդրում, դիտում և այլն» (Ասատրյան 131-132):

Սոցիալական ցանցերը մեծ տեղ ունեն հատկապես երիտասարդների կյանքում: Որպես «իդեալական աշխարհ», նրանց առօրյայի գրեթե մեծ մասն անցնում է համացանցում, որտեղ ժամանակն ու հեռավորությունը խոչընդոտ չեն (Дыжова 2021): Համացանցը մեծ ազդեցություն ու նշանակություն ունի երիտասարդների սոցիալականացման գործընթացում, արժեքային համակարգի ձևավորման համար: Երիտասարդների մեծամասնությունը գրանցված է տարբեր սոցցանցերում: Ամենակիրառելիս՝ Ֆեյսբուք, Ինստագրամ, Տեֆգրամ, Վայբեր սոցկայքերն են, որտեղ նրանք ոչ միայն իրականացնում են ինֆորմացիայի փոխանցում և ընդունում, կարդում են նորություններ, այլև տեղադրում են նկարներ, տարածում իրենց կյանքի որոշ իրադարձություններ, ինչպես նաև հնարավորություն ունեն գնահատական տալ համացանցում գտնվողներին, մեկնաբանել նրանց վարքը, գործողությունները, նկարները, մեկնաբանություններն ու հրապարակումները: Համաձայն Մ.Մակերեթի և Զ. Անդերսոնի՝ երիտասարդների համար ժամանակակից տեխնոլոգիաները վերածվում են մշակութային կարևորագույն գործիքի, որով նրանք հաղորդակցվում են, զբաղվում են ինքնակրթմամբ և ինքնագրգացմամբ, գտնում նոր հետաքրքրություններ, սովորում և աշխատում (Mackereth & Anderson 2000):

Ա. Ա. Լիսենկովան և Ա. Յու. Մելնիկովան իրենց կողմից իրականացված հետազոտությունների արդյունքում եզրակացրին, որ երիտասարդները սոցիալական ցանցերը համարում են յուրօրինակ հարթակ՝ սոցիալական գործունեության տարբեր տեսակներ իրականացման համար: Երիտասարդները նկարվում են ոչ այնքան հաճելի պահը ընդգծելու համար, այլ առավելապես դրանք համացանց տեղադրելու, դրական մեկնաբանություններ տեսնելու և դրական հույզ ապրելու, բավականություն ստանալու համար (Лисенкова, Мельникова 2017): Համաձայն Գ. Յու Միրոնովայի՝ սոցիալական ցանցերը, որտեղ երիտասարդները այսօր ակտիվորեն ներգրավված են,

նպաստում են նրանց արժեքային կողմնորոշմանը, սոցիալականացմանը, հնարավորություն են տալիս բացահայտելու աշխարհը, ճանաչելու սեփական անձը (Миронова 2016):

Ի. Վ. Պացկանը, իր հոդվածում վերլուծելով առցանց հաղորդակցման առանձնահատկությունները, կարծում է, որ անձը համացանցային տիրույթում զբաղվում է գործունեության նույն ձևերով, ինչ որ իրական կյանքում՝ խաղ, կրթություն, աշխատանք և, իհարկե, շփում: Ըստ նրա՝ «Որոշ անհատական և անձնական հատկանիշներ, կարողություններ և հմտություններ, որոնք իրական պայմաններում կյանքի գործունեության տարբեր ձևերում ակտուալ չեն, կարող են հայտնվել վիրտուալ տիրույթում հաղորդակցության ժամանակ» (Пацкань 543) և կազմել անձի վարքի մոդելը համացանցային տիրույթում:

Այստեղ առաջ է գալիս պահանջմունքների բավարարման հիմնախնդիրը, ինչը Պացկանը վերլուծել է համաձայն Չանիսի դրույթների՝ առանձնացրելով է 3 հիմնական պահանջմունքներ, որոնք անձը կարողանում է բավարարել համացանցային սեփական ընդգրկվածության, իսկ ավելի ստույգ՝ վիրտուալ հաղորդակցության շնորհիվ: Դրանք են անվտանգության պահանջմունքը, սոցիալական միջավայրին պատկանելու պահանջմունքը, հանրության կողմից սոցիալական ճանաչման պահանջմունքը:

- Անվտանգության պահանջմունքը հնարավորություն է տալիս բավարարելու այնպիսի նպատակներ, որոնք կա՛մ տաբու են հասարակության մեջ, կա՛մ սոցիալապես անընդունելի, և համացանցային միջավայրը թույլ է տալիս առանց վախի խոսելու դրանց մասին:

- Սոցիալական պատկանելության պահանջմունքը, վիրտուալ հաղորդակցության տեսանկյունից, որոշակի ինտերնետային խմբին պատկանելու պահանջմունքն է: Իհարկե, համացանցային հսկայական ռեսուրսի շնորհիվ հնարավոր է այդ պահանջմունքի բավարարումը: Սակայն պետք է ասել, որ համացանցային փոքր խմբերում առավելապես ընդգրկվում են մարդիկ, որոնք չեն գիտակցել իրական «տարածքի»՝ անձին շրջապատող սոցիալական միջավայրի կարևորությունն ու այնտեղ որոշակի գործունեություն ծավալելու անհրաժեշտությունը, հետևաբար, որպես ավելի անվտանգ միջավայր, տեղափոխվել են վիրտուալ տարածք:

- Սոցիալական ճանաչման պահանջմունքը, համացանցային հանրության կողմից ճանաչման ձգտումն է, որը, ըստ Էռլայան, ինքնաիրականացման պահանջմունքն է: Այն բավարարել հնարավոր է համացանցային մարքեթինգի, սեփական անձի համացանցային գովազդի, համացանցային հաղորդակցության միջոցով, նաև լրագրությամբ, բլոգերությամբ, հոդվածներ և մեկնաբանություններ գրելով և այլն (Пацкань 2014):

Այս ամենից զատ՝ համացանցը ունի ևս մի կարևոր ֆունկցիա, որի շուրջ ծավալվող քնարկումները փորձենք ներկայացնել: Խոսքը առցանց ծանոթությունների մասին է, նոր սոցիալական կապերի, նոր միջանձնային հարաբերությունների կառուցման, դրանց ներքո կյանքի ընկեր, ամուսնական գույքներ որոնելու, գտնելու գործընթացի: Առցանց ծանոթությունը, համաձայն Յ. Ռայնհոլդի դարձել է անձնական հարաբերությունների ձևավորման և աջակցության այլընտրանքային դաշտ: Ըստ հեղինակի այն սոցիալ-մշակութային հաղորդակցության ձև է, որի Էական առանձնահատկությունը անհատների միջև հաղորդակցության տարածաժամանակային համատեքստն է, ինչը Էականորեն տարբեր է իրական շփումից, և նպաստում է մարդկանց ավելի հեշտ ու արագ միավորմանը, խմբավորմանը (Рейнгольд 2006): Օրինակ՝ օգտատիրոջ իրական սոցիալական կարգավիճակի քողարկումը, ինքնությունը փոխելու և ցանկալի կարգավիճակ ընտրելու հնարավորությունները կարող են մեծացնել առցանց ծանոթանալու անձի հնարավորությունները (Пупкова, Чердакова 2018): «Ռեալ ինքնության

ատրիբուտները ակտիվանում են մարդկային փոխհարաբերությունների միջավայրում, որտեղ ծանոթությունների հնարավորությունները սահմանափակ են: Այլ է պատկերը վիրտուալ իրականության մեջ: Այստեղ անհատի կերպարը, նրա վիրտուալ «անձնագիրը» բոլոր օգտատերերի տեսադաշտում են, և հասանելիության ու ծանոթությունների հավանականությունը, ինչպես նաև գրուցակիցների ընտրությունն անհամեմատ մեծ է» (Պետրոսյան 77-78):

Վ. Վ. Սաուշևայի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ երիտասարդների՝ համացանցում զուգընկեր որոնելու միտումները, առավելապես պայմանավորված են նրանով, որ ավելի քիչ անձնային ճեսուրսներն ու նյութական միջոցներ են ծախսում, ինչպես նաև ժամանակատար չէ: Սակայն պետք է ասել, որ հեղինակը թերահավատորեն է վերաբերվում համացանցով ծանոթության արդյունքում կազմավորված ամուսնության ամրությանն ու կայունությանը: «Հազվադեպ երևոյթ է մեր օրերում ծանոթությունները սրճարաններում, ճեստորաններում, հասարակական տրանսպորտում, զբոսաշրջներում, պարզապես ցանկացած միջոցառման այցելելիս» (Савина 11-12), ի վերջո, հարազատ-բարեկամների միջնորդությամբ, քանի որ զուգընկերոջ որոնման և ընտրության ամենահարմարավետ միջավայրը, ըստ երիտասարդության, տարբեր առցանց հարթակներն են, հատկապես՝ ծանոթությունների կայքերը: Իհարկե, մի կողմից բոլոր ծանոթությունների կայքերն ու համացանցը հեշտացնում են ամուսնական կամ սիրային հարաբերությունների համար թեկնածուների որոնումը, ինչ-որ առումով նեղացնում դրանց ցանկը, բայց իրականում առկա են որոշ խնդիրներ: Նախ՝ հիմնական խնդիրն այն է, որ ծանոթությունների կայքերում գրանցվածներից ոչ բոլորն են ձգտում լուրջ և տևական հարաբերությունների: Երկրորդ՝ եթե նույնիսկ զույգը նույն նպատակն է հետապնդում, ապա նրանց հետաքրքրությունները, նախասիրությունները և կենսական առաջնահերթությունները կարող են լինել բոլորովին տարբեր, այսինքն՝ ծագում է համատեղելիության խնդիր: Ի վերջո, համացանցային տիրույթում ծանոթությունները ռիսկեր են պարունակում, օրինակ, անձի հոգեբանական անվտանգության տեսանկյունից (Савина 2021):

«Չնայած այն հանգամանքին, որ վիրտուալ հաղորդակցությունը զուրկ է իրական հաղորդակցությանը բնորոշ բազմաթիվ առավելություններից, միևնույն է, սոցիալական ցանցերի միջոցով ծանոթությունները դառնում են ընդունելի ամբողջ աշխարհում» (Путкова, Чердакова 153), իսկ երիտասարդության շրջանում ավելի ու ավելի լայնորեն տարածվում է առավելապես նրա համար, որ «վիրտուալ տարածքում սոցիալական կապերի ձևավորման գործընթացը մարդուց ավելի քիչ նյութական և բարոյական ջանք է պահանջում, քան իրական կյանքում» (Путкова, Чердакова 153): Հետազոտողների կողմից իրականացված հարցումները՝ ծանոթությունների կայքերում երիտասարդների գրանցման նպատակի վերաբերյալ, բացահայտեցին, որ 18-24 տարեկան տղաների և աղջիկների 26.1%-ը և 12.5%-ը, իսկ 25-34 տարեկան տղաների 55.5%-ը և աղջիկների 25.0%-ը ծանոթությունների կայքերը օգտագործում են ամուսնական զուգընկերոջ ընտրություն կատարելու նպատակով (Путкова, Чердакова 2018):

Յու. Գ. Միրոնովան համեմատական վերլուծություններ է կատարել ռուսական և ամերիկայի սոցիալական միջավայրերում առցանց ծանոթությունների և դրա շնորհիվ ամուսնական զուգընկերոջ ընտրության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքների միջև և եզրակացրել, որ երիտասարդների շրջանում հստակորեն առկա է «ամուսնական (մատրիմոնալ) վարքագծի փոխակերպում» (Миронова 163), որի բովանդակությունը կազմում է սոցիալական կյանքի անհատականացումը, անձնական ազատության ձգտումը և ինքնարտահայտման աճի բարձր տեմպերը, պահանջմունքների բավարարման և հեղոնիզմի՝ որպես արժեքների ընկալումը (Миронова 2016):

Անդրադառնալով զուգընկերոջ ընտրության հիմնահարցին վիրտուալ տիրույթում՝ կարող ենք ներկայացնել, թե տեխնոլոգիաների զարգացումը և համացանցի հնարավորությունները ինչպես են ազդում անձի առցանց ծանոթության, զուգընկերոջ փնտրման և ընտրության վրա: Նախ՝ ինչպես վերը նշվեց, համացանցը տարածաժամանակային յուրօրինակ կոնտեքստով լայն ու նոր հնարավորություններ է ստեղծում առցանց ծանոթությունների, այդ թվում՝ զուգընկեր փնտրելու, ինչու չէ՞ նաև գտնելու համար: Այսինքն համացանցի տարածվածությունն ու լայն հասանելիությունը անձին հնարավորություն են տալիս շփվելու համացանցային տիրույթում գտնվող մարդկանց հետ, ձևավորելու ընկերային, գործընկերային, սիրային հարաբերություններ: Մարդիկ համացանցում ոչ միայն մտքեր են փոխանակում, հասկանում իրար, այլև ստեղծում են հուզականորեն մտերմիկ, զգացմունքներով լի հարաբերություններ: Երկրորդը՝ համացանցը՝ որպես յուրօրինակ սոցիալական միջավայր, անձին տալիս է որոշակի կարգավիճակ՝ այս կամ այն հարթակի անդամի կամ ներկայացուցչի, կամ, ինչպես ընդունված է ասել, օգտատիրոջ կարգավիճակ, որին էլ վերագրվում են որոշակի նորմեր ու կանոններ և դրա պահպանման պարտավորությունը՝ վիրտուալ համայնքում: Հաջորդը համացանցում սեփական կերպարը ստեղծելու հնարավորությունն է: Թե ինչպես կներկայանա անձը համացանցային ընկերներին, պոտենցիալ զուգընկերոջը և ինչ ակնկալիքներ կունենա ստեղծված հարաբերություններից, պայմանավորված է հետադարձ կապով, այսինքն՝ մարդկանց արձագանքը սոցցանցերում տեղադրած կենսագրական տվյալների, նկարների, անձնական կյանքի դրվագների վերաբերյալ այն ազդակներն են, որոնք վճռորոշ դեր ունեն այդ հարցում: Բացի վերը նշվածներից՝ վիրտուալ տիրույթը անխուսափելիորեն փոխում է անձի արժեքները, դիրքորոշումները, ինչպես նաև մոտեցումները ամուսնության, կյանքի ընկեր ընտրելու հարցում: Ի վերջո, տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ հարաբերությունների համար ի հայտ են գալիս նոր մարտահրավերներ, ինչպիսիք են սոցիալական ցանցերից կախվածությունը, անմիջական հաղորդակցության, առանց որևէ տեխնիկական միջոցի միջանձնային շփման բացակայությունը, ինչպես նաև հարաբերություններում տեխնոլոգիայի օգտագործման էթիկական ասպեկտների ընկալման բացակայությունը և այլն (Ասատրյան 2017, Պետրոսյան 2022, Дыжова 2021, Лисенкова, Мельникова 2017, Саешева 2021):

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական ցանցերում զուգընկերոջ ընտրության հիմնահարցի վերաբերյալ ուսումնասիրությունները հոգեբանական, սոցիալ-հոգեբանական առումով սակավ են, ոչ բազմակողմանի: Դրանց մի մասը երիտասարդների համացանցում զուգընկերոջ որոնումները քննարկում են համացանցի տարածվածության կամ սոցիալական ցանցերի ընձեռած հնարավորությունների տեսանկյունից, մյուս ուսումնասիրությունները առավելապես վերաբերում են սոցցանցերում ծանոթությունների, շփումների, զուգընկերոջ ընտրության մատչելիությանը, անձնային ռեսուրսների խնայողությանը, ինչպես նաև մի շարք ուսումնասիրություններ դուրս են բերում համացանցի միջոցով զուգընկերոջ ընտրության պայմանավորվածությունը անհատական առանձնահատկություններով, անձի արժեհամակարգով և այլն:

Եմպիրիկ հետազոտություն

Մեր աշխատանքի նպատակն է ուսումնասիրել երիտասարդների սուբյեկտիվ դիրքորոշումներն ու դրանց իմաստային (սեմանտիկ) նշանակությունը համացանցային տիրույթում զուգընկերոջ որոնում իրականացնելու նկատմամբ: Այդ նպատակը իրագործելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1. դուրս բերել երիտասարդների վերաբերմունքը համացանցի նկատմամբ,


2. գտնել նրանց շփման առանձնահատկությունները համացանցում զուգընկերոջ որոնման գործընթացում,
3. բացահայտել սոցցանցերում երիտասարդների կողմից զուգընկերոջ որոնման նկատմամբ դիրքորոշումների սեմանտիկ, իմաստային նշանակությունը:

Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդներն են.

1. «Անավարտ նախադասություններ» մեթոդ (Жичкина, Щепилина):
2. «Սեմանտիկ դիֆֆերենցիալ» (Серкин 2008):
3. Համացանցում շփման առանձնահատկությունների բացահայտման հարցաթերթիկ:

Հետազոտությունը մասնակցել են 60 չամուսնացած երիտասարդներ՝ 22-30 տարեկան:

Նախ ներկայացնենք երիտասարդների վերաբերմունքը համացանցի նկատմամբ առհասարակ, և անձի ժամանակային ու տարածական ընկալումները՝ համացանցում:




Նկար 1. Երիտասարդների ընկալումները համացանցի նկատմամբ, տոկոսային ցուցանիշներ (n=60)

Ինչպես երևում է ստացված արդյունքների վերլուծությունից՝ 1. Համացանցի մասին ընկալումները որպես դրական արձանագրել է հետազոտվող մասնակիցների մեծամասնությունը՝ 60%-ը: Սա նշանակում է, որ համացանցը հարցվածների մեծամասնության համար օգտակար է, հուզականորեն հաճելի և հետաքրքիր: Այն օգտագործվում է ընկերների և այլ մարդկանց հետ շփման և հաղորդակցման համար, ինչպես նաև համացանցից տեղեկատվություն ստանալու համար: Հետազոտվող մասնակիցներից 30%-ի ընկալումները բացասական են: Զանի որ ըստ նրանց՝ համացանցն առաջացնում է կախվածություն, շեղում է մարդկանց ուշադրությունը կարևոր գործերից: Ինչպես նաև այն կեղծիք է պարունակում, այսինքն՝ քիչ է հավանականությունը, որ այնտեղ առկա ինֆորմացիան հավաստի է: Եվ միայն 10%-ն է համացանցին վերաբերում չեզոք: 2. Ժամանակի ընկալման սանդղակի տվյալների վերլուծության համաձայն՝ հետազոտվող մասնակիցների 60%-ի համար համացանցում անցկացված ժամանակը ունի դրական ազդեցություն, այն հնարավորություն է տալիս ստանալու և ապրելու դրական հույզեր, նպաստում է նոր և հաճելի մարդկանց հետ ծանոթությունների, օգնում է մարդկանց զբաղվելու աշխատանքով, ինչպես նաև ֆիզիկապես հանգստանալ, հոգեպես լիցքաթափվել: Հետազոտվողների որոշ մասը՝ 15%-ը, նշել է, որ համացանցում ժամանակն ունի բացասական ազդեցություն, քանի որ նրանց խանգարում է լիարժեք կազմակերպել առօրյան, կտրում է մարդուն իրականությունից, առաջացնում է հոգնածություն, և ժամանակը, որը մարդը տրամադրում է համացանցին, անիմաստ է, նույնիսկ՝

կորսված: Իսկ հետազոտվողների մյուս մասը՝ 25%-ը, ունի չեզոք վերաբերմունք համացանցում անցկացրած ժամանակի նկատմամբ: Ըստ որում, սեփական տրամադրության փոփոխությունները, ըստ նրանց, կախված են այնտեղ առկա ինֆորմացիայից և մարդկանց վարքային դրսևորումներից:

Համացանցային տարածության նկատմամբ հարցվողներից 50%-ի ընկալումները դրական են, նրանք համացանցը համարում են նպաստավոր միջավայր անձի ինքնակրթման, ինքնազարգացման համար, ինչպես նաև նոր ծանոթներ ու ընկերներ ձեռք բերելու, հիմնը պահպանելու համար: Ըստ նրանց՝ մարդը այդ տարածության մեջ ազատ է, անկաշկանդ և գրեթե միշտ ապրում է բավարարվածության զգացում: Հետազոտվողների մյուս մասը՝ 40%-ը, համացանցային տիրույթը ընկալում է որպես բացասական երևույթ: Նրանց համար համացանցային տարածքը անհետաքրքիր է, անիմաստ ու անհրապույր: Իսկ հետազոտվողների մյուս մասը՝ 10%, տվել է չեզոք պատասխան, ինչը նշանակում է, որ համացանցային տարածքը նրանց համար ընկալվում է որպես սովորական երևույթ, որտեղ լինելն այդքան էլ պարտադիր պայման չէ:

Այժմ ներկայացնենք համացանցի նկատմամբ դիրքորոշումների ուսումնասիրման արդյունքում ստացած տվյալները՝ կրկին տոկոսային ցուցանիշներով՝ ըստ հետևյալ սանդղակների՝ համացանցի դրական հատկությունները, համացանցի բացասական հատկությունները, համացանցում գտնվող մարդիկ, տեղեկությունը համացանցում, ես համացանցում:



Նկար 2. Երիտասարդների ընկալումները համացանցի նկատմամբ, տոկոսային ցուցանիշները (n=60)

Առաջին սանդղակը թույլ է տալիս դուրս բերելու անձի վերաբերմունքը համացանցի դրական հատկությունների նկատմամբ: Ըստ դրա՝ հետազոտվողների մեծամասնությունը՝ 70%-ը, նշել է, որ համացանցը իր բնույթով դրական է, օգնում է կարևոր տեղեկություններ գտնել և լինել տեղեկացված: Նպաստում է հետաքրքիր, կարևոր, հաճելի շփումներ իրականացնել և ձեռք բերել նոր ծանոթություններ:

Հարցվողների 25%-ը ունի բացասական վերաբերմունք, իսկ 5%-ը՝ չեզոք: Հաջորդ սանդղակը համացանցը դիտարկում է, որպես բացասական հատկություններ ունեցող երևույթ, ըստ որի՝ մասնակիցների 50%-ը, որպես բացասական հատկություն, դիտարկում է համացանցում առկա պարբերաբար գովազդները, ապատեղեկատվությունը, որոշակի տեխնիկական խնդիրները և այլն: Հետազոտման մասնակիցների 30%-ի համար համացանցում խանգարող գործոն չկա. այն բացասական հատկանիշներ չունի: Իսկ հարցվողների 20%-ի պատասխանը՝ կախված անձի հոգեվիճակից, ըստ որի՝ երբ անձը հանգիստ է, չունի լարվածություն՝ համացանցում ոչ մի խանգարող գործոն չկա, իսկ հոգևածություն կամ հոգեպես անհանգիստ կամ հուզականորեն լարված վիճակում՝ ցանկացած գործոն նրա կողմից ընկալվում է որպես բացասական: «Համացանցում գտնվող մարդիկ»՝ սանդղակի արդյունքների վերլուծության համաձայն հարցվողների 60%-ը, տվել է դրական պատասխան՝ համացանցում մարդիկ ինքնավստահ են, հավասարակշռված, մոտիվացված և հետաքրքիր, ինչպես նաև հաճելիորեն հաղորդակցվում են միմյանց հետ, կիսվում են իրենց առօրյայով, կենսափորձով և այլն: Իսկ 30%-ի կարծիքով՝ համացանցում մարդիկ առավելապես քողարկված, թաքնված են և տպավորություն է ստեղծվում, որ նրանք կեղծ են, ոչ իրական: Ըստ նրանց՝ համացանցում գտնվող մարդիկ հուզականորեն տխուր են, ավելի հաճախ՝ անզգացմունք, «ռոբոտացված»: Հետազոտման մասնակիցների 10%-ը համացանցում գտնվող մարդկանց համարում է սովորական, ուղղակի օտար և ունի չեզոք վերաբերմունք նրանց նկատմամբ: Ինչ վերաբերում է «ինֆորմացիան համացանցում» սանդղակի տվյալներին, ապա հետազոտվողների գերակշռող մասը՝ 85%-ը, համացանցային տեղեկույթը համարում է ճշգրիտ, հավաստի, անհրաժեշտ և այն դիտարկում, որպես գիտելիքի աղբյուր: Ըստ նրանց՝ համացանցից կարելի է ստանալ ոչ միայն տեղեկություն այս կամ այն իրադարձության մասին, այլև գիտական, բժշկական, քաղաքական, սոցիալական և մարդու կյանքի գրեթե բոլոր ոլորտներին վերաբերող ցանկացած տեղեկություն: Նրանց համար տեղեկատվության հիմնական աղբյուրը համացանցն է: Հետազոտման մասնակիցների 5%-ի վերաբերմունքը չեզոք է, իսկ 10%-ը չի վստահում համացանցային ինֆորմացիային: Նրանք կարծում են, որ համացանցում ինֆորմացիայի տարածման բաց և ազատ լինելու փաստը մեծացնում է կեղծիքի տարածումը: Հաջորդիվ կներկայացնենք վերջին՝ «ես համացանցում» սանդղակի արդյունքների վերլուծությունը, ըստ որի՝ հետազոտման մասնակիցների 40%-ը պատասխանել է, որ իրեն լավ է զգում համացանցում, երջանիկ է, ազատ, հանգստանում է համացանցում, թոթափում առօրյա հոգսերից առաջացած հոգևածության բեռը: Նրանք ուրախ են, որ կարողանում են շփվել ընկերների, հարազատների հետ անկախ ժամանակից և տարածությունից: Կարևոր են համարում մարդու համար նոր ընկերներ ձեռք բերելու հնարավորությունը: Նրանց համար վիրտուալ տիրույթում գտնվելը նախընտրելի է, նույնիսկ առաջնահերթություն է իրական սոցիումից: 20%-ը հարցվողների տվել է բացասական պատասխան: Սա նշանակում է, որ համացանցում անձը հուզականորեն ագրեսիվ է, իրեն օտար է զգում վիրտուալ տիրույթում, ճնշված է, հոգևած, ձգտում է թաքնվել, քողարկվել: Ես համացանցում սանդղակի վերաբերյալ չեզոք պատասխան են տվել հետազոտման մասնակիցների 40%-ը, նրանց միևնույնն է, թե համացանցում ինչ կարգավիճակ կունենան:

Այժմ ներկայացնենք շփման առանձնահատկությունների արդյունքների վերլուծության մեկնաբանությունը՝ ըստ մեր կողմից կազմված հարցաթերթի: Արդյոք մեր ընտրակազմում ընդգրկված երիտասարդները լիարժեք օգտագործում են համացանցի ընձեռած հնարավորությունները ծանոթությունների առումով, թե՞ ոչ:


Աղյուսակ. 1 Համացանցում անձի շփման և զուգընկերոջ որոնման առանձնահատկությունները (տոկոսային ցուցանիշներ), (n=60)

	Հարցեր	Այո	Ոչ
1.	Պատասխանում եմ անձանոթների հաղորդագրություններին կամ նամակներին:	29.3	70.7
2.	Ձեզ դո՞ւր է գալիս, որ համացանցը հնարավորություն է տալիս հանդիպել ամենատարբեր մարդկանց:	74.1	25.9
3.	Հավատո՞ւմ եք սոցցանցերում ծանոթությունների դրական վերջաբանին:	53.4	46.6
4.	Համարո՞ւմ եք, որ վիրտուալ շփումը կարող է հանգեցնել սիրային (ռոմանտիկ, ինտիմ) հարաբերությունների:	58.6	41.4
5.	Ձեզ պատահե՞լ են մարդիկ, կամ լսե՞լ եք նրանց մասին, ովքեր ամուսնացել են սոցցանցերով ծանոթության միջոցով:	60.3	39.7
6.	Փնտրո՞ւմ եք սոցցանցերում զուգընկեր, կյանքի կողակից:	53.3	46.7

Այսպես, «Պատասխանում եմ անձանոթների հաղորդագրություններին» հարցին, հետազոտվող մասնակիցների ընդամենը 29.3%-ն է տվել դրական պատասխան՝ համարելով, որ սոցցանցերում անձանոթ մարդկանց հաղորդագրություններին արձագանքելը քաղաքակիրթ է և ոչ մի խնդիր չի կարող առաջացնել, իսկ մեծամասնությունը՝ 70.7%-ը, ցուցաբերում է զգուշավորություն օտար, անձանոթ մարդկանց հետ նամակագրություն հաստատելիս: Հետաքրքիր է, որ վերաբերմունքի տեսանկյունից հետազոտվողների մեծ մասին՝ 74.1%-ին, դուր է գալիս համացանցում ամենատարբեր մարդկանց առկայությունը, անգամ հաճելի են նրանց հետ «համացանցային հանդիպումները»՝ ժամանակից և տարածությունից անկախ: Նույնիսկ դրական են արձագանքում ծանոթությունների շրջանակը ընդլայնելուն, սակայն վերապահումներով են մոտենում հաղորդագրություններին պատասխանելու փաստին: Մեր ընտրանքի 53.4% երիտասարդները հավատում են, որ սոցցանցերում ծանոթությունները կարող են ունենալ դրական վերջաբան: Ըստ նրանց՝ համացանցում գտնվող մարդկանց կարելի է վստահել, շփվել, մտերմանալ, ձևավորել ընդհանուր հետաքրքրությունների շրջանակ, նաև ծավալել համատեղ գործունեություն: Հետազոտվող մասնակիցների 58.6%-ը դրական է պատասխանել այն հարցին, որը վերաբերում է սիրային հարաբերությունների ձևավորման հնարավորությանը՝ վիրտուալ շփման ճանապարհով: Նրանք հավատում են, որ համացանցում շփումը կարող է հուզական առումով վերածվել առավել մտերմիկ, ռոմանտիկ, սիրային հարաբերությունների: Ավելին՝ հարցվողների 60.3%-ը փաստում է այնպիսի դեպքերի գոյությունը, որտեղ համացանցային ծանոթություններն ու շփումները ավարտվել են ամուսնույթյամբ:

Այժմ անդրադառնանք վերջին՝ «Փնտրո՞ւմ եք սոցցանցերում զուգընկերներ» հարցի պատասխանների վերլուծությանը: Հետազոտվող մասնակիցների 53.3%-ը տվել է դրական պատասխան: Սա նշանակում է, որ նրանք դիտարկում են համացանցը որպես սիրային հարաբերություններ կառուցելու, զուգընկեր, կյանքի կողակից գտնելու հարմարավետ միջավայր: Իսկ հարցվածների 46.7%-ը տվել է բացասական պատասխան, քանի որ համացանցում զուգընկերների որոնումը համարում է անօգուտ ու անիմաստ և զուգնկերոջ որոնման վարքային դրսևորումներ համացանցում չի իրականացնում:

Թե ինչպիսին են երիտասարդների դիրքորոշումները համացանցի, որպես ամուսնական զուգընկեր որոնելու կամ գտնելու միջավայրի նկատմամբ, կբացահայտենք՝ վերլուծելով իմաստային դիֆերենցիալ արդյունքները:



Նկար 3. Սուբյեկտիվ ընկալումների իմաստային դրսևորումների տոկոսային ցուցանիշներ (n=60)

Հավելում՝ 1_ վատ-լավ, 2_ տիպի-հաճելի, 3_ անհրապույր-գրավիչ, 4_ ավելորդ-պահանջված, 5_ անօգուտ-օգտակար, 6_ անցանկալի-ցանկալի, 7_ անկարևոր-կարևոր, 8_ ոչ էական-էական, 9_ ոչ իրական-իրական, 10_ թույլ-ուժեղ:

Ինչպես երևում է նկար 3-ում, համացանցում զուգընկեր գտնելու հարցի նկատմամբ երիտասարդ հարցվողների գերակշռող մասը ունի դրական վերաբերմունք: Նրանց սուբյեկտիվ ընկալումներում համացանցում ընտրություն կատարելու երևույթը գնահատվում է որպես «լավ» և «հաճելի» (յուրաքանչյուրը՝ 80%): Ուժի տեսանկյունից գերակշռում են «էական» և «օգտակար» իմաստային մեկնաբանությունները (յուրաքանչյուրը՝ 85%), իսկ ակտիվության տեսանկյունից համացանցում զուգընկեր որոնելու և ընտրելու գործընթացը դիտվում է, որպես «ցանկալի» ու «կարևոր» գործողություն (համապատասխանաբար՝ 70% և 65%): Այսպիսով՝ մեր ընտրանքում ընդգրկված երիտասարդների դիրքորոշումները, սուբյեկտիվ ընկալումները համացանցային տիրույթի՝ որպես զուգընկերոջ որոնման կամ ընտրության միջոցի վերաբերյալ, ստանում են էական ու կարևոր, օգտակար ու ցանկալի երևույթի իմաստ ու նշանակություն, իսկ հուզական առումով՝ երիտասարդների համար ամուսնությունը համացանցի օգնությամբ դառնում է հաճելի ու գրավիչ:

Ամփոփում և եզրակացություն

Այսպիսով՝ մեր կողմից իրականացրած հետազոտության տվյալների արդյունքները կամփոփենք Պիրսոնի գծային կոռելյացիոն վերլուծությամբ.

Աղյուսակ 4. Երիտասարդների համացանցի նկատմամբ վերաբերմունքի, համացանցի միջոցով զուգընկերոջ ընտրության արդյունքների համահարաբերակցումը նրանց սուբյեկտիվ ընկալումների իմաստային նշանակության հետ

<u>Վերաբերմունքը համացանցի նկատմամբ</u>	<u>Անձնային դիրքորոշումը սոցցանցերում զուգընկերոջ որոնման սուբյեկտիվ ընկալումների իմաստային նշանակությունը</u>
Համացանցի մասին ընկալումները	0,432
Ժամանակի ընկալում	0,412

Համացանցի դրական հատկությունները	0,470
Համացանցի բացասական հատկությունները	-0,531
Համացանցում գտնվող մարդիկ	0,312
<u>Համացանցում անձի շփման և զուգընկերոջ որոնման առանձնահատկությունները</u>	<u>Անձնային դիրքորոշումը սոցցանցերում զուգընկերոջ որոնման սուբյեկտիվ ընկալումների իմաստային նշանակությունը</u>
Պատասխանում ենք անձանության հաղորդագրություններին	0,269
Հավատում ենք սոցցանցերում ծանոթությունների դրական վերջաբանին	0,324
Համարում եմ, որ վիրտուալ շփումը կարող է հագեցնել սիրային (ռոմանտիկ, ինտիմ) հարաբերությունների	0.438
Ձեզ պատահել է մարդիկ, կամ լսել եք նրանց մասին, ովքեր ամուսնացել են սոցցանցերով ծանոթության միջոցով	0.398
Փնտրում եք սոցցանցերում զուգընկեր, կյանքի կողակից	0.293

Հավելում. $n=60$ -համար, $p<0,05$ նշանակալիությամբ կոռելյացիոն թույլատրելի աղյուսակային գործակիցը՝ $r=0.254$

Կոռելյացիոն վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ այն երիտասարդները, որոնք ունեն դրական վերաբերմունք համացանցի ($r=0.470$) և այնտեղ գտնվող մարդկանց նկատմամբ ($r=0.312$), ազատ են համացանցային շփումներում և հեշտ են ծանոթանում այլոց հետ, ապա այդ երիտասարդները միտված են համացանցը օգտագործելու կյանքի ընկերոջ փնտրողների համար, քանի որ համացանցի միջոցով զուգընկեր գտնելը, ըստ իրենց պատկերացումների ու դիրքորոշումների իմաստային մեկնաբանման, ոչ միայն հաճելի ու գրավիչ գործընթաց է, այլև օգտակար է ու կարևոր: Բացի այդ՝ կոռելյացիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս՝ որքան էլ երիտասարդների համար զուգընկերոջ որոնումը համացանցում, նրա ընտրությունը սոցցանցերի միջոցով պահանջված ու ցանկալի է և ունի էական նշանակություն, այնուամենայնիվ, երիտասարդները ցուցաբերում են զգուշավորություն՝ անձանության հաղորդագրություններին ու նամակներին պատասխանելու հարցում ($r=0.269$): Բայց միևնույն ժամանակ հավատում են, որ ծանոթությունները կարող են ունենալ դրական վերջաբան ($r=0.324$), նրանց պատկերացումները համացանցային տիրույթում կողակից գտնելու վերաբերյալ դրական են ($r=0.293$) և կյանքում հանդիպած նմանատիպ երևույթները ($r=0.398$) ձևավորել են վիրտուալ շփումները սիրային հարաբերությունների վերաձելու մասին կայուն ու դրական դիրքորոշումներ ($r=0.438$):

Ընդհանրացնելով կարող ենք եզրակացնել, որ ժամանակակից աշխարհում սոցցանցերը դարձել են մարդու կյանքի մի մասը, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն լինելու տեղեկացված և հասանելի, այլև նպաստում են տվյալ պահին անձի ակտուալ պահանջմունքի բավարարմանը: Համացանցային միջավայրը ունի հնարավորությունների լայն շրջանակ թե՛ հաղորդակցման տեսանկյունից, թե՛ ցանկացած բնույթի տեղեկույթ գտնելու և ստանալու տեսանկյունից, թե՛ կյանքի որոշ իրադարձություններով ու հույզերով կիսվելու տեսանկյունից, ի վերջո, զուգընկերոջ, կյանքի ընկերոջ որոնման, ամուսնական կողակից ընտրելու տեսանկյունից:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան, Սամվել. «Տեխնոլոգիական կախվածությունը որպես հիմնախնդիր». «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (74), Երևան, մայիս 2017թ, էջ 128-136 <https://cyberleninka.ru/article/n/tehnologicheskaya-zavisimost-kak-problema/pdf>: Մուտք՝ 05.07.24:

2. Պետրոսյան, Դավիթ. «Անհատի ինքնության նոր որակները վիրտուալ իրականության մեջ («Ֆեյսբուքի» հայ օգտատերերի օրինակով)». *Բանբեր Երևանի պետական համալսարանի*, բանասիրություն, №1, Եր., 2022, էջ 76-82, [Մուտք՝ 25.07.24](#):

3. Дыжова, Анна. «Социальные сети в жизни современной молодежи». *Социологический анализ журнал Современная наука*, №6, 2021, с. 64-67, <https://cyberleninka.ru/article/n/sotsialnye-seti-v-zhizni-sovremennoy-molodezhi-sotsiologicheskii-analiz/viewer>. Досупно: 05.07.24.

4. Жичкина, Анастасия. Щепилина, Елена. *Методика «Незаконченные предложения»*. http://www.li.ru/interface/pda/?jid=2669031&pid=115109810&redirected=1&page=0&backurl=/users/redhead_queen/post115109810/. Досупно: 12.12.23.

5. Лисенкова, Анастасия. Мельникова, Алина. «Социальные сети как фактор активного влияния на формирование ценностей молодежи». *Российский гуманитарный журнал*. Том 6, №4, 2017, с. 322-328, <https://cyberleninka.ru/article/n/sotsialnye-seti-kak-faktor-aktivnogo-vliyaniya-na-formirovanie-tsennostey-molodezhi/viewer>. Досупно: 08.07.24.

6. Миронова, Юлия. «Альтернативная формаматримониального поведения: Интернет-знакомства». *Вестник Самарского муниципального института управления*, № 2, Россия, 2016, стр. 157-164, https://www.imi-samara.ru/wp-content/uploads/2017/03/19_Mironova_157-164.pdf. Досупно: 09.07.24.

7. Пацкань, Иван. «Психологические особенности виртуального общения». *Збірник наукових праць К-ПНУ імені Івана Огієнка, Проблеми сучасної психології / Інституту психології імені Г.С.Костюка, НАПН України* 2014, Випуск 23, с. 542-552.

8. Пупкова, Юлия. Чердакова, Елена. «Онлайн-знакомства как социокультурный феномен Научные труды». *КубГТУ*, No 8, Краснодар, 2018, стр. 152-162, <https://ntk.kubstu.ru/data/mc/0056/2299.pdf>. Досупно: 09.07.24.

9. Рейнгольд, Говард. *Умная толпа: Новая социальная революция*. Фаир-пресс, М., 2006, стр. 416.

10. Рыльская, Елена. Погорелов, Дмитрий. «Идентичность личности в виртуальном пространстве социальных сетей и реальная идентичность: сравнительные характеристики». *Ярославский педагогический вестник*, No 1 (118), Ярославль, 2021, с.105-113, <https://cyberleninka.ru/article/n/identichnost-lichnosti-v-virtualnom-prostranstve-sotsialnyh-setey-i-realnaya-identichnost-sravnitelnye-harakteristiki/viewer>. Досупно: 13.07.24.

11. Саушева, Виктория. «Психологические проблемы выбора брачного партнера в цифровом обществ». *Научные труды московского гуманитарного университета*, № 2, М., 2021, стр. 10-16, <https://cyberleninka.ru/article/n/psihologicheskie-problemy-vybora-brachnogo-partnera-v-tsifrovom-obschestve/viewer>. Досупно: 24.02.23.

12. Серкин, Владимир. *Методы психологии субъективной семантики и психосемантики*. Издательство «ПЧЕЛА», Москва 2008, стр. 382.

13. Mackereth, Mathew. "Anderson, James. Computers, Video Games, and Literacy: What do Girls Think?". *Australian Journal of Language and Literacy* 2000, 23(3), p. 184–195.

WORKS CITED

1. Asatryan, Samvel. *Texnologikan kaxvac'ut'yuny' vorpes himnaxndir «21-rd DAR» t'iv 4 (74)*, Erevan. [Technological Dependence as a Problem "21st CENTURY" No. 4

- (74), Yerevan] 2017, p.128-136 <https://cyberleninka.ru/article/n/tehnologicheskaya-zavisimost-kak-problema/pdf> (05.07.24, 22:40) (In Armenian)
6. Qardaku Nevila Guerra, *The Impact of Charismatic (Inspirational) Teachers in Building Positive Relationships with Their Students*, 2019, pp. 7-12, https://revistia.com/files/articles/ejms_v4_i3_19/Qardaku.pdf.
7. Yun-Chen Huang and Shu-Hui Lin, "Assessment of Charisma as a Factor in Effective Teaching", *Educational Technology & Society*, 2014, pp. 284-295, <https://www.jstor.org/stable/jeductechsoci.17.2.284>.

ՈՒՍՈՒՑՉԻ ԽԱՐԻԶՄԱՆ ԵՎ ՆԵՐԶՆՉԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐ

ՍՈՍԻ ԳԱՐՕՂԱՆՅԱՆ

Գալուստյան-Նուբարյան ազգային վարժարանի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի,
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի
կիրառական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ,
ք. Կահիրե, Եգիպտոս

Այս հոդվածում ուսումնասիրվում է ներշնչանքը, քննարկվում են գիտականների տարբեր տեսակետները: Մյուս կողմից՝ ուսումնասիրվում են ներշնչվողականության օրենքները. թե ինչպես անհատի ներշնչվողականությունը տարբերվում է՝ կախված նրա տարիքից, սեռից, կենսապայմաններից, ֆիզիկական վիճակից և այլն: Այն նաև քննարկում է խարիզմայի կարևորությունը՝ որպես ուսուցման և աշակերտի ներշնչման կարևոր գործոն, և թե ինչպես է խարիզմատիկ ուսուցիչը ստեղծում արդյունավետ դասարան, ներառում ուսանողներին սովորելու գործընթացին և օգնում նրանց հասնելու իրենց նպատակներին:

Սույն հոդվածը հիմնականում ուսումնասիրում է ուսանողների դժվարությունը, երբ նրանք մոտենում են դեռահասության տարիքին: Այդ տարիքում նրանք դժվարանում են ներշնչվել, ինչը բարդացնում է գիտելիք ձեռք բերելու գործընթացը:

Մեր նպատակն է հասնելու համար օգտագործել ենք թեստային մեթոդը՝ հետազոտողի ներշնչման մակարդակը ուսումնասիրելու համար: Հիմնական նպատակն է քննարկել, թե արդյոք ուսանողները ներշնչվող են:

Արդյունքում պարզեցինք, որ ուսուցչի խարիզման և ներշնչանքը կարևոր գործոններ են ուսումնական գործընթացում:

Երրորդ հազարամյակի աշակերտին ներշնչելու և նրանց ուսումնառության ընթացքը բարելավելու համար անհրաժեշտ է խարիզմատիկ և ներշնչող ուսուցիչ:

Հիմնաբառեր՝ ներշնչանք, ներշնչողող անձ, ներշնչող ուսուցիչ, ներշնչվողականություն, խարիզմա, խարիզմատիկ ուսուցիչ, ներշնչվողական:

ХАРИЗМА И ВООДУШЕВЛЕНИЕ УЧИТЕЛЯ КАК ВАЖНЫЕ ФАКТОРЫ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ

СОСИ КАРОГЛАНЯН

*учитель армянского языка и литературы
национальной гимназии Галустян-Нубарян,
аспирант кафедры прикладной психологии Армянского
государственного педагогического университета им. Х. Абовяна,
г. Каир, Египет*

В данной статье исследуется способность вдохновлять и вдохновляться (инспирация), обсуждаются различные точки зрения ученых; кроме того, изучаются законы инспирации, то, как способность личности воодушевляться варьируется в зависимости от ее возраста, пола, условий жизни, физического состояния и т. Д. В ней также обсуждается важность харизмы как значимого фактора в обучении и вдохновении учащихся, а также то, как харизматичный учитель создает успешный класс, мотивирует учащихся на обучение и помогает им достигать своих целей.

Внимание в данном исследовании сфокусировано в основном на трудностях, с которыми сталкиваются учащиеся по мере приближения их к подростковому возрасту, поскольку в этот период они испытывают трудности с мотивацией и воодушевлением, что усложняет процесс приобретения знаний.

Чтобы достичь нашей цели, мы использовали тестовый метод для изучения уровня возможности воодушевления исследуемого. Основная цель эксперимента – определить, как и в какой степени можно воодушевить и увлечь учащихся..

В результате исследования мы пришли к выводу о том, что харизма и воодушевление учителя играют важную роль в учебном процессе.

Чтобы воодушевлять и мотивировать учащегося третьего тысячелетия, нужен харизматичный и вдохновляющий учитель.

Ключевые слова: *воодушевление, воодушевляющая личность, воодушевляемый учащийся, воодушевляемость, харизма, харизматичный учитель.*

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԵՏԵՐՈՎ. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ***

ՀՏԴ 336.1

DOI: 10.52063/25792652-2024.3.22-195

ԼՈՒՍՅԱ ԳԱԼՈՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու,

ք. Գյումրի, Հայաստանի Հանրապետություն

lusya.galovan@gmail.com

ORCID: 0009-0007-3301-6673

Հոդվածի նպատակն է գնահատել Գյումրի համայնքի 2023 թ. տարեկան ֆինանսական պլանի կատարման վիճակը և բացահայտել առկա խնդիրները:

Հոդվածում առաջադրված խնդիրները հիմնականում վերաբերում են բյուջեի պլանային, ճշտված ցուցանիշների համեմատական վերլուծությանը, ինչպես նաև դրանց կատարողական ցուցանիշների գնահատմանը, ինչը հնարավորություն է տվել բացահայտելու առկա խնդիրները և դրանց հիման վրա եզրահանգումներ կատարելու:

Նշված վերլուծություններն ու գնահատումները իրականացնելու համար հիմնականում կիրառվել են վերլուծության և համեմատության մեթոդները:

Այսպիսով՝ ուսումնասիրությունը բացահայտում է՝ թե՛ եկամտային և թե՛ ծախսային հոդվածների գծով կան էական թերակատարումներ, ցուցանիշի փաստացի շեղումներ ունեցող բազմաթիվ ծրագրեր: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ որոշ դեպքերում շեղման չափը ցուցանիշի թիրախային արժեքի գերակշիռ մասն է:

Հետևաբար, լրջագույն անելիքներ կան թե՛ զարգացման ծրագրերում խնդիրների, նպատակների և թիրախների սահմանման և գնահատման ուղղությամբ, թե՛ դրանց կատարման ապահովման ուղղությամբ: Այս առումով հատկապես կարևորվում են բյուջետային պլանավորման հիմնավորված, փաստարկված իրականացումը, մասնավորապես ցուցանիշների, դրանց նպատակային արժեքների սահմանման առումով, քանի որ կատարողականի նույնիսկ բարձր ցուցանիշները հաճախ դեռևս չեն երաշխավորում սահմանված նպատակների ձեռքբերում և խնդիրների լուծում, եթե ճշգրիտ սահմանված չեն դրանց հաշվարկման և գնահատման ցուցանիշները: Այս խնդիրների արձանագրումը և դրանց կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը չափազանց կարևոր է առավել գրագետ, նպատակային և արդյունքային պլանավորում և գնահատում իրականացնելու տեսանկյունից:

* Հոդվածը ներկայացվել է 22.07.2024թ., գրախոսվել՝ 15.09.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

Հիմաբառեր՝ համայնքային բյուջե, տարեկան աշխատանքային պլան, համայնքային բյուջեի եկամուտներ, համայնքային բյուջեի ծախսեր, համայնքային բյուջեի պակասուրդ, համայնքային բյուջեի ավելցուկ, բյուջեի կատարողական:

Ներածություն

Համայնքի զարգացման ծրագրերը, ֆինանսական պլանները և դրանց կատարման վիճակը մշտադիտարկելի ու վերլուծելի չափազանց կարևոր են և արժեքավոր դրանցում առկա խնդիրներն ու բացթողումները ուշադրության կենտրոնում պահելու և հանրային վերահսկողություն իրականացնելու տեսանկյունից: Այս առումով առաջադրված թեման մշտապես արդիական է, քանի որ նմանատիպ վերլուծություններն ու գնահատումները թույլ են տալիս բացահայտելու առկա անհամապատասխանությունները, որոնք կարող են հետևանք լինել կամ ոչ ճշգրիտ պլանավորման, կամ աշխատանքի թերակատարման: Երկու դեպքում էլ պատկան մարմինները առավել մեծ ուշադրության և ջանքերի կարիք ունեն, ինչը պետք է ապահովել նաև նմանատիպ հետազոտությունների, ինչու ոչ, նաև հանրային քննարկումների ու «ճնշումների» արդյունքում:

Վերլուծություն

Առաջադրված խնդիրները համակողմանի քննարկելու և արդյունքները ներկայացնելու համար կարևոր է համայնքի բյուջետային ցուցանիշների տարեկան ճշտված պլանների և վերջիններիս կատարողականների գնահատումն ու վերլուծությունը: Այսպես, Գյումրիի համայնքի 2023 թ. բյուջեի ընդամենը եկամուտների տարեկան ճշտված պլանը շուրջ 6.588 մլրդ. Դրամ է, որից շուրջ 1.262-ը մլրդ. դրամը եղել են հարկերի և տուրքերի գծով մուտքերը, իսկ շուրջ 4.477 մլրդ. դրամը՝ պաշտոնական դրամաշնորհները, այլ եկամուտների գծով մուտքերի տարեկան ճշտված պլանը շուրջ 849 մլն. դրամ է: Համայնքի բյուջեի եկամտատեսակները և դրանց բաշխման տարեկան ճշտված պլաններն ու փաստացի մուտքերն ըստ ֆոնդային և վարչական բյուջեների ներկայացված են աղյուսակ 1-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024).

Աղյուսակ 1. («Հաշվետվություն համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23 թ.ժամանակահատվածի համար)», 2024 թ.)


	Եկամտատեսակները՝ ըստ տարեկան ճշտված պլանի, հզ. դրամ				Եկամտատեսակների գծով փաստացի մուտքերը, 2023 թ., հզ. դրամ			
	Ընդ. եկամ.	Այլ թվում՝			Ընդ. եկամ.	Այլ թվում՝		
		Հարկ. և տուրքեր	Պաշտոն. դրամաշն.	Այլ եկամ.		Հարկ. և տուրքեր	Պաշտոն. դրամաշն.	Այլ եկամ.
Ընդամենը տարեկան ճշտված պլան, 2023 թ., այդ թվում՝	6588356	1262045	4477047	849263	6432652	1238267	4380456	813928
Վարչական բյուջե	4674186	1262045	2589174	822966	4633665	1238267	2588469	806928
Ֆոնդային բյուջե	2261054	-	1887873	373181	1948986		1791986	157000

Հետաքրքրական է հատկապես 2023 թ. ճշտված բյուջեի եկամուտների կատարողականի ցուցանիշները. Ընդամենը եկամուտների կատարողականը կազմել է 97.6%, հարկերի և տուրքերի գծով՝ 98.1%, պաշտոնական դրամաշնորհների գծով՝ 97.8%, իսկ այլ եկամուտների գծով մուտքերի կատարողականը կազմել է 95.8%:

Բյուջեի փաստացի մուտքերի համեմատականը 2022-2023 թթ. համար և 2023 թ. ճշտված և 2022 թ. փաստացի մուտքերի համեմատականը ներկայացված են

գծապատկեր 1-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024).

Գծապատկեր 1. («Հաշվետվություն համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23թ.ժամանակահատվածի համար)», 2024թ.)



Ինչ վերաբերում է համայնքի բյուջեի ծախսերի վերլուծությունը, ապա այն կատարվել է և՛ գործառնական և՛ տնտեսագիտական դասակարգման տեսանկյուններից: 2023 թ. բյուջեի փաստացի ծախսերն և տարեկան ճշտված պլանները ըստ գործառնական դասակարգման ներկայացված են աղյուսակ 2-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024): Համեմատության համար նշենք, որ ընդամենը փաստացի ծախսերը 2022 թ. կազմել են շուրջ 5.544 մլրդ. դրամ:

Աղյուսակ 2. («Հաշվետվություն համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23 թ. ժամանակահատվածի համար)», 2024 թ.)

	Գործառնական դասակարգման բյուջետային ծախսերի տարեկան ճշտված պլանը, 2023թ., հզ. դրամ			Գործառնական դասակարգման բյուջետային փաստացի ծախսերը, 2023թ., հզ. դրամ		
	Ընդամենը	Այդ թվում՝		Ընդամենը	Այդ թվում՝	
		Վարչական	Ֆոնդային		Վարչական	Ֆոնդային
Ընդհ. բն. հանր. ծառ.	938027	882078	55949	882136358	856789758	25346600
Պաշտպ.	300000	300000	0	260000	260000	0
Հաս. կարգ, անվտ., դատ. գործ.	0	0	0	0	0	0
Տնտես. հար.	827423	165245	662178	1707096	161066	1546029
Շրջ. միջ. պաշտ.	870950	773805	97145	776800	771504	5296
Բնակ. շին. և կոմ. ծառ.	2285447	343587	1941860	1134808	335770	799038
Առողջապ.	0	0	0	0	0	0
Հանգիստ, մշակ. և կրոն	1402327	1391627	10700	1384208	1382038	2170
Կրթություն	796161	796161	0	756558	756558	0
Սոց. պաշտպ.	39477	39477	0	34047	34047	0
Հիմն. բաժ. չդասվ. պահ. ֆոնդ.	0	346884	0	0	150000	0


Ինչպես ներկայացված է աղյուսակում, փաստացի ծախսերի գծով առաջին եռյակում են տնտեսական հարաբերությունների, հանգստի, մշակույթի, կրոնի և

բնակարանային շինարարության ու կոմունալ ծառայությունների ուղղությամբ կատարված ծախսերը:

Հատկանշական է, որ 2023 թ. գործառնական դասակարգմամբ ճշտված բյուջեի ծախսերի կատարողականի գնահատումը ակնհայտ է դարձնում, որ կան էական թերակատարումներ:

Բյուջեի փաստացի ծախսերի համեմատականը 2022-2023 թթ. համար և 2023 թ. ճշտված և 2022 թ. փաստացի ծախսերի համեմատականը ներկայացված են գծագրատվեր 2-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024):

Գծագրատվեր 2. («Հաշվետվություն համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23թ.ժամանակահատվածի համար)», 2024 թ.)



Բյուջեի ծախսային մասի դիտարկումները ամբողջացնելու համար կարևոր է նաև այն ներկայացնել տնտեսագիտական դասակարգման տեսանկյունից: Այսպիսով, 2022 թ. փաստացի ընդամենը ծախսերը շուրջ 5.544 մլրդ. դրամ է, որից շուրջ 3.951 մլրդ. դրամը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, շուրջ 1.852 մլրդ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին:

Իսկ 2023 թ. արդեն տնտեսագիտական դասակարգման բյուջետային ծախսերի տարեկան ճշտված պլաններն և բյուջետային փաստացի ծախսերը ներկայացված են աղյուսակ 3-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024):


Աղյուսակ 3. («Հաշվետվություն համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23թ.ժամանակահատվածի համար)», 2024թ.)

	Տնտեսագիտական դասակարգման բյուջետային ծախսերի տարեկան ճշտված պլանը, 2023 թ., հզ. դրամ			Տնտեսագիտական դասակարգման բյուջետային փաստացի ծախսերը, 2023 թ., հզ. դրամ		
	Ընդամենը	Այդ թվում՝		Ընդամենը	Այդ թվում՝	
		Վարչական	Ֆոնդային		Վարչական	Ֆոնդային
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	7160115	4739166	2767833	6675916	4448035	2377880
Ընթացիկ ծախսեր	4392282	4739166	0	4298035	4448035	0
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	5221911		5221911	2839367		2839367
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-2454078		-2454078	-461486		-461486
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	7160115	4739166	2767833	6675916	4448035	2377880

Տնտեսագիտական դասակարգմամբ բյուջետային ծախսերի ճշտված բյուջեի կատարողականի ցուցանիշները ևս մտահոգիչ են, մասնավորապես՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի մասով՝ 54.4%: Վերջինս հիմնականում պայմանավորված է հիմնական միջոցների հողվածով նախատեսված ծախսերի թերակատարմամբ, հատկանշվում է շենքերի և շինությունների կառուցման ու կապիտալ նորոգման գծով արձանագրված թերակատարումը (համապատասխանաբար 24,1% և 57,2%), մեքենաների և սարքավորումների գծով թերակատարումը (33,5%), ինչպես նաև այլ հիմնական միջոցների գծով թերակատարումը (աճեցվող ակտիվների ուղղությամբ՝ 64,9% և նախագծահետազոտական ծախսերի ուղղությամբ՝ 75,6%):


Բյուջեի փաստացի ծախսերի համեմատականը 2022-2023 թթ. համար և 2023 թ. ճշտված և 2022 թ. փաստացի ծախսերի համեմատականը ըստ տնտեսագիտական դասակարգման ներկայացված են գծապատկեր 3-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024):

Գծապատկեր 3. («Հաշվետվություն համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23թ.ժամանակահատվածի համար)», 2024թ.)



Ամփոփելով անդրադառնանք նաև բյուջեի պակասուրդի կամ հավելուրդի ցուցանիշների վերլուծությանը. հավելուրդի/պակասուրդի տարեկան ճշտված պլանը շուրջ -571.7 մլն. դրամ է, իսկ փաստացի ցուցանիշը՝ շուրջ 243.2 մլն. դրամ: Տարեկան ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների բաշխումը ըստ վարչական և ֆոնդային բյուջեի ներկայացված են գծապատկեր 4-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024).

Գծապատկեր 4. («Հաշվետվություն համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի (Դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրների (02/01/23-31/12/23 թ.ժամանակահատվածի համար)», 2024 թ.)



Ինչ վերաբերում է տարեկան աշխատանքային պլանի ծրագրային վերլուծությանը և գնահատումներին, ապա պետք է փաստել, որ 2023 թ. տարեկան աշխատանքային պլանի դիտարկումների արդյունքում արձանագրվել են առանձին ծրագրերի գծով թե՛ դրական և թե՛ բացասական շեղումներ: Հատկանշական է, որ թիրախային արժեքը չապահովված հիմնական ծրագրերից են գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման, նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման, համայնքի մշակութային կյանքի կազմակերպման, համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության, համայնքում մարզական կյանքի կազմակերպման, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման, համայնքի բնակավայրերի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման, համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովման, պետության պաշտպանության իրականացմանն աջակցության ուղղություններով նախատեսված ծրագրերը: Այս հանգամանքը մտահոգիչ է, քանի որ համայնքային կարևոր նշանակություն և առաջնահերթություն ունեցող ուղղություններում նախատեսված արդյունքները չեն ապահովվել, ինչի արդյունքում արձանագրված խնդիրները մնում են դեռևս ամբողջովին չհաղթահարված և լրացուցիչ բեռ ու դժվարություններ ստեղծում հաջորդ տարիների համար:

Պակաս կարևոր չեն նաև դրական շեղում (թիրախային արժեքի գերազանցում) արձանագրած ուղղությունների դիտարկումները, քանի որ որոշ դեպքերում այդ գերազանցումը կարելի է բնութագրել որպես բացասական երևույթ՝ կապված, օրինակ, սխալ պլանավորման հետ: Հետաքրքրական է այն փաստը, որ գրեթե բոլոր

գերազանցումները արձանագրվել են հատկապես ծախսային գերակատարում ենթադրող հոդվածներում (մասնապարտեզների շենքերի ընթացիկ նորոգում, գույքի ձեռքբերում, համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ, այցելություններ այլ մշակութային օջախներ, համերգների, փառատոների կազմակերպում, մարզական միջոցառումների կազմակերպում, մասնապատանեկան մարզադպրոցների գործունեության ապահովում, մարզադպրոցների ջեռուցման և ջերմամեկուսացման համակարգերի ստեղծում, մարզադպրոցների շենքերի մասնակի նորոգում, մարզագույքի ձեռքբերում և այլն): Շինարարական, ջեռուցման և ջերմամեկուսացման աշխատանքների ուղղությամբ արձանագրված գերակատարումները հիմնականում մեկնաբանվել են աշխատանքների ընթացքում հավելյալ աշխատանքների առաջացման պատճառով, իսկ մարզամշակութային միջոցառումների թվի աճը՝ նոր համագործակցությունների, հրավերների թվի աճով: Իհարկե, այս հանգամանքը Էական դժվարություններ կառաջացնի բյուջեի կատարման տեսանկյունից արդեն իսկ պլանավորված բյուջեից լրացուցիչ միջոցներ հատկացնելու առումով: Բացի այդ, գերակատարում արձանագրած ուղղություններում բավական շատ էին նաև տարաբնույթ միջոցառումների կազմակերպման համար հավելյալ տրամադրված միջոցները, իսկ այդ միջոցառումների՝ համայնքի բնակչության համար առաջնահերթություն և կարևոր խնդիրներ լուծելու կարողություն ունենալու հանգամանքը, բնականաբար, խիստ կասկածելի է:

Եզրահանգումներ

Այսպիսով՝ իրականացված դիտարկումների արդյունքում բացահայտվեցին խնդիրներ, որոնք հետևանք են նախ՝ զարգացման առանձին ծրագրերում ձևակերպված նպատակի, խնդրի, անմիջական արդյունքների, ինչպես նաև ելակետային և թիրախային արժեքների որոշման և սահմանման անհամապատասխանությունների: Կան նաև նման անհամապատասխանություններ զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան աշխատանքային պլանի միջև:

Ինչ վերաբերում է մասնավորապես 2023 թ. բյուջեի, տարեկան աշխատանքային պլանի դիտարկումների արդյունքներին, ապա այն թույլ է տալիս եզրակացնելու, որ կան ցուցանիշի փաստացի շեղումներ ունեցող բազմաթիվ ծրագրեր, ընդ որում՝ հետաքրքրական է այն փաստը, որ որոշ դեպքերում շեղման չափը ցուցանիշի թիրախային արժեքի գերակշիռ մասն է: Մտահոգիչ է այն փաստը, որ 2023 թ. ևս թերակատարվել են նույնիսկ սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված որոշ ծրագրեր:

Այսպիսով՝ ամփոփելով փաստենք, որ դեռևս լրջագույն անելիքներ կան թե՛ զարգացման ծրագրերում խնդիրների, նպատակների և թիրախների սահմանման ուղղությամբ, թե՛ դրանց կատարման ապահովման ուղղությամբ: Այս առումով հատկապես կարևորվում են բոլոր ցուցանիշների, դրանց նպատակային արժեքների, վերջիններիս ապահովման համար անհրաժեշտ գործողությունների և ռեսուրսների առավել հիմնավորված, փաստարկված սահմանումը, քանի որ կատարողականի նույնիսկ բարձր ցուցանիշները դեռևս չեն երաշխավորում սահմանված նպատակների ձեռքբերում և խնդիրների լուծում, եթե ճշգրիտ սահմանված չեն դրանց հաշվարկման և գնահատման ցուցանիշները: Այս խնդիրների արձանագրումը և դրանց կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը չափազանց կարևոր է առավել գրագետ, նպատակային և արդյունքային պլանավորում և գնահատում իրականացնելու տեսանկյունից:

Պետք է փաստել նաև այն հանգամանքը, որ կատարողականների նման ցուցանիշներ գրանցվել են նույնիսկ տարեկան ճշտված բյուջեի գնահատումներ իրականացնելիս: Իհարկե, պատկերն առավել մտահոգիչ կլիներ, եթե

կատարողականի գնահատումն իրականացվեր ոչ թե ճշտված, այլ պլանավորված՝ սկզբնական ցուցանիշների նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾԿԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի. N40-Ա որոշում, «2023 թ. Գյումրի համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ» հաշվետվություն. 15 մարտ 2024:
2. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի. N39-Ա որոշում, «Հաշվետվություն համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23 թ. ժամանակահատվածի համար)». 15 մարտ 2024:
3. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի. N39-Ա որոշում «Հաշվետվություն համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23 թ. ժամանակահատվածի համար)». 15 մարտ 2024:
4. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի. N39-Ա որոշում «Հաշվետվություն համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի (Դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրների (02/01/23-31/12/23 թ. ժամանակահատվածի համար)». 15 մարտ 2024:
5. Բրոուս ընդ Ասատրյանս ՍՊԸ. «Բյուջեի կատարման հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն». 02 մարտ 2024 թ.:
6. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի. N 266-Ն որոշում, «Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջե». 26 դեկտ. 2022 թ.:

WORKS CITED

1. HH Shiraki marzi Gyumri hamaynqi avagani. N40-A oroshum. 15 mart 2024 «2023t'. Gyumri hamaynqi tarekan ashxatanqayin plani irakanacman veraberyal» hashvetvut'yun [Report on the Implementation of the Annual Work Plan of the Gyumri Community in 2023]. (in Armenian).
2. HH Shiraki marzi Gyumri hamaynqi avagani, N39-A oroshum 15 mart 2024 «Hashvetvut'yun hamaynqi byujei c'axseri katarman veraberyal (02/10/23-31/12/23t'. jhamanakahatvac'i hamar ["Report on the Execution of the Community Budget Expenses (for the period 02/10/23-31/12/23]. (in Armenian).
3. HH Shiraki marzi Gyumri hamaynqi avagani, N39-A oroshum 15 mart 2024 «Hashvetvut'yun hamaynqi byujei ekamutneri katarman veraberyal (02/10/23-31/12/23t'. jhamanakahatvac'i hamar) [Report on the Implementation of Income of the Municipal Budget (for the period 10.02.23-31.12.23]. (in Armenian).
4. HH Shiraki marzi Gyumri hamaynqi avagani, N39-A oroshum. 15 mart 2024 «Hashvetvut'yun hamaynqi byujei havelurdi o'gtagorc'man ughghut'yunneri kam pakasurdi (Deficiti) finansavorman aghbyurneri (02/01/23-31/12/23t'. jhamanakahatvac'i hamar). ["Report on the Directions of Using the Surplus of the Community Budget or Sources of Financing the Deficit (for the period 02/01/23-31/12/23]. (in Armenian).
5. Qrou y'nd Asatryans SPY', 02 mart 2024t'. Byujei katarman hashvetvut'yunner ev ankax auditori ezrakacut'yun. ["Budget Execution Reports and Independent Auditor's Report"]. (in Armenian).
6. HH Shiraki marzi Gyumri hamaynqi avagani, N266-N oroshum 26 dekt. 2022t'. «Shiraki marzi Gyumri hamaynqi 2023 t'vakani byuje»: ["2023 Budget of Gyumri Community of Shirak marz]. (in Armenian).

IN THE SPIRIT OF EVALUATING BUDGET IMPLEMENTATION OF GYUMRI COMMUNITY, 2023: FACTS AND CONCLUSIONS

LUSYA GALOYAN

*Armenian State University of Economics, Gyumri Branch,
Department of General Economics, General Economics and Natural Sciences,
Ph.D. in Economics, Associate Professor,
Gyumri, the Republic of Armenia*

The article aims at evaluating the annual financial state of Gyumri Community in 2023 and identifying existing issues. The issues identified in the article are primarily associated with the comparative analysis of the planned budgetary indicators and the evaluation of their implementation. This approach enabled the identification of existing challenges and the formulation of conclusions based on these findings.

The methods of analysis and comparison were employed primarily for the purpose of conducting the aforementioned study and evaluations.

Thus the study demonstrates that a considerable number of projects exhibit absolute deviations in the index. It is noteworthy that, in certain instances, the magnitude of the deviation constitutes a significant proportion of the target value of the index.

Consequently, there is a significant undertaking to be carried out in the identification and assessment of problems, goals and objectives within development projects, as well as in the assurance of their implementation. In this regard, it is particularly important to carry out budget planning in a sound, reasoned manner, particularly in terms of indicators and the determination of their target values, since even high-performance indicators often still do not guarantee the achievement of objectives and the solution of problems if the indicators for their calculation and evaluation are not precisely defined. Fixing these problems and taking the necessary steps to address them is extremely important in terms of more competent, targeted and efficient planning and evaluation.

Key words: *municipal budget, annual work plan, municipal budget revenues, municipal budget expenditures, municipal budget deficit, municipal budget surplus, budget execution.*

ОЦЕНКА ИСПОЛНЕНИЯ БЮДЖЕТА ОБЩИНЫ ГЮМРИ В 2023 ГОДУ: ФАКТЫ И ВЫВОДЫ

ЛЮСЯ ГАЛОЯН

*доцент кафедры общей экономики и естественных наук факультета общей
экономики Гюмрийского филиала Государственного экономического
университета Армении, кандидат экономических наук,
г. Гюмри, Республика Армения*

Цель статьи – оценить состояние выполнения годового финансового плана общины Гюмри на 2023 год и выявить существующие проблемы.

Вопросы, поднятые в статье, главным образом касаются сравнительного анализа плановых и уточненных показателей бюджета, а также оценки их фактического выполнения, что позволило выявить существующие проблемы и сделать выводы на их основе.

Для проведения указанных анализов и оценок в основном использовались методы анализа и сравнения.

Таким образом, исследование выявляет, что, как по доходным, так и по расходным статьям, имеются значительные недовыполнения, а также множество программ, по которым показатели фактически отклоняются от целевых значений. Интересен также тот факт, что в некоторых случаях степень отклонения составляет большую часть целевого значения.

Следовательно, существуют серьезные задачи как по определению и оценке проблем, целей и целевых показателей в программах развития, так и по обеспечению их выполнения. В этом отношении особенно важно обоснованное и аргументированное бюджетное планирование, особенно в части определения показателей и их целевых значений, поскольку даже высокие показатели выполнения зачастую не гарантируют достижения поставленных целей и решения задач, если показатели их расчета и оценки не определены точно. Фиксация этих проблем и принятие необходимых мер для их устранения чрезвычайно важны с точки зрения более грамотного, целенаправленного и результативного планирования и оценки.

Ключевые слова: *муниципальный бюджет, годовой рабочий план, доходы муниципального бюджета, расходы муниципального бюджета, дефицит бюджета, избыток бюджета, исполнение бюджета.*

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐԹԱԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԲԱԾԽՄԱՆ ՈՒ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ * 1

ՀՏԴ 338.1

DOI: 10.52063/25792652-2024.3.22-205

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության
կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների
ֆակուլտետի մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

a.margaryan.15@mail.ru

ORCID: 0000-0002-3692-3259

Հոդվածի նպատակն է քննարկել Հայաստանի Հանրապետությունում առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման հնարավոր սոցիալական հետևանքները ներառականության ապահովման տեսակետից և գնահատել բնակչության տարբեր շերտերի եկամուտների վրա դրանց հնարավոր ազդեցությունները:

Հետազոտության խնդիրներն առնչվում են առողջության համապարփակ ապահովագրության ներդրմամբ պայմանավորված ազդեցությունների, ինչպես քանակական, այնպես էլ որակական գնահատման հիմնահարցերի ուսումնասիրության ու այդ համատեքստում բարեփոխումների համապատասխան առաջարկությունների մշակմանը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, ինդուկտիվ և դեդուկտիվ, բաղդատական, սիմուլյացիոն վերլուծության մեթոդներ:

Ըստ հետազոտության արդյունքների՝ ԱՀԱ ներդրումը այն տեսքով, ինչպիսին առաջարկվում է շրջանառության մեջ դրված օրենքի նախագծով, էականորեն բարձրացնելու է բնակչության ցածր եկամտային խմբերում ընդգրկված հարկ վճարողների հարկային բեռը: Հիմնավորվել է, որ նախքան հարկումը եկամուտների անհավասարության Ձինիի գործակիցը 0.5724 է, հարկումից հետո՝ հաշվի առնելով միայն եկամտային հարկը՝ 0.5722, աշխատանքի հարկման մյուս ռեգրեսիվ բաղադրիչների՝ սոցիալական և դրոշմանիշային վճարների ազդեցություններով՝ 0.5911: Իսկ եթե հաշվի ենք առնում ապահովագրական դրույքաչափի ներդրման ազդեցությունը, ապա Ձինիի գործակիցը հարկումից հետո կլինի 0.6088, ինչը նշանակում է, որ զուտ այս համակարգի ներդրմամբ եկամուտների բաշխման տեսակետից անհավասարությունը երկրում էլ ավելի կխորանա: Հետազոտության շրջանակներում առաջարկվում է ներդնել բժշկական պարտադիր ապահովագրավճարի պրոգրեսիվ սանդղակ, ինչպես նաև բնակչության ցածր եկամուտ ունեցող խմբերի համար կիրառել պետական համավճարների որոշակիորեն տարբերակված մեխանիզմներ:

* Հոդվածը ներկայացվել է 12.09.2024թ., գրախոսվել՝ 29.09.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

1 Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՍ ԲԿ և ԳԿ 23AA-5B025 թեմայի ֆինանսավորման շրջանակներում:

Հիմնաբառեր՝ առողջության համապարփակ ապահովագրություն, գրպանից դուրս ծախսեր, անհավասարություն, դեցիլային խմբեր, Ջինսի գործակից, եկամտային հարկ, պրոգրեսիվ համակարգ, ռեգրեսիվ համակարգ:

Ներածություն

Հանրային առողջապահական բարեփոխումների արդյունավետությունը հատկապես զարգացող շուկաներ ունեցող ու համակարգային կերպափոխում իրականացնող երկրներում և հասարակություններում չափազանց կարևոր նշանակություն ունի: Մարդկային կապիտալի շարունակական զարգացումը և նրա վերածումը ստեղծարար ու բարձրարտադրողական գործոնի, ի վերջո, հանգեցնում է հասարակության բարեկեցության և կյանքի որակի բարձրացմանը: Այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգը բացառություն չէ: Խորհրդային միությունից ժառանգված համընդհանուր պետական սեփականության վրա հիմնված համակարգը տակավին 1990-2000-ական թվականներին գրեթե ամբողջությամբ ապապետականացվեց-մասնավորեցվեց, ինչը, սակայն, սկզբունքորեն չլուծեց բնակչության բոլոր շերտերի համար մատչելի, բարձրորակ բժշկական ծառայությունների ստեղծման ու մատուցման հիմնախնդիրը: Ու այս համատեքստում շարունակում է լոջորեն չլուծված հիմնախնդիր մնալ առողջապահական հաստատությունների/ծառայությունների արդյունավետ ֆինանսավորման հիմնախնդիրը:

Այն հարցը, թե ինչ աղբյուրների, ինչպիսի ռեսուրսների ու ֆինանսական սխեմաների վրա պետք է հիմնված լինի առողջապահական համակարգերի ֆինանսավորումը մշտապես թեժ բանավեճերի ու քննարկումների առարկա է: Այս իմաստով ՀՀ-ում առողջության համապարփակ ապահովագրության համակարգի (ԱՀԱԳ) ներդրման պետական ծրագրի ներդրման ու ֆինանսավորման հիմնախնդիրը այսօր շարունակում է քննարկումների օրակարգում լինել:

Սույն հոդվածում քննարկվում են ՀՀ-ում ԱՀԱԳ ներդրման ու գործողության հիմնախնդիրները՝ ներառականության, բնակչության բոլոր շերտերի եկամուտների ստացման ու բաշխման, ինչպես նաև բարեկեցության վրա ազդեցությունների համատեքստում:

Հետազոտության մեթոդաբանություն եվ տվյալների բազա

Սույն վերլուծության համար տեղեկատվական բազան ՊԵԿ տվյալների շտեմարանում 2023 թ. եկամտային հարկ վճարողների վերաբերյալ տարեկան անհատական վիճակագրությունն է, որը ձևավորվել է ամսական տեսքի, ստորատիֆիկացվել և խմբավորվել է ըստ 10 դեցիլային խմբերի և ներկայացվել է յուրաքանչյուր դեցիլային խմբում ընդգրկված սուբյեկտների ամսական միջին եկամուտը, եկամտային հարկը, ինչպես նաև հաշվարկվել են միջինում վճարված սոցիալական և դրոշմանիշային վճարների, ինչպես նաև հիփոթեքային վարկի փոխհատուցման նպատակով եկամտային հարկի հետվերադարձի մեծությունները: ՊԵԿ տվյալների բազայի հիման վրա հաշվարկված միջին եկամուտների մեծությունները ըստ դեցիլային խմբերի հիմնականում համադրելի են ՀՀ ՎԿ կողմից իրականացվող «Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության» (ՏՏԿԱՀ) շրջանակներում իրականացվող հարցումների արդյունքում ձևավորված մեծություններին, բացառությամբ վերին եկամտային խմբերի, որոնց պարագայում ՊԵԿ տվյալների բազան անհամեմատ ավելի հուսալի աղբյուր է, քանի որ ՎԿ հարցումների ընթացքում սույն եկամտային խմբերը հաճախ թերհայտարարագրում են իրենց եկամուտները՝ էականորեն նվազեցնելով տվյալ դեցիլային խմբերի եկամուտների վերաբերյալ տեղեկատվության հավաստիությունը:

(«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական զեկույց 2023թ.78): Չուգահեռաբար հողվածում իրականացվել է սիմուլյացիոն վերլուծություն, ինչը հնարավորություն է տվել գնահատելու ներկայումս հասանելի Առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) մասին օրենքի նախագծում («Առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) մասին» ՀՀ օրենքի նախագիծ 2023 թ.) գետեղված ֆինանսավորման մեխանիզմի ներդրման հնարավոր ազդեցությունները հարկման արդյունավետության և անհավասարության հաղթահարման համատեքստում:

Գրականության և աղբյուրների վերլուծություն

Տնտեսագիտական գրականության մեջ բավականին ընդարձակ անդրադարձ կա աշխարհի տարբեր երկրների առողջապահական համակարգերում գործող ֆինանսավորման մոդելներին ու մեխանիզմներին: Երկրների մի որոշակի խմբում (Ավստրալիա, Կանադա, Դանիա, Ֆինլանդիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Նոր Չեխիայի, Նորվեգիա, Պորտուգալիա, Իսպանիա, Շվեդիա, Միացյալ Թագավորություն) ավանդաբար գործում է առողջապահական ծառայությունների *ամբողջական պետական ֆինանսավորման մոդելը*, որը շատ հետազոտողների կողմից քննադատության է ենթարկվում: Հետազոտողների մի մասը (Chung 2017) այդ մոդելի առավելություններից նշում են (Բժշկական օգնության և սպասարկման ցածր սակագներ, եկամուտների ձևավորման աղբյուրների լայն շրջանակ (Chung 2017), կառավարման պարզ համակարգ, ֆինանսավորում պետական բյուջեի հարկային եկամուտների հաշվին (Wang 2012): Սակայն այս խնդրով զբաղվող տեսաբաններից շատերը ավելի շուտ ընդգծում են ԱՀԱ-ի պետական բյուջետային ֆինանսավորման թերությունները՝ հարկային բեռի ավելացումը բոլորի համար՝ անկախ նրանից, թե ինչ չափով է տվյալ քաղաքացին օգտվում առողջապահական ծառայություններից, առողջապահական ծածկույթի ֆինանսավորման մեծ կախվածությունը քաղաքական որոշումներից (Smith 2018), պետական բյուջեի եկամուտների մեծության փոփոխությունից, դրանցով պայմանավորված նաև՝ առողջապահական համակարգի անարդյունավետության մեծ հավանականությունը (Kutzin 2011): Այսպիսի համակարգում, որպես կանոն, առողջապահական ծառայությունների տեսակարար ֆինանսավորման ծավալը (Office for National statistics of UK 2019) և որակը, ինչպես նաև ժամանակային առումով հասանելիությունը (Smith 2018) զգալիորեն զիջում է շնչի հաշվով եկամտով համադրելի երկրների համանման ցուցանիշներին:


Միասնական պետական հիմնադրամի մոդելի հիման վրա առողջապահական ծառայությունների ֆինանսավորման համակարգը գործում է թերևս ավելի փոքր թվաքանակով երկրներում (Էստոնիա, Ֆրանսիա, Հունաստան, Հունգարիա, Կորեա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Լեհաստան, Սլովենիա, Թուրքիա և այլն): Հետազոտողները այս համակարգի առավելությունների շարքում նշում են դրան շահառուների աջակցության ավելի ուժեղ խթանների առկայությունը, ինչպես նաև ռիսկերի ավելի արդյունավետ բաշխումն ու կառավարումը: Սակայն այս համատեքստը անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է առողջապահական համակարգի ներառականության, բժշկական ծառայությունների որակի ու հասանելիության խնդիրները ամբողջապես լուծելու համար: Մասնավորապես, տվյալ խնդրով զբաղվող փորձագետները առկա թերությունների շարքում մատնանշում են եկամուտների ձևավորման աղբյուրների նեղ շրջանակը՝ հարկման համեմատաբար փոքր բազան այն երկրներում, որտեղ կա սովորաբար շրջանառությունների մեծ ծավալ կամ որտեղ հարկերից խուսափելը

տարածված երևույթ է (Hussey and Anderson 2003), տնտեսության ֆորմալ հատվածից դեպի ոչ ֆորմալ հատված աշխատողների հոսքի, ինչպես նաև իրական աշխատավարձը թաքցնելու մեծ հավանականությունը (Bitran 2014), գործազրկության մակարդակի աճի մեծ հավանականությունը (Wang 2012), բնակչության ծերացման զգալի ազդեցությունը (Cylus 2019) և այլն:

Համապարփակ ապահովագրական ծածկույթ ունեցող մոդելների շարքի երրորդ մոդելը բազմաթիվ մասնավոր ապահովագրական ընկերությունների և կազմակերպությունների միջոցով առողջապահական ծախսերի համակարգի ֆինանսավորումն է: Այդ երկրների շարքին են դասվում հիմնականում զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրները (Ավստրիա, Բելգիա, Դիլի, Զեմբիայի Հանրապետություն, Գերմանիա, Իսրայել, Ճապոնիա, Մեքսիկա, Նիդեռլանդներ, Սլովակիա, Շվեյցարիա և այլն): Հետազոտողները առողջապահական այս համակարգի առավելությունների մեջ հատկապես ընդգծում են ապահովագրական ընկերությունների մրցակցության առկայությունը և դրա հետևանքով ծառայությունների զգալիորեն բարձր որակը, բազմազանությունը, տեխնոլոգիական նոր մոտեցումների ու նորամուծությունների կիրառությունը (World Bank Group 2022): Բացի դա՝ այս համակարգի առավելությունների շարքին հետազոտողները ավելացնում են ապահովագրական ընկերությունների կողմից ռիսկայնության տարբեր աստիճան ունեցող ապահովագրիկների հարուցած ռիսկերի մեղմումը՝ պետության կողմից հատուցումների և համալճարումների մեխանիզմների միջոցով (Jeurissen and Maarse 2021): Այս համակարգի դեպքում տեսաբանները նաև առանձնացնում են դրա խոցելի կողմերը, որոնք կապված են հատկապես շատ դեպքերում ռիսկերի բարձր մակարդակի առկայության, առողջապահական ծառայությունների թանկության, բնակչության որոշակի խմբի համար առողջապահական ծառայությունների փաթեթների անհասանելիության և այլ հանգամանքների հետ (De Vries et al. 2020):

Վերլուծություն և արդյունքներ


Առողջության համապարփակ ապահովագրության ներդրման գաղափարը, բնականաբար, ածանցվում է Հայաստանում առողջապահության ոլորտում առկա իրողություններից: Ասվածը փաստում է շուրջ 200-ից ավելի երկրների պարագայում բնակչության սեփական միջոցների հաշվին՝ այսպես կոչված «գրպանից դուրս կատարված» առողջապահական ծախսերի՝ ընդհանուր առողջապահական ծախսերում ունեցած տեսակարար կշռի ուսումնասիրությունը: «Գրպանից դուրս» կատարված առողջապահական ծախսերը վերաբերում են անհատների կողմից բժշկական ծառայությունների, բուժման և դեղերի ձեռքբերման նպատակով կատարվող ուղղակի ծախսերին, որոնք չեն փոխհատուցվում ապահովագրությամբ, պետական կամ ֆինանսական օժանդակության այլ միջոցներով: Այս ուսումնասիրության հիման վրա մեր կողմից մշակված բաշխման դիագրամման (սկստերը) ներկայացնում է այդ ոլորտի համաշխարհային միտումները (տես գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Ընդհանուր առողջապահական ծախսերում «Գրպանից դուրս» կատարված ծախսերի մասնաբաժնի և շնչի հաշվով ՀՆԱ համադրությունը ըստ աշխարհի երկրների*

* Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից Համաշխարհային բանկի տվյալների շտեմարանում գետնեղված առողջապահական ծախսերի և շնչի հաշվով ՀՆԱ տվյալների համադրմամբ: Գծապատկերում ներկայացված է 2021 թ. դրությամբ առկա իրավիճակը, քանի որ գրպանից դուրս կատարված առողջապահական ծախսերի վերաբերյալ ամենաթարմ հասանելի տվյալը վերաբերում է 2021թ.:


Գծապատկերի ուսումնասիրությամբ կարելի է փաստել, որ աշխարհում շնչի հաշվով ՀՆԱ աճին զուգահեռ «գրպանից դուրս կատարված» առողջապահական ծախսերի տեսակարար կշիռը նվազում է: Այս երևույթը հիմնականում պայմանավորված է զարգացած երկրներում ինչպես մասնավոր ապահովագրական շուկայի և ինսուրտուրների առավել բարձր զարգացման մակարդակով (ապահովագրական ընկերությունների ակտիվների հարաբերակցությունը ՀՆԱ-ին Հայաստանում մոտ 1% է, այնինչ զարգացած երկրներում այս ցուցանիշը տատանվում է 80-100%-ի միջակայքում, որոշ դեպքերում նույնիսկ գերազանցում է 100%-ը (Worldbank, 2021)), այնպես էլ այդ երկրներում պետական բյուջեի՝ ներառական աճին և զարգացմանը միտված կառուցվածքը, մասնավորապես՝ պետական ծախսերի կառուցվածքում առողջապահական ծախսերի առավել մեծ տեսակարար կշիռը (Գծապատկեր 2): Այս առումով Հայաստանը գտնվում է ոչ այնքան բարձր վիճակում և «գրպանից դուրս» կատարված առողջապահական ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ մոտ 79% է, որը 200 և ավելի երկրների ընտրանքում առավելագույն մեծությունն է (նաև բացարձակ արտահայտությամբ ՀՀ ցուցանիշը 1513 դոլար (PPP), համաշխարհային միջինը՝ 329 դոլար (PPP), գերազանցում է շուրջ 4.6 անգամ), իսկ ահա պետական ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուրում բավականին ցածր է՝ մոտ 18% (Worldbank 2021):



Գծապատկեր 2. Ընդհանուր առողջապահական ծախսերում պետական ծախսերի մասնաբաժնի և շնչի հաշվով ՀՆԱ համադրությունը աշխարհում*

* Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից Համաշխարհային բանկի տվյալների շտեմարանում գետեղված առողջապահական ծախսերի և շնչի հաշվով ՀՆԱ տվյալների համադրմամբ: Գծապատկերում ներկայացված է 2021 թ. դրությամբ առկա իրավիճակը, քանի որ պետական առողջապահական ծախսերի վերաբերյալ ամենաթափուր հասանելի տվյալը վերաբերում է 2021 թ.:

Այս համատեքստում, առանձնակի ուշադրության են արժանի վերոնշյալ ցուցանիշների դիنامիկ տեղաշարժերը ՀՀ-ում (տես գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Ընդհանուր առողջապահական ծախսերում «Գրպանից դուրս կատարված ծախսերի» մասնաբաժնի, ՀՆԱ-ում պետական բյուջեի առողջապահական ծախսերի մասնաբաժնի և միջին վիճակագրական տնային տնտեսության ծախսերում առողջապահական ծախսերի կշռի շարժընթացը ՀՀ-ում 2008-2023 թթ.*

*Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից Համաշխարհային բանկի տվյալների շտեմարանում գետեղված գրպանից դուրս կատարված առողջապահական ծախսերի վիճակագրության, ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական զեկույցներում, ինչպես նաև տվյալների բազայում գետեղված պետական բյուջեի ցուցանիշների համադրմամբ: Գծապատկերում ներկայացված է գրպանից դուրս կատարված առողջապահական ծախսերի շարժընթացը մինչև 2021 թ., քանի որ տվյալ ծախսերի վերաբերյալ ամենաթափափա՞հ հասանելի տվյալը վերաբերում է 2021 թ.: Միջին վիճակագրական տնային տնտեսության ծախսերում առողջապահական ծախսերի կշռի շարժընթացը ևս սահմանափակվում է 2022 թ., քանի որ ամենաթափափա՞հ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2023 թ. վիճակագրական զեկույցում գետեղված է 2022 թ. վերաբերող հարցումների արդյունքում ձևավորված տվյալները:

Գծապատկերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում «գրպանից դուրս կատարված» առողջապահական ծախսերի աճը պայմանավորվել է տնային տնտեսությունների՝ առողջապահական ծառայությունների նկատմամբ աճող պահանջարկով, ինչը տեսանելի է միջին վիճակագրական տնային տնտեսության սպառման կառուցվածքում առողջապահական ծառայությունների թրենդային աճից՝ 2008 թ. 3.6%-ի համեմատ 2022 թ. առողջապահական ծառայությունների կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է շուրջ 5.6%: Սակայն, ի հեճուկս այս իրողությունների, մասնավոր պահանջարկի աճը չի ուղեկցվել պետության և ապահովագրական շուկայի թիրախային արձագանքով: Մասնավորապես՝ կարելի է նկատել, որ պետական առողջապահական ծախսերի թրենդը դիտարկվող ժամանակահատվածում դրսևորել է կայուն միտումներ՝ դիտարկվող ժամանակահատվածում կազմելով միջինում 1.6% իսկ ընդհանուր բյուջետային ծախսերում՝ միջինում 6.2%, իսկ ահա ապահովագրական ընկերությունների ակտիվների ծավալները տատանվել են 0.5-1%-ի միջակայքում, ինչն էլ մեծամասամբ բացատրում է «գրպանից դուրս կատարված» առողջապահական ծախսերի շարունակական աճը դիտարկվող ժամանակահատվածում:

Վերոնշյալից առավել քան ակնառու և հիմնավոր է դառնում պետության միջամտության անհրաժեշտությունը առողջապահական ծառայությունների շուկայում: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ցանկացած մեխանիզմով իրականացվող միջամտությունն անպայմանորեն հանգեցնելու է մի շարք սոցիալ-տնտեսական ազդեցությունների, որոնք դրսևորվելու են ինչպես միկրոմակարդակում առողջապահական ծառայությունների հասանելիության, որակի, գնագոյացման, այնպես էլ մակրոմակարդակում հիմնական տնտեսական ֆունկցիաների՝ զբաղվածության, ՀՆԱ-ի, եկամուտների ձևավորման և բաշխման կոնտեքստում: Համաշխարհային բանկի փորձագետների գնահատումները հանգում են ԱՀԱ ներդրման դրական մակրոտնտեսական ազդեցությունների (Macroeconomic effects of financing universal health coverage in Armenia 50): Այս հետազոտության արդյունքում դիտարկվում են ԱՀԱ ներդրման ֆինանսավորման մի շարք հարկային մեխանիզմներ, որոնք հանգում են ՀՆԱ վրա ունեցած ազդեցության տարբեր սցենարների: Այնուամենայնիվ, սույն գնահատումը պարունակում է քննարկման ենթակա և որոշ դեպքերում վիճարկելի ասպեկտներ.

- Տնտեսության վրա հնարավոր ազդեցությունները կարող է առավել ճշգրիտ մոտարկել եկամտային հարկի աճի միջոցով ապահովագրական ծածկույթի ֆինանսավորման սցենարը, որի պարագայում ազդեցությունը գրեթե զրոյական է՝ 0.05% (Macroeconomic effects of financing universal health coverage in Armenia 24):
- Ամենամեծ դրական ազդեցությունը (1.36%) վերաբերում է տնային տնտեսությունների ոչ աշխատավարձային, պասիվ եկամուտների հարկման միջոցով ԱՀԱ ֆինանսավորմանը, որի անիրատեսական լինելու փաստը արձանագրված է նաև զեկույցի եզրակացություններում:
- ԱՀԱ ներդրման արդյունքում առողջապահական ոլորտում ընդհանուր գործուձային արտադրողականության տարեկան 0.7% և մինչև 2050 թվականը

կուտակային 20%-ով բարելավման վերաբերյալ՝ մեղողաբանական որևէ հիմնավորում չպարունակող ենթադրության կիրառում: Սա վերջնարդյունքում հանդիսանում է մոդելում հարկերի բարձրացման խեղաթյուրող ազդեցությունը զսպող՝ արտահանելի սեզմենտի արտադրողականությունը խթանող, հիմնական գործոն (Macroeconomic effects of financing universal health coverage in Armenia 23):

- Հարկային գործիքակազմի կիրառման ազդեցության դինամիկան փաստում է, որ դիտարկվող ժամանակահատվածում մեծ մասամբ ազդեցությունները բացասական են և միայն դիտարկվող ժամանակաշրջանի վերջում են (2045 թ.-ից սկսած) նկատվում չնչին, գրեթե զրոյական դրական ազդեցություններ, որոնք չեն փոխհատուցում հարկման խեղաթյուրող ազդեցությունը (Macroeconomic effects of financing universal health coverage in Armenia 24):

Եվ ահա այս համատեքստում է, որ սույն հետազոտության շրջանակներում խնդիր է դրվել գնահատել ԱՀԱ ներդրման ռեֆորմի հնարավոր ազդեցությունները եկամուտների համաչափ բաշխման և անհավասարության տեսանկյունից և, հստակ քանակական գնահատումների վրա հիմնվելով, բացահայտել ներկայիս առաջարկվող ԱՀԱ ֆինանսավորման մեխանիզմի հիմնական ռիսկերն ու առավելությունները:


Աղյուսակ 1. ՀՀ-ում առողջության համապարփակ ապահովագրության ներդրման ազդեցությունների գնահատման ամփոփ աղյուսակ **

	Եկամուտ	Եկ. հարկ	Եկ. հարկ + ապահովագրավճար	Փաստացի հարկ	Փաստացի հարկ+ապ.վճար	Աշխատանքի հարկի արդյունավետ դրույքաչափ	Արդյունավետ դրույքաչափ (Փաստացի եկ. հարկ+ապ. վճար)
	(1)	(2)	(3)=(2)+(13 700- r%*(13700)*)	(4)=(2)+սոց.վճար+ դրոշմանիշ- եկ. հարկի հետվերադրա ծ	(5)=(3)+սոց.վճար+ դրոշմանիշ- եկ. հարկի հետվերադրա ծ	(6)= (4)/(1)	(7)= (5)/(1)
1	15,968	3,076	13,700	4,770	15,394	30%	96%
2	41,144	7,846	13,700	11,666	17,520	28%	43%
3	67,576	12,867	18,347	18,733	24,213	28%	36%
4	97,349	18,798	24,278	26,514	31,994	27%	33%

* Հաշվարկում r-ի՝ ապահովագրավճարից՝ 13700 դրամից որոշակի մասնաբաժնի նվազեցման դրույքաչափի ներառումը համահունչ է ներքոնշյալ օրենքի նախագծով սահմանված սանդղակի տրամաբանությանը: Մասնավորապես՝ մինչև 150,000 դրամ եկամտի պարագայում սուբյեկտին հնարավորություն է ընձեռնվում ստանալու փոխհատուցում իր իսկ վճարած եկամտային հարկից ապահովագրավճարի 60%-ի չափով՝ 8220 դրամ, 150,000-300,000 միջակայքի պարագայում՝ 40%՝ 5480 դրամ, 300,000-450,000 դրամի պարագայում՝ 20%՝ 2740 դրամ, 450,000 և ավելի՝ 0%: Քանի որ 1-ին և 2-րդ դեցիլների պարագայում ապահովագրավճարի՝ 13700 դրամի 60%-ը՝ 8220դրամը, գերազանցում է եկամտային հարկի մեծությունը, ապա նշված երկու դեցիլների պարագայում սիմուլյացիոն վերլուծությունում ապահովագրավճարից նվազեցվել է միայն փաստացի վճարված եկամտային հարկի չափով, այդ իսկ պատճառով տվյալ երկու դեցիլների պարագայում ապահովագրավճարի և եկամտային հարկի գումարային մեծությունը համապատասխանաբար 13700 դրամ է: Այսինքն՝ փաստացի 1-ին և 2-րդ դեցիլների պարագայում բանաձևն ընդունել է հետևյալ տեսքը՝ **(3)=(2)+(13700-(2))**:

5	118,593	23,489	28,969	32,934	38,414	28%	32%
6	150,150	29,818	38,038	41,127	49,347	27%	33%
7	195,481	38,824	47,044	53,304	61,524	27%	31%
8	266,415	52,879	61,099	73,185	81,405	27%	31%
9	403,785	79,989	90,949	107,164	118,124	27%	29%
10	1,235,722	241,306	255,006	229,920	243,620	19%	20%

****Չնահատուկները կատարվել են հեղինակի կողմից՝ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համադրման արդյունքում, <https://www.src.am/am>:**



Գծապատկեր 4. Աշխատանքի հարկի արդյունավետ դրույքաչափի ապագրեզավորումը 33-ում ԱՀԱ ներդրման ազդեցությունների համատեքստում *

* Չնահատուկները կատարվել են հեղինակի կողմից՝ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համադրման արդյունքում, <https://www.src.am/am>

ԱՀԱ մասին օրենքի նախագծում ներկայացված է վճարման տարեկան 164,400 դրամ միասնական համահարժ դրույքաչափ (ամսական՝ 13,700դրամ) («Առողջության համապարփակ ապահովագրության մասին» 33 օրենքի նախագիծ, հոդված 12, մաս 1), ինչպես նաև օրենքի նախագծով հնարավորություն է տրվում հարկային տարվա

ընթացքում վճարված ապահովագրավճարը ճանաչելու որպես սոցիալական ծախս և Հարկային օրենսգրքի դրույթներին համապատասխան ստանալու հետվերադարձ (փոխհատուցում) տվյալ սուբյեկտի վճարած եկամտային հարկից («Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 13): Սա ենթադրում է որոշակի պրոգրեսիվության տարրեր, մասնավորապես՝ նախագծով հնարավորություն է տրվում եկամտային հարկից ստանալու փոխհատուցում.

